



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11-12 1897 ՆՈՅԵՄԲ.-ԴԵԿՏԵՄԲ. 1897 № 11-12

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

	հրես	
1 ՇԱՆԹ	1479	Վերթին (վէպ):
2 ԱՐԱՄ-ՉԱՐԴԳ.	1515	Իմ երգը:— Դէպի խրճիթներ:— Ագտերը (բանաստեղծութիւններ):
3 ՄԱՆՈՒԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.	1518	Խորտակած կեանք (վէպ. չարուն.):
4 ԴԵՄԻՐՃԵԱՆ, Դ.	1536	Հերիք սիրտ իմ:— Գիւղական երկուկ (բանաստեղծութիւններ):
5 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ.	1538	Էտլիւցիայի գաղափարը (չարուն.):
6 ԽՈՉԱ-ԷՅՆԱԹԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆ.	1552	Գիւղական ցաւեր. (չար.):
7 ՉՈՊԱՆԵԱՆ, ԱՐՇԱԿ.	1562	Հենրիք Իբսէն:
8 ՄԻՐԻՄԱՆԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ.	1589	Վրաց գրականութիւնը և հրատարակչական գործը:
9 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	1595	Բանտարական խնդիրը: (չար.):
10 ՖՐԷՆԿԷԼ—Ա. Ա.	1607	Աւագակութիւնը Անգրիոյի. (չար.):
11 ՎԱՐԳԱՆԵԱՆՅ, ՎԱՍԻԼ.	1613	Տրամադրութ. ստորակ (Լ. Տոլստոյ.):
12 ԹԱՌԱՅԵԱՆՅ, Ս.	1630	Շահադիդի «Միքայէլ Ղազ. Նալբանդեան»:
13 ԱՂԲԱԼԵԱՆՅ, Ն.	1636	Դիկկենսի «Դաւիթ Կոպպերֆիլդ»:
14 ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, Յ.	1643	Բալասեանցի «Ռոստոմ և Սալման»:
15 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	1648	Ժամանակ. Տեսութ. — Կովկ. խնդիրներ — Պոլիտեխնիկումի առիթով:
16 ՄՈՏԱ.	1663	Աջու ձախ: Բ:
17 ԽՄԲ.	1668	Ձանազան լուրեր:
18 ԽՄԲ.	1687	Բովանդակ. Մուրճ № 1—12-ի:

Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротивіанна, Гол. пр., д. № 41.

1897

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11—12 1897 ՆՈՅԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ 1897 № 11—12

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Ա. Գ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1897

საქართველოს

საზოგადოებრივი განათლების

სამსახური

საქართველოს საზოგადოებრივი განათლების სამსახური

Дозволено цензурою. Тифлисъ, 28-го ноября 1897 г.

საქართველოს

საქართველოს

„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր Ը

մտնում է 1898 թվականին իւր **ՏԱՍՆԵՐՈՐԴ** տարե-
շրջանը և հրատարակելու է նախկին ծրագրով

(**ԾՐԱԳԻՐ ՄԱՅՐԱՔԱՂԱԿՆԵՐԻ ՌՈՒՍԱՑ ՄԵՐ ԱՄՍԱԳՐԵՐԻ**)

Մշտական աշխատակիցներից անցնող տարում մասնակիցեցին հետեւեալները.

ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱԼ. (հրապարակախօսութիւն), ՄԱՆՈՒԷ-
ԼԵԱՆՑ Լ. (բանաստ., վէպ, քննադատ.), ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ
(տնտեսական-սոցիալական յօդւածներ), ՇԱՆԹ (վէպ, բանաստեղ-
ծութիւն), ԲԱԲԵՆՑ (վէպ), ԺԱՏՈՒՐԵԱՆ ԱԼ. (բանաստեղծ.),
ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ ՅՈՎ. (ժողովրդական կրթութեան հարցեր և
գրախօսութիւն), ՓԱՓԱՋԵԱՆ Վ. (պատմաճշգրտ.), ԱԴԵԼԵԱՆ
(վէպ), ԱՂԱՍԼԵԱՆ (գրախօսութիւն, քննադատութիւն), ԶԱԲԱ-
ՐԵԱՆ ԹԱՊ. ԲԺՂ. (հասարակական-բժշկական յօդւածներ), ՏԷՐ-
ԳԷՈՐԳԵԱՆ ՅԱԿ. (թարգմանական պոէմներ), ՎԱՆՑԵԱՆ ԳՐԻ-
ԳՈՐ (հայկական ազգագրութիւն և այլք), ԻՂԽ. ԵՐԿԱՅԵԱ-
ԲԱԶՈՒԿ-ԱՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՓԻԱ (կրթական խնդիրներ), ՅՈՎ-
ՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԻՔ. (գիտական-սոցիալական խնդիրներ), ՍԱՐԳ-
ՍԵԱՆ ԴԱՐԵԳ. ԲԺ. (բժշկական քրոնիկ), ԹԱՌԱՅԵԱՆՑ ՍԵՂՈՐԱԿ
(գրախօսութիւն), ԱՐԱՄ. ԶԱՐԸԳ., ԴԵՄԻՐՃԵԱՆ Դ. և ԱԹԱ-
ՅԵԱՆ Ա. (բանաստեղծ.), ՍԵՒԵԱՆ (թատրոնական քրոնիկ), ՏԷՐ-
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՄԻՔ. (թարգմ. վէպեր), ՄԱՐԴԱՆԵԱՆ ՓՐԻՈ.

(նաթափին գործ), ՄՈՒՐԱԴԻԱՆ ԵԱԿ. (նամակներ Սե. Տովի
ափերից), ՂԱՐԱՋԵԱՆ (նամակներ Երևանից), ՆԱԶ-ՊԱՊԵԱՆ Ատ.
(տաճկա-հայկական խնդիրներ), ՄԻՐԻՄԱՆԵԱՆ ԵԱՐ. (վրաց գրա-
կանութիւն), Զ. (քաղաքական տեսութիւն) և ուրիշներ:

Մասնակցել են անցնող տարում, բացի յիշեալ մշտական աշ-
խատակիցներից նաև պ.պ. ՇԻՐՎԱՆՋԱԴԷ (գեղարեստական քննա-
դատութիւն), ԿՈՒՍԻԿԵԱՆ Կ. (Ռ. Պատկանեանի մասին), ՉՈՊԱ-
ՆԵԱՆ Արշակ (Իսսէի մասին), ՆՈՋԱԼԵՅԵԱԹԵԱՆ Ե. (Գիւղա-
կան ցաւեր), ՎԱՐԴԱՆԵԱՆՅ Վասիլ (կոմս Լ. Տոլստոյի մասին):

ԲԱԺԱՆՈՐԴԱԴԻՆԵՆ Է տարեկան 10 ռ.: Վճարել կարելի է
նաև մաս-մաս, սկզբում 5 ռ., մնացած 5 ռ. մինչև յունիսի վերջը:
Հասցէ. Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“

Նմադրատունը գտնուում է Սերգիւսկայա փ. № 6:

Բաքում կարելի է գրել նաև պ.պ. Ֆր. Մարգանեանի հոտ
(контора Е. и А. Меликовы) և Սիրտի: Մանուշարի հոտ (Отдѣл.
Тифл. Коммерч. банка).

Այլ քաղաքների համար տես Մուրճի ծածկը:

Վ Ե Ր Փ Ի Ն

Շ Ա Ն Թ ՝ Ի

(Շարունակութիւն 1)

ԺԱ

Երբ վարը դռան գոցելիւ լսեց՝ Տիրան կամաց մը ելաւ և սկսաւ սենեակի երկայնքովը երթեկեկել. ըստ երևոյթին խոր մոածման մէջ թաղւած, բայց հապէս ոչինչ չէր մոածեր. տեսակ մը խառնակութիւն էր գլխուն մէջ. իրար չի բռնող ենթադրութիւններու, յիշողութիւններու կտորներ, որոնք յորձանքի մէջ ինկած փայտի բեկորներու պէս մէկ երեսը կ'ենէին մէկ յատակը կ'իջնէին:

Յանկարծ կեցաւ, փոխեց արագ հագուստը, առաւ գլխարկն ու դաւազանը, լուռ, առանց ոչոքի ոչինչ ըսելու իջաւ վար, դուռը գոցեց ու վարանոտ քայլերով շրտկընեցաւ դէպի դաշտ:

Յիր ցան, բարակ ամպերուն մէջէն արեւը իր ճառագայթները վար կը մազէր:

Մաքուր օդը և ազատ շարժումը կարծես ընթացք աւին տղու մոքերուն: Սկսաւ մոածումները իրարու կապել, հակասութիւնները հարթելու ջանալ ու եզրակացութիւն մը հանելու աշխատիլ:

«Խենթը ըսաւ, խելօքն ալ հաւտաց»:

Տիրան փարեցաւ ընկերոջը ըսած առածին:

Եւ, իրան, Արշակ խենթ մը չէր. իր գաղափարներով ոգևոր-

1) Տես Մուրճ 1897 թ. № 9 և 10:

ւած Ֆանատիկ մը: Անշուշտ այդ էր և անցած օրւան անոր տարօրինակ յուզման պատճառը. Վերժին ըսեր էր, որ վարժուհի է դառնալու. և Արշակ ուրախութենէն այլ ևս ինչ ընելը չգիտէր. պարզապէս գծեր էր: Եւ ինքը, որ այդչափ մեծ կարեւորութիւն էր տըւած այդ փախուկի խօսքերուն:

Քէլե այս բացատրութիւնը երևոյթի բոլոր հակասութիւնները չէր գոցեր, բայց Տիրան բոլորովին տրամադիր չէր կասկածելու: Վերջապէս չէ որ ընկերը ինքն էր ըսեր, թէ իր հոգին սիրոյ համար ստեղծւած չէ և թէ նախորդ օրւան խօսածները ո՞վ գիտէ ինչ վայրկենական տրամադրութեան փչած բաներ էին:

Իսկ ինչ կը վերաբերէր Վերժինին, բնի, պարզապէս ծիծաղելի էր. և Տիրան թեթեւ մը ժպտեցաւ:

«Ի՛նչ տարօրինակ է մեր միտքը. մեր զգայարանքները կ'ըզգան այնպէս, ինչպէս մենք ինքներս զգալ կ'ուզենք: Մտածեցի, որ աղջիկը մասնաւոր հակում մը ունի Արշակին. և ահա բոլոր իր վարմունքը ուրիշ գոյն մը առաւ իր վրայ. երեւակայութիւն: Եւ իսկապէս ուրկէ՞ հանեցի այդ ենթադրութիւնը. այդ ալ վայրկեանի տրամադրութիւն. ամէ՛ն բան վայրկեան. մեր զգալու, դատելու ու գործելու եղանակն ալ, ուղղութիւնն ալ, բոլորն ալ վայրկեանի մը ծնունդ վայրկեանի մը համար:»

Հոս ալ տղու յիշողութենէն թեթեւ կերպով քանի մը դէպքեր անցան, որոնք այնքան ալ «երեւակայութիւն» չէին, բայց այդ կէտերուն վրայ այնչափ դիւրին աչք գոցեց, որչափ որ մտածման այս եղանակը իր ինքնասիրութիւնը կը շոյէր:

Ուրեմն պարզ սխալ մըն էր այս ամենը. կոպիտ թիւրիմացութիւն մը. ուրեմն ոչինչ կորած չէր զեռ:

Տիրան իր մէջը նայեցաւ այդ միտքէն թողած ուրախութիւնը վայելելու համար: Բայց ինքնից եղաւ զարմանքը, երբ զգաց, որ իր կորուստ կարծածը կրկին իր ձեռքը ունենալը հազիւ թէ հաճոյք կը պատճառէր սրտին: Եւ հոտ առաջին անգամ որոշ գիտակցեց, որ այդ աղջիկը կորսնցընելու զաղափարը միայն շատ թեթեւ կերպով իր հոգին վշտացուցած էր, և որ իսկապէս իրեն խաչթողը ապտակւած ինքնասիրութիւնն էր:

«Մի՞թէ...»

Ոտքի արահեալը, որուն վրայէն մեքենաբար կը քալէր, տարաւ տղան ծովու բարձր ափին բուսած ծուռ-մուռ թզենիի մը տակ, որ իր արմատներով պինդ մը հողը գրկած՝ բունն ու ոստերը դատարկութեան մէջ կը կախէր:

Տիրան մտաւ ծառի ստերին մէջ, ու աջ թևով բունը գրկած, ճակատը յենեց երկու ճիւղերու միացման անկիւնին. և այդպէս կէս մը հողին, կէս մը ծառին, կէս մըն ալ դատարկութեան վրայ առկախ՝ անշարժ մնաց:

Վարը, ափին մօտիկ, ցիր-ցան չեչոտ ժայռերու շրջանակի մը մէջ ձկնորսի փոքրիկ նաւակ մը կեցած էր:

Տիրան անսովոր հետաքրքրութեամբ մը կլանւած՝ իր բարձունքէն կը դիտէր ձկնորսին կզկզած մօրուքը, ճերմակ մազերը, այրւած դէմքը, բաց թաւ կուրծքը, մինչև սրունքները բոբիկ ոսկրուտ ոտքերը, մաշւած ու թաց շալւարին լայն ծալքերը, ու կարկըտած մինթանին գոյնզգոյն կտորները:

Մերուկը կը ծռէր, կ'ելնէր, կը կըձկըւէր. թևի վարպետ շարժում մը և ուռկանը բացւող հովահարի մը պէս կը փլուէր օդին մէջ. չը՛ռփ. ու կապարէ գնդակներու. շրջանակը կ'անձրեւէ ջուրին վրայ՝ իրեն հետ ցանցը դէպի յատակը քաշելով:

Երբեմն պարապ կ'ելնէր ուռկանը, երբեմն քանի մը ձուկ, որոնք ճարպիկութեամբ կը բռնէր ալեւորը ու կը նետէր նաւակին փորը, ուր ծովուն ջուրը ներս էր ծծւեր ու թեթև մը կ'օրօրւէր:

Տիրան կը հետեւէր ուշադիր:

«Երկու ձուկ, չէ, երէք է»։ «Հը՛, քարին առաւ», «խեղճ ծերուկ, յողներ է», «խեչափառ», «խեչափառ»։ Եւ ուրիշ ոչինչ մտածել չէր ուզեր:

Մտածումներու այս արևատախան սպանումէն այն ատեն միայն սթափեցաւ, երբ ձկնորսը ուռկանը նաւակին քիթը փռեց, թիերը ձեռք առաւ, ու քանի մը ճարպիկ շարժումով ժայռերու մէջէն դուրս ելաւ ու մոտս փոքրիկ հրանդանին ետեւ:

Տիրան նայեցաւ շուրջը. արեւը հորիզոնին կը քսւէր: Ժամեր էին անցեր:

Հեռացաւ ծառէն, և յարմար տեղէ մը ուրիշներու ոտքի հետ-

քերէն օգտուելով բարձր ասիէն իջաւ ծովուն եզրը աւազին վրայ, ուր արդէն բոլորովին ստուերի մէջ էր:

Անգամ մը-երկու զնաց ու եկաւ խիճերուն մէջ ձեռքի դաւազանովը ծովափի թաց փոքրիկ քարերը խշրտեցընելով: Վերջը ջրերու գիրկէն դուրս նետուող տափակ ժայռերու վրայէն մէկէն միւսը ցատկելով բաւական հեռացաւ եզերքէն: Ծունկի եկաւ, ու սկսաւ փայտովը ժայռի թաց ու մամռոտ եզերքին փակած ոստրէ մը փրցընել:

Պինդ էր. գաւազանին ծայրը քարին ու կենդանիին մէջ անցուցած բոլոր ուժովը աշխատելու վրայ էր, երբ իրէն քիչ մը հեռու ծովուն մէջ բան մը ճողբեց, և ջուրի կաթիլներու ամբողջ մանեակ մը շարւեցաւ իր դէմքին, գլխուն ու կրծքին վրայ:

Տղան ետ քաշւեցաւ ցընցումով. ու լսեց հնչուն քրքիջ մը, որ բարձրէն կու գար: Ծառին մօտ, որուն տակը քառորդ մը առաջ ինքն էր կեցած, հիմա կեցած էր Վերժին՝ եղբօրը քովը ու կը խնդար ձեռքի փոշին մաքրելով:

— Բաղնիքնիդ անձը. պոռաց բժիշկի խնդացող ձայնը:

— Կեցէք, ես ալ գամ. ճչաց Վերժին և ցամաքի մէկ շեղ էջքէն վար վազեց՝ ետէն հող ու քար զրտորելով:

Բժիշկը հետեւեցաւ քրոջը միայն զգուշութեամբ: Տիրան ալ իր ժայռերէն ետ դարձաւ ցամաք:

Եւ երեքը իրարու ձեռք տւին:

— Հոն ի՞նչ կը փընտռէիք, ամօթ չլինի հարցնելը. նկատեց բժիշկը:

— Երևի բանաստեղծութեան նիւթ. պատասխանեց Վերժին ժպտերես: Է՛, հիմա բանաստեղծները այնքան քիչ բանաստեղծական բան կը գտնեն ցամաքի վրայ եղածներէն, որ ստիպւած են ջուրին խորքերը իրենց նիւթ որոնելու:

Տիրան, որ դեռ բոլորովին կազդուրւած չէր այսպէս անակընկալ կերպով աղջկան հոս հանդիպելէն, —

«Ի՞նչ ըսել կ'ուզէ. մտածեց ինքնին: Եւ անոր թւեցաւ, որ այդ խօսքերը ակնարկ մըն էր:

Աղջկան երեսը կը նայէր քննող նայւածքով:

Նոյն Վերժինն էր, նոյն զիմագծերը, նոյն աչքերը բաց զար-

մանալի կերպով բան մը պակսած էր կարծես: Տիրանի գլխուն մէջ Վերժինի պատկերը ուրիշ տեսակ էր կարծես. աւելի նուրբ, աւելի արտայայտիչ, աւելի բանաստեղծական, աւելի գրաւիչ. իսկ իրականը. պարզ դէմք մըն էր հիմա իր դէմ. իրան, սիրուն, բայց առանց հրապոյրի:

—Ինչո՞ւ այդպէս զարմացած երեսս կը նայիք. չլինի՞ ձեր մտածման թելը կտրեցինք: Ե՛, ոչինչ. հապա, ըսէք ի՞նչի մասին կը խորհէիք. կարելի է նորէն կապելու ձեզի օգնեմ:

—Շատ շնորհակալ եմ. միայն ես մասնաւորապէս ոչինչի մասին չէի մտածեր. պատասխանեց տղան կարծ:

—Նա, նա, նա. ըրաւ աղջիկը մատը տղու վրան թափ տալով. ու սկսաւ քիթին տակէն եղանակ մը մոլորտալ:

—Թէ երգես պիտի՞ շնորհքով երգէ. նկատեց եղբայրը: Հո՞ս հիանալի ռեզոնանս է ունենալու. հապա:

Վերժին անզլիերէն կտոր մը սկսաւ, բայց երկրորդ տողին իսկ կտրեց.

—Ե՛, առանց դաշնակի ընկերակցութեան չեմ կրնար:

Աշխոյժ պտոյտ մը ըրաւ իր առանցքին վրայ և ուրախ-զըւարթ վազեց ծովուն մէջ երկընցող ժայռի մը ծայրը:

—Այդ ի՞նչպէս ուրախ է այսօր օրիորդը. ըսաւ Տիրան եղբորը:

—Այո՛. այս երկու օր է այդպէս է. պատասխանեց բժիշկը: Ե՛, սատանան միայն, զիտէ կնոջ հոգեբանութիւնը:

—Պարո՞ն Տիրան, գաւազաննիդ, գաւազաննիդ, շո՛տ. պոռաց յանկարծ Վերժին իր ժայռէն:

Առաւ փայտը, կոխեց ջրին մէջ և ըստ երևոյթին բան մը հալածելով՝ երբեմն կը ծիծաղէր, ակընթարթ մը կը լռէր, ու յանկարծ նորէն կը պոռար ոգևորւած:

—Վերժին, կամաց. ջուրը կ'իջնաս. զգուշացուց եղբայրը:

—Վա՛ւ, ի՞նչ ճարպիկն է անպիտանը. պատասխանեց աղջիկը անփոյթ իր հալածանքը շարունակելով ոգևորւած:

Տիրան կը նայէր աղջկան շարժումներուն, բացականչութիւններուն, յուզմանը, ու շատ երեխայական կը գտնէր:

Ձարմանք. ի՞նչն էր, որ մինչև հիմա իր աչքին այնպէս դեղեցիկ, հասուն, խելացի, այնպէս կատարեալ ու անդիմադրելի էր

ներկայացուցեր այդ աղջիկը. ինչո՞վ էր ան իր միտքն ու զգացումները հմայեր. այդպէս բարձր, անմատչելի, տենչալի դարձուցեր։ «Պատրանք, ինքնախաբէութիւն. մի՛շտ երեակայութիւն. ուրիշ ոչինչ. ա՛յ, այդ յիմար երեակայութիւնը»։

Վերժին գլուխը բարձրացուց և յափշտակած մնաց.

— Բայց տեսէք, տեսէք. ինչ սքանչելի երկինք։

Արդէն ծածկըւած արևի վերջին ճառագայթները արևմուտքի լեռներուն ետեւէն ծածուկ զուրս էին սպրդեր, և դեղինի, կարմիրի, նարինջի հեղեղ մը կը թափէին նուրբ ու ցրւած ամպերու փեռերուն վրայ, որոնք անընդհատ ձևերով ամէն վայրկեան կ'աշխարհապէին անոնց աչքերուն դիմաց։

— Հիանալի է. բանաստեղծի մը գրչին կ'ըստասէ անմահանալու համար. ականարկեց բոխչկը Տիրանի զէմքին ժպտելով։

— Ե՛, ան այսօր աւելի փիլիսոփայի է նման, քան բանաստեղծի. առարկեց Վերժին մօտենալով։

— Եւ օրիորդը իրաւունք ունի. հաստատեց տղան։

— Միթէ. ինչ է պատահեր. հարցուց թփռչկը։

— Ոչինչ։ Միայն կան վայրկեաններ, որ մարդու գլխուն մէջ կտակածի հարցեր կը ծնին։ Ըսէք խնդրեմ, այ օրինակ, ինչո՞ւ հա՛մար է այս պոռոտ գոյներով շարաւած երկինքը. ինչի՞ կը ծառայէ այս ծաւի հարթութիւնը, երբ իր հայելին այդպէս քծնանքով դէմ կը բռնէ քոքէթ ամպերու նազանքին. ինչ խորհուրդ ունին այդ դիմացի լեռներուն անվերջ գլուխ-գլխի խորհրդակցութիւնը. ինչ նպատակ ունինք մենք, որ ժամ մը առաջ կ'ուռէինք, հիմա կը շրջինք և ժամէ մը պիտի երթանք ննջելու. ինչո՞ւ համար է կեանքը ընդհանրապէս, ընկերութիւնը իր ամբողջութեամբ, մարդիկ. ինչո՞ւ համար է բարեկամութիւնը իր անձնազոհութեամբ ու կեղծիքներով. ինչ նպատակ ունի սէրը իր ոգևորութեամբ, պէրանքներով, շողոքորդութեամբ, պատրանքով...

— Այդ երբ էք յօռեալս դարձեր. ընդհատեց Վերժին։

— Նպատակ... այդ ինչ յիմար հարց է, պարոն Տիրան. պատասխանեց բոխչկը։ Կը ներէք անշուշտ արտայայտութիւնս. բայց մենք բոխչկներս սովոր չենք բնական երևոյթներու դիմաց այդ կարգի անիմաստ հարցեր տալու կամ լսելու։ Իհարկէ բոլորովին

ուրիշ խնդիր է, եթէ հեռաքրքրէիք, թէ ինչ պատճառներէ աչդ երեւոյթները առաջացեր են:

—Ա՛խ, պատճառը կամ նպատակ, աչդ միւսնոյն է:

—Ի՞նչ, կը սխալիք: Հոտ ահագին սկզբունքի խնդիր կայ: Հոտ է, որ ամբողջ հին ու նոր աշխարհացոցութիւնները իրարու կը զարնըին. իմ կարծիքովս տասներիններորդ դարու ամենանշանաւոր յառաջդիմութիւնը գիտութիւններուն մէջէն նպատակը վերջնականապէս մէկ կողմ նետելն է: Բնութեան մէջ, կեանքի մէջ, որ բնութեան օրգանական մասն է, և ընկերական կազմութեան մէջ, որ իր կողմէն օրգանական բնութեան մէկ ֆունկցիոնն է, նպատակ ըստ՝ը գոյութիւն չունի. նպատակ միայն կենդանիներու գիտակցական-կամաւոր գործունէութեան մէջը կայ. նպատակը մեր գլխուն մէջ պատկերացուցած այն հեռեանք-երեւոյթն է, որուն մենք հասնիլ կ'ուզենք պատճառ-երեւոյթներու օգնութեամբ. նպատակը, բարեկամն, մտածում մըն է, չիշողութիւն մը միայն: Եւ ահա մարդիկ վարժուած իրենց գործերուն միշտ նպատակ մը գնելու, իրենց պզտիկ ուղեղներովը դատեր են, որ բնութիւնն ալ նոյնպէս իր գործունէութեան համար, իր սէրերը արտադրելու համար որեւէ նպատակ մը ունենալու է. ուրիշ խօսքով բնութիւնն ալ ջղալին դրութիւն մը, փորձառութիւն ու մտածումներ պիտի ունենայ. ծիծաղելի չէ. միամիտ փիլիսոփայութիւն: Նպատակները, յարգելի բարեկամն, նետեցէք ծովը, և փրնորուեցէք միայն պատճառները: Այն ժամանակ շուտով կը գտնէք, թէ ինչ ազդիւրէ կը բղխին ընկերութեան կեղծիքն ու անձնազոհութիւնը. թէ ինչ պատճառներու է պարտական կենդանին իր գոյութիւնը. թէ ուրիշ առաջացեր է սէրը իր քծնանքներովն ու յուզումներովը. թէ...

—Է՛, նպատակներն ալ ձեզի լինի, պատճառներն ալ. բացականչեց Վերժին: Բնութեան զեղեցկութիւններու, զգացումներու և սիրոյ նման յուզումներու գիմար ինծի հետաքրքրողը միայն այն է, որ աչդ բոլորը գոյութիւն ունին, որ կան. ուրիշ ոչինչ:

—Ա՛յդ ալ դեռ հարց է. պատասխանեց Տիրան կոտորած ձայնով մը: Շատ զեղեցկութիւններ կան մեր շուրջը ու շատ զգացումներ մեր մէջը, որոնց գոյութեանը երկար ժամանակ տարակոյս

անդամ չունինք, բայց ահա կու գայ ակընթարթ մը և մենք կը տեսնենք, որ այդ բոլորի գոյութիւնը միայն մեր երեւակացութեան մէջն է եղած:

— Ծնւն, այսօր շատ թթու էք, պարոն Տիրան. կարեց աղջիկը: Ե՛, աւելի աղէկ է եկէք երեքով բան մը երգենք. բայց այնպէս կենդանի, զւարթ, ժիր բան մը. ձեր յոռետեսութիւնը կրնաք և վերջը շարունակել, եթէ շատ կը ցանկաք:

Տղան իր մէջը զայրոյթի մը խլրտիլը զգաց. բնազդական զայրոյթի մը՝ աղջկան գոհունակութեան, զւարթութեան դէմ:

Բժիշկը բամբ ձայնովը իր մէկ սիրած ուսանողական երգը սկսաւ. քոյրը գիտէր, ձայնակցեց:

Եւ միևնոյն ժամանակ ետ ճանապարհ ինկան խիճերուն վրայէն:

Տիրան կը քալէր լուռ, երբեմն իր քովէն գացող Վերժինի վրայ ակնարկ մը նետելով գողունի. և երգելու ատեն անոր ըրած բերնի ու դէմքի շարժումները այնքան ալ ախորժելի չէր գտներ:

Բնակութիւններուն մօտիկ ձայները կտրեցին ու իրարմէ հրաժեշտ առին. փողոցները կը բաժնւէին:

Տիրան գլխահակ կ'երթար մտախոհ:

Դատարկութիւն մը կար կրծքին ստի: Այն հիւն ներքին պարսկութեան ճնշող զգացումը, որ վերջին ժամանակները Վերժինով ոգևորւիլն էր լեցուցեր, և այդ քանի մը օրն ալ կասկածը, նախանձը, արհամարած-լքած լինելու ճանկաւորող զգացումը, և ընկերոջը մեծ զոհ մը ըրած լինելու տարտամ հպարտութիւնը, և ահա ատոնք ալ հիմա կը ցընդէին ոչինչութեան մէջ, աչքերուդ դէմ հալոող-անյայտացող մուխի կտորի մը պէս. չէ որ այդ բոլորը երեւակացութիւն՝ ու թիւրիմացութիւն էր միայն:

Եւ աւելի սուր, աւելի ճնշիչ կը դառնար իր մէջը յուզումներէ զոհակ, մինակ ու ապրելու ծարաւ լինելու գիտակցութիւնը:

Տատանրկ...

ԺԲ

Առտու մը որքան եղաւ Վերժինի ուրախութիւնը, երբ սպասաւոր մը իր հասցէին նամակ մը բերաւ, և նամակի վրայ Վերժին իր Պետրոսի գիրը ճանչցաւ:

Միս Պետըրս, որ յունիսի մէջ Ամերիկա էր դացած մէկ-երկու ամիսով՝ հիմա վերադարձեր էր նորէն դպրոց. և Վերժինը զիշեր մը իր քովը կը կանչէր, ինչպէս քանի մը անգամ ըրած էր, երբ ինքը իր զբաղումներուն պատճառով անոր այցելելու չկարողանար:

Վերժին մօրը յայտնեց. նոյն օրն իսկ ճաշէն վերջը մեկնեցաւ, և երկու ժամ չանցած իր սիրած դպրոցի սեմին վրայ նետուեցաւ Պետըրսի վիզը:

Ամբողջ իրիկունը շատ զւարթ անցաւ իր վարժուհիներու ու մէկ-երկու ծանօթ ընկերուհիներու շրջանին մէջ: Միս պատմեց իր ճամբորդութիւնը, Ամերիկա անցուցած օրերէն, տպաւորութիւններէն. հին ու նոր դէպքեր ու մանրամասնութիւններ: Եւ կէս զիշերուան մօտիկ էր արդէն, որ երկուքով առանձնացան իրենց սենեակը հանգստանալու:

Փոքրիկ սենեակ մըն էր Միսի ննջարանը, որ միւսնոյն ժամանակ իր աշխատանոցն էր և ընդունարանը:

Փոքր, կրկնաչարկ գրասեղան մը ամէն տեսակ մանրիկ բիւրօններու, տուփերու, յախճապակիներու, ծաղիկներու ու ալքոմներու մէջ կորած. պատերուն գամւած էր նկարէն հովահարներ, բանւած գոյնզգոյն թուղթի գրպաններ, մեծ ու պղտիկ ամէն դիրքի լուսանկարներ. ճապոնական խոշոր կարմիր թղթէ հովանոց մը առաստաղի ձիշտ մէջտեղէն կախւած էր բաց. պատին տակ ճեմակ ու ցած մահճակալը. քիչ մը հեռու սենեակին կեդրոնը սեղան մը, որուն վրայ կանաչ լուսամբիով լամպն էր դրւած. իսկ սեղանին մօտիկ շէշ-լոն, որուն վրայ այսօր Վերժինի համար անկողին էր պատրաստուած:

Երբ երկու աղջիկները ներս մտան՝ Պետըրս զուռը կղպեց:

—Է՛, վերջապէս առանձին ենք: Դէ, հազուատներդ թուլցնւր, ու եկնոր գլուխ գլխի քիչ մը խօսենք:

Օգնեց Վերժինին չիփակը հանելու ու քորսէն. հանեց ինքն ալ. իր ճեմակ բլուզներէն մէկը տուաւ հիւրին, որ հագնի և երբ աղջիկը հայելին առջևը կեցած մերկ թւերովը իր մազերը պինդ բռնող կեռիկները կը հանէր, Միս Պետըրս քայլ մը ետ կեցած՝ անոր կիսադէմը, հետզհետէ ուսերուն թափւող շագանակի մազերը, թւերուն վերի մտուտ մասը, ու քորսէն ազատուած իրանը կը զիտէր:

—Բայց ինչպէս, ինչպէս աղւորցեր ես, Վերժին. բացականչեց յանկարծ անոր վրայ վազելով:

Գրկըւեցան:

—Այս քանի մը ամսըւան մէջ շատ ես փոխեր. հասունցեր ես տեսակ մը:

—Իրաւ. ժպտեցաւ Վերժին:

Ու դէմ-դէմի նստեցան: Միս իր աշխատանքի սեղանին առջևը աթոռին վրայ, Վերժին ալ հայելիին քովը բազկաթոռին մէջ:

Միս Պետրոս վայրկեան մըն ալ նայեցաւ մօր մը հպարտութեամբ ու խանդաղատանքով Վերժինին, որ անփոյթ դիրքով մը ընկերուհիին բլուզը ուսերուն նետած՝ անոր դէմքին կը ժպտէր:

—Դէ, պատմէ՛ տեսնենք դուն ինչ ըրիր այս ամառ, ինչպէս անցուցիր. նորէն երգի դասերովդ էիր զբաղւած. հարցուց Միս, արմուկը սեղանին կը թընցուց, բոռնցքը դրաւ այտին ու ճկոյթն ալ բերանը: Վերժին պահ մը լռեց. և յանկարծ պատասխանեց.

—Գիտե՛ս, կարելի է քանի մը շաբաթէն նորէն իրարմէ բաժնըւինք. և երկար, երկար ժամանակաց համար:

—Ինչպէս թէ. բացականչեց խօսակիցը. և այս անակընկալէն զարմացած՝ ձեռքը դէմքէն հեռացուց:

—Հաւանօրէն կ'երթամ Եւրոպա:

—Եւրոպա: Գուցէ ճամբորդելով:

—Ա՛յ, ոչ, ուսումն շարունակելու:

—Համալսարան:

Ու աթոռին վրայ շտկըւեցաւ:

—Այո, ի՛նչ խորհուրդ կու տաս:

—Ինչ խորհուրդ կու տամ... Բայց այդ ինչպէս եղաւ, և ի՛նչ ճիւղի հետեիլ է միտքդ:

—Ես ալ կ'ուզեմ վարժուհի դառնամ. քեզի պէս. բայց առաջ պէտք է բնական և ընկերական զխտութիւններու հետեիմ: Պարոն Արշակը բացարձակ իրաւունք ունի. ոչ դպրոց, ոչ կըթուլթիւն, ոչ հողի, ոչ մանուկ, ոչ ինչ հասկընալ չի կարելի առանց առոնց:

Միս Պետրոս պահ մը զարմացած դիտեց ընկերուհիին. և ճիշտ անոր աչքերուն մէջ նայելով՝ կէս մը ժպտուն, կէս մը հեղնոտ—

—Այդ պարոն Արշակը ո՞վ է. հարցուց:

Վերժին յանցանքի մէջ բռնուողի մը ցընցումը ունեցաւ. և թեթեւ կարմրութիւնը անտարբեր շեշտին մէջ մոռցընել ջանալով՝ պատասխանեց.

— Եղբօրս բարեկամներէն մէկը. խելացի տղայ մըն է. համալսարանական. արձակուրդի ասիթով եկած է Պոլիս ծնողքին մօտ:

Եւ այսչափով այդ կնճիռոտ կէտը դոցել կ'ուզէր, և ուրիշ խօսքի անցնել, երբ Պետրոս նորէն հարցուց.

— Եւ ի՞նչ կը սորսի այդ պարօն Արշակը:

— Ընկերական գիտութիւններ:

— Այդ շատ ընդհանուր անուն է:

— Այո՛, բայց չէ որ բոլոր ընկերական գիտութիւնները իրարու հետ սերտ կապած են. բացի այդ՝ լայն ու բազմակողմանի կերպով գործին ծանօթանալը մասնաւորապէս անոր անհրաժեշտ է, եթէ իր ապագայ գործունէութիւնը աչքի առաջ ունենանք:

— Երևի՛ փաստաբան:

— Ո՛չ: Անոր խելքն ու միտքը աւելի ընդարձակ հասարակական գործունէութիւն է: Որոշած է՝ աւարտելուն պէս գալ ու Պոլիս գիտական ամսագրի մը հրատարակութեանը ձեռնարկէ իր ընկերներուն հետ. լուրջ, պարզ ու զուտ գիտական թերթ մը, որուն նպատակը պիտի լինի մեր արդի նորահաս երիտասարդութեանը դրդել, օժանդակել ու առաջնորդել ժամանակակից գիտութիւնները իր ամեն կողմերովը լրջօրէն իւրացընելու, աշխատանքի թէ՛ նիւթը և թէ՛ եղանակը մատակարարելով: Տեսակ մը դպրոցի թերին լրացընող ու ընդարձակող հիմնարկութիւն մը, եւրոպական նոյնօրինակ լաւագոյն թերթերուն յենւած: Արդէն ամբողջ խումբ մըն են. և միասին են գործելու. բոլորն ալ մտերիմ ու սրտակից ընկերներ. բոլորն ալ հիմա տարբեր-տարբեր ճիւղերու ու զանազան երկիրներ ուսանող: Եւ գիտես, թէ՛ և դեռ իրեն ոչինչ ըսած չեմ, բայց ես ալ որոշած եմ այդ խմբին մէջ մտնելու, և բոլոր ուժովս աշխատելու. հապա՛, երևակայէ՛, երբ ես ալ չորս-հինգ տարւան աշխատանքէ վերջը գործիս տէրը կը դառնամ:

Եւ այս ըսւած էր այնպիսի միամիտ, տղայական հպարտ շեշտով մը, որ Միս չկրցաւ ժպիտը զսպել:

— Ե՛, ի՞նչ հիանալի բան է, երբ մարդ զլիսուն մէջ ծրագիր

մը ունի և սրտին մէջ... ը'ը'ը'.... ոգևորութիւն. բացականչեց Վերժին յանկարծ բազկաթողին մէջ ընդոստ շարժում մը ընելով: Երբ, յոյսեր ու եռանդ ջիղերէդ կը վազէ, երբ կ'ըզգաս, որ օրերդ ապարդիւն պիտի չանցնեն, որ բանի մը պէտք պիտի գաս թէ քեզի, թէ քեզի շրջապատողներուն:

— Ուրեմն երթալդ որո՞շ է. ընդհատեց ընկերուհին:

— Գրեթէ. գոնէ իմ կողմէս վճռւած:

— Ո՞ր կողմ երթալ ես մտադիր:

— Առաջ կարծեմ գերմանական Զւիցերիա կամ Գերմանիա. խնդիրը այն է, որ անպատճառ գերմաններէն սորւել կ'ուզեմ. իսկ վերջին կիսամեակները պարոն Արշակը խորհուրդ տուաւ Անգլիա անցնելու: Ա, եթէ գիտնաս ինչ ազնիւ, անկեղծ ու զարգացած տղայ է:

— Եւ սիրուն, իհարկէ. աւելցուց Միս Պետրոս ընկերուհիին դէմքը զննելով:

Վերժին գլխով դրական նշան ըրաւ, և զգաց, որ ամբողջ արիւնը դէմքը զարկաւ. աչքերը գոգը ձգեց, և մատներովը սկսաւ ջղաձգօրէն բլուզին չկապւած կապիճներուն հետ խաղալ:

— Վերժին. ըրաւ վարժուհին խրաբանչիւր վանկը խորհրդաւոր շեշտով մը երկընցնելով:

Վերժին գլուխը աւելի կախեց, յանկարծ ցատկեց ոտքի, նետուեցաւ ընկերուհիին գիրկը ու դէմքը անոր կրծքին մէջ թաղեց:

Վերջին կեռիկն ալ մազերուն մէջէն վար ինկաւ. և հազիւ փունջի մը միացւած վարսը բոլորովին ազատւելով կապանքէ՝ փուռեցաւ աղջկան կէս մը վար սահած բլուզին, մերկ ուսին, Պետրոսի թևերուն ու լանջին վրայ:

— Ա՛խ, արդէն, արդէն... հծծեց վարժուհին ու ժպտեցաւ:

Արտասովոր դառն ու բարի ժպիտ մը:

— Նա. հիմա այլևս հասկընալի է ինծի մինչև խօսածներդ. աւելցուց իսկոյն, ծռեցաւ, գրկեց աղջկան գլուխը ու պագաւ:

Վերժինի թևերը թուլցան, ու ինքը բոլորովին սահեցաւ գետին: Ծունկերը գետինը փուլած վազրի մորթիին թաւ մազերուն մէջ, կուրծքը ընկերուհիին ծունկերուն վրայ, ու թևերն ալ թոյլ կերպով մը անոր մէջքը նետած:

Պետըրս խնամոտ ձեռքով աղջկայ դէմքը իրեն դարձուց, մաշերը քնքշութեամբ հեռացուց անոր երեսէն, ու գորովի նայւածքով սկսաւ անոր աչքերուն մէջ նայիլ:

Վերժին կը ժպտէր շիկնած, յուզւած. և հայեացքին մէջ ուրախութեան շիթ մը ամօթխած արցունք որ կողմ ինքըզինքը ճածկելը չէր գիտեր:

—Եւ իրարու բացւած էք արդէն. հարցուց Միս:

Աղջիկը գլխով բացասական նշան ըրաւ՝ աչքերը վար առնելով:

—Բայց այն ատեն վստահ ես, որ ան ալ... Է, իհարկէ, ինչ ըսել կ'ուզէ. աւելցուց վարժուհին իսկոյն քննող-ինքնաբաւական հայեացքը ծանր-ծանր աղջկայ դէմքէն անոր վիզին, կուրծքին ու իրանին վրայ սահեցընելով:

—Ա՛, այո՛, բացարձակապէս. եղաւ պատասխանը: Եթէ այս քանի մը օրը կղզի գացած չլինէր, մինչև հիմա արդէն անշուշտ խօսած կըլինէինք իրարու. ո՛չ, ես այսպէս երկար համբերել չեմ կրնար. լռել, ծածկել անկարող եմ. տանջանք է այդ: Երէկ քրոջը այցելութեան էի գացած. ամէն չնչին բան ինծի ակնարկութիւն կը թւի, նայւածքին տակ կը կարմրիմ. կարծես բան մը գողցած լինիմ. ան, այնքան նման է եղբօրը:

Պահ մը լռեց:

—Խեղճ Վերժինս. բացականչեց յանկարծ ընկերուհին. Զէ, շիտակը չէի կարծեր բնաւ, որ այդպէս իսկոյն ծուղակը պիտի իյնաս:

—Ծուղակ...

—Մի վախնար. այո՛. աշխարհի մէջ միակ ծուղակը, ուր ամէն մարդ պատրաստ է կրճքով-գլխով մէջը նետուելու. կեանքի գոհար ծուղակը:

Վերջին նախադասութիւնը աւելի հառաչ մըն էր, քան խօսւածք: Իր սէրը կը մտածէր, իր դժբաղդ սէրը:

Ու աչքերը լեցան. կամքին բոլոր ուժովը հազիւ կը զսպէր իր արցունքները, որոնք Վերժինի մազերուն վրայ կաթկթիլ կ'ըստառնային:

Դեռ երկար-երկար կը խօսէին երկուքով:

Վարժուհին ամէն բան մանրամասն պատմել տւաւ, մինչև որ պատին զամառ՝ փոքրիկ կըր ժամացոյցը զի ու երկարաւ հնչիւնով մը երեք հառ զարկաւ:

Ելան պատկերու:

Լոյսը մարած էր շատոնց. երկուքն ալ իրարու քուն չի խանգարելու համար կը լռէին. ոչ մի շարժում. բայց երկուքն ալ արթուն էին:

Վերժին երազանքներու մէջ, Պետրոս յուշերու:

Քիչ մը վերջը քունը երկուքէն ալ զողջաւ իրենց մտածումներն ու յուզումները. բայց համարձակեցաւ ոչ Վերժինի դէմքին զրոշմը ահա թրթրիւ երջանիկ ժպիտը սրբելու, ոչ ալ Պետրոսի այտերուն թափւած յուսաբեկի լեզի արցունքը չորցընելու:

ԺԳ

Եաբաթւան մը չափ էր Արշակ կղզին էր. բայց իրեն կը թւէր, թէ ամբողջ ամիսներ էին անցեր:

Հոտ արդէն քանի մը անգամ եղած էր նախորդ տարիները և իրեն համար շատ նորութիւն չունէր: Մօրաքրոջ ամբողջ ընտանիքն ալ բոլոր հասակը առած մարդիկ էին կամ երեսուներ:

Արշակ ինքզինքը տւաւ աշխատանքի. առտուները մինչև կէս օր կ'ըզբաղէր. իսկ ամբողջ ճաշէն վերջը կը թափառէր կղզին զանազան մասերը սովորաբար իրենց դրացի յայն երիտասարդի մը հետ: Երբեմն ալ միասին նաւարկելու կ'եղնէին. չոյնը իր սանտալը ունէր և հիանալի թիավարել զիտէր: Իսկ գիշերները նորէն կը նստէր աշխատելու:

Բայց իսկապէս ոչ իր աշխատանքէն համ կ'առնէր, ոչ իր զբօսանքներէն:

Յագածը թէև կ'ապշտար, բայց այն չէր, ինչ ինքը կու գէր. չոր ու ցամաք բան մը դուրս կու գար. առանց համոզմունքի վաղ արգելութեան, առանց կրակի ու հումորի զուր ամբողջովին կեդրոնականութիւն: Քնքներ կ'ընէր: Արդէն քանի մը անգամ անցած էր մօքէն գրիւ մէկ կողմ նետելու. միայն միշտ զսպած էր ինքզինքը պարտաւ չի մնալու, իր միտքը կերպ մը զբաղեցընելու ու

խմբագրատան խոստացած աշխատութիւնը անպատճառ հասցընելու համար:

Զբոսանքներն ալ մեծ հրապոյց մը չունէին: Յոյնն ու ան կը շրջէին, կը խօսէին, կը կատակէին միասին. բայց միայն դէմքն էր, որ կը խնդար: Վնասը նաւամատոյցը, ընկերը յաճախ խաղի կ'ենէր յոյն աղջիկներու հետ, որոնցմէ մէկը Արշակի վրայ մասնաւորապէս ուշք էր դարձուցած. սուր դիմագծերով, արեւելքի խոշոր-սև աչքերով, թուխ բոցոտ էակ մը. միշտ անսովոր հազուստներով, քայլաւորքն ալ յանդուգն, շարժումներն ալ. օրիժինալ դէմք մը: Տղան ամէն դուրս ելնելուն գրեթէ կը հանգիպէր անոր կամ փողոցը, կամ նաւամատոյցը, կամ անտառին եզրը. ու միշտ քրքէթ հրաւիրող ժպիտ մը կը կարգար անոր խոշոր աչքերուն նայածքին մէջ:

Իրիկուն մը իր ընկերուհիին հետ միասին վերէն կու գային: Արշակ ասանձին էր. ու անոնց քովէն անցած միջոցին, որոշ կերպով լսեց իր հասցէին ուղղւած աղջկան խօսքերը. «Իզո՞ր այդչափ հպարտա: Այդ կրակէ աղջկան զգացումները հրահրած լինելու փոքրիկ հպարտութեամբ մը ժպտեցաւ Արշակ ու անցաւ, անտարբեր. ալ բոլոր աղջիկները կարծես դադրած էին անոր համար իրենց աղջկային հրապոյցն ունենալէ:

Աղջիկ, անցն մտքով ինչպէս որ թարմ երիտասարդ մը այդ կը հասկընայ, Արշակի համար միայն մէկը կար հիմա, և այդ մէկի պատկերն էր, որ ան ամէն կերպ մոռնալու կ'աշխատէր. այդ մէկի համար կը ջանար անտարբերութիւն ձեռք բերելու: Բայց գիտակցութիւն կամ կամքի թոյլ վայրկեան մը— և ան սիրուն յուշերը կը խուժէին իսկոյն իր վրայ: Այդ վայրկեաններուն տղան կը զայրանար ինքն իր դէմ. ու անմիջապէս կը փրցնէր այդ անուշ մտածումներու զրաւի: Չո՛ւր. ակընթակթ մը. ու շղթան կապւած է նորէն:

Անօգուտ տեղը իր հպարտութիւնը կը խթէր.

«Միթէ կարելի է այս աստիճան թոյլ լինել. և այն ալ աղջկան մը դէմ, որ պարզապէս ընկերոջ մը նման կը նայի վրասա:

Սակայն տկամայ կը չիշէր իրենց տեսակցութիւններէն այս կամ այդ կէտը. ու կատկածը կը վազէր իր հոգիին մէջէն.

«Մի՛թէ, մի՞թէ այդ բոլորը պարզ ընկերական էր. այն շեշտերը, այն նալաճքները, այն յուզումը...»:

Ու տենդոտ ձեռքով կը վերցընէր գիրք մը, թուղթ մը, տերև մը, ինչ որ աչքին դար, միայն թէ իր ուշքը ցրւէր, ցրւէր իր մտածումները, որոնք նորէն խաբել կ'ուզէին իր սիրտը, և որոնք սիրուն պատրանք մը տւէր էին իր զգացումներուն արդէն ամբողջ շաբաթներ:

«Տիրանը. ա՛յ, ի՛նչ բազդաւոր է այդ տղան, տաղանդ, գեղարւեստ, սէր, յաջողութիւն»։ Կը կրկնէր նախանձով ակռաներուն մէջէն:

Հազիւ շաբաթը լրացած Արշակ սկսաւ անտանելի ձանձրանալ, ինչ ճգնաւորութիւն էր այդ. և իմաստն ինչ էր. հոս ալ նոյնչափ իր ուղեղը աղջիկով կ'ըզբաղէր, որչափ և տանը զբաղւելու էր. գուցէ դեռ աւելի, քանի որ հիմա այսպէս առանձին էր. Եւ այլ ևս խորհուրդ չէր գտներ այս բացարձակ փախուստէն, երբ օր մը ուշ կամ կանուխ աղջկան նորէն հանդիպելու էր. և վերջապէս աւելի լաւ չէր հետզհետէ վարժւել անոր ներկայութեանը. և գուցէ շատ աւելի շուտով սթափւի բանոնց՝ փոխադարձ ջարաբերութիւնը մօտէն տեսնելով:

Նոյն իրիկունը նամակ մըն ալ ստացաւ քրոջմէն, որը բաւական կծու կերպով եղբօրը վրայ կը յարձակէր ու կ'ըստիպէր, որ ետ դառնայ:

«Աղէկ, քոյրս ինչ պատճառով կը վշտացընեմ», մտածեց պահ մը. և վճռեց յաջորդ օրն իսկ վերադառնալ: Ու տարօրինակ ուրախութիւն մը զգաց իր այդ վճիռէն. իրենները կարօտեցր էր:

«Եւ Վերժինը, որ նորէն պիտի տեսնես», կը կրկնէր ուղեղին մէկ կողմը գանգին տնկիւնէն: Արշակ նախ այդ տնկիւնէն ըստաները չլսել ձեացուց, բայց ոչ երկար:

Ի՛նչ, ի՛նչ ծածկելու բան է. ի հարկէ, ուրախ է Վերժինը նորէն տեսնելուն. բայց ինքը զիտէ և իր զգացումները կտաւարելու. Ինքը որոշած է ըստ կարելոյն քիչ աղջկան հանդիպելու, իսկ առանձին երբէք. և հանդիպած ատենն ալ միշտ զբաղւած, լուրջ ու անտարբեր պահելու ինքըզինքը, մինչև որ վարժը ի ու այդ խենթ զգացումը իր մէջը հետզհետէ բթանայ:

Ուրեմն այլ ևս թնչ կայ վարանելու :

Յաջորդ օրը կէս օրէն քիչ մը անց՝ Արշակ կ'երթևեկէր Սիր-
քէճիի կայարանը հարթակին վրայ, գնացքի պատրաստընելուն
սպասելով. հիմա շիտակ կղզիի շոգենաւէն էր եկած :

Կը բերէին վագոնները, կը կցէին իրարու. ու կը կապէին Ար-
շակ վերջապէս կանգ առաւ վայրկեան մը լոկոմոտիւին քովը ու
դորձաւորին աշխատանքը կը դիտէր, որ հնար եղածին չափ տա-
քութենէն հեռու մնալ աշխատելով՝ հնոցը հանքածուխ կը նետէր
վարժ ու ճարպիկ շարժումով մը :

— Բարև՝ ձեզի. թնչ կ'ուսումնասիրէք հոտ. լսեցաւ յանկարծ
ետեւէն ձայն մը. ու խոշոր ձեռք մը իր ուսին ծանրացաւ :

Նայեցաւ ետ :

— Օ՛, բարև՝, պարոն բժիշկ :

— Երևի կղզիէն կը դառնաք :

— Այո՛, Ինչպէս էք :

— Շատ գէշ, ինչպէս կրնաք նկատեր. քառորդ ժամ մըն է
գրեթէ կը վազեմ. այս գնացքին անպատճառ հասնէի պիտի. Գում-
գաբու հիւանդ ունիմ. դուրս եկաւ, որ ժամացոյցս երեք վայր-
կեան առաջ է եղեր. ամբողջովին քրտինքի մէջ եմ. եկէք մտնենք
վագոն :

Նւ մտան առաջին հանդիպած քուպէն, ուր խիստ բարակ և
խիստ երկար իրանով մարդ մը. նստած էր շիփ-շիտակ, ձեռքերը
կանոնաւոր կերպով ծունկերուն դրած, Ռամսէս Երկրորդի արձանին
սկէս. և Սան Ստեփանօյի սոսիակ մը քոքարդի նման գլխարկի ճակա-
տին անդուցած. ըստ երևոյթին անգլիացի մը :

Երկու բարեկամները նստեցան իրարու դէմ. բժիշկը գլխարկը
նետեց դարակի ցանցին մէջ ու ահագին թաշկինակովը սկսաւ
դէմքի քրտինքը սրբիլ՝ անտանելի տաքէն զանգատելով :

— Իսկ ինչպէս են տիկինն ու օրիորդը. հարցուց Արշակ պահ
մը վերջը :

— Շատ լաւ : Կիրակի հիւրեր ունէինք. սոսկալի աղմուկ էր
առնել, իսկ երէկ չէ՝ նախորդ գիշերն ալ մենք պարոն Տիրանեց
տունն էինք. զըւարթ ժամանակ անցաւ. գիտէք ա՛, քոյրս դեղար-
ւեստի սիրահար է :

«Դեղարւեստի ու ... դեղարւեստագէտի» մտածեց Արշակ. ու սոսկալի նախանձ մը ըզզաց. անոնք անդին իրենց քէ՛ջին կ'ուրախանային, երբ ինքը կըզին ինքըզինքին հետ կը կուէր:

Բարկութիւն մը, չարութիւն մը զգաց յանկարծ այդ բոլորին դէմ. ընկերն ալ, բժիշկն ալ, աղջիկն ալ. ծաղրել, նախատել, խաթել կ'ուզէր. բայց ի՞նչ ըսելիքը չգիտնալով՝ լռեր էր. և իր լռութենէն աւելի կը զայրանար:

Գնացքը թեթեւ մը ցընցըւեցաւ դէպի ետ, ու զգուշութեամբ դուրս սողաց կայարանէն երկաթի դժերու բարդ ցանցին մէջէն:

— Իսկ դուք դեղարւեստը իրան չէք սիրեր. հարցուց յանկարծ Արշակ տեսակ մը հեղնութեամբ:

— Ա՛յ, ինչո՞ւ չէ. երբեմն:

Այս չափաւած պատասխանը տղուն ամենեւին դուր չեկաւ. խօսակցին վրայ յարձակելու պատըրւակ մը կը վնտռէր:

— Երբեմն... Ա՛խ, ըսէք խնդրեմ, դուք ձեր կեանքին մէջ հապա ի՞նչ բան կը սիրէք լրջօրէն, ձեր ամբողջ հուծեամբը:

— Ամբողջ հուծեամբ. ոչինչ:

— Ի՞նչպէս կարելի է այդ տեսակ պարապ խօսքեր ընել, պարոն բժիշկ. Միթէ այդ աստիճան մարդ կրնայ անտարբեր լինել դէպի իր շրջապատը. այդ պարզապէս սնբարոյականութիւն է. անբարոյականութիւն և՛ իր անձին դէմ և՛ ընկերութեան դէմ:

Բժիշկը նախ ժպտեցաւ. ու ակընթարթ մը լուռ ու հարցական տղուն երեսը նայելէ վերջը՝ մտածկոտ ու ծանր-ծանր պատասխանեց.

— Ատեն մը մարդիկները սառանաներով կը վախցընէին. այդ արդէն շատ հինցած է. հիմա ալ բարոյականութեան անուկով սարսափ տալ կ'ուզեն: Բայց ի՞նչ է այդ բարոյական ըսածնիդ. իմ հասկըցածովս՝ մարդու գործելու անքնեղանակը, որ ամենէն աւելի բնութեան պահանջներուն համաձայն է և ընդհանուր ընկերական զարգացման ամենէն աւելի նպաստաւոր, չէ՞ Սակայն հիմա ինծի ըսէք խնդրեմ, ի՞նչպէս պնդել, թէ ո՞րն է ամենէն բնական ու նպաստաւոր գործելու եղանակը. չէ՞ որ այդ մարդու զարգացումէն ու հայեացքներէն կախած բան է, և տարիքի ու անհատի հետ կը փոխուի:

—Դիցուք թէ. բայց ի՞նչ ըսել կ'ուզէք:

—Այս վաչրկեանիս:

—Խնդրեմ, ինչո՞րեմ շարունակեցէք:

Սակայն այդ առաջարկութիւնը բոլորովին աւելորդ էր: Բժիշկի այն արամադրութիւններէն էր, երբիւր սովորական կարճախօսութեան հակառակ, բերնին կծիկը կը քակէր: Այդ կը պատահէր ընդհանրապէս այն օրերը, երբ մէկ-երկու դաւաթ սովորականէն աւելի կոնծած լինէր, որ այնքան ալ հազազիւտ գէպք չէր:

Այդ պայմաններուն տակ բժիշկը կը սիրէր «քիչ մը փիլիսոփայութիւն ընել», ինչպէս ինքը կ'ըսէր: Եւ հիմա այդ «քիչ մը փիլիսոփայութիւն ընելու» երկու դաւաթը արդէն լրացած էր ըստ երևոյթին. աչքերուն տեսակ մը արտայայտութիւնն ալ արդէն նոյնը ննթադրել կու տար: Հաւանօրէն շիտակ ճաշարանէն կու գար:

—Բարոյականութիւնը, սիրելիս, անհատական է և փոփոխական է. ուրիշի ունեցած բարոյական գաղափարները ի՞մ գործերուս ու վարմունքիս չափ չէք կրնար համարեր. այսպէս ալ և ձեր կարծիքները:

—Սակայն կան ամենքի համար ընդհանուր բարոյական հայեացքներ. կայ հասարակաց բարոյականութիւն մը:

—Ա՛խ, ինչ կըվերաբերի այդ հասարակաց բարոյականութեան, որով մեզի շարունակ կ'ըստառնան տէրտէրները, պառաւ կնիկներն ու դատաւորները, այդ բարոյականութեան առնըւազն կէսը արդէն ապացուցւած զուտ անբարոյականութիւն է, ընկերական զարգացման խոչընդոտ տարր. իսկ մնացածի կէսն ալ դեռ չապացուցւած անբարոյականութիւն է: Եւ պարզ է բարեկանս, ուրիշ կերպ լինել ալ չի կրնար. խնդիրն այն է, որ հասարակութիւնը շատ ծանր-ծանր ու շատ դժուար կ'ըսկսի համոզել, որ երբեմն իրեն օգտակար եղող գործունէութեան ձեւը արդէն հինցած է ու միայն փնաս կու տայ այլ ևս. մասսայի համար միշտ այն է լաւը, ինչ որ իր պապի ժամանակ լաւ էր. կեանքի մէջ ամէն նորութիւն, ամէն փոփոխութիւն անոր համար առնըւազն անխուսափելի չարիք մըն է. ուր մնաց այլ ևս իր հայեացքներուն, այն ալ կրօնական, բարոյական, փիլիսոփայական ըմբռնումներուն փոփոխութիւնը: Ժողովրդի հոգեբանութիւնը շարժունութիւն, փոփոխականութիւն չի սիրեր:

իր անգամ մը ըմբռնած բանին անպայմանութեան յաւիտենականութեան դրոշմը տալ կ'ուզէ։ Ան չի կրնար հասկընար, որ մեր գաղափար, օրէնք, մտապատկեր, բարք և այլն անւանածը գոլորշի է միայն. գաղի նման մշտաշարժ ու յարափոփոխ. ան կ'աշխատի այդ գոլորշին հեղուկի, կամ աւելի ևս սառոցի ձևին տակ ֆորմուլի վերածէ՝ դիւրութեամբ պատկերացնել կարողանալու համար։ Ահա այդ քարացած գաղափարներու ծանրութեան տակն է, որ հասարակութեան վիզը ծռեր է, և այդ սառցուցած ըմբռնումներու մէջն է, որ ընկերութեան անդամները ցրտահար կը լինին։

Այս հանդիստ ու լացն տոնով, դասախօսութեան մը նման, միապաշար ու երկարատև խօսածքը, ըստ երևոյթին, շատ դուր կու գար անգլիացիին, որ առանց շարժում մը ընելու շեշտ խօսողի շրթունքներուն կը նայէր։ Եւ երբ բժիշկը շունչ առնելու համար պահ մը լռեց, անգլիացին դարձաւ անոր տարօրինակ ժպիտով մը ու անդիներէն—

— Ներեցէք. պարոնը, կարելի՞ է հարցընել, ինչ լեզուով կը խօսի։

— Հայերէն. պատասխանեց բժիշկը, որ անգլիներէնէ քիչ մը կը հասկընար։

— O! yes, yes. ըրաւ անգլիացին կատարելապէս գոհացած. և երկու անգամ հաղաց։

— Եւ ահա, շարունակեց բժիշկը, այդ բորբոսնած ու քարացած բարոյական գաղափարներուն վրայ հիմնւած անբարոյականութիւն մըն է մեր այսօրւան անտեսական կազմութիւնը իր կապիտալական, վաշխառուական ու պրոլետարիական բոլոր բարդութիւններովը։ Աստ՝ առէք ամուսնութեան արդի կազմութիւնը իր հակահոգեբանական կենսկցութիւններու, կոիւններու, սեռական չափազանցութիւններու, թոյլ ու տկար սերունդներու ու հասարակական անառակութեան համագումարին հետ. միթէ այդ ընդհանուր ընկերական հիւանդութիւնը նորէն հանդարտած չէ՞ նոյն բարոյական ստուած հին հասկացողութիւններուն վրայ։ Ուրիշ օրինակներ կ'ուզէք. ահա կրթական գործը աշխարհքի որ կողմէն որ կամեաք իր կղերական կամ շովինիստական ձգտումներովը, ահա հոգեւորականութիւնը իր բովանդակ աչքակապութիւններովն ու առտաւոցութիւններովը։ Կամ մօտիկ օրինակ մը. գիտէք ես հիմա ուր կ'ըշտապեմ, իմ մէկ

հին սեռախտաւորիս այցելելու. ահա անցած շաբթու յաղթական ժպիտով մը ինծի աւետեց, որ կինը նորէն յղի է. մօտ երեք տարի է խնամքիս տակն է այդ մարդը. ես շատ աղէկ գիտեմ, որ բժշկիչ չեմ կրնար. գիտեմ, որ ակտը անցած է և անցնելու է զաւակներուն, ուրեմն մեր ընկերական զարգացման համար Թունաւոր սերունդ մը առաջացընելով. այդ բոլորը գիտեմ ես. բայց իմ բժիշկի պարտականութիւնս է նորէն երթալ շարունակ այդ մարդը խնամելու, որ ըստ կարելոցն առողջ լինի. դոնէ այնքան առողջ, որ ահա նոր տղաներ ալ հասարակութեան նւիրելու մեծահոգութեամբը բռնկի. ես իմ բժիշկի պարտքս կը կատարեմ, անցն օր հասարակութիւնը ինծնէ կը պահանջէ. իսկ էպպէս. ակտի ծաւալմանը միայն կը ծառայեմ ե՛, սիրելիս, այդ հարցերուն վրայ կեանքիս մէջ յաճախ առիթ եմ ունեցեր մոտճելու:

Արշակ, որ այս երկար մենախօսութեան միջոցին քանի մը անգամ առարկիւ կուգէր և շարունակ բժիշկի կողմէն կ'աբգիւլէր, վերջապէս նեղսրտած խօսքի հասաւ.

—Բայց և այնպէս իմ աչքիս ոչ վաշխաւուն է ընկերութեան դէմ մեղանշող բուն անբարոյականը, ոչ հողեւորականը, ոչ սեռական կամ հոգեբանական անճոռնիութիւններով ապրողը, և ոչ ալ ատոնց գումարէն կազմուած մասսան, այլ միայն, ներեցէք ինծի, դուք և ձեզի-պէսները:

—Այսինքն, բարեկամս. հարցուց բժիշկը ներողամիտ ժպիտով:

—Այդ մարդիկը անբարոյական չեն կրնար լիներ այն պարզ պատճառով, որ տգէտ են, չգիտնալով կատարած անբնականութիւնը անբարոյականութիւն չէ, այլ պարզապէս սգիտութիւն: Իսկ ինչպէս արդարացընենք ձեզի. եթէ դուք այս կամ այն հանգամանքի օգնութեամբ արդէն հասեր էք այն աստիճանի, որ վերէն կը նայիք, և ընկերութեան կուրօրէն ինքըզինքին տըւած վէրքերը կը տեսնէք, ինչո՞ւ համար կը լռէք, ինչո՞ւ այդ չէք հասկըցընէր ժողովրդին, ինչո՞ւ անոր աչքերը բանալու չէք ջանար:

—Է՛, դեռ շատ լսարանական ոճով կը խօսիք. դեռ քիչ մը կեանքի մէջ մտնելու էք: Բարեկամս, մատի վրայ համըլուող անհատներու ըսելէն-խօսելէն ոչինչ չենէր իրապէս. այդ մէկ երկու տասնեակին կամ, դիցո՞ւք, հարիւրեակին դէմ ամբողջ վոհմաններ

կան իրենց նախապաշարումներուն ուժովը, և աւանդական-պահպանողական դատողութիւններովը զինւած, մասսան միշտ պահպանողական է. ինչ կ'ուզես ըրէ, յառաջդիմութիւնը ծանր-ծանր պիտի լինի ու կամաց:

— Բայց չէ որ անհատներէն խումբեր կը ծնին, և չէ որ վերջապէս անհատի մը սուած զարկը երբեմն կրնայ տարի մը ընելիք գործը կրճատել:

— Վերացական խօսքերը մէկդի: Հիմա զուք կը պահանջէք երեւի, որ խօսիմ, վիճեմ, քարոզելու ելնեմ այն բոլորը, ինչ որ քիչ մը առաջ ձեզի կ'ըսէի: Աղէկ. բայց զիտէք, որ այդ համոզումները իւրացընելու համար ես եօթէն-ութը տարի համալսարաններէ քարշ եկեր, և վերջն ալ նոյնչափ տարիներ կեանքի մէջ այդ մտաւոր պատրաստութեամբ խորհեր եմ. արդ՝ որպէս զի իմ զաւակներս մէկը իսկապէս ըմբռնել կարողանայ, իմ իւրացուցած գիտութիւններու գոնէ տարրապէս բայց նոյն ուղղութեամբ ծանօթ պիտի լինի: Հակառակ պարագային կամ բառերս որսացող և առանց ոչինչ հասկընալու կրկնողներ զուրս կու գան, որոնք ամենաանտանելի մարդիկն են ինծի համար, կ'ամ նոյն բառերուս պոչէն բռնած բարոյական քննադատներ:

— Նայ, պարո՞ն բժիշկ, այդ պատրւակ է, բայց ո՞չ պատճառ:

Գնացքը կանգ էր առած Գում-դաբուի առջև:

Բժիշկը ելաւ ոտքի:

— Է՛, ցտեսութիւն. մէկ ուրիշ անգամ կը շարունակենք. իսկ հիմա երթամ իմ սեռախտաւորին բարոյական պարտքս կատարելու. Հեգնեց բժիշկը, ոտքը վազոնի սանդուղին:

— Եւ նիւթական. աւելցուց Սրշակ, աջով բարեկամին ձեռքը թօթելով, իսկ ձախի բութն ու ցուցամատը իրար շփելով:

— Ա՛խ, այդ ինքնին հասկընալի է. ճիծաղեցաւ բժիշկը վարէն: Վազոնին գուռը ուժով մը գոցեցին:

Գնացքը շարժուեցաւ:

Անդիսացին ձախ ձեռքը ծունկէն քիչ մը բարձրացուց ու դրաւ նորէն ծունկին.

— O! yes. միմնջելով ակռաներուն մէջէն, սատանան զիտէ ինչու:

ԺԴ

Տիրան ընկերոջը կողի մեկնելուն յաջորդ օրը կերպ մը ինքը-
զինքը զբաղեցընելու և իր հոգեկան անտանելի վիճակէն ազատե-
լու համար, ելաւ իր մէկ դպրոցական ընկերը տեսնելու գնաց, որ
հիմա նկարիչ էր և Եւսկիւտար կը բնակէր:

Երկաթուղիին և շոգենաւին մէջ մտքերը ցրիւ, անորոշ ու
բուժ զգացումներով քաշւեր նստեր էր մէկ կողմ: Նոյն հոգեկան
կապած տրամադրութեամբ ալ հասաւ ընկերոջը տունը: Գուռը
բացողը ընկերոջը մայրն էր, որ յայտնեց, թէ տղան վերը իր աշ-
խատանոցն է:

Տիրան անակընկալ մը ընելու համար՝ ոտքի մատներուն վրայ
կամաց մը բարձրացաւ սանդուղներէն ու մօտեցաւ աշխատելու սե-
նեակին դռանը, որ կռնակի վրայ բաց էր:

Սենեակը կը նայէր պարտէզին կողմը և բոլորովին շուքի մէջ
էր. բոլոր պատահանները լայն բացւած էին, ուրկէ առատ լոյս
ու թարմութիւն ներս կը թափւէր:

Տիրանի առաջին զգացումը ակորժ գովութիւն մը եղաւ, որ
սենեակի սեմէն իր յոգնած ու տաքցած դէմքին զարկաւ:

Ընկերը՝ երկարահասակ բարակ տղայ մը՝ կեցած էր կէս մը
դէպի դուռը դարձած, ներկերու մէջ թաթխւած երկար գորշ շա-
պիկը վրան, երանգապնակը ձախ ձեռքի բոյթին, իսկ միւս ձեռքը
վրձինը, որով խորասուզւած կ'աշխատէր:

Տիրան ազահութեամբ սկսաւ դիտել անոր դաստակին ու վըր-
ձինին վարժ ու ոսոռստուն շարժումները, և անոր սուր-մօրուք
կիսադէմը, որ վրձինին հետ համաչափ ջղուտ կծկումներ կ'ընէր:

Նկարիչը պահ մը կանգ առաւ. վրձինը բռնած ձեռքը դրաւ
կուշտին, քայլ մը ետ գնաց, գլուխը նետեց ետ ու սկսաւ պատ-
կերին նայիլ:

Եւ Տիրան նկարը տեսաւ:

Համալի մը գլուխն էր. Այրած առնական դէմք մը խոր ան-
կիւնաւոր դիմագծերով. արտայայտիչ ու մեղամաղձոտ աչքեր. խո-
շոր արծւի քիթ մը. ճակատը խիւ մազերուն տակ կէս մը սքող-
ւած, քոլող մը գլուխը. ու թաւ մաղոտ լայն կուրծքին վերին
մէկ մասը, որ բաց մինթանին տակէն կ'երևէր:

Այնքան բնական ու սիրուն էր նկարը, որ Տիրան չկրցաւ իր զգացմունքը զսպէ:

— Կը շնորհաւորեմ, Էդւարդ. հիանալի է:

Էդւարդ ցընցըւեցաւ, դարձաւ ետ և ուրախացած վազեց ընկերոջը վրան.

— Ա՛. Տիրան, դձնէ: Է՛, կը հաւնիս պատկերիս, հա՛:

— Հիանալի է. կարծես կենդանի լինի:

— Ալ ի՞նչ պարծես. ի հարկէ որ կենդանի է. իմ հողիս, իմ ջիղերուս ուժն է անոր մէջ հիմա: Եթէ զիտնաս ի՞նչ ողբերութեամբ եմ աշխատած այդ դէպքի իւրաքանչիւր դժին, մազի իւրաքանչիւր ոլորին. աչքերու, մա, այդ աչքերու արտայայտութեան մէջ կեանքիս մէկ մասն եմ խլած ու դրած. արդէն վերջացած է դրէթէ. վիզը դեռ քիչ մը սրբագրել կ'ուզէ. սա մէկ-երկու երակները աւելի դուրս ցատկեցընելու է, և... Գիտե՞ս, Տիրան, այս իմ ամենայաջող գործս է: Ա՛, ի՞նչ հաճոյք, երբ մարդ գործ մը արտադրած է. բան մը ստեղծած և ինքը իր աշխատանքէն զոհ է. ապրած ես դուն այդ զգացումը. հաւտան, որ այդ հողեկան վիճակը ամենէն երջանիկ վայրկեանն է մարդու կեանքին մէջ: Գործել, ստեղծել, ստեղծագործել. չէ՞ որ այդ ինքը աստուածութիւնն է. ա՛յն աստուածը, որ մարդկութիւնը միշտ պաշտեր է ու պաշտելու է. ստեղծող, արտադրող ուժը: Այո՛, մենք մեզի կը պաշտենք, ա՛յդ է ճշմարիտը. «աստուած» գաղափարը մեր սեփական գործող, արտադրող ուժին իդէական պատկերացումն է. մարդու երևակացած իդէա՛լ մարդը:

Տիրան յափշտակած մտիկ կ'ընէր դեռ ոտքի վրայ:

Էդւարդ ակընթարթ մը լռեց, շփեց սուր մօրուքը և ժպտելով քաշեց ընկերոջը թևէն.

— Է՛, զոհ ես այս նոր տեսակի կրօնի դասէս: Եկու՛ր նստէ՛. բաց անկարելի է չողբերիլ. ստեղծելու հաճոյքին զուցէ միայն սիրելու հաճոյքը մրցակցել կարողանայ. սիրել... կեցի՛ր:

Ձեռքը օդին մէջ պարզած, աչքերը մոլար վայրկեան մը մնաց անշարժ, մտախոհ. և յանկարծ ուժգին շարժումով մը ձեռքը իջաւ. ու զարկաւ ճակտին.

— Բան, կ'ըմբռնիմ. չէ՞ որ սիրոյ հաճոյքն ալ ինքնին ստեղ-

ծելու հաճոյքն է. գիտակից թէ՛ բնազդական—նոյն է այդ. սերունդը, մարդու ստեղծագործութեան ամենէն վեհը, իր նմանին ստեղծագործութիւնը. և ի՞նչպէս է մինչև հիմա չէի մտածեր: Բայց, է, թողնենք փիլիսոփայութիւնը. պատմէ՛ տեսնենք ի՞նչ կայ, ի՞նչ չի կայ. դուն ի՞նչ վիճակի ես:

—Ճիշտ քուկիւնիդ հակոտնեան. անսովոր ցրածութիւն մը, զգոհութիւն մը կայ վրաս. ճնշող, թուլացնող, և անտանելի. ալ դատարկութիւն մը. ահա հոս:

Ու ձեռքովը կուրծքը զարկաւ:

—Երևի անգործ ես անկէ է. արձակուրդի պատու: Նոր բան գրած ես. վերջին ոտանաւորներդ ես չի հաւնեցայ շիտակը. մեղամաղձոտ շեշտ մը կայ մէջը. առողջ, ուժեղ բաներ գրէ, հոգիդ սիրես. այդ սանտիմենտալ հիւանդները բանաստեղծութիւնը հիւանդանոց դարձուցին:

—Է՛, սիրելիս, առողջ բան գրելու համար առողջ հոգի ունենալու է. երբ տրամադրութիւնս ընկճւած է՝ ես չեմ կրնար երգերուս մէջ ծիծաղ, յոյս, բոց, լոյս թափել. ուղեւ-չուղեւ գոց-ները կը գորշանան:

—Այն ատեն մի՛ գրեր:

—Ա՛հա քեզի պարապ խօսք: Եթէ քու տրամադրութեանդ դուր չէ եկեր գրածս, մի՛ մոռնար, որ անգին նման հոգեկան վիճակի մէջ զանրւոյններ կան, որոնց համար ակորժելի պիտի լինի. ամէն գրած ամէնքի համար չէ: Սակայն այդ մէկդի. հիմա ինծի տանջողը հոգեկան այս սոսկալի պարապութիւնն է:

—Սիրոյ պահանջ, գուցէ:

—Ո՛ւ. կարելի է. ինքս ալ չգիտեմ. թէև տակը պատմութիւն մը կայ. քանի լ՛ը ատենէ ի վեր աղջիկ մը կը ճանչնամ. գրաւի, սիրուն բան մը. ինծի սկսաւ հետաքրքրել. բաւական մօտեցանք. սկսայ սիրել, կամ գոնէ այդպէս կը կարծէի. և ահա երկրորդական միջադէպ մը մէջ եկաւ. պահ մը ինծի այնպէս թւեցաւ, թէ աղջկայ խելքը՝ ուրիշ տղու հետ է. իհարկէ քիչ մը զայրացայ, միջադէպը անցաւ, իսկապէս մէջտեղ ոչինչ չի կար, բայց պաղութիւնը մէջս մնաց. և վերջնականապէս. շիտակը հիմա ինքս

ալ կը զարմանամ ինչպէս այդ զգացումներս մէկէնիմէկ ընդհատեցան մէջս:

— Ձարմանալու բան չի կայ. բաւական ընդհանուր զգացում է այդ. մանաւանդ բանաստեղծական հակումներ ունեցող թարմ երիտասարդներու համար: Դիւրագրգիւ ջիւերը, լեցւող տարիքը, իբրեւ արեւստաւոր գեղեցիկ գրականութեամբ ու գեղարեւտով շարունակ զբաղւած լինելը, և ինքն ալ արտագրելու համար շատ զգալու, շատ ապրելու ծարաւը, միշտ բոլորը միասին կ'առաջացնեն սիրելու և սիրւելու սոսկալի պահանջ մը. բաց եկնուր տես, որ սէրն ալ ներքին, արտաքին ու կողմնակի հազար պայմաններէ կախումն ունեցող բան է, մանաւանդ այդ կարգի նրբացած ճաշակի ու խտապահանջ մտքի մարդոց համար: Եւ ահա կ'ըսկսի հոգեկան պարապը. ու խենթի պէս ամէն կողմ սիրոյ փնտրւում քը. և քանի որ իրական սէրը կ'ուշանայ, ասպարէզը կը մնայ զգացմունքի քոքէթով-թիւններուն, երեւակայութեան քմահաճոյքներուն: Բաւական է քիչ-շատ դրաւիչ աղջիկ մը. և անմիջապէս գլխուն մէջ պատրանքը իր ոստանը հիւսելու կ'ըսկսի. քանի մը հաճոյսխօսութիւն, մէկ-երկու նայւածք, անորոշ լի կատակ մը. և երեւակայութիւնը այդ չնչին ատաղձէն ահադին շէնք մը կառուցած է արդէն. և շղթան ձգւած է իր ու այդ աղջկան մէջ, կամ աւելի ճիշտ անոր դիմագծերովը իր մտքի ստեղծած աղջկան. սիրահարւած է. միայն իհարկէ ինքն իր մէջ, տարտամ վախով մը աղջկան շատ մօտէն նայելու խուսափելով: Դուն աղջկանդ բան մը ակնարկէր ես:

— Ո՛չ մի բառ:

— Կը տեսնես. և քու ըրածդ բացառութիւն չէ. բնագրական է այդ. որովհետեւ երկիւղ ունիս, որ ջանկարծ խաղի թուղթերէ կառուցած շէնքդ թեթեւ հովէ մը կը փչի. բաց եթէ մանուկը իր շարած թուղթերուն փելով-կը վարանի, միւս ընկեր երախաները անոր նման խղճահարութիւններ չունին. ձեռքի թեթեւ շարժում մը, փոքրիկ առիթ մը, և փաւ: Ու դուն մէկ նայւածքով կ'ըմբռնես, որ այդ բոլորը քու ուղեղիդ խաչն էր, որ իրապէս այդ աղջիկը քեզի այնչափ հետաքրքրած է, որչափ քու ծանօթ միւս սիրուն օրիորդները:

— Այո՛. ճիշտ այդպէս:

— Եւ կ'ըսկսիս զայնոյթ զգալ ինքի անձիդ դէմ, քու վերա-
ցականութեանդ դէմ. կ'ըսկսիս երեւակացութիւնդ մեղադրել. քեզի
զգայնոտ, հիւանդ ուղեղի տէր անւանել, վրադ ունեցած վստահու-
թիւնդ կ'իյնայ. տեսակ մը բարոյական լքում, որուն կը միանայ և
հին սիրելու պահանջը աւելի անորոշ, բայց և աւելի խորէն, և
ահա կը գոյանայ հոգեկան այդ դատարկը, որ լեցւիլ կ'ուզէ բանով
մը, և որ անպատճառ լեցրնելու ես:

— Սակայն դուն ուրի՛ք գիտես այդ ամբողջ հոգեբանական պրո-
ցէսը իր բոլոր մանրամասնութեամբ. հարցուց Տիրան զարմացած:

Եղարդ առանց պատասխանի հեռացաւ, և եռոտանիի մը
վրայ դրած պատկերին վրայէն ճերմակ պատտառը անդին նետեց:

— Ի՞նչ սիրուն աղջիկ է. ո՞վ է այդ. հարցուց Տիրան աշխոյժ
տղքի ցատկելով:

— Ձե՛ս ճանչնար. քու սիրուհիդ:

— Սիրուհիս:

— Այո՛. քո՛ւ կամ իմ, միւսնոցն է. մենք նոցն տարիքի, նոցն
կրթութեան, նոցն միջավայրի և նոցն նկարագրի տղաք ենք. այս
ալ քու սիրուհիիդ քոյրն է. անցն, որ ես ճիշտ քեզի պէս սիրեր եմ
երազանքի մէջ, և երբ ինձի անըջանքէս արթնցուցեր են. քեզի
պէս տանջուներ եմ սրտի պարապութեան, դժգոհութեան, անկման
զգացումներով, մինչև որ...

Խօսքը ընդհատեց. աչքերը նկարին, ժպիտը շրթունքին ան-
շարժ մնաց:

— Մինչև որ... մինչև որ ի՞նչ. հարցուց Տիրան լարած հե-
տաքրքրութեամբ:

— Մինչև որ ինքըզինքս համոզեցի, թէ այդ երեւակացութեանս
խաղն ալ կրնար բանի մը պէտք դար, և թէ այդ հոգեկան կեղեք
ման սիրուն վերջակէտ մը կարելի էր զնել:

— Այսինքն:

Եղարդ լուռ ցուցամատովը նկարը մատնանիշ ըրաւ:

Ու նոցն վայրկեանին Տիրանի մոքէն կայծակի պէս գաղափար
մը սլացաւ:

Մինչ եղարդ կը շարունակէր.

— Գործէլ, արտադրէլ. անդ միայն վիշտերը կը սրբէ, կը լեցընէ դատարկութիւնները. հոգեկան ամենաբուժը: Իմ երազունքիս իդէացուցած դէմքը առի կտաւին, ու փոթորիկը հանդարտեցաւ. Վենուսը ծնած էր ծովէն:

Տիրան երազոտ աչքերով ընկերոջը կը նայէր:

Քանի մը ժամ դեռ միասին էին. Տիրան գրեթէ լուռ էր, կը լսէր միայն:

Ընկերը խօսեցընելով ալ իջաւ երեկոյեան նաւամատոյց, ուր հազիւ հասաւ վերջին շոգենաւին:

Ծովուն վրայ արդէն մութ էր գրէթէ:

Բարձրացաւ շոգենաւին վերնայարկը, քաշեցաւ անկիւն մը, ու հայեացքը ետ-ետ փախչող ջուրին յառած, անիւներու ու մեքենային դղրդիւնին տակ օրօրուն, լարւած մտքով կը մտածէր:

Կ'ըստեղծէր:

Վէպի մը ծրագիրը շատոնց կար գլխուն մէջ. հին ու նոր սերունդի ու գաղափարներու մաքառման պատկեր մը. միայն նոր սերունդի ներկայացուցիչները ընտրելու կը դժարանար. նոր տիպերը և վիպական զօդածքը. դեղարւեստօրէն ամենադժւարը. և հիմա արդէն ըրած էր իր գիտը: Երկու նոր դէմքեր իր աչքերուն դէմ էին իրենց ամբողջ թարմութեամբ. մէկը Եղևարդը, երիտասարդ ոգևորւած նկարիչ մը նոր զգացումներով ու ազատ գլխով, որու հոգին այնչափ նման էր իր հոգիին, և նկարելու ոչ մէկ դժւարութիւն չունէր: Եւ Եղևարդին քով Վերժինը. իր երեակայութեան մէջ այնչափ փաշտօնացած և իդէալացուցած Վերժինը. թարմ ձգտումներով, հասարակական գործունէութեամբ ոգևորւած, եռանդոտ կանացի դեղեցիկ դէմք մը: Եղևարդ ու Վերժին զրաւ Տիրան իրարու քով: Հին բարոյական գաղափարներու, կաշկանդումներու ու փոտած հայեացքներու դէմ. և վէպը պատրաստ էր իր դրամատիզմով:

Սկսաւ խրիլ ու խրիլ մանրամասնութիւններուն մէջ. ծրագրի, դէմքերու, տեսարաններու կազմութեան մէջ. իր միտքը անց պատկերէն անց պատկերը կը թռչէր, հոգեկան մէկ վիճակի նկարագրէն դէպի միւսը: Ա', ինչ առատ նիւթ կայ եղած իր գլխուն մէջ, և որ ինքը բնաւ չէր զիտակցած. և ինչպէս պատրաստ:

Ամենևին չգիտէր, թէ ինչպէս բազմութեան հետ ելաւ շոգե-

նաւէն, անցաւ կամուրջը, Սիրքէճին, ինչպէս մտաւ գնացքը, հասաւ տունն. ու իր գրասեղանին առջևը ձեռքը ճակտին դրած շարունակեց սուգւած մտածել:

Գիշերաշրջիկի մը նման ոչինչ չէր տեսներ, ոչինչ չէր լսեր իր շուրջը. ինքը իր ստեղծած աշխարհին մէջ կապրէր, իր տիպերուն հետ, որոնք հետզհետէ աւելի ու աւելի գոյն ու ձև կառնէին, ու աւելի տիպիկ կը դառնային:

Սփաթեցաւ, երբ եկան ու ընթրիքի կանչեցին:

Սաստիկ յոգնած էր. ու գլուխը ծանրացած:

Ուրախ-ուրախ վար վազեց:

— Տղայ, հիւանդ ես, ինչ է. այդ ինչպէս աչքերդ կը վառին. հարցուց մայրը հոգատար շեշտով մը:

— Հիւանդ. ամենեւին. բայց զուցէ. է, ո՞վ գիտէ, չգիտեմ. վրայ տաւ Տիրան իրարու հոռէ կէս ցրւած, կէս անփոյթ:

ԺԵ

Սուերները սկսեցին թանձրանալ:

Արշակ մոտսոյց կեցած էր իրենց տան դուռը և յառած աչքերով կը նայէր հեռուն, երբ քովի փողոցէն դուրս ելաւ Տիրան և ինկերը նշմարելով՝ ուրախութեամբ վրան վազեց.

— Վայ. արդէն եկի՞ր ես:

— Այո, հազիւ քանի մը ժամ է. ընթրիքէն վերջը քեզի պիտի գայի:

— Երևի մինակութիւնն ու ազատութիւնն ալ մէկ շաբաթէն աւելի անտանելի է, հէ. բայց ժամանակդ ինչպէս անցուցիր տեսնենք:

— Ոչինչ. քիչ մը զբաղեցայ, քիչ մը շրջեցայ. մէջէմէջ այսպէս ինքըզինքը թարմացընել պէտք է. ամբողջովին բնութեան ծոցը:

— Իհարկէ:

— Բայց դուն ինչո՞ւ անգամ մը չեկար:

— Ե՛, ես թարմանալու պէտք չունէի. արդէն թարմացած եմ՝ պէտք եղածէն աւելի: Արշակ, գիտե՞ս ինչ փոփոխութիւններ է անցեր մէջս քու երթալն ի վեր. ուժ, եւանդ, ոգևորութիւն, աշխատանք բոլորը բոլորը դարձեր են նորէն ինծի:

Արշակ կամաց մը շրթունքը խածաւ.

—Միթէ:

—Հիմա ես ամբողջ ելեքտրականացած եմ. ձեռք որ դպցընես կայծ դուրս կու գայ. բը՛ր՛ռռ. անդինս:

Ու թեթեւ մը ընկերոջը թեւէն քաշելով՝ սկսաւ խնդալ:

—Եւ ինչն է քու այդ ելեքտրականութեանդ աղբիւրը. հարցուց Արշակ ինքը իր հարցէն ցընցըւելով:

—Աղբիւրը. է, ես ինչ գիտնամ. այդ իմ մէջն է, կրճքիս տակ, գանգիս տակ, ինչպէս որ կ'ուզես: Գիտե՞ս, Արշակ, վէպս սկսած եմ արդէն. և ոչ միայն սկսած, այլ, երեւակայէ, այս չորս-հինգ օրւան մէջ տասը հատուած բան եմ գրած. գրեթէ քառորդը. խաղալիքի պէս. վաղը քեզի քանի մը կտոր կարդամ. վստահ եմ, որ շատ պիտի հաւնիս. քու սիրած ժանրէդ դուրս եկաւ. մանաւանդ հերոսուհիիս դէմքն ալ քեզի աղէկ ծանօթ է:

Արշակ նորէն ցընցըւեցաւ.

—Իրա՞ւ:

—Հապա, գալիր տեսնեմ. բայց հիանալի հիանալի տիպ է. քանի կը գրեմ, այնքան կ'ոգեւոր իմ. արդէն անշուշտ գուշակեցիր:

—Չէ:

—Բայց ուղեղդ շատ բթացեր է այսօր, Արշակ. երեւի կղզիին օդը քեզի չեկաւ: Վերժինը, Վերժինը, հոգիս:

Արշակ վայրկեան մը չի սլափախանեց. կը վախնար, որ ձայնը իրեն կը մատնէ:

—Է՛, ինչ կ'ըսես. հարցուց տղան անհամբեր:

—Հետաքրքիր է:

—Չէ: Քալէ, քեզի հիմա մէկ-երկու կտոր կարդամ. վրայ բերաւ Տիրան հոտզհետէ աւելի ոգեւորւելով:

—Ո՛չ. հիմա գործ ունիմ ներսը. ուրիշ ատեն:

—Այդ չեղաւ: Դէ՛, ուրեմն ես ալ երթամ. բայց նայէ՛ տուռները ինծի չի գաս. կ'ըզբաղւիմ. միայն ճաշէն վերջը: Յը՛:

—Յը՛:

—Թրանլանլան... մեղդի մը մռլտալով և գաւազանը արագ ձեռքին մէջ պտտցընելով՝ հեռացաւ:

Արշակ կեցած տեղէն ընկերոջը կը հետեւէր:

Ակամայ մտաբերեց իր մեկնելու օրը անոր խեղճ ու ճմլըած վիճակը, ու ներկային հետ համեմատեց:

«Եթէ գիտնաս ի՞նչ փոփոխութիւններ են անցեր մէջս», հնչեց դանդին տակ:

«Է՛, երեւակայելը դժար չէ. արդէն դործը վէպի հերոսութեան է հասեր. բանաստեղծ սիրահար ունենալ, ոչ ի՞նչ. մարդ կ'անմահանայ, իհարկէ...»:

Եւ դէմքին հեղնութեան ժպիտ մը բացւեցաւ:

Գնաց ներս ու մտաւ սենեակ, ուր քոյրը պատուհանին տակ նստած, լոյսի վերջին մնացորդները որսալով՝ ձեռքի կարը վերջացընելու կ'աշխատէր:

Գնաց շիտակ քրոջը դիմացը կեցաւ. ու մէկէնիմէկ հարցուց.

—Մաննիկ, ինձի կը սիրե՞ս:

—Այդ ի՞նչ խելառ հարց է. քեզի չսիրեմ, ուրիշ ով պիտի սիրեմ:

—Պարնայ խօսք: Սիրուն, խելացի ու տաղանդաւոր տղամք են պակաս: Եւ ըսէ, ինչորեմ, մէջս մասնաւոր ի՞նչ կայ, որ ի՞նչ սիրես: Գեղարեստական շնորհք մը չունիմ, նւազ մը չգիտեմ, երգել անգամ չեմ կրնար. ո՛չ ձիւրք մը, ո՛չ տաղանդ:

—Նախ այդ ճիշտ չէ, և երկրորդ դուն ալ ունիս այն տեսակ առաւելութիւններ, որ ուրիշ շատ քիչերը ունին:

—Օրինակ:

—Ա՛յ. ձեռներէցութիւն, կնմք, դործունէութեան սէր, ընկերութեան բարձրացմանը աշխատելու անկեղծ ձգտում...:

—Է՛հ, ուռուցիկ խօսքեր. այդչափը ով չունի, որ երիտասարդը:

—Եւ վերջապէս ընդարձակ զարգացում. ամենաէականը:

—Թո՛ղ, հողիդ սիրես, իմ ապուշ փիլիսոփայութիւնս մէկ կողմ ցաւը հոտ է: Դուն այն ըսէ ինձի, կայ մէջս բան մը, որ ուրիշին անմիջապէս հրապոյր պատճառէ, գրաւէ, որ, օրինակ, քեզի զրդէ ինձի սիրելու:

—Անկասկած, իհարկէ: Սակայն վերջապէս ինչի՞ս պէտք այդ բոլորը. ես առանց այդ ալ քեզի կը սիրեմ. չէ որ եղբայրս ես:

—Ա՛խ, ուրեթի, այսպէս ըսած, պաշտօնապէս, կցեց տղան դռն շեշտով մը:

—Բայց, Արշակս, ամօթ քեզի. պոռաց աղջիկը այլայլած. ու ցատկեց ոտքի ձեռքի կարը աթուղին վրայ նետելով:

Արշակ խղճահարեցաւ, մօտեցաւ քրոջը, ձեռքերը դրաւ անոր երկու ուսերուն:

—Մի նեղանար, անգինս. կատակ է ըրածս. շաբաթ մըն է քեզի կարօտցեր եմ, ուրիշ ոչինչ: Համբուրէ ինձի անգամ մը... անգամ մըն ալ... անցդէս: Դէ, նստէ քովս ու խօսինք միասին. կից, ինձի բոլորովին կից...

Խեղճ աղջիկը անոր թևերուն մէջ՝ յուզւած ու զարմացած եղբօրը աչքերուն կը նայէր ժպտուն:

Արշակ յաջորդ օրերը շարունակ դուրսն էր. կամ Ստամբուլ, կամ Ղալաթիա. ընկերներուն քով, խմբազրատունը. տունը մնալէն խոյս կու տար, ու կ'աշխատէր ուշքը ցրելու: Անգամ մը միայն զնաց Տիրանին, բայց անոր բաց, զւարթ ու ոգևորւած հոգեկան տրամադրութենէն այն տեսակ ճմլում մը զգաց, որ պատրուակով մը իսկոյն ետ դարձաւ: Գոնէ քաղաքավարութեան համար անգամ մը Պղտիկեաններուն երթալը անհրաժեշտ էր. քոյրը արդէն քանի մը անգամ առաջարկեր էր իրիկուն մը երթալու, բայց տղան միշտ յոգնածութիւն կամ զործ պատճառելով օր օրի կը ձգէր: Տեսակ մը երկիւղ ունէր աղջկան վերստին հանդիպելէն:

Կիրակի ճաշէն վերջը Տիրան եկաւ, և քոյր ու եղբայր անոր հետ ելան շրջելու: Թէ Տիրան, թէ Մաննիկ շատ ուրախ տրամադրուած էին. սքանչելի ալ օր էր: Արշակ անոնց հոսանքով զնաց կէս դիմամբ, կէս ակամայ: Վազեցին, երգեցին, ծովուն ափը քար նետելու փորձեր ըրին. և ախորժակնին բաց վերադարձան տուն. և ընթրիքին ալ Տիրանը իրենց պահեցին:

Հազիւ էին սեղանէն ելեր, որ դուռը զարնւեցաւ, ու բացուելուն պէս լսեցաւ բժիշկի հաստ ձայնը.

—Ե՛, պարոն Արշակը ռւր է, տեսնե՞ք: Ա՛յ, այ, այ. դուք ձեզի շատ սուղ սկսաք ծախել. ռւր էք այս քանի օրը. անգամ մը գոնէ այցելելու էիք. զէթ մեր կիսատ մնացած վէճը աւարտելու համար. տեսէք, նորէն ես չհամբերեցի:

—Եւ շատ ալ լաւ ըրիք: Ներեցէք, վերջին օրերս ես քիչ մը զբաղւած էի:

—Բարև ձեզի, պարոն Արշակ. բարի էք եկեր. ըսաւ Վերժին ձեռքը տղուն մեկնելով:

Արշակ թեին ու ձայնին դողը սանձել ջանալով՝ բարևեց, շնորհակալութիւն յայտնեց, քանի մը քաղաքավարական նախադասութիւններ ըսաւ:

Ու բոլորը միասին զիմեցին դէպի վերի յարկը:

—Ա', օրիորդ Մաննիկ, շատ ձախորդ ընկերուհի էք, այս շաբթու ամէն իրիկուն յոյս ունէի, որ պիտի գաք. կը գանգատէր Վերժին ընկերուհիի մէջքին փաթթուած սանդուղներէն վեր ելնելով:

—Ճմարիտ ինծի մի՛ մեղադրէք. յանցանքը եղբօրս է. ան վերջին ատենները տեսակ մը վայրենի է դարձեր. ոտքով-գլխով ինկեր է իր գործերուն ետեւէն: Ի՛նչ և է. աեղը կը հաննք:

Մտան վերի սրահը:

—Պարոն Արշակ, դուք հոս հրամեցէք. ըսաւ բժիշկը իր քովը աթոռ մը մատնանիշ ընելով: Սկէք, քիչ մը միասին փիլիսոփայութիւն ընենք նորէն: Հէ, ի՛նչ կ'ըսէք, պարոն Տիրան. չէիք ուզեր մասնակցիլ:

—Ախ, շատ շնորհակալ եմ. բարի յաջողում: Իսկ ինչ կը վերաբերի ինծի, ես կը նախադասէի հոս իմ օրիորդներուս հետ բանաստեղծօրէն ժամանակ անցընելու. իհարկէ, եթէ ազնիւ օրիորդները ինծի իրենց շրջանին մէջ առնելու հաճին:

—Խնդրեմ, խնդրեմ. ըսաւ Մաննիկ:

—Ախ, դուք անուղղելի. բացականչեց բժիշկը ծիծաղելով:

—Բայց իբրև մեր ընկերութեան մուտքի վճար յանպատրաստից զւարճալի բան մը պիտի պատմէք. աւելցուց Մաննիկ:

—Նա. ստիպւած եմ ընդունելու:

—Կ'ըստեսէնք:

Տիրան բազկաթոռի մը հակառակ մէջքին կրթընած, կռնակը բժիշկին ու Արշակին, վայրկեան մը ճակատը շփեց. և սկսաւ պատմել:

Մինչ անդին բժիշկը բանաստեղծութեան ու փիլիսոփայութեան իրարու հետ ունեցած ընդհանուր գլխաւոր գիծերը սկսած էր վերլուծելու, և այն եզրակացութիւնը հանելու կը ջանար, թէ փիլիսոփայութիւնն ալ իսկապէս տեսակ մը բանաստեղծութիւն է:

Արշակ միայն արտաքուստ խօսակցին լսել կը կեղծէր, իսկ իր ամբողջ ուշքը միւս խմբի մօտն էր:

Տիրան կը պատմէր անասելի լրջութեամբ: Եւ աղջիկները կը խնդային հնչիւն ծիծաղով մը. կը խնդար և Արշակի մայրը, որ նոյնպէս մօտիկ նստեր էր:

Վերժին կէս մը Մաննիկին յենած, կը հետեւէր պատմութեան ծիծաղը միշտ շրթունքին, ձուքին մէկը անփոյթ մը քովի աթոռի թիկունքին նետած: Խնչպէս սիրուններ էր. Արշակ այդ զգաց. ու կը տեսնէր միևնոյն ժամանակ, թէ ինչպէս աղջիկը իր կողմն անգամ չէր նայեր՝ ամբողջովին Տիրանի դէմքէն կախւած:

Ու վայրենի նախանձ մը յանկարծ մտաւ մէջը. կ'ուզէր վեր ցատկէ, երթայ ու կտրէ անոր պատմութիւնը, կ'ուզէր երթայ... ինքն ալ չգիտէր, թէ ինչ կ'ուզէր, և անդրադարձօրէն իր աթոռին յենարանը կը սեղմէր բոլոր ուժովը:

Մինչ բժիշկը կը շարէր իր անվերջ դատողութիւնները, ու մէկը միւսի ետեւէն եզրակացութիւններ կը հանէր. և բերնէն փչող ալքոլին հոտը կրնար ենթադրել տար, որ այդ տրամաբանական զրգուած գործունէութիւնը այնչափ ալ շուտով վերջանալու դիտաւորութիւն չունէր:

Քիչ մը վերջը խուճի առաջարկով՝ Մաննիկ նստեցաւ նւագելու. Տիրան ալ ջութակը ծնոտին տակ պատրաստ կեցած էր քովը: Նւագը սկսաւ: Ամենքը լռեցին. բժիշկն ալ: Եւ Արշակ առիթէն օգտւելով ելաւ ու մտաւ դէմի հիւրասենեակը, որու դռները կռնակի վրայ բացւած էր ազատ օդ փոխւելու համար, բայց ներսը լոյս չէր վառւած:

Բաց պատուհաններէն լեցուն լուսնի տմոյն լոյսը աւատօրէն թափւած էր կահերու ու դետնի գորգին վրայ:

Արշակ մօտեցաւ պատուհանին. ու անշարժ կեցաւ՝ հայեացքը վեր լուսնին նետած: Նախորդ զսպւած կատաղի նախանձին կոծող թուլութիւն մը յաջորդած էր. լքւած ու միայնակ լինելու զգացում մը:

Դուրսը անոնք կը խնդային, կը նւագէին, կը զւարճանային. իսկ ինքը հոս մի'ն-մինակ. ու կը տանջւէր. բայց դուրսը այդ որոն հոգն էր. ով պիտի մտածէր իր մասին:

«Ա՛, ի՞նչ եսական են մարդիկ»:

— Պարոն Արշակ:

Եւ Արշակ ամբողջ մարմնովը դողաց:

— Ի՞նչ կը մտածէք հոս առանձին. հարցուց կամաց մը նոյն կանացի ձայնը:

Տղան դողով, զարմանքով, յափշտակութեամբ աղջկան կը նայէր բոլորովին շարած:

— Ինչո՞ւ այդպէս ցրած էք:

— Հիանալի գիշեր է այսօր, պայծառ. կմկմաց երիտասարդը իր մտքերը ժողւել ջանալով. ու աչքերը նորէն ամպերուն նետեց:

— Ես կը հարցընեմ՝ ինչո՞ւ տխուր էք. կրկնեց աղջիկը, կրթընեցաւ մէջքով պատուհանի եզրին, ու աչքերը տղու կիսադէմին դամեց:

— Տխուր. ե՞ս. ամենեւին:

Ու բանազգոսիկ խնդուկով մը շարունակեց.

— Ի՞նչպէս կարելի է, օրիորդ, տխուր լինել, երբ դուք մեր տունը հիւր էք, երբ ձեր եղբայրը այնպէս սքանչելի կերպով կը խօսի ամենազրաւիչ ու վսեմ խնդիրներու վրայ, և երբ դուրսը այդպէս ուրախ-զարթ կը նւագեն, կը խնդան. միթէ այս տեսակ ընկերութեան մէջ հնար է տխուր լինել:

— Բայց այդ ընկերութիւնը դուք ձգեր էք ու հոս առանձնացեր:

— Ա՛, հոս աւելի զով է: Եւ վերջապէս այդ ի՞նչ կապ ունի. չէ՞ որ դուք ալ հոս էք հիմա:

— Այո՛. բայց ես եկա՛յ ձեզի փոքրիկ նկատողութիւն մը միայն ընելու:

— Խնդրեմ:

— Ձեզի յայտնելու, որ ես բնաւ չէի երեակացեր, թէ դուք կրնաք խօսք տալ ու ձեր խօսքը չի պահել:

— Ի՞նչ... ես ձեզի դէմ երբ խօսք չեմ պահած. բացականչեց տղան բւրնկեղով՝ ինքըզինքը զսպելու անընդունակ:

— Ա՛խ, կատակ է ըրածս. կցեց աղջիկը իսկոյն ինքն ալ իր խօսքերու թողած տպաւորութենէն վախնալով: Ես կ'ուզէի միայն ձեզի յիշեցընեմ, որ դուք ինձի խոստացած էք ամէն կերպ իմ

համալսարան երթալու օգնելու. և ճիշտ այդ օրէն ձեր երեսը այլ ևս տեսած չունիմ. իսկ հիմա ալ, որ կը տեսնեմ, այնպէս լուրջ ու մտածկոտ զէմք մը շիներ էք, որ մարդ հետերնիդ խօսելու կը վարանի:

—Ա՛խ, համալսարանը, իրաւ, ներեցէք. կամայց Արշակ:

—Մոռցե՛ր էիք արդէն:

—Մոռցե՛ր...

Ու չգիտէր ինչ պատասխանէ:

Վերժին հասկըցաւ, որ այդ տղուն մէջ տարօրինակ բան մը կը դառնար:

—Է՛, գոնէ ասկէ վերջը կրնամ ձեր վրայ յոյս դնել. հարցուց աղջիկը ակընթարթ մը վերջը:

—Անշուշտ, օրիորդ, անշուշտ:

—Ուրեմն վաղը մեզի կու գա՞ք այդ մասին խօսելու:

—Ի հարկէ, ի հարկէ:

—Օրիորդ Վերժին, հըր էք. լսեցաւ սեմին վրայէն Մաննիկի ձայնը:

—Հեռուէն երաժշտութեան ձայնը աւելի ակնորոշելի է. պատըրւակեց աղջիկը: Ինչ ալ սիրուն զիշեր է: Տեսէք, այդ ամպերու կոյտին վրայ սիրահարեր է ձեր եղբայրը. աչքերը հոնկէ հագիւ կրնայ հեռացընել:

—Ի՞նչ բանի էք հոտ. հարցուց Տիրան նոյնպէս ներս մտնելով:

—Պարոն Արշակ, մեր վիճաբանութիւնը սակայն նորէն կէս քնաց. թնդաց սրահէն բժիշկի ձայնը:

—Բժիշկը ձանձրացաւ. դուրս երթանք. ըսաւ Մաննիկ:

Ու չորսը միասին սրահը ելան:

(Շարունակելի)

Ի Մ Կ Ռ Ի Ե

ԱՐԱՄ-ՉԱՐԸԴԻ

Ես կուգէի ճովը նետուել
Ծովն ալեկոծ և չուղեալ,
Ալեաց ձայնին ձայնս խառնել
Մեկտեղ անվերջ կռիւ տալ:
Խուլ ոստիւնով դէպի ժայռեր
Սլանալ քաջ, համարձակ,
Ունենալով ալիքն ընկեր
Դառնալ կրկին ծովն արձակ.
Ու նոր ուժով կրկին ժայռեր,
Կրկին կռիւ համարձակ...
Մինչ իմ կուի անխոց ընկեր
Ծովափ նետէր իմ դիակ:
Թո՛ղ ծովն ընդ միշտ խուլ կսկիծով
Ողբար մահը ան քաջի,
Որ ընկած է արիւմ մենակ
Ինչպէս Սփինքս ան կեանքի.
Ու զո՛ւր ձայն տար նաւորդն ինձի
Լացող ծովի արիւրից,
Զո՛ւր սպասէր առեղծաճի
Լսել լուծում ժայռերից...

ԴԵՊԻ ԽՐՃԻԹՆԵՐ

ԱՐԱՄ-ՉԱՐԸԴԻ

Դէպի խրճիթներ զիմենք մենք, եղբայր,
Աշխատաւորի ցուրտ կայանն անշուք,
Ո՛ւր վիճակել է կեանքը անարդար
Օրոցքից-շիրիմ լոկ զրկանք ու սուգ:
Այնտեղ, ուր նիհար և գունատ դէմքեր
Խոր թշառութեան բաժակը քամած,
Սև մահն են խնդրում երկնքից նւէր,
Բայց մահը երբէք չի լսում նրանց...
Ո՛ւր խոնաւ գետնին կիսամերկ ընկած
Մայրը զառնագին արցունք է թափում.
Որի չոր կրծքին մանկիկը փարւած
Կաթի փոխարէն արիւն է ծծում...
Ո՛ւր հայրը թշառ, օ՛ ճակատագիր!
Տնքում է հիւանդ մերկ գետնին անտէր,
Մաշւած կրծքի տակ սրտից կարեկիր
Կաթեցնում արեան վերջին կաթիլներ...
Անարատ սիրով մեր սրտերը լիք
Ա՛յդ տունը ուղղենք թափը քայլերի,
Ո՛ւր անյոյս ընկած նոքա վիրաւիք
Կարօտ են անկեղծ բարեկամների:

Մեզ հետ է դարնան ջերմ պայծառ արև
Թշառութեան տուն! բայց մեզ քո ցուրտ ծոց.
Բերում ենք անվիշտ նոր կեանքի բարև
Յարկիդ տակ հեծող տարաբաղդ որդոց:

1897 թ. 6 նոյեմբ. Նալպիկ:

ԱՅՏԵՐԸ

ԱՐԱՄ-ՉԱՐԸՔԻ

Կարո՞ղ էիր դու երազել,
Որ կը դառնաս մի օր ազեղ.
Երկու անթոյր թռչնած վարդեր
Կը կրես թարմ այտերիդ տեղ:
Անգո՛ւթ, քանի՜ այրւած շրթներ
Քեզնից համբոյր մի մուրացին.
Դո՛ւ հեգնելով միշտ մերժեցիր
Մատաղ կեանքի պարգեն այդ սին.
Այժմ երբ քո դէմքը սիրուն
Կորցրել է իր փայլն անդարձ,
Ա՛խ, համբուրել եմ է ուզում
Քո այտերը կարմիր ներկած:

1897 թ. 9 օգոստ. Տիւբինգէն:

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ. Է. Պ.

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԻԱՍԹԱՓՈԻՄՆԵՐ

(Շարունակութիւն ¹)

XI

Ուրեմն նա ալ ևս չկայ Ոսկերչեանի համար: Վերջ առաջին սիրոյ ցնորքներին և քաղցր բերկրութեան!

Վիրաւորաճը, ասում են, Ֆիզիկական սուր ցաւը սկսում է զգալ վերքը ստանալուց յետոյ: Եթէ այդ ճիշտ է, ուրեմն նոյն բանն է կրկնում և հոգեկան աշխարհում: Ոսկերչեանը միայն մի քանի ժամից յետոյ զգաց, թէ ինչ խոր և անբուժելի վերք է բացւել իւր սրտի մէջ:

Նա այժմ ուրիշին է պատկանում: Նա շուտով պիտի լինի ուրիշի ամուսինը: Այժմ երազել նորա մասին դաւաճանութիւն կը լինի իւր կողմից, որովհետեւ այն ուրիշը, որը նորա սրտին և մարմնին պիտի տիրանայ, իւր բարեկամն է:

¹) Տե՛ս «Մուրճ» 1897 թ. № 1, 2—3, 4, 5, 7—8, 9, 10:

Ախ, երանի կարելի լինէր իսպառ մոռանալ այն էակի պատ-
գիբը, որը յոյսերի և ոգևորութեան աղբիւր էր երբեմն!

Թէ Արտաշէսը, թէ Պարեգինը, երկուսն էլ խուսափում էին
իրար հանդիպելուց: Ոսկերչեանը չուզեց յարգանք ցոյց տալ իւր
բարեկամին և նշանդրէքին բացակայ էր, ի մեծ զարմանս օր. Աշ-
խէնի: Քաղաքավարական մի սոսկ պարտք կատարելու համար էլ
չգնաց Զառիկեանների մօտ և չնորհաւորեց ոչ իրան Պարեգինին,
ոչ մօրը:

Օր. Աշխէնը այնքան զարմացած էր Ոսկերչեանի յանկարծակի
փոփոխութեան վրայ, որ ամեն անգամ, երբ խօսք էր բացւում
նորա մասին, նա կրկնում էր.

— Ես բոլորովին ապշած եմ... Ես չեմ հասկանում, թէ ինչ
պատահեց այդ մարդուն! Խելագարւել է—ինչ է?

Ոսկերչեանը դասի էլ չէր դնում այլ ևս: Նա չէր կամենում
ամեն օր, օրիորդ Մարիամի երեսը տեսնելով, իւր վէրքը նորոգել:

Բայց ով հասկանար, ով չհասկանար, Պարեգինը շատ լաւ
հասկանում էր Ոսկերչեանին: Նա մեծ պահանջ էր զգում մի ան-
գամ ընդ միշտ բացատրւելու իւր բարեկամի հետ: Նա անարդար
է, նա իղուր է բարկացել, նա հիմք չունի մեղադրելու Պարեգի-
նին: Բայց ինչպէս բացատրւել—ահա խնդիրը? Ինչ անյարմար
զրութիւն երկու բարեկամների համար!

Սկզբումը, քանի որ դեռ ևս թարմ էր նոցա կրած փոխադարձ
վիրաւորանքը, նոքա չէին կամենում ոչ իրար երես տեսնել, ոչ մի-
մեանց հետ խօսել: Բայց բարեկամական զգացմունքը այնքան խոր
արմատ էր ձգել երկուսի սրտերում, նոքա այնչափ կապւած էին
իրար հետ, որ զիւրին բան չէր նախկին յարաբերութիւնները մի
անգամից խզել, այն էլ ընդ միշտ:

Տեսնելով, որ երես առ երես դժւար է բացատրւել Ոսկերչեանի
հետ, Պարեգինը վճռեց դիմել նորան նամակով և, ինչպէս հոստո-
վանող, իւր սիրտը բաց անել նորա առաջ: Եւ ահա պատրաստեց
հետեւեալ բովանդակութեամբ մի գրութիւն.

«Սիրելիդ իմ՝ Արտաշէս! Ես գիտեմ, դու ինձ վրայ բարկացած
ես. մեզ մօտ այլ ևս չես գալիս, և երէկ դու այնպէս սառն ես
բարւել Աշխէնին, որ նա սաստիկ վշտացել է և շարունակ թախան-

ձու՞մ է, որ ես յայտնեմ իրան քո անբաւականութեան պատճառը:
 Էի սէր Աստծոյ, Արտաշէս, ասա, ինչ է իմ մեղքը? Այն, որ
 ես հրապուրեւել եմ մի անձնաւորութեամբ, որը ինքը փոխադարձա-
 բար չէր թաղցնում իւր համակրական զգացմունքը դէպի ինձ?
 Ես մեղաւոր եմ, որ նա ինձ սիրեց: Մեղաւոր եմ, որ նորաւի
 սիրեցի?

Վարելի է, դու կարծում ես, թէ նա անտարբեր չէ եղել
 դէպի քեզ, և ես, աչպէս ասած, խլեցի նորան քո ձեռքից? Եթէ
 աչպէս է, դու չարաչար սխալում ես, սիրելիս: Ես ստիպւած եմ
 աչժմ խորտակել քո պատրանքը: Ես օրիորդի հետ յաճախ տռիթ
 եմ ունեցել խօսելու քո մասին, և, հաւատն ինձ, նորա զգաց-
 մունքը քո վերաբերմամբ ուրիշ բան չէ եղած, եթէ ոչ մի յարգանք:

Էրու ջահէլ ես, Արտաշէս, և անփորձ: Դու չես ճանաչում
 հայ օրիորդին: Ուր է այն հայ աղջիկը, որ համաձայնէր թողնել
 իւր հայրական տան հարստութիւնը, փայլը և շքեղութիւնը՝ մի
 չքաւոր երիտասարդի ետեւից զնալու և նորա աղքատութեանը ու
 զրկանքներին մասնակից լինելու համար? Ես այդ թոյլ չեմ տալիս
 նոյն իսկ սիրահարութեան դէպքում, ուր մնաց, եթէ սիրոյ մասին
 ոչ մի խօսք չէ կարող լինել?

«Հայ աղջիկը աւելի հետու մտածել զիտէ, քան դու կարծում
 ես: Նա աւելի դործնական է, քան թէ դու կարող էիր երեւակա-
 ցել: Որ նա կարող է սիրել գաղափարը, ես այդ չեմ ուրանում:
 Բայց հաստատ է և այն, որ նա գաղափարի համար չի զոհիլ և ոչ
 մէկը իւր կեանքի յարմարութիւններից:

Էինձ յայտնի էր, որ դու հրապուրւած ես. գիտէի նոյնպէս,
 որ այդ հրապոյցը ժամանակաւոր է և ոչ մի ապագայ չունի: Երի-
 տասարդ հասակում ով չէ սիրահարւել մի քանի անգամ? Ահա ին-
 չու ես երբէք լուրջ նշանակութիւն չեմ տւել այն զգացման, որ
 դու տածում էիր նորա վերաբերմամբ:

Եթէ ես յանցաւոր եմ քո առաջ, երեսովս տնւր իմ յան-
 ցանքը: Ես պատրաստ եմ հազար անգամ ներողութիւն խնդրել
 քեզնից, եթէ դու կարողանաս ցոյց տալ իմ խղճի վրայ մի ամե-
 նաչնչին բիծ անգամ: Իմ խիղճը գոնէ մաքուր է և հանդիստ:

Այս նամակը անասելի ուրախութիւն պատճառեց Ոսկերչեա-

Նին: Այն անկեղծ և խոստովանական տոնը, որ հնչում էր Գարեգինի ամեն մի բառից, նորա սիրտը լցրեց հոգեզմայլութեամբ: Արտասելու չափ զգացւած էր նա: Երբէք այնքան խորը չէր զգացել նա իւր անարդարութիւնը, որքան այժմ: Եւ իրաւ, մտածում էր նա ինքն իրան. ինչ կոպտութիւն! Նա ոչ միայն չընդունեց բարեկամի հրաւերը և չկամեցաւ մասնակից լինել նորա ուրախութեան, այլ նոյն իսկ զլացաւ մի հասարակ շնորհաւորութիւն անել նորան: Նա իրաւունք ունէր արդեօք բարկանալու? Ինչով է մեղաւոր Գարեգինը, որ օրիորդը գերապատուութիւնը իրան է տւել և իրան ընտրել իւր կեանքի ապագայ ընկեր? Ինչու Գարեգինը պիտի զոհէր իւր սէրը? Ու՞մ համար պիտի զոհէր և ինչ նպատակով? Ձէ որ Արտաշէսի «հրապոյրը ժամանակաւոր էր և ոչ մի ապագայ չունէր?»

Վերջին օրերը Ռսկերչեանը մենակութիւն էր քաշում. սաստիկ կարօտ էր զգում բարեկամական շրջանի. Զառիկեանների տան դուռը ընդ միշտ փակւած էր տեսնում իւր առաջ: Բայց Գարեգինի նամակը հաշտութեան հրաւեր պէտք է համարել:

Հետեւեալ օրը Զառիկեանը ստացաւ Ռսկերչեանից իւր նամակի պատասխանը: Ահաւասիկ նրա գրութիւնը:

«Թանկագլին բարեկամ! Ստացայ քո նամակը և անչափ ուրախացայ: Դա մի նոր ապացոյց է ընկերական սիրոյ զգացման, որ դու տածում ես դէպի ինձ: Ես երկար մտածեցի իմ արածի վրայ, և տեսնում եմ, որ խիստ կոպիտ եմ վարւել քեզ հետ: Այնպէս որ դու չես իմ առաջ մեղաւորը, այլ ես եմ մեղաւոր քո առաջ:

«Բայց այնուամենայնիւ ես պիտի յիշեցնեմ քեզ քո մի սխալը: Գարեկանս, ինչու ամիսներ շարունակ դու թաղցնում էիր ինձնից քո զգացմունքը նորա նկատմամբ? Ինչու այն օրը, երբ քեզ յայտնեցի սրտիս գաղտնիքը, դու ինձ հասկացրիր, որ ես պատրանքի մէջ եմ, որ դուր եմ իմ յոյսերը, որ հայ աղջիկը աւելի գործնական է, քան ես կարծում եմ, որ նա չի գնալ աղքատի ետեւից?... Ինչու այդ ասում ես այժմ?... Ինչու տեղն ու տեղը հանգցրիր սրտիս կայծը, որ գնալով պիտի մեծանար? Միթէ դու չգիտէիր, որ հրդեհը աւելի դժւար է հանգցնել, քան թէ կայծը? Ինչու թոյլ տւիր, որ կայծը իմ մէջ հրդեհ դառնար?...

«Բայց բաւական է: Այս խնդրի մասին չխօսեցք այլ ևս: Մուսուլմաններն ամենք ալ բոլոր անասնոց թիւները, որոնք ընդհատեցին մեր բարեկամական յարաբերութիւնները:

«Եղբի բախտաւոր և ինձ էլ ցանկացիր նոյնը: Վերջին ժամանակները այնքան հոգեկան ցնցումներ եմ կրել, որ ջղերս զգալի կերպով թուլացել են: Յաճախ տկարանում եմ, աստիճանի կորել է, քունս խանգարուել: Այսօր առաւօտ թէյից յետոյ սկսեց սրտիս սաստիկ բաբախումը, որ առաջին անգամն է ինձ պատահում: Դա վատ նշան է: Ասումս իմ վերջը բարի անի!»:

XII

—Բախտիս անիւը շուտ է եկել,—սհա այն բառերը, որ յաճախ արտասանում էր Ոսկերչեանը:

Եւ իրաւ, ներհակել էր բախտը՝ քայլ առ քայլ հետևում էր նորան, թոյլ չէր տալիս շունչ քաշել, կազդուրւել,—հարւած հարւածի ետևից:

Մինչդեռ նորա հոգին ձգտում էր միշտ դէպի վեր, դէպի վեր, կեանքը շարունակ գլորում էր նորան դէպի ցած, դէպի ցած. և չկար մի զօրութիւն, որ նորան պահէր:

Բեմի վրայ—ոչ մի յաջողութիւն: Նորան ստիպում էին կատարել այնպիսի դերեր, որ նորա ամպլուայից չէին: Ոսկերչեան — և Ֆատ: Ոսկերչեան — և կոմիկական սիրահար: Ինչ անհեթեթութիւն: Հասկացող հանդիսականը միայն մեղքանում էր նորան, տեսնելով, որ խեղճը իրան չարչարում է, հարկադրւած լինելով ծամածաւուել, թուլկոտել, պարել, ծիծաղել այն բոլորին, երբ նորա սիրտը պատառում էր ներքին տանջանքից և արտասուքից խեղտում էր նա: Բնականաբար, ամեն բան դուրս էր գալիս կեղծ ու շինծու:

Օհ, ինչ առատ նիւթ Սևումեանի ծաղրի համար! Եւ իրօք, ինչ կուշտ ծիծաղում էր նա ռօմանտիկոյն էջերում!...

—Ի սէր Աստուծոյ, այդ դերը իմ դերը չէ. խնայեցէք ինձ! մըմնջում էր նա համարեա լալազին ձայնով, երբ ռեժիսորը, դերերը բաժանելիս, կապում էր նորա վրին մի բոլորովին անհամապատասխան դեր: Բայց լսողը ով էր? Կամ հպատակւել անպայման, տոկալ ու համբերել, կամ հրաժարւել և դուրս գալ խմբիցը — այդ

էր մնում Ոսկերչեանին: Եւ նա սկզբումը համբերութեամբ տանում էր, զիջումներ էր անում խմբի պահանջներին, թէեւ առանց անախորժութիւնների և մանր կռիւների գործ չէր կատարում: Բայց զիջումներն էլ չէին օգնում Քանի շատ էր զիջանում Ոսկերչեանը, այնքան աւելի զիջումներ էին պահանջում նորանից. քանի շատ էր խոնարհում, այնքան աւելի էին կամենում նորան նւաստացնել: Օ, միայն այդ պահանջէին նորանից—նւաստանալ! Աւելի հեշտ է նորա մէջքը կոտրել, քան թէ ստիպել, որ նա կռացնի իւր մէջքը: Նա ծնւած է հպարտ և հպարտ կը մեռնի!

Ամբողջ խմբի մէջ նա չուներ մի սրտացաւ ընկեր: Նոյն իսկ Մուրադեանը, որը համեմատաբար բոլորից կրթւածն էր, նա էլ վերջնականապէս ձուլւեց իւր շրջանի հետ, համակերպւեց այդ շրջանի տրամադրութեան, դարձաւ նորա կամակատարը և դաւակիցը: Առջ գնալու և տաղանդի զարգացման մասին այլ ևս մտածելը աւելորդ էր: Դորա համար ոչ մի նպաստաւոր պայման չկար այդ մթնոլորտի մէջ, ուր ձգել էր նորան վիճակը: Արդիւնաւոր գործունէութեան ծրագիրը օղը ցնդեց, ինչպէս ծուխ: Հոգու լաւագոյն ըզձերը թերի մնացին: Ոգևորութեան աղբիւրը ցամաքում էր: Ազնիւ և վեհ զգացումները սկսում էին բթանալ:

—Աստուած իմ! մենախօսում էր Ոսկերչեանը, ձեռքերը գալարելով, —ինչ հոգեմաշ տանջանք է մարդու համար—շարունակ մանր կռիւներ մղել մանր մարդկանց հետ, շարունակ բացատրութիւններ տալ և բացատրութիւններ պահանջել, վիրաւորել և վիրաւորանք կրել, արհամարել ամենքին և ամենքից արհամարւած լինել!

Բարեկենդանը մօտենում էր: Դարձեալ մի քանի ներկայացում, և թատրոնի ձմերային սեզոնը պիտի վերջանար:

Բայց շուտով Ոսկերչեանի վիճակը փոխւեց: Տեղի ունեցաւ մի հանգամանք, որ ստիպեց նորան ձգել բեմը և գործադրել իւր ոյժերը ուրիշ ասպարիզի վրայ: Եւ ահա այդ ինչպէս պատահեց:

Մի տեղ Ոսկերչեանը խիստ վատ կարծիք էր յայտնել իւր արւեստակից ընկերների մասին: Մռայլ գոյներով էր նկարագրել մանաւանդ Զամբաղեանին: Վերջինս, Աստծուն է յայտնի, թէ ինչ ճանապարհով, խմացել էր այդ մասին և, ինչ ասել կ'ուզէ, սաստիկ կատաղել էր Ոսկերչեանի դէմ: Շուտով «Ժամանակի» մէջ կեղծ ստո-

բաղրութեամբ նա տպեց մի յօգւած, որտեղ նա, ի միջի այլոց, ցանկութիւն է յայտնում ապագայում ազատւած տեսնել խումբը անկոչ և անընդունակ դերասաններից: Իբր այդպիսին, յիշեա՛ծ էր միայն Ոսկերչեանի անունը: Յօգւածը վերջանում էր հետևեալ բառերով. «պէտք է մաքրել խումբը: Դա Զամբազեանի առաջին վրէժն էր, որ նա հանեց իւր թշնամուց: Բայց դորանով յագուրդ չստացաւ նորա քինապահ ոգին: Մի անգամ նորա բնակարանում հաւաքւել էին ընկերներից մի քանիսը, որոնց թւում և Մուրադեանը: Խօսք բաց անելով Ոսկերչեանի մասին, նա ասաց.

— Ես զարմանում եմ, պարոններ, թէ ինչու այդ անշնորք խեղկատակին մենք հանդուրժում ենք մեր խմբի մէջ: Նա միայն իրան չէ խաչտառակում, այլ և մեզ ամենքիս: Նա կոտորում է խմբի անունը հասարակութեան առաջ: Ես չեմ հասկանում, թէ ինչի համար ենք նորան պահում մեր խմբի մէջ, երբ մենք դժգոհ ենք, մամուլը դժգոհ է, հասարակութիւնը դժգոհ է...

— Արժէ միթէ? ընդհատեց նորան Մուրադեանը. սեղօնը վերջանում է...

— Այ, տեսնում ես, Մուրադեան. դու միշտ այդպէս թոյլ ես տւել, և այժմ Ոսկերչեանը ամեն տեղ, ուր նստում է, մեզ ամենքիս վատաբանում, բամբասում է: Գիտես, նա ինչ է ասել քո մասին? Մուրադեանը—մի փալատ է! Իսկ իմ մասին... Ո՛հ, եսաշխարհիս ամենամեծ չարագործն եմ!...

— Ինչ է ասել իմ մասին? հարցրեց Մուրադեանը արհամարտ քմծիծաղ տալով:

— Մուրադեանը—փալատ է! Կրկնեց Զամբազեանը, շեշտելով վերջին բառը: Ձեռն հաւատում? Հարցրո՛ւ Ձիշագեանից: Սա լսել է: Ձիշագեան, ասել է թէ ոչ?

— Այո, նա ասաց...

— Մինչև այժմ ես նորան խղճում էի, իսկ այսուհետև ես գիտեմ, թէ ինչպէս կը վարւեմ նորա հետ,—սպառնաց Մուրադեանը, գլուխը թափահարելով և իւր մտալի մատներով թմբկահարելով սեղանը:

Հետևեալ օրը փորձի ժամանակ ամբողջ խումբը զինւած էր Ոսկերչեանի դէմ: Փորձը սկսւած էր, բայց նա դեռ չկար. Օգտու-

ըով նորա բացակայութիւնից, մի քանիսը սրախօսութիւններ էին անում նորա հասցէին, ի մեծ բաւականութիւն միւսներին Բայց ահա և Ոսկերչեանը Հեռւից նորա ոտնաձայնը լսելուն պէս, Զամբազեանը ասաց.

—Մեր ապագայ Սալինին գալիս է:

Եւ ամենքը ծիծաղեցին, այնպէս որ, երբ Ոսկերչեանը երևաց բեմի վրայ, շատերի դէմքին նշմարեց զսպած ծիծաղի հետքեր:

—Զարմանալի բան է. Ոսկերչեանը ամեն անգամ պիտի ուշանայ՝ դժգոհութեամբ յանդիմանեց ռեժիսորը, առանց նայելու նորա երեսին: Ոսկերչեանը կամեցաւ արդարանալ, բայց Մուրադեանը, կիսատ թողնելով նորա խօսքը, դիմեց դերակատարներին և ասաց.

--Շարունակեցէք!

Ոսկերչեանը, դժգոհ ռեժիսորի արհամարական անուշադրութիւնից, բարձր ձայնով մաքրեց կոկորդը և, կռնակը ցոյց տալով Մուրադեանին, ձեռքերը ետեին դրած՝ հպարտութեամբ սխեց քայլել դէպի բեմի ճակատը:

Երբ դեր կատարելու հերթը եկաւ Ոսկերչեանին, նորան կանչեցին: Նա խօսում էր ցածր ձայնով: Մուրադեանը բարկացած հրամայեց, որ նա բարձր խօսի: Ոսկերչեանը կատարեց ռեժիսորի հրամանը: Մի տեղ նա «այստեղ» ասելով՝ ձեռքը դրեց կրծքին: Մուրադեանը նկատեց, թէ այդ բառը ասելիս ձեռքը մի քանի անգամ հարկաւոր է զարկել կրծքին: Ոսկերչեանը կատարեց և այդ:

Բայց քիչ յետոյ նա տեսաւ, որ իրան ընդհատում են ամեն մի բոպէում, ուղղում են ինտոնացիան, քննադատում են իւրաքանչիւր քայլը, իւրաքանչիւր շարժւածքը: Տեղի և անտեղի միջամտութեան նպատակը ուրիշ բան չէր, եթէ ոչ ցոյց տալ զգալի կերպով, որ նորա խաղը ոչ մի բանի նման չէ: Դա մի շար գիտաւորութիւն էր, որ շուտ հասկացաւ Ոսկերչեանը և թոյլ չտուեց այլ ևս, որ իրան չարձակու մների նշանակէտ դարձնեն:

Մի անգամ էլ ռեժիսորը կամեցաւ ուղղել Ոսկերչեանին, բայց սա չսպանեց, թէ, իւր կարծիքով, ինքը ճիշտ է հասկացել վիճելի կէտը:

—Այստեղ մենք ինքնագլուխ չենք, որ անենք այն, ինչ մեր քէմը կըտայ,—լսեց Զամբազեանի ձայնը: Մեզանից ամեն մէկը հպարտաւոր է լսել ռեժիսորին:

—Բացատրեցէք, հասկացրէք իմ սխալը, և ես կը հնազանդուեմ,—պատասխանեց Ոսկերչեանը։

—Եթէ ամեն մէկին ամեն բան բացատրեմ, այդ ուր կը հասնի? Նկատեց Մուրադեանը։

—Ել ինչացու է ռեժիսորը, եթէ նա իւր ամենագլխաւոր պարտականութիւնը պիտի անգիտանայ?

—Ուրեմն դուք չէք կամենում հպատակել մեր խմբի կանոններին? Հարցրեց Զամբազեանը։

—Կուրօրէն—ոչ!

—Ուրեմն չէք կամենում մեր խմբի մէջ լինել? Հարցրեց կըրկին Զամբազեանը։

—Ձեր այդ հարցումները—զայրացուցիչ են! Բարկացած գոչեց Ոսկերչեանը։

—Զայրացիոտ պարոն, խնդրում եմ, կամաց խօսէք! Այդ ում վրայ էք գոռում?

Այդ ասելով, Զամբազեանը սպառնական շարժում արեւ և տեղումը կանգնեց։

Ոսկերչեանը արհամարոտ ժպիտով նայում էր իւր հակառակորդի աչքերին և լուռ սպասում։ Քիչ յետոյ զլուխը թափահարեց մի քանի անգամ և ասաց.

—Ես գիտեմ, թէ ով է սարքել այս բոլոր կոմերիան!

Զամբազեանը, վառօդի պէս բռնկելով, բռնեց Ոսկերչեանի օձիքից և, բռունցքը բարձրացնելով նորա դէմքի վրայ, որոտաց.

—Հ'ը, ով, ասան, ով?...

Զամբազեանի այտի վրայ իջաւ Ոսկերչեանի ապտակը այնքան ամուր, որ թատրոնի դահլիճը արձագանքեց։ Կռողները սկսեցին իրար քաշքշել։ Բարձրացաւ աղմուկ։ Մէջ մտան դերասանները։ Ոսկերչեանի և Զամբազեանի յիշոցները, ընկերների յորդորները և ջանդիմանութիւնը, ոտների չոփիւնը բեմի տախտակամածի վրայ—բոլորը միախառնեց իրար։

Կռողներին հազիւ-հազ բաժանեցին միմեանցից։ Ոսկերչեանը հեռւմ էր, քթածակերը լացնանում և դողում էին. ձախ աչքի շուրջը կապտել էր հակառակորդի բռունցքից։

—Այսօր փորձ չի լինելու,— յայտարարեց Մուրադեանը։ Կարող էք գնալ։

Ոսկերչեանը անմիջապէս հեռացաւ, օդի մէջ շարժելով իւր դերը այնպէս, որ թերթիկը պտտւելով ընկաւ Մուրադեանի ոտների մօտ։

—Կամ ես—կամ նա! դուք Զամբազեանը, ցոյց տալով Ոսկերչեանի ետևից։

Մի ժամից յետոյ Ոսկերչեանի սենեակը մտաւ Զիչագեանը, յանձնեց նորան մի փակ ծրար և խփոյն մեկնեց։

Ոսկերչեանը կարդաց հետևեալը. «Մեծապատիւ պարոն, սորանով յայտնում ենք ձեզ, որ զուք, միաձայն հրաժարեցրած լինելով մեր խմբիցը, այլ ևս նեղութիւն չբաշխեք փորձերին գալու։ Ստորագրւած էին ամենքը, առանց բացառութեան։ Թերթիկը ձգելով սեղանի վրայ, նա բացականչեց.

—Ողորմելի արարածներ!...

Ուրեմն ամեն բան վերջացաւ, մտածեց Ոսկերչեանը. պէտք է այժմ խորհել ներկայ դրութեան մասին։ Մի քանի օր նա ոչինչ էր կարողանում անել. ոչ գրել, ոչ կարդալ։ Ժամերով անցուղարձ էր անում սենեկում, պաշարւած զանազան մտածմունքներով։ Շարունակ ծխում էր, և եթէ մէկը մտնէր նորա սենեակը, նորան պիտի տեսնէր ծխի թանձր մշուշի մէջ։

Խորհրդածութեան ժամերին նորա յիշողութեան մէջ կենդանանում էին աշակերտական տարիները, և նա ականաց համեմատում էր իւր նախկին վիճակը ներկայի հետ։ Բայց թիւ համեմատութիւն։ Այն ժամանակ նա բախտաւոր էր, մտատանջութեան պատճառ չկար, հոգսեր չգիտէր, սիրտը հանգիստ ու խաղաղ էր, յոյսերի և երազների աշխարհում էր ճախրում հոգին, իսկ այժմ... Ով կը մտածէր, թէ այսպիսի ահռելի վիճ է եղած իդէալների և իրականութեան մէջ?

Նորա ընկերները շուտով կ'աւարտեն, կը ստանան հասունութեան վկայական, և նոցա առջև բաց են համալսարանի դռները։ Գիտութեան տաճարը կը մտնեն և քանի տարիներ բարձր ամբիոնից կը լսեն ուսուցչապետների քարոզները ճշմարտութեան, գեղեցկի և բարւոյ մասին։ Ախ, ուսանողական երջանիկ տարիներ,

որոնք լիքն են սքանչելի պօէզիայով—Ոսկերչեանը նոցա չսխալ տեսնի երբէք! Տարիներ կ'անցնեն, ընկերները կը վերադառնան, տեղեկութիւնների ահագին պաշարով ծանրաբեռնւած, և կեանք կը մոնեն, և կը տեսնեն նորան կեանքի ալիքների մէջ... Առանց հիմնաւոր գիտութեան, նա նման կը լինի մի նաւի՝ առանց առաջատի և առանց նաւավարի:

Ոչ. թող կորչեն տխուր մտածմունքները. ոչինչ չկայ նոցա մէջ մխիթարական: Կորուստը դեռ ևս մեծ չէ: Նորա առաջ դեռ ևս բաց է մի աւելի լայն և ոչ պակաս ազնիւ ասպարէզ, քան թէ բեմն է: Դա գրականութիւնն է, ուր նա կարող է դործել աւելի անկախ, հեռու ինստիդների խեղտիչ մթնոլորտից: Բանաստեղծութիւնն է արդեօք նորա կոչումը, թէ դրաման, թէ ուրիշ բան—այդ դեռ չգիտէ: Ապագան ցոյց կը տայ, թէ գրականութեան որ ճիւղի համար է նա ստեղծւած: Բայց որ նա կոչւած է գրականութեան համար, այդ մասին նա ոչ մի կասկած չունի:

Նա արդէն տեսլ է ապացոյց, որ զուրկ չէ բանաստեղծական տաղանդից: Վերան ծաղիկը՝ մեծ յաջողութիւն ունեցաւ: Զառիկեանների տանը կարդացած ոտանաւորը ծափահարութեամբ ընդունւեց: Հեղինակաւոր անձինք հաւատացնում են, որ նա ունի բանաստեղծական աւիւն: Իրաւ է, մամուլի մէջ դեռ ևս նորա մասին ոչ մի խօսք չէ եղած. բայց այդ նշանակութիւն չունի: Մարդկային մտքի քանի քանի զեղեցիկ արտադրութիւններ աշխարհ են եկել առանց աղմուկի, և նոցա իսկական գնահատութիւնը երեւցել է հեռաւոր ապագայում:

Մինչև օրս նա նւիրւած էր գրականութեան իւր հոգու, այսպէս ասած, միայն մի մասով: Այսուհետ նա իւր բոլոր էութեամբ պատկանում է գրականութեան:

Ահա այսպիսի ուխտ արաւ Ոսկերչեանը. և այդ ժամից սկսած իւր հոգու բոլոր եռանդով անձնատուր եղաւ իւր սիրած գործին:

Սկսեց գրադէտի տենդային աշխատանքը: Ժամերով նստած սեղանի մօտ՝ գրում ջնջում էր, մտածում և նորից շարադրում. նորանոր հեղինակութիւնների ծրագիրներ էր կազմում. կարդում էր ժամերով, և երբ ընթերցանութեան ժամանակ մի որ և է նոր

գաղափար լուսաւորում էր նորա միտքը, նա իսկոյն ձգում էր գիրքը և կրկին ձեռքն առնում գրիչը:

Ահա վերջապէս նա գտաւ իւր իսկական կոչումը: Նա պիտի լինի մեր գրականութեան պարծանքը! Հսկայական գործեր նա պիտի կատարի, և ամեն մի հայ պիտի սքանչանայ նորա ստեղծագործութեամբ!

XIII

Բարեկենդանի տօները եկան:

Մոզնու եկեղեցում գիշերւայ ժամը 12-ին հաւաքւել էր ահագին բազմութիւն: Կանայք, տղամարդիկ, մեծ ու փոքր—բոլորեքեան խոնւել էին իրար: Իրարանցում և շարժում: Մմենքը ուրախ էին, իրար ականջի փսփսում էին, ժպտում և հետաքրքրութեամբ գլուխները վեր բարձրացնում, որպէս զի աւելի լաւ կարողանային տեսնել պսակադրութեան կարգը և նորապսակներին:

Գարեգին Զառիկեանը և Մարիամ Վարթումեանը, կանգնած սեղանի առջև և իրար ձեռքից բռնած, կատարում էին այն բոլորը, ինչ որ պատւիրում էր նոցա զգեստաւորւած քահանան:

Երբ բոլոր ծէսերը վերջացան, ժողովուրդը դուրս խուժեց դէպի փողոց, շարժեցին կառքերը և նորապսակներին և հարսանքաւորներին աղմուկով, դղրդոցով տարան դէպի Զառիկեանների բնակարանը:

Դեռ ևս փողոցի հեռաւոր ծայրից գիշերային մթութեան մէջ փայլեց Զառիկեանների տան փասաղը բենգալեան կարմիր հրով, որը, տեղի տալով երբեմն կանաչ բոցի, շարունակ լուսաւորում էր կառքերի ճանապարհը մինչև նոցա տեղ հասնելը:

Պատշգամբում, սանդուխքների գլխին, կանգնած էր տիկին Զառիկեանը և սպասում էր անհամբեր բախտաւոր զոյգին: Երբ նոքա երևացին, նա համբուրեց երկուսի աչտերից, և ապա Գարեգինը՝ հարսի թիւն առած՝ ջարդեց ոտի տակ զրած ափսէն և, զրան շէմքից անցնելով, մտաւ դահլիճը. այս բոլորը յաջորդւում էր, ի հարկէ, խաչեղբօր ուրախ ու բարձրաձայն գոռում-գոչումներով:

Նորապսակ զոյգը բազմեց կարմիր դիւանի վրայ, որը զրւած էր լուսաւորւած դահլիճի ճակատին, և շուտով մէկը միւսի ետեւից

նոցա մերձաւոր և հեռու ազգականները ուրիշ հրաւիրածներին հետ հերթով սկսեցին մօտենալ նոցա, համբուրել կամ, շամպանեայով լցրած գաւաթները ձեռներն առնելով, շնորհաւորել և բարեմաղթութիւններ ասել:

Գեղեցիկ և հրապուրիչ էր նորահարսը, այնքան հրապուրիչ, որ նայողի հայեացքը ակամայ կանգ էր առնում նորա վրայ: Ոտից ց'զլուխ սպիտակ շողշողուն զգեստի մէջ, որի երկայն շէյֆը բազմաթիւ ծալքերով ընկած էր գորգի վրայ, զլուխը զարդարած պսակով և նուրբ թափանցիկ քօղը ուսերին ձգած, նա բազմած էր, ինչպէս հեքեաթի թագուհի, երջանիկ և հոգով անդորր, չնայած, որ թերթերունքի մէջ դեռ ևս նշմարուում էին արտասուքի հետքեր, արտասուք, որ նա թափեց իւր մօրը, քրոջ և եղբօրը հրաժեշտ տալու միջոցին:

Նոյն երջանկութիւնը և նոյն հոգեկան անդորրութիւնը կարելի էր կարդալ և Դարեգինի ղէմքին:

«Ահա միմեանց արժանի ամուսիններ» — այսպէս պիտի մտածէր իւրաքանչիւրը, ով ցանկանար համեմատել մէկի և միւսի առաւելութիւնները:

Օր. Աշխէնը նոյնպէս սպիտակ էր հագած, և այդ պատճառով նորա երեսի թուխ գոյնը, աչքերի և մազերի սևութիւնը աչքի էին զարնում: Նա այդ երեկոյի լիակատար տէրն էր զգում իրան: Շարունակ շարժման մէջ էր նա, շարունակ հնչում էր նորա մետաղեայ ձայնը աղմուկի և խօսակցութիւնների միջից սենեակների մերթ մերթ աչքի մէջ ծալրից:

Ընթրիքից առաջ միւրգ բաժանեցին: Աշխէնին, ըստ երևութին, մեծ բաւականութիւն էր պատճառում ավսէները լցնել զանազան տեսակ մրգերով և քաղցրեղէնով և մատուցանել հիւրերին, անվերջ կատակելով ուրիշների հետ և թափ տալով նոցա առաջ իւր սրախօսութիւնների բոլոր պաշարը:

Սկսեցին պարերը: Աշխէնը ամենքին ստիպեց պարել: Ով քհամարձակէր մերժել? Նա ուժով բռնում էր կամակորի ձեռքիցը, քաշ տալիս, և եթէ այդ էլ չէր օգնում, սկսում էր խնդրել, աղաչել, այնպէս որ, շատերի յամառութիւնը կոտորելով, ստիպւում էր պարել և այնպիսի անձանց, որոնք իրանց կեանքումը չէին պարել

Քրքէք: Պար ածեց Գարեգինին և Մարիամին, պար ածեց մօրը, պար ածեց մի քանի պառաւ կանանց, ի մեծ զւարճութիւն բոլոր հանդիսականների, պարեց և ինքը, յոգնեց, թուլացաւ և հեալով, ձեռքը կրծքին, ընկաւ աթոռի վրայ դադար առնելու:

Ժամը երկուսն էր, երբ սեղանի նստեցին: Դահլիճում տեղաւորեցին նորապսակները իրանց մօտիկ ազգականներով և բոլոր պատւաւոր հիւրերը, ծանօթ և անծանօթ խառնիրուռն: Դահլիճը աւելի բազմամարդ էր, բայց ոչ աւելի ուրախ և աղմկալից, քան թէ կից սնեակը, ուր ժողովւած էին երիտասարդներ, զաղափարի այդ մոլեռանդ երկրպագուները, որոնք հողի են տալիս ճառախօսութեան ու վէճերի համար: Այստեղ էր սկսուած ուրախութեան աղբիւրը, և չետոյ միայն նորա թարմեցուցիչ ցայտերը անցնում էին դահլիճ բացւած դռներով: Այստեղ էին Զառիկեանների բոլոր պաշտօնակիցները, ուսուցիչ և վարժուհի, այստեղ կային և գրչի մարդիկ, այստեղ էր և Ազատեանը: Վերջինս չէր լինիլ այս հանդիսում, եթէ Աշխէնը այդ չպահանջէր իւր եղբօրից: Այն օրւանից, երբ Սեուժեանը մերկացրեց նորա աննախանձելի անցեալը, նորա բոլոր կեղծիքը, նա իւր նշանակութիւնը կորցրեց Գարեգինի աչքում: Սորա կարծիքով, Ազատեանը ընկաւ այն անձանց շարքը, որոնք իրանց ամբողջ կեանքում կեղծում են, որոնց անունը գրականութեան և մամուլի մէջ մի մեծ թիւրիմացութիւն է:

Բայց մինչդեռ դէպի Ազատեանը կասկածով և թերահաւատութեամբ սկսեցին վերաբերել Գարեգինի նման անձինք, Ազատեանի անունը, ընդհակառակը, աւելի բարձրացաւ մի աւելի սուար շքանում: Եւ ահա ինչու:

«Ճառագայթի» խմբագիրը, արտասահմանից վերադառնալուց չետոյ, հրապարակով շնորհակալութիւն էր յայտնել Ազատեանից այն բանի համար, որ նա երեք ամիս շարունակ կարողացաւ հմուտութեամբ վարել այդ թերթը և պահել նորան նախկին բարձրութեան վրայ: Խմբագրի հրապարակական խոստովանութիւնը շատ զգոհների բերանը փակեց: Իսկ երբ Ազատեանը Սեուժեանի հետ կուռի բռնեցին, խմբագիրը իւր հաւատարիմ աշխատակցի՝ պաշտպան հանդիսացաւ. ի հարկէ, եթէ մի բիծ ընկնէր «Ճառագայթի»

կարեւոր աշխատակցի վրայ, այդ բիծը մասամբ պիտի վերաբերէր և այդ թերթին:

Քաջալերած այս պաշտպանութիւնից, Ազատեանը երես առաւ, հակառակորդների նկատմամբ խստացրեց ոճը և սկսեց ջատագովել «Ճառագայթը», խմբագրին, աշխատակիցներին և իւր բոլոր համակրողներին: Գրիչը դարձաւ բեղմնաւոր: Համարեա ամեն մի համարում մի որևէ բան երևում էր նորա ստորագրութեամբ: Գործիչ չկար, որ նա չքննադատէր, մի գործ չէր կատարուում, որ նա կարծիք չցայտնէր, խնդիր չկար, որ նա չշօշափէր: Դպրոց և մանկավարժական հարցեր, հասարակական հաստատութիւններ, թատրոն, բանաստեղծութիւն, լեզաբանական հարցեր, զանազան հիւանդութիւններ, սով, վաշխառութիւն, առաքակութիւններ—բոլորը, բոլորը շօշափում էր ամենագէտ Փառասուր, ոչ մի դժւարութեան առաջ կանգ չէր առնում նորա գրիչը և երբէք չէր մոռանում իւր ասածները հաստատելու համար վկայութիւններ բերել հեղինակաւոր անձանց գրած քննարկից և երբեմն յօդաւոր վերնադիրը զարդարել մի որևէ յատկանական բնաբանով: Այդ դեռ մի կողմ: Նա տրոսնութիւն ստացաւ, որ ամեն մէկին չէր տալիս խմբագիրը. նա գրում էր նաև առաջնորդողներ: Այս հանգամանքների շնորհիւ, ասում եմ, Ազատեանը շուտով ձեռք բերեց մի որոշ հեղինակութիւն մի որոշ շրջանում:

Այս որոշ շրջանին էր պատկանում և Աշխէնը, որը Ազատեանի թերութիւնների առաջ գոցում էր աչքերը, որ չտեսնէ, և լայն բաց անում, որպէս զի հիանալ նորա արժանաւորութիւնների վրայ:

Թամադան Ազատեանն էր: Նա ստիպեց, որ իրան ընտրեն ձայների մեծամասնութեամբ, առարկելով, թէ գուցէ ոմանք չեն ցանկանում, որ նա լինի թամադա: Աշխէնը իսկոյն ոտի կանգնեց նորան հետևեցին բոլոր պաշտօնակիցները. շատերն էլ առանց տեղից շարժուելու, սկսեցին գոչել.

—Հա՛, հա՛, պարոն Ազատեանը, խնդրում ենք, խնդրում ենք!... Եւ այսպէս Ազատեանը դարձաւ թամադա: Սկսեց կեր ու խումը, սկսեցին ճառախօսութիւնները, կենացները և ուրախ երգերը:

Ձայների մեծամասնութիւն ասացի, յիշեցի յանկարծ Սևոմեանին: Մինչդեռ Ազատեանը քիչ էր մնում ուտելու իրաւունքէ:

էլ վճռէր ձայների մեծամասնութեամբ, Սեռմեանը, որը, ի հարկէ, ներկայ չէր հանդիսին, իւր բոլոր էութեամբ դարձել էր այժմ ձայների մեծամասնութեան թշնամի:

— Ձայներէ մեծասնութիւն! յաճախ կրկնում էր նա հեղնութեամբ իւր նոր բարեկամների շրջանում. ձայների մեծամասնութիւնը այն մեծ չարագործն է, որ թոյն խմեցրեց Սոկրատէսին և Քրիստոսին խաչեց! Բայց այս մնայ փակագծի մէջ: Շարունակենք մեր պատմութիւնը:

Նորաստեղծ զոյգի կենացը առաջարկելիս՝ Ազատեանը մի երկար ատենախօսութիւն արաւ. խօսեց ինչ-որ նոր կեանքի մասին, ինչ-որ վեցստալուհիների անուն չիշեց, մայրերի կատարելիք դերը պարզաբանեց և վերջումը, մի վարժուհու երգել տալուց յետոյ, խօսքը ուղղեց Ոսկերչեանին, առանց նորա երեսին նայելու.

— Իսկ պ. Ոսկերչեանը, երևի, ներկայ հանդիսի համար մի բանաստեղծութիւն կ'լինի պատրաստած. թող արտասանէ իւր բանաստեղծութիւնը:

Ոչ ոք չհասկացաւ այն նուրբ հեղնութիւնը, որ թաղնւած էր թամադայի խօսքերի մէջ: Հասկացաւ միայն նա, ում վերաբերում էին Ազատեանի խօսքերը:

Ոսկերչեանը սատոյի կարմրեց նոյնքան ամօթից, որքան և բարկութիւնից: Ենչ է ուզում ինձնից այս մարդը? մոռժեց նա. բայց զսպելով իւր զայրույթը, որը սակայն զգացւում էր նորա ձայնի մէջ, պատասխանեց խիստ լրջօրէն.

— Ձեր հիանալի ճառը բաւական է: Ես չունիմ պատրաստի բանաստեղծութիւն!

Խրախճանի աղմուկի մէջ այս խօսքերը մնացին առանց ուշադրութեան: Միայն Չառիկեանի պաշտօնակիցներից մի քանիսը խէթ աչքով նայեցին Ոսկերչեանի երեսին, կարծես ցանկանալով իրանց զարմանքը չալտնել, թէ ինչպէս է համարձակում այդ թշուառ կանը հեղնութեամբ վերաբերել Ազատեանի լուրջ առաջարկին, այն Ազատեանի, որի գրիչը կարող է Ոսկերչեանի նման տասին ջախջախել, ինչպէս ջախջախեց Սեռմեանին:

Վաղուց է Ոսկերչեանը ոտ չէր դրել Չառիկեանների տանը: Չնայած բարեկամների գրաւոր բացատրութեան, նոքա դարձեալ

իրարից խուսափում էին: Ջրնդունել և այս անգամ Գարեգինի հրաւերը կ'նշանակէր խզել ընդ միշտ նորա հետ ունեցած վերջին կապերը: Այդ պատճառով նա եկաւ հարսանիք, բայց ամեն կերպ աշխատում էր աչքի չընկնել, մանաւանդ Աշխէնի աչքին չերևալ, յաճախ դուրս էր գալիս պատշգամբը և առհասարակ սաստիկ տխուր էր երևում: Նորա շուրջը ամեն ինչ ուրախ ցնծում էր: Ճառախօսութիւն և կեցցէներ, ուռաներ և երգեցողութիւն, բաժակների զարկեր, ծիծաղ ու կատակ—բոլորը միախառնւում էր բազմաձայն աղմուկի մէջ: Միայն Ոսկերչեանն էր, որ սրտով չէր կարողանում մասնակցել ընդհանուր ուրախութեան. թէև արտաքուստ, միայն նորա համար, որ իւր անտեղի տխրութիւնը ուրիշների ուշադրութիւնը չգրաւէ, երբեմն ժպտում էր, երբեմն խօսում սեղանակից հարեանների հետ և երբեմն մրմնում քթի տակից խմբական երգերի ժամանակ:

Ոսկերչեանին մի բան ևս սաստիկ վշտացնում էր: Աշխէնը, այն Աշխէնը, որին նա քրոջ պէս սիրում էր, այն աստիճան սառը և անտարբեր էր դարձել նորա վերաբերմամբ, որ կարծես իրան բոլորովին օտար էր զգում ղէպի նա, կարծես նորա հետ երբէք մտերմութիւն ունեցած չէր: Այ մի անգամ նա չմօտեցաւ Ոսկերչեանին, առողջութիւնից չհարցրեց, պարի չհրաւիրեց, չհետաքրքրուեց նորա անձով, կարծես նա եղած չեղած մի հաշիւ էր Աշխէնի համար: Այն երեւ էր, որ օրիորդը իւր կանացի վրէժն էր լուծում Սրտաշէտից: Ինչու սա յանկարծ իւր ոտը կարեց Զառիկեանների տանից և զորանով մտատանջութիւն պատճառեց նորան? Այժմ հերթը Աշխէնինն էր: Թող իմանայ և զգայ Սրտաշէտը, թէ ինչ է նշանակում առանց պատճառի մէկին չարչարել: Մինչդեռ նա այնքան անուշադիր էր Ոսկերչեանի նկատմամբ, Աղատեանի զլխի շուրջն էր պտտւում, Աղատեանի հետ կատակում, ժպտում և զրոյց անում tête-à-tête...

Ոսկերչեանին թւում էր, որ իւր առաջին սիրոյ հետ կորցրեց նաև Զառիկեանների հետ ունեցած բարեկամութիւնը՝ իւր բոլոր մտերմութեամբ և պօէզիայով:

Լուսադէմին հիւրերը սկսեցին ցրել, և ամենքից առաջ Ոսկերչեանը:

Դուրսը սաստիկ վատ եղանակ էր. ցուրտ, հողմախառն ձիւն։ Չմեռը, մօտենալով իւր վախճանին, թափում էր իւր վերջին ճիգը և մի անգամ էլ կամենում էր երևալ մարդկանց աչքումը իւր նախկին զօրութեամբ։ Չարաճճի բուքը, տանիքների վրայից և փողոցներից հաւաքում էր ձեան տարափները, զլուսը կորցրածի պէս ընկնում էր դէս ու դէն, վազվզում, սլանում, պտոյտներ էր անում և, հանդիպելով մարդկանց, զարնում էր նոցա երեսին կոտորակի մեծութեամբ սառը և կծու ձնհատիկները։ Ասկերչեանը փողոց դուրս եկաւ թէ չէ, ստիպած եղաւ իսկոյն ձեռքով ծածկել երեսը և աչքերը, որովհետեւ հողմահալած ձիւնը լաւ խայթում և կուրացնում էր։

— 0, ինչ անտանելի է! մրմռաց նա քթի տակից, խիստ թթւացնելով դէմքը։

Կտրուկ ցուրտ քամին ներս թափանցեց մարմնի մէջ. նա լաւ կոճկեց վերարկուն, վեր քաշեց օձիքը և, երկու ձեռքերը մինչև դաստակը ամուր խոթելով զրպանների մէջ, կուչ եկաւ և արագացրեց քայլերը ճերմակած փողոցներով, ուր այս և այն ծայրում հազիւհազ աչքի էին ընկնում ուշացած անցւորներ։

Բուքը շարունակում էր իւր ճարաճճի խաղերը և Ասկերչեանին աչքից չէր թողնում երբէք։ Մի պահ դադար, ու նորից վեր էր կենում նա, վազեւազ հասնում էր նորան, ցրիւ էր տալիս ձեան կոյտերը, պտտւում էր, զարնւում էր աների պատերին, ծառերին, բարձրանում էր մինչև տանիքների ծխնելոյղները և մի պահ անյայտանում՝ քիչ յետոյ կրկին երևալու համար։

Ասկերչեանը սաստիկ տխուր դուրս եկաւ հարսանքատնից։ Վատ եղանակը աւելի ևս փճացրեց նորա հոգեկան տրամադրութիւնը, և նա այժմ իրան աչնչափ մենակ զգաց, կարծես չար բախտի բերմամբ ընկել էր մի խոպան անապատ, ուր անթիւ մզոնների վրայ, բացի իրանից, չկայ այլ ևս ոչ մի կենդանի արարած, ոչ մի մարդկային նշոյլ...

(Շարունակելի)

ՀԵՐԻՔ, ՍԻՐՏ ԻՄ...

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Հերիք, սիրտ իմ, ի՞նչ ես տարել յուսահատող վշտերին՝
Մի կողմ նետիր լուսթիւնդ, խօսիր այժմ մարդկանց հետ՝
Ի՞նչ ես կանգնել ու նայում դու ժանդուռած մտքերին.
Նոր մտքերի համեմատ՝ կռիւ մղիր այսուհետ:

Տես, անհամար խարոյկների բոցերն երկինք հասցըրած՝
Կեանքի դժոխքն հաղարներին կուլ է տալիս կատաղած.
Ահա գործդ այնտեղ է, դժբ սրբազան ու հանուր,
Իսկ դու ի՞նչ ես սպասում, ում ես նայում, դէպի ուր:

Յետ մի՛ նայիր, նախորդներդ իրանց կեանքը անցրին.
Իրանց կեանքի համար միայն՝ իրանց գործն էլ վերջացաւ.
Ել նրանց մի՛ որոնիր պիտանին ու ցանկալին.
Հնանալով և իրանք, -- իրանց գործն էլ հնացաւ:

Նայիր շուրջդ, նոր սերունդը շտապում է ու քայլում.
Ողջոյն նրան, թող այսուհետ նա ուժ առնէ, մեծանայ.
Եւ թող ծաղրեն նախորդները, նրանք մեզ չեն հասկանում,
Թող յետ մնան. նոր սերունդը թող այժմ առանջ ընթանայ:

Բաւական է, որքան նրանք պառաւացած շրթունքով
Հէքիաթացրին իրանց խօսքը, զրոյց արին և մեզ հետ.
Բաւական է նրանց փթած գաւազանի հարւածով
Հայրենիքի ժողովուրդը առաջ գնաց այսուհետ:

Մենք հպարտ ենք նայում նրանց սին, քմահաճ միտումին.
Նրանք կեանքը նեխեցին, նրա մէջն էլ թող ապրեն.
Տաք է այնտեղ նրանց համար, հաշուած իրանց վիճակին՝
Միայն այնտեղ թող իրանց առակաները ծամ ծըմեն...

ԳԻՒՂԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Ինձ՝ հայրենի երկար ճամբան
Տարաւ մի գիւղ իջեցրեց.
Օ՛, աղմուկը երեկոյեան
Որքան մտքեր զարթեցըրեց...

Հովիւ ու զառ իջան սարից,
Տուն են վազում աղմկելով,
Հնձուր, մշակ եկան դաշտից,
Ուրախ, անհոգ լէ-լէ-ներով:

Ես չիշեցի մանուկ օրեր,
Անշուք տնակն իմ հայրենի,
Խաղաղ ու պարզ երեկոներ,
Դէմքեր ծանօթ ու ընտանի...

Անտեղ անամայ իմ ճակատին
Երեկոյեան աստղն էր փայլում,
Պատուհանից լուռ գիշերին
Լուսինն անոյշ ու մեղմ ժպտում:

Շուրջս լռեց. քողի նման՝
Սար, ձոր ու գիւղ՝ մութը ծածկեց...
Բայց աղմուկը երեկոյեան
Որքան մտքեր զարթեցըրեց:

ԷԻՈՒԼԻՏԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹)

Երկրագունդը—մի աստղ աստղերի մէջ: Մի մոլորակ, որ բազմաթիւ ուրիշ մոլորակների հետ մշտնջենապէս պտտւում է Մայր-Սրեգակի շուրջը: Ոչնչանում է երկրակենդրոնական հիպոթեզը, երկիրը այլ ևս կենդրոն չէ տիեզերքի: Ոչնչանում են կրօնական-թէօլոգիական դոգմաները երկրիս գերբնական արարչագործութեան մասին: Մեր երկնային դբօսանքների ընթացքում բնաւ չնշմարեցինք նրա հետքը:

Արժէ սակայն մի փոքր ևս կանգ առնել զանազան ազգերի մէջ տարածւած երկրի ստեղծագործութեան առասպելների վրայ,— մի քանիսը նրանցից հետաքրքրական են իրենց նմանութեամբ գիտական վկայութիւններին:

Մեծ կուրիոզ է ներկայացնում հայկական աւանդութիւնը, որ մենք քաղում ենք Լ. Բիւխների մի աշխատութիւնից ²): Սկզբնական էակը—ըստ մեր նախնիքների՝ լինելով ինքը աներևոյթ և յաւիտենական, կամեցաւ մի անգամ երևան դալ իր բոլոր փառքի ու զօրութեան մէջ: Նա ստեղծեց նախ ջուրը, որի մէջ դրեց ստեղծագործող սերմը: Սերմը դարձաւ ձու, փայլուն, ինչպէս ոսկի, ինչպէս արեգակի ճառագայթ: Ձուի մէջ ինքն իրեն գոյացաւ Մարդ-

¹) Տես Մուրճ 1897 թ. № 2—3, 5, 7—8, 9.

²) L. Buchner. Conférences sur la théorie darwinienne.

Աստուածը. ճեղքելով ձուի կեղևը, նա միլիօնաւոր տարիների ընթացքում ստեղծագործեց տեսանելի աշխարհը, ձուի մի մասից ստեղծեց երկինքը, միւսից երկիրը: Ապա ինքն իրեն բաժանելով, ծնունդ տւեց մէկ արական և մէկ իգական էակի..

Ինչպէս տեսնում ենք, հայոց Աստուածը սահմանադրական է. մի անգամ նա ստեղծում է նիւթը ու ինքը չէզոքանում, այնուհետեւ նիւթը ինքն իր զարգացման օրէնք է տալիս:

Մովսիսական առասպելը—որպէս յայտնի է, ընդունում է ստեղծագործութեան 6 շրջաններ: Առաջին երկու օրը ստեղծւում են լոյս և երկինք, երրորդ օրը ցամաքը բաժանւում է ծովից և ծածկւում է բուսականութիւնով, և միայն չորրորդ օրն է ստեղծւում Արեգակը, որը ուրեմն չկար, երբ երկիրը արդէն բուսականութիւնով էր ծածկւած: Հինգերորդ օրը երևան են գալիս ջրային կենդանիներն ու թռչունները. վեցերորդ օրը՝ ցամաքային կենդանիներն ու մարդը ¹⁾:

Դուրս է գալիս, այդ առասպելի համաձայն, որ երկիրը արեգակից առաջ արդէն կար. բաւական չէ այդ. արեգակի ծագման ժամանակ երկիրը այնչափ զարգացած էր, որ նրա մակերևոյթին հեղուկ ջուրը և բոցը արդէն գոյութիւն ունէին: Դա միանգամայն հակառակ է Փակտերին. երկրի գոյութիւնը անկախ արեգակից—և նրանից առաջ—աներևակայելի է, առանց այն ձգողական ոյժի, որ արեգակն ունի իբրեւ միջնակէտ (տես Մուրճ, սեպտեմբեր 1897):

Իսկ ջրհեղեղը, իբրեւ գէօլոգիական (երկրաբանական) և ոչ գերբնական երևոյթ, ունեցել է հաւանօրէն տեղական և ոչ համաշխարհային բնակարանութիւն: Միակ ճիշտ ենթադրութիւնը այդ հեղեղների մասին այն է, որ հին պատմական ժամանակներում կառաղի երկրաշարժներ ու հրաբխային վիժումներ են տեղացել երրայեցիների ծանօթ վայրերում, օրինակ՝ հայոց բարձրավանդակներում կամ Յունաստանում. այդ երևոյթների շնորհիւ յիշած

¹⁾ Չմտածանք, որ Մովսիսի Աստուածը ամեն բան ստեղծում է Ոչնչից (ex nihilo):

երկիրների լճերը դուրս են եկել իրենց ավերից ու հեղեղել են շրջապատը:

Եւ ահա այդ «տեղական» անցքը ժամանակի ընթացքում աւանդութիւնների ու առասպելների միջոցով դարձաւ «լնդհանուր», համաշխարհային ¹⁾:

Պարսիկները ընդունում էին սկզբնական նիւթը իրեն յատուկ ուժով: Այդ խառնուրդից գոյանում են երկու գլխաւոր աստուածութիւնները՝ Օրմուզդը և Ահրիման: Օրմուզդը, որ լոյսի Աստուածն է, ստեղծում է աշխարհքը նոյնպէս Յ օրում, բայց աւելի տրամաբանական կարգով. առաջին օրը՝ լոյսը և աստղադարձ երկինքը (արեգակը ևս), երկրորդ օրը—ջուրը, երրորդում՝ երկիրը, լեռներն ու տափարակները, չորրորդում՝ բոյսերը, հինգերորդում՝ կենդանիներին և վեցերորդ՝ մարդուն:

Բաքէլացիք, Սկզբում—ջուր և խաւար լի դեերով և ամեն տեսակ հրեշալին, չար ոգիներով: Բայց Բէլ աստուածը մի հարեածով բաժանեց երկինքն ու երկիրը, առաջացրեց աստղերը և յանձնարարեց ուրիշ աստուածներին ստեղծել մարդուն ու կենդանիներին:

Շգիպտացիք ընդունում էին չորս նախնական տարերք՝ նիւթ, ոգի, ժամանակ և տարածութիւն: Սկզբնական նիւթը (անունը Նէյթ) օժտուած էր շարժելու, զարգանալու ուժով, գոյութիւն ունէր ինքն իրեն և յաւիտենական էր: Շարունակ զարգանալով ու կերպարանափոխելով նա առաջացրեց աիեղերական ձուն, որից բղխեց «Ֆթա» Աստուածը աշխարհքը ստեղծելու համար:

Թոզնեք առասպելները, որոնք չարգելի են մեզ միայն այն չափով, որ չափով նրանք ներկայանում են իբրեւ անհրաժեշտ արտայայտութիւն մարդկութեան երեխայական հասակի մտաւոր աշխարհի: Նրանք արդէն վաղուց պատմութեան սեփականութիւն են դարձել ²⁾:

Դիմենք գիտութեան:

Մեծանուն Հումբոլդտ իր Cosmos-ի («Տիեզերք») մէջ հետեւեալ գեղեցիկ միտքն է անցկացնում.

¹⁾ Carl Vogt. Geologie und Petrofactenkunde.

²⁾ Չենք չօշափում արտեղ զանազան դարերի փիլիսոփաների կարծիքները—դա մեզ չափ հեռու կը տանէր:

«Երկու տեսակ հիացում կայ, ասում է նա, երբ մարդս դիտում է արտաքին աշխարհի երևույթները. մէկը յատուկ է հին դարերի նախնական պարզամտութեան: Այն ժամանակ միայն պաշտում, աստածացնում էին շրջապատող երևույթները:

«Միւս տեսակը պատկանում է քաղաքակրթութեան շրջանին: Մարդս սոսկ դիտելով չի բաւականանում, այլ խորը քննում է երևույթները, գտնում է օրէնքներ և այլն: Հինաւորաց ժամանակների դոգմաները մնում են միայն ժողովուրդների նախապաշարած զլուխներում և այն վարդապետութիւնների մէջ, որոնք իրենց տկարութիւնը սքողելու համար, ծածկում են իրենց միտքիական վարդապետութիւնը:

Մենք թողինք երկրագունդը հրահեղուկ-գազային դրութեան մէջ տիեզերական անեղր ովկիանում, ուր նա լողում էր անջատւած մառախուղային զանգւածից: Ենթակաջ մշոնջենաւոր շարժողութեան՝ նա միշտ աւելի և աւելի թանձրանում է, գազային դրութիւնը փոխում է հեղուկի, տաքութիւնը ազատւելով՝ հետզհետէ սառչում է գունդը և անվերջ երկար ժամանակի ընթացքում դոյանում է երկրային կեղևը, երկրիս մակերևույթը: Սկզբներում կոկ, հաւասար, առանց խորդ ու փոսի, այդ մակերևույթը սկսում է փոփոխել: Գունդը թանձրանալով, փոքրանում է աստիճանաբար նրա տրամագիծը, կեդրոն-զանգւածը (ядро) աւելի ու աւելի սեղմւում է, քաջց ձգտում է ուռչել, լայնանալ: Գոլորշիների կատաղի ոյժը ելք որոնելով, ճեղքում է երկրային կեղևը, լաւան դուրս է նետւում: Այգայիսով երկրագնդի մակերևույթի վրայ տրւում են արդէն անհաւասարութեան հիւքերը՝ լեռներն ու հարթութիւնները:

Ջուրն է երևում: Խնչպէս, և ճրտեղից: Անշուշտ ոչ գերբնական գաւազանով, և ոչ ex nihilo: Ջուրը օդի մէջ էր արդէն միայն գոլորշիացած գրութեամբ, իսկ գոլորշիները բարձրացել էին երկրի թանձրանալու, սառչելու միջոցին: Թանձրանում են նրանք ևս և անձրևում առատօրէն երկրագնդի վրայ: Ջուրը այնուհետև հանդիսանում է մէկը այն հսկայական գործօններից, որոնք անընդհատ աշխատութեամբ յեղաշրջում են երկրի մակերևույթը: Մէկը դրանցից, ինչպէս յիշեցինք, ներքին, հրաբխային ոյժն է, ամենակատա-

ղին և աւերիչը, միւսը — օդային մթնոլորտն է, համեմատաբար աւելի դանդաղ դործող:

Ձուրը կրճեւով, քերելով մակերևոյթի անհարթութիւնները, մղում է տիղմը զէպի տափարակ տարածութիւնները և այնտեղ նա կուտակելով հազարաւոր տարիների ընթացքում կազմակերպում է շերտերով ու ծնունդ տալիս նեպտունական (ջրային) ֆորմացիաներին (Formations neptuniennes): Ուշք դարձնենք այդ նշանաւոր երևոյթի վրայ, նա մի ամբողջ գիտութեան իմաստը, հական *raison d'être*-ն է կազմում: Նրկրագնդի պատմութիւնը այդ վերոյիշեալ շերտերի պատմութիւնն է: Նրանցից առաջ ամեն բան խորատուգում է առասպելների մթութեան մէջ:

Մենք այժմ մտնում ենք գէօլոգիայի (երկրաբանութեան) աշխարհը: Բնագիտութեան այդ ճիւղը ուսումնասիրում է երկրային կեղևի կազմութիւնը, նրա օրէնքները, բարձրանում է մինչև նրա օրիժինը (ծագումը) և ուշի ուշով հետևում է նրա էտլիւցիային: Գէօլոգիան գործ ունի միայն երկրագնդի ամուր զանգւածների հետ. նրա ուսումնասիրութեան շրջանից դուրս են ծովը, ջրերը, օդային մթնոլորտը: Նա սերտ կապ ունի աստղաբաշխութեան հետ, որը նրա օժանդակիչ գիտութիւնն է. մինը միւսին լրացնում է: Առանց աստղաբաշխութեան գէօլոգը չէր կարող ճշտւորողել երկրային գնտի չափսերը, նրա ընդհանուր ձևը և այլն, բայց աստղագէտն էլ աստղերի, մոլորակների ներքին բաղադրութիւնը ճանաչելու համար պէտք է զիմէ գէօլոգին, քանի որ երկու կարգի գիտնականների ուսումնասիրութեան առարկաները ազգակից են իրենց ծագումով:

Այ միայն աստղաբաշխութիւնը, այլ նաև մի շարք ուրիշ գիտութիւններ ունին փոխադարձ, սերտ կապակցութիւն գէօլոգիայի հետ. հանքաբանութիւնը, պալէօնոտոլոգիան, քիմիան, կենդանաբանութիւնը — մինը առանց միւսի ծանօթութեան անհնարին է: Մեծ է ու պատասխանատու գէօլոգի պաշտօնը:

Ծովը ընդհանուր առմամբ միակերպ է, այն ինչ ցամաքը տարբեր տեղերում բոլորովին տարբեր շատկութիւններ է ներկայացնում. և մինչդեռ աստղագէտը իր հեռագէտով զինւած հետևում է աստղերի ընթացքին առանց իր գիտարանը թողնելու, մինչդեռ քիմիկոսը կամ հանքաբանը հետազօտում են մարմինները իրենց

լաբորատորիայի չորս պատերի մէջ, գէօլոգը անդադար ճանապարհորդում է ամեն բան տեղն ու տեղը ուսումնասիրելու համար: Նա նախ և առաջ ճանապարհորդ-բնագէտ է:

Ինչ որ երկրի մակերևոյթը այսօր է ներկայացնում մեր աչքերին,—դա նրա պատմութեան ներկայ շրջանն է, բայց վախճանականը չէ, քանի որ մեր շուրջը միշտ տեսնում ենք նոյն մեքենայական, ֆիզիկա-քիմիական ուժերը, որոնք իրենց քայքայող ու վերաշինող աշխատանքով մշտապէս առաջ են քշում էւոլյուցիայի, փոխակերպութեան զործը: «Ամեն բան հոսում է»—գեռ վաղէնց յայտարարել է աշխարհին յոյն Հէրակլիտը:

Պատմական գէօլոգիայի այն մասը, որ զբաղւում է գոյացած շերտերի ուսումնասիրութեամբ, կոչւում է Ստրատիգրաֆիա, շերտագիտութիւն (stratum—շերտ): Դա երկնային կեղեի իսկական անատոմիան է:

Այդ գիտութեան սկզբնաւորութեան ժամանակ կռիւ էր երկու թէօրիաների՝ Նեպտունիզմի և Պլուտոնիզմի միջև:

Աբրահամ Վէրնէր (1750—1817), գերմանական գէօլոգիայի հայրը, հիմնադիր եղաւ Նեպտունական թէօրիայի, որի համեմատ բոլոր քարաժայռերը (Gestein) գոյացել են ջրային փակտորի միջոցով:

Վերնէրի ժամանակակից մի այլ զիտնական շտալանդացի Ջէմս Հուստոն 1795 թ. հրատարակեց Էդինբուրգում պլուտոնական թէօրիան, որի վկայութեամբ ժայռերը հալած զրութեամբ երկրի խորքերից են դուրս շարուել: Նրա հայրենակից Ջէմս Հալլ փորձերով հիմնաւորեց պլուտոնական կամ հրաբխային թէօրիան: Սրանք «կատաստրոֆական»ներն են, որոնց կարծիքով երկրի էւոլյուցիան կատարւել է անակնկալներով ու արհաւիրքներով: Դարուս սկզբի գէօլոգիական շկոլան՝ Կիւլիէ ¹⁾, Հումբոլդտ և այլն պաշտպան էին այդ հայեացքի: Բայց այդ հին շկոլայի դէմ շուտով նորը հիմնեց, շնորհիւ գլխաւորապէս անգլիացի Լայելին, որը հաստատեց դանդաղընթաց էւոլյուցիայի թէօրիան, ընդունելով, որ երկրային մակերևոյթի բոլոր փոփոխութիւնները բացատրւում են բնական ազէնաների զործունէութեամբ:

¹⁾ Տես Մուրճ, մայիս 1897 թ.

Լայելլի նշանաւոր գիրքը «Գէօլոգիայի հիմունքները» վերնադրով նոյն դերը խաղաց գէօլոգիայի մէջ, ինչ որ Դարւինի «ձեռակների ծագումը» — բիօլոգիայի մէջ: Երկուսն էլ յեղաշրջեցին տիրող աշխարհայեցողութիւնը: Լայելլ ցոյց տւեց, որ հանդարտ զարգացումով, էւոլիւցիայով ամեն բան կարելի է բացատրել, նոյն իսկ երկրագնդիս վիթխարի լեռնաշղթաների գոյացումը: Միայն թէ պէտք է ընդունել դրա համար երկարատեւ պատմական զարաշրջաններ: Այսինքն ու Հիմնադրան լեռները չեն ժայթքել յանկարծակի վուկանական վիթուսներից, այլ առաջ են եկել շնորհիւ երկրային մակերևութի դարաւոր, աստիճանական իջման ու բարձրացման, որոնք այսօր իսկ կատարւում են մեր աչքերի առաջ:

Լայելլի թէօրիան ընդունեց համաշխարհային կերպով. էւոլիւցիայի դադափարը այդպիսով հաստատուեց նաեւ գէօլոգիայի աշխարհում, հալածելով թէօլոգիական ու մետաֆիզիկական առասպելները:

Նեպոտունական շերտերի պատմութիւնը քիչ աւելի մանրամասն կ'անենք, երբ կը խօսենք պալէօնտոլոգիայի մասին:

*
* *

Գտնւում ենք երկու մեծ թաղաւորութիւնների սահմանադի վրայ: Նայում ենք դէպի յետ—յաւիտենականութիւն է ձգւած, նայում ենք դէպի առաջ—նոյնպէս յաւիտենականութիւն: Մեր առջև օրգանական բնութիւնն է իր անվերջ բազմօրինակութեամբ, ետեւում՝ անօրգանական կամ անկենդան աշխարհն է: Այստեղ, օրգանական թաղաւորութեան սահմանադիւսում, մենք ականատես ենք արդէն այն միտքիական ու հրաշալի երևոյթին, որի անունը կ'ընքել են «կեանք»...

Մեր խորհրդածութիւնները կամայական են և ոչ մի փաստով չեն արդարացւում: Մենք միայն երևակայութեամբ կարող ենք «գտնել» երկու թաղաւորութիւնների սահմանադի վրայ. այդ սահմանադիժը զուտ պայմանական է, քանի որ բնութիւնը սահման չի ճանաչում: Բայց բնութիւնը թաղաւոր էլ չի ճանաչում. նա մի ներդաշնակ, ամբողջական հանրապետութիւն է, որ իր գոյութիւնն ու զարգացումը ինքն է վարում: Պայմանական են «օր-

զանական», «անօրգանական», «կենդանի», «անկենդան» արտայայտութիւնները: Ո՞րն է կենդանին կամ օրգանականը, զորն է անկենդան կամ անօրգանականը, որտեղ է սկսւում կեանքը, զորտեղ է վախճան առնում,—գլուխ կոտրեցէք, չէք կարող պատասխանել: Նախ պայմանաւորենք «կեանք» խօսքի նկատմամբ: Նա ունի երկու նշանակութիւն. մէկ ընդարձակ, մէկ սահմանափակ: Առաջին նշանակութեամբ կեանքը տիեզերական դինամիզմն է, ընդհանուր շարժողութիւնը, երկրորդով՝ նա այդ ընդհանուր շարժողութեան մի մասնաւոր արտայայտութիւնն է: Աւելի որոշենք. կեանքը իր երկրորդ նշանակութեամբ՝ առանձին տեսակի շարժողութիւն է, որը երեւան է գալիս պրոտոպլազմի մէջ: Վերջինս քիմիապէս բաղադրեալ մի մարմին է, որ երկու էական ֆունկցիա ունի՝ սննդառութիւն և բեղմնաւորում:

Այդ առանձին տեսակի շարժողութիւնն է, որ պիտի զբաղեցնէ մեզ. կեանք ասելով այդ կը հասկանանք:

Նախքան ուրեմն մի քայլ առաջ կ'անցնենք յիշած կամայական սահմանից. կեանքի ծագման հարցը նորից շօշափելու հարկի մէջ ենք զանուում: Նախօրօք յայտնում ենք, որ ընթերցողը չպիտի սպասէ որ և է դրական լուծում այդ հարցի առթիւ (տես Մուրճ, 1897, ապրիլ): Վաղուց նա առաջնակարգ հարց է գիտութեան մէջ, և վաղուց լուծման է սպասում: Առաջարկւում են բազմատեսակ հիպոթէզներ: Աստածաբաններ, մետաֆիզիկ-փիլիսոփաներ, ֆիզիկոսներ և այլն,—ամեն մէկը իր լուծման եղանակն է առաջ բերում: Եւ ամենադիւրին լուծումը բնականաբար տալիս են աստուածաբանները:

Անմիտ գիտնականներ, որ հարիւրաւոր տարիների ընթացքում գլուխ էք ճաքեցնում... հետևեցէք թէօլոգներին, արտասանեցէք միայն «Եւ ասէ Աստուած...»—և լուծւած է կեանքի հրաշալի գաղտնիքը:

Հիպոթէզները անհրաժեշտ են այնտեղ, ուր դրական փորձը ոչինչ չի տալիս տակաւին: Բաց հիպոթէզները ևս զանազան տեսակի են լինում: Կան, որ հաւանական են, կան, որ միանգամայն անմիտ են: Կան գիտական, տրամաբանական հիպոթէզներ, բաց կան նաև այնպիսիները, որոնք իրենց այլանդակ առասպելականու-

թեամբ միայն անպատուութիւն են բերում մարդկային բանակա-
նութեան.

Հարց տանք մեզ. ինչպէս եղաւ արդեօք, որ մի ժամանակ մեր
երկիրը ամացի էր, զուրկ ամեն հեռքերից կենդանիների ու բոյսերի—
իսկ յետոյ նա ծածկեց բուսականութեամբ, զարգացան ֆլորան ու
ֆաունան. ինչպէս ծագեցին առաջին կենդանի մարմինները:

Դարւինը այդ հարցով երկար չէր զբաղել: Ժամանակը չէր
ներել մեծանուն գիտնականին աւելի հեռուն գնալ իր ուսումնասի-
րութիւնների ու ենթադրութիւնների մէջ: Այդ է պատճառը, որ
նա իր «Տեսակների ծագումը» աշխատութեան վերջում մտցրել է
այն նշանաւոր բայց և անհեթեթ ֆրազը՝ թէ «կեանքի սաղմերը
խսկզբանէ Ստեղծողն է ներշնչել առաջին մարմինների մէջ...»—
մի միտք, որ տրամադժօրէն հակառակ է նրա ամբողջ թէօրիայի
ոգուին:

Թէօլոգները շատ շահագործեցին այդ ֆրազը, շատ անգամ
նրան իբրեւ զէնք ծառայեցրին Դարւինիդմի դէմ: Սակայն, աւելորդ
է նկատել, որ վերոյիշեալ միտքը բնաւ չի նսեմացնում Դարւինի
թէօրիայի արժէքը, և ոչ մանաւանդ նրա վիթխարի հանճարը ¹⁾:
Մարդկային կեանքը կարճատեւ է, ուսումնասիրութեան ասպարէզը—
ընդարձակ, անսահման: Դարւինը ձգեց աստիճանական զարգացման
թեւը նախնական մարմիններից սկսած մինչև մարդը, յաղթական
կերպով բարձրացաւ և կենդանական աշխարհի երկարաձիգ սան-
դուկքի ստորին աստիճաններից մինչև ամենաբարձրը, բայց նա
ժամանակ ու միջոց չունեցաւ կեանքի խնդրով զբաղւելու: Նրա
աշակերտները այդ արին:

Հիպոթէզները կեանքի մասին *grosso modo* չորս կարգի են
բաժանւում.

1. Աստուծաբանական:
2. Մետաֆիզիկական:
3. Քիմիական:
4. Ֆիզիկական:

¹⁾ Դարւին. Տեսակների ծագումը:

Կայ մի ենթադրութիւն, որը վկայում է, թէ կեանքը անդրերկրացին ծագում ունի ¹⁾։ Կայ մի ուրիշը, որ ասում է թէ կեանքը յաւիտեանս յաւիտենից գոյութիւն ունի, ինչպէս ինքը տիեզերքը։ Սկիզբ չկայ։

Տեսութեան ամբողջութիւնը պահպանելու համար յիշենք երկու խօսք նախ աստուածաբանների մասին։ Կեանքի յաւիտենական լինելը առասպել է, յաւիտենական է միայն Արարիչը, Աստուծոն անեղ, անժամանակ... Չուտ գիտնական Փական այն է, որ կեանքը սկիզբ ունի և որ նրա հեղինակը Արարիչն ինքն է։ Նա ստեղծեց աշխարհը աստիճանաբար վեց օրւայ ընթացքում։ Ջրհեղեղը վրայ հասաւ իբր աստուծային պատուհաս մարդկանց մեղաց համար և ամեն բան կործանեց։ Նոյեան տապանը միայն բարձրացաւ Մասիսի գլուխը՝ սպասեց, մինչև ջրերը ցամաքեցին, և Նոյը իջաւ իր կենդանիներով, նորից կեանք տարածեց աւերակ աշխարհի վրայ...

Համաձայնելով աստուածաբանների հետ, որ կեանքը սկիզբ ունի, առաջ գնանք։

Մետաֆիզիկական աշխարհացեցողութիւնը, որպէս յայտնի է, ամեն բանի մէջ ոգիներ է խոթում։ Նա կոչւում է Անիմիզմ (Animisme) կամ սպիրիտուալիզմ (spiritualisme) ²⁾, իսկ մեր քննելիք հարցի մէջ նա աւելի յայտնի է վիտալիզմ (vitalisme) անունով։ Վիտալիզմը տեսնում է կեանքի մէջ մի առանձին սկզբունք, մի առանձին կենսական ոյժ, որ տարբեր է նիւթից և որ տարածութեան մէջ տեղ չի բռնում։ Կանգ առնենք. դա հինաւորաց, տարածւած կարծիք է, որ ունի անշուշտ իր գոյութեան պատճառը։ Մարդս միշտ ակնատես է մահւան. նա զարհուրանքով է դիտում, թէ ինչպէս կենդանի էակը յանկարծ դիակ է դառնում։ Որպիսի ներհակութիւն... Եւ նրա գլխում բնականաբար միտք է ծագում, թէ մի ինչ որ բան բաժանւում է անշնչացող մարմնից ու թռչում հեռու, մի բան, որ բոլորովին տարբեր է նիւթից, քանի որ մարմնի ֆիզիկական բաղադրութիւնը նոյնն է մնում։ Այդ աներևոյթ բանը

¹⁾ Տես Մուրճ, 1897, ապրիլ։

²⁾ Երկուսն էլ կարելի է թարգմանել հալերէն «հոգեպաշտութիւն» բառով։

նմանեցնելով շունչի, նա կնքում է նրան ոգի կամ հոգի անունով (spiritus, anima): Հոգին է ուրեմն կեանքի աղբիւրը և նրա հոլթիւնը:

Պիտական բացատրութիւն տալիս են քիմիկոսներն ու Ֆիզիկոսները: Առաջինները պնդում են, որ քիմիան է միայն կուլած կեանքի հանելուկը լուծելու. վերջինները այդ միասիան յանձնում են Ֆիզիկային: Իսկ շատ շատերի կարծիքով երկու գիտութիւններն էլ հաւասարապէս անհրաժեշտ են:

Քիմիան ասում է, որ կեանքը սոսկ քիմիական ուժերի մի խաղէ: Այդ ենթադրութիւնը հիմնւած է այն ֆակտի վրայ, որ կեանքը երևան է դալիս միայն քիմիապէս բարդ մարմիններում, որոնց անունն է ալիումինոիդ (Alluminioïde): Ատոմները որոշ զուգադրման մէջ ծնունդ են տալիս կենսական շարժողութեան:

Վերջապէս Ֆիզիկոսները տեսնում են կեանքի մէջ շարժողութեան մի առանձին եղանակ (mode de mouvement):

Սրդարեւ, մի անգամ որ մենք ընդունում ենք, թէ տիեզերքը ներկայացնում է մի ներդաշնակ ամբողջութիւն, փոփոխական իր ձևով և անփոփոխելի իր ներքին էութեամբ, ուրեմն ոչ մի հիմք չըկայ ենթադրելու, որ կենդանի կամ կազմակերպւած (organisé) մարմինները տարբեր, առանձին տեսակի նիւթից են բաղկացած: Ոչ մի ատոմ չըկայ այդ մարմիններում, որ չը մտնէ տիեզերական նիւթի մէջ: Ոչ միայն նիւթը—ասում է Հէքսլի, այլ ոյժը ևս նոյնն է անօրգանական և օրգանական (կենդանի) մարմինների մէջ: Նոյն նիւթն ու ոյժն է փղի և խոտի, խոտի և ժայռի մէջ, միայն տարբերներն են տարբեր կերպով դասաւորւած:

Թէ որչափ փոխւում է մարմնի յատկութիւնը ատոմների տարբեր զուգադրումից (combinaison)՝ ցոյց են տալիս մեզ այն նշանաւոր մարմինները, որոնք յայտնի են քիմիայում իզոմէր (isomère) անունով: Իզոմէրները նոյն քիմիական էլեմենտներից են բաղկացած և ատոմների նոյն քանակութիւնն ունին, սակայն նրանց դասաւորութիւնը ուրիշ է. և այդ պատճառով այդ մարմինները օժտւած են բոլորովին տարբեր անհատական առանձնաչափութիւններով:

Լիբիխը տալիս է հետևեալ հետաքրքրական օրինակը.

Ստրիքնինը (СТРИХНИНЪ), քինինը (քինա-քինա) և կոֆէինը (КОФЕИНЪ)—երեք մարմիններն էլ կազմած են ածխածնից, ազոտից և ջրաչին էլեմէնտներից: Սակայն առաջին մարմինը թունաւորում է, երկրորդը բժշկում է (տրամազծօրէն հակառակ ներդրածութիւն), իսկ երրորդը—չէզօք է ¹⁾:

Ի՞նչ է պատճառը: Անտարակոյս, միմիայն ատոմների տարբեր դասաւորումը:

Նիւթը շրջանառութիւն է անում յաւիտենականապէս. ատոմները մտնում են միլիօնաւոր զուգաւորութիւնների մէջ, կազմակերպւում են: Անօրգանական և օրգանական աշխարհի միջև կայ մշտական փոխանակութիւն (տես Մուրճ, ապրել, 1897), օրգանական մարմինը (մեր խօսքը կազմակերպւած, կենդանի մարմնի մասին է) սնւում, աճում է անօրգանական նիւթերով, բայց իր մահից յետոյ նա ինքն է սնունդ դառնում անօրգանական մարմիններին:

Զը մոռանանք²⁾ յիշել, որ քիմիայի մէջ այսօր օրգանական նիւթային է միայն ընդունւում, ինչ որ կենդանական կամ բուսական մարմիններից է բղտում, ինչ որ անպայման պարունակում է իր մէջ ածխածին (մէզ, շաքար, կրախմբ և այլն):

Այդ պատճառով կենդանի և անկենդան բնութիւնը որոշելու համար փոխանակ գործ ածելու «օրգանական» և «անօրգանական» ածականները, գործ են ածում այժմ—որ աւելի ճիշտ է «կազմակերպւած» և «ոչ-կազմակերպւած» բառերը: Որովհետև եթէ «օրգանական» ածականով կենդանի աշխարհը մկրտելու լինենք, դուրս կը դայ, որ մէզը, շաքարը կենդանի արտադրանք են:

Մի ժամանակ այն կարծիքն էր տիրում, որ անօրգանական նիւթից չի կարելի օրգանական մարմին արտադրել (այսինքն այնպիսի մարմին, որ բոյսն ու կենդանին են միայն արտադրում): Սակայն նոր ժամանակների գիւտերը ապացուցին այդ կարծիքի անհիմն լինելը: 1828 թ. ականին գերմանացի Ֆ. Վօէլէր (F. Wöhler)

¹⁾ Liebig. Chemische Briefe.

արւեստական կերպով պատրաստեց միջանիւթը (Harnstoff, worebuna): Այնուհետեւ քիմիան սովորեց մի շարք ուրիշ օրգանական միաւորումներ պատրաստել անօրգանական էլեմէնտներից:

Կը գալ, թերեւ, ժամանակ, երբ ձեռն սպիտակուցն անգամ կ'արտադրեն արւեստական եղանակով, կամ ո՞վ գիտէ, գուցէ ուրիշ աւելի բարդ բաներ ևս...

«Կենսական ոյժի» (force vitale) գաղափարը առմիշտ արտաքուստ սխալ է համարել բնագիտութիւնից: Վիտալիզմը այն ժամանակ միայն կարող էր թագաւորել, երբ չը կար տակաւին օրգանական քիմիա և երբ Ֆիզիկական դիտողութիւնները դեռ շատ քիչ էին առաջադիմել ընդհանրացումների տեսակէտից:

Այսօր գրեթէ բոլոր Ֆիզիկոսները եկել են զուտ մոնիստական հասկացողութեան, ընդունելով մի միայնակ սուբստանց (նիւթ), որ «սկիզբն է սկզբանց»: Այլ սուբստանցի անունն է եթեր, ծայրացեղ նոսրութեամբ մի նիւթ, գրեթէ անկշռական (inpondérable), որ լցնում է բովանդակ տարածութիւնը:

Եթերի գաղափարը ամենապրանծալի նւաճումներից մէկն է ընդհանրացումների աշխարհում. նրանով են բացատրում այսօր ամեն շարժողութիւն — լոյսը, ջերմութիւնը, ելեքտրականութիւնը. (օրգանական կեանքն ևս բացառութիւն չի կազմում). նրա էությունից արդիւնք է համարւում տեսանելի նիւթը, նրանից են բղխում և Ֆիզիկայում ուսումնասիրող բազմատեսակ շարժողութիւնները, և քիմիայի տարերքները (éléments), որոնք ոչ ալ ինչ են, եթէ ոչ թանձրացած եթեր: Մի խօսքով, համայն տիեզերքը, ինչպէս որ նա ներկայանում է մեր աչքերին, միայն փոխակերպութիւն է (transformation) սկզբնական նիւթի՝ եթերի ¹⁾:

Ուրեմն ամեն շարժողութիւն, նաև կենսականը, մտնում է «եթեր» ընդհանուր հասկացողութեան մէջ: Վիտալիզմի «առանձին», միասնական ոյժը չքանում է:

Արդ՝ ի նկատի առնելով՝

Որ տիեզերքը մի է բազմազան արտայայտութիւնների մէջ.

1) Ընդհանուր կարծիքն այն է, որ եթերը, թէպէտ չափից դուրս նոսր ու թեթեւ՝ սակայն ունի կշիռ:

Որ ոչ մի կրիտերիում (նշան) չկայ զանազանելու համար
Ֆեանքը մահից, օրգանականը անօրգանականից.

Որ պրոտոպլազմի մէջ նոյն նիւթն է, միայն տարբեր դասաւո-
րութեամբ, նոյն շարժողութիւնը՝ միայն տարբեր եղանակով.

Որ այսօր արւեստական կերպով աջողում է արդէն պատրաս-
տել օրգանական բաղադրութիւններ, և այլն և այլն.

Ի նկատի առնելով այդ բոլորը, հարցնում ենք, արդեօք կեանքը
անօրգանական նիւթից չէ՞ առաջանում բնական ճանապարհով:

Այդ հարցումը տալով՝ մենք ներկայանում ենք մի նշանաւոր և
վերին աստիճանի կնճռոտ խնդրի զիմաց, որի աշուշն է ինքնա-
քեր ծագում (génération spontanée, ահա Մուրճ, ապրիլ, 1897),
մի հիպոթէզ, որ ունի փայլուն փաստաբաններ և աւելի փայլուն
հակառակորդներ:

(Շարունակելի)

2) Ի՞նչ է եթերը, ինչպէս է նա առաջանում—աստածաբանները և
մետաֆիզիկները միայն կարող են պատասխանել այդ հարցին, ֆիզիկոսը—
երբէք, երբէք գիտութիւնը չպիտի կարողանայ ըմբռնել առաջնական
պատճառների գաղտնիքը:

Գիտական ոչ մի հնար չկայ հետազոտելու եթերը, չափնի չէ թէ
ինչպէս է նա թանձրանում ու մարմիններ տալիս: Նա մնում է մի սոսկ
հիպոթէզ, բայց բաւական է, որ այդ հիպոթէզը կատարեալ ներդաշնա-
կութեան մէջ է փաստերի հետ, բաւական է, որ նա բացատրում է բոլոր
շարժողութիւնները: Գիտութիւնը այդպիսի հիպոթէզներով է սնւում:

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱԽԵՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽՈԶԱՒԵՅՆԱԹԵԱՆՅԻ

(Շարունակութիւն ¹)

Բացի բնութեան չարիքից հողագործը հանդիպում է և մի ալլ չարիքի, որը նոյնպէս վտանգաւոր է և զուցէ աւելի քան բնութեան չարիքը: Ալլ չարիքի ածունն է պարտը, որին ցեղակից է և վաշիւր: Պարտապան և վաշխառու—այս բառերը նոյնքան հաճելի են թշուառ գիւղացու ականջներին, որքան հաճելի է ազնիւ բազէի հալեացքը փոքրիկ և անմեղ ճնճղովի համար:

Վաշխառուների դէմ վաղուց մի խուլ բողոք է սկսած ժողովրդի մէջ. լրագրութիւնն էլ բաւականին զգուշ է ալլ հարցը, որի մէջ մի գլուխ մեղադրում են վաշխառուին առանց ալլ հիւանդութեան դեղը ցոյց տալու (? խմբ.): Պետութիւնն էլ, տեսնելով այն ճնշումը, որ գործադրում է միամիտ և անմեղ գիւղացիների վրայ վաշխառուների կողմից, բացառիկ օրէնքներ հրատարակեց ալլ վտանգաւոր գործողութիւնը սանձահարելու համար:

Սակայն այդ բոլոր իրարանցումից չետէ՛ղ գիւղացու դրութիւնը մազի չափ անգամ չբարեփոխւեց, որովհետեւ գիւղացին միշտ և հանապաղ փողի կարօտութիւն ունի, որի պատճառով նա ստիպւած է ուրիշին դիմել: Որքան էլ քիչ լինի նրա պահանջը, բայց որովհետեւ նա ալլ քիչ քանակութիւնն էլ առանց դժւար պալմանների չի կարող ստանալ որ և է աղբիւրից, ուստի փողի ամենաքիչ կարօտութեան դէպքումն էլ գիւղացին ստիպւած է դիմել վաշխառուին, խորին հպատակութիւն ցոյց տալով, իսկ գիւղացի կամ քաղաքացի վաշխառուն էլ չօգուտ իր գրպանի միշտ պատրաստ է անփող գիւղացուն բարերար հանդիսանալ խորին բռնութիւն

¹) Տես Մուրճ № 7—8, 10:

գործելով: Տարբերութիւնը միայն գործողութեան ձևի փոփոխութեան մէջը եղաւ, նոր օրէնքներից առաջ մուրհակի գրելու ձևից զիցուք մի կերպ չաչտնի էր լինում, որ պարտաւէրը վճարում է պարտապանին 20—30, երբեմն 60 տոկոս և կատարում էր անարդել կերպով, իսկ այժմ չաչտնի է լինում միայն 12 տոկոսը, իսկ մնացած 8—18—48 աւելորդ տոկոսները գաղտնի կերպով կաշում են մալը գումարին աւանց սրկ գալու հնարաւորութեան:

Գիցուք զիւղացուն շտապով փող է պէտք, որը չունի նա, ալ ունի մի որ և է բերք:—բրինձ, բամբակ, ցորեն, խաղող և ալլն: Գիւղացին չկամենալով պարտքով փող վերցնել, առաջարկում է իր ապրանքը առնողներին: առնողները լաւ խմանալով ծախողի անելանելի դրութիւնը՝ առաջարկում են ապրանքատիրոջը կէս կամ քառորդ գինը իսկական արծէքի, որը կարող է լինել մէկ կամ երկու ամսից չեսույ:—այսինքն երբ խնկապէս կ'որոշեն մեծ հրապարակներում ապրանքների գները: Գիւղացին անճարացած ալլալիսի չնչին գնով բաց է թողնում իր ապրանքը ուրիշ տղս չունենալով:

Խնչ կարող է անել սրա դէմ ամենամարդասէր օրէնքը:

Պատասխանում եմ՝—Ոչինչ!

Նիւթակոնապէս անապահով զիւղացու պաշտպանութեան միակ զէնքը վաշխառուների դէմ՝ միմիայն գիւղական փոխատու դրամարկները կարող են լինել շտեմարանների հետ մրտսին:

Քանի որ չեն հիմնւել փոխատու դրամարկներ և հողագործը զրկւած էր լինի ինքնօգնութեան միջոցներից, նա միշտ ստիպւած կը լինի գիւմել վաշխառուին և միշտ էլ նոյն անմխիթար դրութիւնը կը շարունակւի:

Ուրեմն զիւղացու թշառութեան վրա կոկորդիլոսի արտասուք թափելու և վաշխառուին մեղադրելու փոխարէն աւելի լաւ կը լինի ամեն ջանք գործ դնել գիւղերում փոխատու դրամարկը բանալու համար, այսինքն ալ ևս կարիք չթողնել վաշխառուին գիւմելու:

Գիւղացին տարաւ մէջ իսկապէս մէկ անգամ է միայն փողի երես տեսնում, ալն ևս չատ դժւարութեամբ: Ալլ ժամանակը աշունքն է, երբ նա ժողովում է իր հողի արդիւնքը, ալն է՝ բամբակը, հացահատիկը, խաղողը և ալլն: Ալլ ժամանակ յալոնում են գիւղերում չարչիներ գլխաւորապէս իրենց ապառիկները ժողովելու և նորից ապառիկ ապրանք բաժանելու, իսկ երբեմն պատահում են զիւղացուց կանխիկ փողով ապրանք առնողներ: Աչման վերջերին բացւում են նաև քաղաքների վաճառանոցները, գիւղացու արդիւնաբերած հողաբույսերը կանխիկ փողով վաճառելու, բաց հաղորդակցութեան կանոնաւոր ճանապարհներ չլինելու պատճառով գիւղացին մեծ նեղութիւն է կրում, մինչև կարողանում է հեռաւոր քաղաքների հրապարակները հասցնել իր ապրանքը: Իսկ շատ անգամ՝ ինքը

տոգէտ և օրէնքին անտեղեակ լինելով՝ հրապարակներում գործող անխիղճ և խարդախ գործողութիւնների պատճառով՝ աշխատում է ապրանքը իր ղուանը կրկնապատկէ ծախել, քան թէ մեծ հրապարակներում քիչ աւելի օգտուել:

Այսուհետ էլ առհասարակ չատ ուշ է գալիս երկրագործի համար. իսկ մինչև աչք ժամանակ նրան հաղնելիք է պէտք. երբեմն սղալ և աղջիկ է ամուսնացնում, որի համար նոյնպէս փող է պէտք և այլն:

Քիչ չէ պատահում, որ երկրագործութեան ամենալավ ժամանակին լանկարծ սատկում է գիւղացու 60-100 ու. արժեցող գոմէշը, 25-30 ու. արժեցող եզը, որ մի մեծ ղժբախտութիւն է գիւղացու համար: Գեռ չենք խօսում տարափոխիկ հիւանդութիւնների մասին, որոնք միանգամից սըրբում, մաքրում են գիւղացու դոմը անասուններից: Այդ դէպքը արդէն սարսափելի է:

Ենթադրենք, որ ներկելու ժամանակ լանկարծ սատկում է գիւղացու գոմէշը. եթէ նա խկոյն սատկածի փոխարէնը չառնի՝ չի կարող հերկը շարունակել. կ'անցնի հերկի ժամանակը, կը զրկւի ցանքից, հետևապէս ամբողջ տարւան ապրուստից: Բայց գոմէշ կամ եզ առնելու համար պէտք է դառնել 25-100 ու. Որտեղից դռնի աչք գումարը, ոչինչ չունի վաճառելու, փոխատու զրամարկը չը կալ արժան տոկոսով փող վերցնելու. Ա. երջապէս գալիս է աշնան կամ զարնան հարկի վճարման ժամանակը. ինչ անի, ումը գիմի, ինչ ծախի նա. դեռ աշունքը չը հասած նա ցրեց, բաժանեց իր հողից ստացած բոլոր եկամուտը, ամբողջ տարին իր ապառիկ կատարած ապրուստի փոխարէն: Այս դէպքում նա զիմիւր է ծանր տոկոսով փոխառութեան, որի տուղին մենք կոչում ենք վաշխառու և սատկել մեղադրում ենք:

Պէտք է ասել, որ գիւղացին փոխառութեան ժամանակ աչքքան էլ հեռատես կամ հաշագէտ չի լինում. նա ամեն կերպ աշխատում է անպետածգելի կարիքը միաչն հոգալ, իսկ թէ ապագայում ինչ կը լինի՝ աչք նրա հոգը չէ, ուստի համաձայնում է ամենակարճ ժամանակով (2-3 ամսով) մուրհակ տալ:

Պարզ է, որ 2-3 ամսից չետոյ, փոխ առնող գիւղացին վճարելու միջոց չունի, ուստի համաձայնում է նորեկ մուրհակը, տոկոսը բարդելով՝ մաշը գումարի վրալ և երկուսի համար էլ նոր տոկոս նշանակել, որը սովորաբար 24% է լինում: Այսպէս տոկոսը տոկոսի վրալ բարդելով և մի քանի անգամ մուրհակը նորելով՝ հասնում է հնձի, կալի ժամանակը, երբ խկոյն հաշատեսութիւն և հատուցումն է կատարում:

Պէտք է գիտնալ, որ գիւղացին պարտք փող առնելով մի առանձին վաստակ չի ունենում, ինչպէս վաճառականն է կարողանում օգտուել պարտք առած փողից. այլ նա խկոյն հոգում է մի կարիքը և խկոյն ձեռքից ոչնչանում է փողը, պարտքի մուրհակը և պատասխանատուութիւնը միաչն տիրոջ վրալ թողնելով:

Պատահում է, որ փողի տէրը տոկոսով փող չէ տալիս, ալ բամբակի, ցորենի կամ մի ալ բերքի ապահովութեամբ է տալիս, աչն էլ հետեակ պաշմանով:

Վիցուք՝ ալ ժամ ցորենի խալւարը արժէ 15-20 ա., փողատէրը տալիս է պարտք 10-20-30 ա. աչն պաշմանով՝ որ կալի ժամանակ իւրաքանչիւր 10 ա. փոխարէն ստանալ մէկ խալւար (30 փ.) ցորեն: Վողատէրը լաւ քննում նախատեսում է, որ կալի ժամանակ ցորենի խալւարը անպատճառ կ'արժենալ 15 ա.¹⁾ ուրեմն ամենաքիչը նա զրանից կը ստանալ զուտ օգուտ 50%: Բալց քիչ չէ պատահում, որ կալից չնտոյ ցորենի խալւարը արժենում է 20-25 ա. ուրեմն աղպիսի չաջող դէպքերում, եթէ նա ստանալ ցորենը, վաստակում է 100-150%: Իսկ պարտք վերցնողը վնասում է նոյնքան: Ենթադրենք, որ հունձը վատ է լինում երաշտից, կարկտից և ալն, և ցորենի գինը բարձրանում է, օրինակ՝ խալւարը արժենում է 30-40 ա., որը ի հարկէ վճարել անկարող է գիւղացին, ուստի մուրհակում որոշած ցորենը ընթացիկ գնով փողի է վերածում: Մուրհակով մէկ խալւար ցորենի փոխարէն, որ տաս ուսուրի էր ստացել դարնանը՝ վեց ամիս ժամանակով, որի համար 24% հաշւած պէտք է վճարէր 11 ա. 20 կ., ստիպւում է տալ 30 ուսուր մուրհակ, ալսինքն փողատէրը վաստակ է ունենում բացի 24% հաշւից 1 ա. 20 կ. և 88 ա. 80 կ. սկզբնական տաս ուսուր փոխարէն, աչնէ՝ մի դոնիային վաշխ:

Միևնուր ժամանակ ենթադրենք, որ հետեակ (երրորդ) տարին ցորենի խալւարը արժենում է դարձեալ 10 ա. բերքի աջողութեան պատճառով, ալց գէպքում գիւղացին ստիպւում է տասից երեսուն ուսուր դարձած պարտքի փոխարէն վճարել պարտապանին երեք խալւար ցորեն: Ուրեմն եթէ գիւղացին սկզբում վերցրած լինէր 30-40 ա., երրորդ տարին պէտք է վերադարձէր 9-12 խալւար ցորեն, ալսինքն ստիպւած է հողից եկած բոլոր արդիւնքը լանձնել փողատիրոջը և մնալ դառն աղքատ:

Դեռ լաւ է, եթէ գիւղացին վերջ ի վերջոյ կարողանալ իր եկամուտից վճարել ալց ահագին պարտքը, որով կ'աղատէ իրեն գերութիւնից: Բալց ինչ անէ չեղած ժամանակը: Նա ստիպւում է մուրհակը մի քանի անգամ նորել և մի չնչին գումարից մի ահագին գումար շինել, որի պատճառով վերջը զրկւում է հողից, տնից, ալգուց, և դառնում է օրավարձ բանուր:

Ալց չարիքի սուռջն առնելու համար պէտք է աչնպիսի պաշմաներ ստեղծել, որ հողադուրձ գիւղացին երբէք կարիք չունենալ վաշխառուին դիմելու: Նա չպէտք է ստիպւի անժամանակ իր արդիւնաբերածը վաճառել, որով ստիպւում է կիսազնով ուրիշին լանձնել:

¹⁾ Ժողովրդական առածը ասում է՝ «Թանգութիւնը խրճի տակին է»:
ուրեմն չատ անկամ հացաբոլսը կալսելուց չնտոյ է թանգանում:

Այսպիսով արմատախիլ կը լինի և վաշխառութիւնը. աչպիսով վաշխառուները գուցէ դառնան բարեխիղճ մարդիկ:

Եթէ գիւղացին իր առօրեայ կեանքի մէջ փոքր ինչ անկախ դիրք ունենայ, նրա աշխատութեան պատուը հեշտութեամբ չլափշտակւի, կերակուր չդառնալ վաշխառուներին, վերջինները կը ստիպւեն կանոնաւոր առևտուր անել տոկոսաւոր վաստակի փոխարէն, աչն է՝ կանխիկ տալով ապրանք առնել, տեղափոխել, վաճառել և իրենց կատարած աշխատութեան փոխարէն չափոնի չափով վաստակ վերցնել, որպէս ընդունւած է առևտրի մէջ: Այսպիսով նրանք կը ստիպւեն քրտինք թափել, իսկ չափոնի բան է, որ քրտինք թափողները մէջ անխիղճները, հրեշտակները սա՞ կաւ են:

Իսկապէս ներկայումս վաշխառուն ինքնօգնութիւնից զուրկ, անպատրաստ և սղէտ ժողովուրդի ծնունդ է և ոչ թէ բնութիւնից ստեղծւած մի պատիժ, որին ճնշելը նոյն իսկ պետական խորհրդի հարց դաւածաւ և բացառիկ օրէնքներ հրատարակեցին ալդ մասին:

Ինչպէս հացի շտեմարանները կարգի դնելով գիւղացին ազատւած կը լինի նեղութեան ժամանակ վերադրով ցորեն առնելուց կամ ուղղակի սերմացու և սնունդ մուրալուց, ինչպէս եղաւ 93 թվ. ձմարնը, նոյնպէս էլ փողի կարօտութեան դէպքերում նա ազատւած կը լինի վաշխառուն զիմելուց, եթէ հիմնեն գիւղական փոխատու դրամարկղներ:

Այժմ հարց է ծագում, թէ ինչ աղբիւրներից հիմնել գիւղական փոխատու դրամարկղերը:

Գրա համար շատ աղբիւրների վրայ կարելի է մատնացուց անել:— Գիւղական փոխատու դրամարկղների սկզբնաւորութեան համար կարող է իբրեւ հիմք ծառայել դարձեալ նոյն շտեմարանը, որի անունով ներկայումս բաւականին փող կալ զիջած գանձարանում, որը աջտեղ շատ չնչին տոկոս է բերում: Սրինակ՝ Սուրմալուի գաւառում 10,000 տուն բնակիչ կալ, որից տասներեք տարւան ընթացքում ստացել և գանձարանին պահ են տուել 6Բ.300 ուրլի, որի վրայ բարդւում է տարեկան 2.652 ու. (4% հաշւած). իսկ նոյն գաւառի ժողովուրդը նոյնքան պարտքի համար վճարում է 15.912 ու. (24% հաշւած ամենաքիչը): Հետեապէս 66,300 ու. չափով շտեմարանի գանձարանին չանձնելով՝ ժողովուրդը վնասում է տարեկան 13.260 ու.:

Որովհետև ալդ գումարը հացահատիկների անունով է ժողոված, ուպէսզի ժողովուրդը նրա կարիքն ունենալիս իսկոյն օգնութիւն ստանալու միջոց ունենալ, ուստի ալդ գումարը ուրիշ պէտքերի վրայ գործ դնելը անգարմար կը համարեն շատ՝ րը, որպիսի մաքին մենք ևս կողմնակից ենք. և, ինչպէս նկատել ենք վերեւում, շտեմարանների մասին խօսելիս՝ ալդ գումարով ցորեն պէտք է առնուէր առաջին արժանութեան դէպ-

քում և շտեմարաններում պահէր. բայց որովհետեւ ներկայումս ժողովրդի վրա ծանրացած պարտքը ըստ մեծի մասին առաջացել է հաց և ուրիշ առօրեական պատճառով, ուստի ալդ գումարը նոյն նպատակին ծառայած կը լինի, եթէ վերադարձնել գիւղացիներին փոխատու դրամարկղերի միջոցաւ նրանց պարտքերը զեղջելու համար, իսկ գիւղացիները պարտաւորին մի քանի նւագում վերադարձնել փոխատու դրամարկղերին 3—4⁰/₀ բարդելով, փոխանակ վախառուին 24—36—48⁰/₀ վճարելու. իսկ բոլորից նպատակադրման է հացահատիկներով վերադարձնեն շտեմարանին փոխատու դրամարկղերի միջոցաւ:

2) Մենք տեսնւք, թէ ինչպէս 82—86 թւին հացահատիկների սաստիկ առատութիւն լինելով՝ թէ մասնաւոր անձանց և թէ հասարակական շտեմարաններում զանազան միջամենք լաւտեսցին: Եթէ շտեմարանները կարգի ընկնեն, աչն ժամանակ միտք չունի շարունակ հացահատիկ գիւղի և անշարժ թողնել, ալդ ղէպքում պէտք է լաւ հաշուել, թէ կարոտութեան ժամանակ որքան հարկաւոր կը լինի ժողովրդին՝ պահել, իսկ մնացած աւելորդ ծախել և զոչացած գումարը միացնել գիւղական դրամարկղերի գումարներին:

3) Յաշտի բան է, որ ժողովուրդը հողի համար մի որոշ հարկ է վճարում գանձարանին, իսկ բացի հողի հարկը իւրաքանչիւր գաւառից նոյնպէս ուրիշ նշանաւոր հարկեր են մտնում գանձարան: Օրինակ՝ գիւղիւի, ակցիղի, ջրաղացի և ալն: Սուրմալու գաւառը, որ մօտ 10,000 տուն բնակիչ ունի՝ վճարում է գանձարանին 160,000 ռ. իբրեւ հարկ զանազան անունների տակ ¹⁾:

Յանցանք չի լինի, եթէ ամեն տարի ալդ ահագին գումարից մի փոքր մաս, ոչ աւելի քան հինգ հազար ռ. լետ զցեն և գաւառի մի քանի գիւղերում փոխ. դրամարկղ բացւի: Հետևեալ տարիները իւրաքանչիւր գաւառի մի քանի ալ գիւղերում բանալ և ալդպէս շարունակելով՝ նախած թէ որտեղ աւելի կարօտութիւն կա՝ մի ժամանակ բոլոր գիւղերը կունենան իրենց սեփական փոխ. դրամարկղերը:

4) Քիչ չեն քաղաքներում հում բերքի վաճառականներ, որոնք իրենց գումարները կարող էին միացնել գիւղ. փոխ. դրամարկղերին աչն պալմանով, որ աշնանը իրենց փողի փոխարէն հում բերք ստանալին գիւղացիներից, որի համար կը ստանալին և մի բարեխիղճ տոկոս:

5) Երբ հաստատուեն գիւղ. փոխ. դրամարկղերը, աչն ժամանակ շատ վաճառականներ իրենց աւելորդ փողերը կը չանձնեն ալդ հիմնարկութիւններին, փոխանակ մեծ քաղաքների բանկերին չանձնելու:

¹⁾ Ներկայումս կարծեմ հարկի գումարը Սուրմալու գաւառից 200,000-ի պէտք է հառած լինի:

Ի՞նչ միտք ունի ղիցուք երևանցու, ալէքսանդրապոլցու համար իրենց փողերը չանձնել Մոսկւայի, Պետերբուրգի բանկերին և խղճով 3—4% ստանալ, քանի որ նրանք կարող են իրենց փողերը դրացի գիւղ, փոխ, դրամարկղերին չանձնել և 7—8% ստանալ:

Գիւղացին մեծաւ ուրախութեամբ 7—8% կը վճարի իր պարտքերի համար առանց դժկամակելու և նեղութիւն զգալու, քանի որ նա ալժմ զանազան ձևականութիւնների տակ վճարում է 24—60 երբեմն 150%:

Աւսքանը բաւական ենք համարում գիւղ, փոխ, դրամարկղերի մասին խօսելը: Մեր թշաւ գիւղացիներին բնութեան և մարդկանց հասցրած չարիքներից պաշտպանելու համար անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել ալդ երկու կաբուր խնդիրները (գիւղ, փոխ, դրամարկղերը և շտեմարանները) և եռանդուն կերպով առաջ տանել:

Դարձեալ կրկնում ենք, որ ալդ բոլորը հեշտ է կատարել մեր գիւղերում, եթէ իւրաքանչիւր հասարակութիւն մի բարեխիղճ և փոքր ի շատէ զարգացած տանուէր ունենալ, որի մտածողութեան առարկան իրեն չանձնած ժողովրդի բարօրութիւնը լինի և ոչ թէ ալժման նման լոկ կաշառակերութիւն անի և ազդեցիկ անձանց կապրիզներին և ինտրիգաներին ծառայի, որով ժողովրդի իսկական կարիքը մոռացում է և վերջինը սաստիկ մեղատում է:

Մեզ մնում է ալժմ խօսել գիւղացիների աշխատութեան ձևերի մասին, որը կարօտ է հիմնական բարեփոխութեան: Մենք տեսանք վերեում, որ ժողովրդի բազմամասնովը շատ սակաւ հողաբաժին է հասնում ներկալումս իւրաքանչիւր անդամին, որից նա պէտք է դուրս բերի—հալթհալթ իր կիանքի բոլոր պահանջները. հետեապէս գիւղացին ամեն տեսակ հնարքներ զործ պէտք է գնէր հողի պտղաբերութիւնը աւելացնելու, եթէ հնար կալ մի քանի անգամ կրկնապատկելու գիտութեան և փորձերի հիման վրայ, որպէս զի կարողանալ հողի սակաւութեանը փոխարինել:

Մեր գիւղացի հողագործները պէտք է փոփոխութիւն մտցրած լինէին իրենց աշխատութեան ձևերի մէջ, որ հնար ունենալին քիչ ուժով շատ գործ կատարել, որով տնտեսութիւն բաւի միտքն էլ մասամբ արդարացած կը լինէր, որպէս ալդ եղել է լուսաւորած ժողովուրդների գիւղատնտեսութեան մէջ:

Յաւելով պէտք է նկատենք, որ մեր երկրագործները ալդպիսի նորութեան, առաջադիմութեան ոչ մի փորձի չեն ձեռնարկել գիտակցօրէն, իսկ երբեմն նկատելի փոփոխութիւնները պատահական բաներ են և ոչ թէ նախամտածած: Եթէ համեմատենք ներկան ու անցեալը՝ անշուշտ կը համոզուենք, որ մեր գիւղացիների ներկայիս հողագործական սովորու-

թիւնները, զիտութիւնը և գործիքները պատմական ժամանակներից անփոփոխ մնացած են և կտեսնենք որ նրանք զգարութեամբ են փոփոխութիւններ անում:

Միևնույն ժամանակ մեր գիւղացիներին չպէտք է մեղադրել առաջադիմութիւն չդորձելու համար, որովհետեւ նրանք իրենց քաղաքական կեանքում մինչև այս պարտա վերջին կէսը երբէք հանգստութիւն և նպաստաւոր պայմաններ չեն ունեցել: Միշտ ճնշւած են եղել բռնակալ իշխանաւորների ձեռքում, հալածւած ու ստրկական վիճակ են ունեցել, իսկ ալիպիսի մի կեանքով ապրող ժողովուրդը անկասկած չէր կարող կրթել, զարգանալ և առաջադիմել:

Այս խօսքերը ուստահալքում ապրողներին համար դուցէ՛ երազ համարւին, քանի որ այժմ շատ սակաւ են պարսից ու տաճկաց նախկին տիրապետութեան բռնութիւնները նկարագրող ծերունիների, որոնց պատմութիւնները բռնութիւնների մասին լսելիս մարդուս արիւնը սալօսովի պղտորում և հոգին վրդովում է: Մենք էլ ալի բռնութիւնները ապացուցանելու համար շատ չենք երկարացնի, որովհետեւ մենք մեր կոյքին ներկայումս կենդանի և անհերքելի ապացույց ունինք, որն է մեր դրացի թուրքաց պետութիւնը, իր լալանի դաղանութիւններով, որ նա գործել է և գործում է ամենալն չամառութեամբ, իր հօլտակ քրիստոնեաների վրայ: Այդ փակալը բոլորին համար անհերքելի է:

Կովկասի ժողովուրդը երկար ժամանակ վերալիշեալ բարբարոս ազգերի իշխանութեան ներքոյ ապրած լինելով՝ միանգամայն խորստուգել է անթափանցելի տղտութեան և նախապաշարմունքների մէջ, որից ազատուելը այնքան էլ հեշտ բան չէ: Ալիպիսի կեանքը Կովկասի գիւղացիների մէջ հոգեկան չարտութիւն է դարձրել վախկոտութիւնը և կասկածաբանութիւնը, այնպէս որ ամեն մի նորութիւն սարսափելի կասկածի և անվստահութեան է ենթարկւում:

Ցանկալի է գիտենալ՝ ընդհանակ են մեր գիւղացիները լուսաւորելու, առաջադիմելու, զարգանալու և ալին:

Այդ առթիւ կարող եմ ասել հետեւեալը—Նրեանայ և իր շրջապատող նահանգներում երեք ազգութիւններ կան գլխաւորապէս՝—հալեր, թուրքեր և քրդեր, որոնցից առաջինը ամենամեծ տոկոս է տալիս ուսումնարաններին, իսկ երկու վերջինները՝ բանտերին, որը մի ցաւալի երևոյթ է մարդկութեան համար, Աւելորդ ենք համարում մեր առածներին ապացույց բերել ստատիստիկական թւերով, որովհետեւ բոլոր կովկասցիները տեսնում են ամեն օր իրենց աչքերով: Քիւրդերն էլ դուցէ՛ դէպի կուլտուրան ցույց տալին իրենց ընդունակութիւնները ինչպէս աւելի թարմ ժողովուրդ, եթէ իրենց կրօնական համերաշխութեամբ չը չարէին դէպի թուրքերը:

Հալերը ոչ թէ միայն ընդունակ են զարգանալու, այլ ներածին չափ

աշխատում են թօթափել տգիտութեան լուծը և մարդավայել կեանք տեսլ-
ծել: Ապացոյց մեզ աչն բաղմաթիւ ուսումնարանները՝ պետական տարրա-
կան և եկեղեցական ծխական, որ վերջին և կա՛ն միջոցում տարածեցին
հաջ գիւղերում, աչն էլ նիւթականապէս ճնշած ներկալ ժամանակում:
Յաւում ենք, որ ուսման մէջ մեր մահմեդական դրացիները մեզ հետ
զուգընթաց չեն գնում և իրենց տգիտութեամբը արգելք են լինում մեզ
կուլտուրական առաջադիմութեան մէջ:

Առանձնապէս հաւերի մասին կարող ենք ասել, որ հաջ գիւղացի-
ները իրենց որդիներին ուսման են տալիս ոչ թէ միայն իրենց երկրում
եղած ուսումնարաններում, ալ հաղարաւոր վերստեր հեռու երկրներ են
ուղարկում ուսում և գիտութիւն ձեռք բերելու: Մինչև անգամ հաջ գիւ-
ղացի դասակարգը գիտութեան շատ ճիւղերում ասել է պրոֆեսորներ և
մասնագէտ դիւղատնտեսներ: 40 տարի հազիւ կը լինի, որ ուսաց կա-
ռավարութեան շնորհիւ հաւերի համար բացեցին լուսաւորութեան և գի-
տութեան դռները, սակաչն ալդ կարճ միջոցում հաւերը տիւն գիտու-
թեան, գեղարւեստի և արհեստի բոլոր ճիւղերում մեծ քանակութեամբ
ընդունակ և նշանաւոր մարդիկ:

Ներկայումս մինք աւելի նշանաւոր երեւոթներ ունենք հաջ գիւղե-
րում, որը դեռ երկար ժամանակ չենք ունենալ քաղաքներում:—Նրեանցի,
ալիքսանդրապոլցի ծնողը գուցէ երկար ժամանակ չը համաձայնի իր աղ-
ջիկը ուղարկել տղաների ուսումնարանը միասին սովորելու, բայց կը
դաւիք իգլիւր աւանը, կը տեսնէիք, որ աչնտեղ եկեղ. ծխական, ուսումնա-
րանում աղջիկները և տղաները քանի տարի է, որ միասին էին ուսանում:
Իգլիւրից աւելի լետ ընկած Ալիդամարլու, Կաչբուռուն, գիւղերում ուսում-
նարանի բացման հէնց առաջին օրից աղջիկներն էլ տղաների հետ միա-
սին սկսեցին լաճախել միեւնոյն ուսումնարանը:

Աւելի ուրախալին աչն է, որ հաջ գիւղացիները ինքնաբերաբար
սկսել էին եկեղեցիներին հողեր չատկադնել, որոնց տրդիւնքներովն էլ
կառավարւում էին ուսումնարանները: Ալիդամարլու գիւղը չատկացրել էր
ուսումնարանին եօթ գետեատին հող. Հախվերիս, Էջլիւար և ուրիշ շատ
գիւղեր նոյնպէս հողեր են չատկացրել եկեղեցիներին. և ալդ անում է հաջ
գիւղացին աչնպիսի մի ժամանակ, երբ ինքը հողի ուստիկ պակասու-
թիւն է զգում և նիւթականապէս ճնշած է:

Այսքան ֆակտերը մենք բաւական ենք համարում տպացուցանելու
մեր գիւղացիների ընդունակութիւնը և բարի ձգտումները դէպի առա-
ջադիմութիւնը, որոնք թէպէտ չեն համոզի մեզ, թէ հաջ գիւղացին
կատարեալ է ու երջանիկ, որովհետեւ ալդ բոլորը դեռ նոր է, ուստի մե-
ծամասնութիւնը դեռ տառապում է տգիտութեան ճանկերում, բայց ալդ
վերագրեալ բարեմասնութիւնները լաւ ապագալ խոստացող երեւոթներ են:

Ուրեմն մենք նորից դառնանք գիւղացիները տշխատութեան ձևերին, զործիններին ու սովորութիւններին, որ մենք չենք քննի մասնագիտորէն, մասնագէտ չը լինելու պատճառով, ալ կ'անենք զիտողութիւն մի րանի, որը շարունակ տեսնում է, բալց ուշադրութեան չի արժանանում:

Հողագործութեան մէջ ամենաառաջին պայմանն է հողի լաւ վարելը, հերկելը, որի համար ամեն մի երկրի ժողովուրդ իր երկրի բնութեան և իր հատկացողութեան համեմատ զանազան ձևի գործիքներ է ստեղծել, որոնց մեր երկրում գութան կամ արօր են կոչում և որոնց սկիզբը շատ հին անցեալումն է թաղնւած ¹⁾:

Գութանը մեղանում սովորաբար զործ են ածում հարթ, հաւասար և անքար տեղերում, որտեղ աւելի խորը պէտք է վարել. իսկ արօրը՝ զլխաւորապէս զործ են ածում լեռնոտ, քարքարոտ տեղերում, որտեղ խորը վարելը ներկալ պայմաններում անկարելի է:

Այդ երկու տեղական գործիքներն էլ կարծես ստեղծել են ոչ թէ հողը մանրելու, ալ զլխաւորապէս անասուններին չարչարելու համար, իրենց ձևի անցարմարութեան շնորհիւ:

Նախ տեղական գութանը ֆիզիկական մեծ ուժ է պահանջում.—7 Յ և երբեմն 9 զուգ գոմէշներ են պէտք ալգ անդամաւոյժ գութանը հողի մէջ մտցնելու և նրան վարելու համար: Ուրեմն եթէ գիւղացին կամենալ առանձին գութան ունենալ և լծել, պէտք է ձեռք բերի առնաւազն 7 զուգ գոմէշ, որի զուգը կարծեմալ 150 ու. հետեապէս գիւղացին պէտք է ունենալ մի չը լաւած գութար, ալն է 1050 ու. Նալած մեր գիւղացիները հողերի փոքր կտորներին՝ նոյն իսկ երկու երեք տան համար (միասին) ևս ձեռնտու չէ, եթէ երեք տուն միանան և մի ալգպիսի գութան լծեն իրենց փոքր տարածութեամբ հողերը հերկելու համար: Ալգ է պատճառը, որ ներկայումս գիւղացիները իրենց հողերը վարձով են հերկել տալիս, թէպէտ ամեն տուն զարձեալ ունի մէկ, երկու, երեք զուգ լծկան-եզներ կամ գոմէշներ իր միւս գործերը հողալու համար: Ալս է պատճառը, որ ալժմ իւրաքանչիւր գիւղում հազիւ 5-10 գութան է գտնւում: Ալգ էլ ունի իր փնասակարութիւնը, որովհետև լալանի է, որ «ուրիշի գերեզմանի վրալ տաւնց արտասուքի են լաց լինում»¹⁾. քիչ կը պատահի, որ մէկը օտարի համար ալնպէս սրտաղաւութեամբ աշխատի, ինչպէս իր համար է աշխատում:

Ինչպէս տեսանք, թէպէտ գիւղացին երկու-երեք զուգ լծկան ունի, բալց նախ՝ երեք զուգ լծկանով անհնարին է ալգպիսի ծանր գութան բանալնելը, երկրորդ՝ ձեռնտու չէ փոքր տարածութեամբ հող ունեցողներին 1050 ու. ծախսել առանձին գութան ունենալու համար. իսկ ամբողջ մի

¹⁾ Տես Աշ. Աթանասեան. Գութանի շուրջը Մուրճ 1894 № 7-8,9.

գիւղի հողերն էլ 5-10 գութանով անկարելի է ամրան որոշ ժամանակին վարել, որով հողի հերկը զրկւում է որոշ ժամանակի արեգակի տաքութիւնից: Բացի այդ՝ օտարը իր անասուններին երբէք օտարի հողը վարելիս աչնպէս չի աշխատեցնի խորը, մանրն մօտ ակօս վարելու՝ ինչպէս սեփական հողի տէրը, որովհետեւ գութանատէրը իր անասուններին պէտք է հանգիստ պահի, որ կարողանալ երկար ժամանակ վարձով բանեցնել, նիւթականապէս աւելի օգտելու համար: Եւ ինչ փութ գութանատիրոջը, թէ հողատէրը սակաւ արդիւնք կը ստանալ իր անհոգ, վատ վարելուցը: (Ամեն մարդ խոմ առաքինութեան վրայ չի մտածում): Ներկայումս, թէպէտ շատ գիւղերում երեսում են եւրոպական կատարեւադորձած գութաններ, բայց զբանք շատ սակաւ են և գլխաւորապէս Նրեանի, Էջմիածնի, Նախիջևանի և Սուրմալու գաւառների գաշտալին գիւղերումն են, աչն էլ անքար մասերում և աչնքան էլ լաւ տեսակներից չեն, թէպէտ զարձեւալ մեծ առաւելութիւն ունին տեղական գութանները վրայ: Նոյն ծանր են, աչնպէս որ զարձեւալ 5 զուգ ուժեղ լծկան են պահանջում և ապա՝ շուգունից լինելով շուտ են կոտրւում, որը մեր երկրում դժւար է կարկատել, նորերը

Անհրաժեշտ է մեր երկրում տարածել Սակկի գութանները, որը երեք զուգ եզները ուժ է պահանջում և միւս գութաններից աւելի ջաշող է բաժնում: Թէպէտ 20 տարուց աւելի կը լինի, որ Պլազիցում (Աչպիգիգի մօտ) չինւում և 100 հազարներով տարածւում են Ռուզուֆ Սակկի գութանները, որը Օղեսալումն էլ պահեստ ունի, բայց երրորդ տարին է ընդամենը, որ մուտ է գործել Նրեանի նահանգում, երկրագործ Սարգիս Միրզաբանի շնորհիւ: Իսկ աչնքան երկար ժամանակում չը գիտենք, թէ ինչ է չինել Վոպկաս, գիւղատն. ընկերութիւնը, որ չը կարողացաւ միջնորդ հանդիսանալ լուսաւորած երկրների ոտեղծագործած գործիքները մեր երկրում տարածելու:

Ցանկալի է մեր երկրում Սակկի գութանների տարածելը, որովհետեւ ցանքի պահանջած խորութեամբ հողը վարելու համար նա երեք զուգ եղ է միաչն պահանջում: Այլ բան է երեք զուգ եղ կերակրել, այլ բան է 5-9 զուգ գոմէշ կերակրել: Մեզնում մէկ գոմէշը, թէ կերակրելու և թէ արժէքի կողմից երկու եզներից աւելի է արժեքում: Ուրեմն որքան տնտեսութիւն կունենալ գիւղացին, եթէ 5-9 զուգ գոմէշների փոխարէն 3 զուգ եղ՝ չով կարողանալ սեփական գութան կառավարել: 2 է որ սեփական գութան ունենալով գիւղացին հողը իր որոշ ժամանակին կը հերկի աչնպէս, ինչպէս իր խելքն ու հասկացողութիւնն է թելագորում:

Սակկի գութանը պիտանի է նաև լեռնալին քարքարոտ տեղերում, որը գիտենք սեփական փորձով:

Ո՛րքան լանդգնութիւն էր մեր գիւղացիների կարծիքով լեռնալին տեղերում եւրոպական երկաթէ գութանով հերկելը, Նս վտաահացալ լեռ-

Շոտ տեղերում Սակկի գութանով վար անել և նախքան փորձով տեսնելը շատերը, մանաւանդ թուրքերը, ինձ կատարեալ վիճարի տեղ էին ընդունում. բազմ փորձը շատերին համոզեց, որ աչքի քան էլ զժար չէ ալդ, եթէ մարդիկ փոքր ինչ ըմբռնող լինին:

Առհասարակ լեռնալին տեղերում վար անելը մի կատարեալ պատիժ է, թէ մաճկալի և թէ անասունների համար: Շատ տեղերում քարերը պարծես դիտմամբ միմեանց վրա են լցրած, որտեղ ազատ մարդն էլ իր չերկու ոտներով գժարանում է մանգալ, իսկ ալդալի տեղերում խեղճ անասունները մի քանի զոյգ միմեանց կապւած՝ բացի մանգալը՝ դեռ սարսափելի ոյժ ևս պէտք է գործադրեն գութանը քաշելով հողը մանրելու և խորը վարելու համար:

Եթէ մարդիկ աչքի քան աւղգալ են, որ անասուններին չեն խզում և հնարք գործ դնում նրանց չարչարանքից աղատելու, գոնէ իրենց սեփական շահը ի նկատի ունենալով՝ պէտք է ամեն միջոց գործ դնեն արտերից քարերը ժողովելու և անպէտք տեղերը լցնելու համար:

Քարքարոտ տեղերում չեն կարողանում գութանով վարել, ալ արօրով են վարում, որը մէկ և կէս կամ երկու վերջով խորութեամբ գետինը հազիւ է վարում, և հէնց ալդ է պատճառը, որ երաշտ տարիներում հողը խորը վարած և լաւ կակղացրած չլինելով՝ հացաբույսը չի կարողանում գետնից սնունդ ստանալ նրա կարծրութեան պատճառով և չորանում է: Անձնական փորձով դիտենք, որ լաւ հերկած լեռնալին հողը, որքան էլ երաշտ տարի լինի, ջրի կարիք չի զգալ և միջակ բերք կը տալ: Մի կտոր խոպան հողի կէսը վարել ենք արօրով 3—4 անգամ, իսկ միւս կէսը՝ մէկ կամ երկու անգամ, ինչպէս վարում են տեղացի երկրագործները: Միևնույն կտոր հողի քիչ անգամ հերկած մասի վրալ ցանած ցորենը կամ գարին հազիւ գետնից 3—4 վերջով բարձրացել, թփեր է արձակել և երկու շաբթից լետոյ սալտականալով՝ չորացել ու թափել է առանց հասկ բռնելու, իսկ չորս անգամ հերկած կտորի վրալ ցանած ցորենը կամ գարին բարձրացել է մինչև մէկ արշին, կանոնաւոր հասկ է բռնել և մէկին 5-6 արշինք է տւել ամենաերաշտ տարում:

Դրա պատճառն աչքն է, որ գարնան անձրևները վերջանալուց լետոյ, հողի վերնի շերտը սալանում, կարծրանում է. երբ հողը խորն է վարած լինում, երեսից մէկ կամ կէս վերջով սալանալով՝ տակումը աչքի քան կալուղ և խոնաւ բաժին է մնում, որ բաւականացնում է հացաբույսերի կարճ արմատներին սնունդ ծծելու համար, իսկ եթէ մէկ կամ երկու վերջով խորութեամբ է միայն հերկած՝ գարնան անձրևները վերջանալուց լետոյ՝ աչքի քան էլ չորանալով կարծրանում է և հացաբույսերի համար բոլորովին սնունդ ստանալու միջոց-տեղ չի մնում և չորանում է:

Լեռնալին տեղերում հողը արօրով հերկելով երբէք երկու և կէս վեր-

շուկից աւելի խոր չի կարելի վարել գործիքի անչարմարութեան և հողք-
քարքարոսութեան պատճառով, իսկ ալիքան խորութիւնը երբէք բաւա-
րար չէ բոլոր սնունդ ստանալու համար:

Արօրին լծում են մէկ կամ երկու ղուգ եզ կամ գոմեշ և վարում են
օրական ամենաշատը մէկ և կէս սոմար (1 սոմարը դեռեալ լինի 1/2 մասն
է), իսկ Սակիի գութանին երեք ղուգ լծելով կարելի է վարել օրական
5-6 սոմար հողի տարածութիւն 4-6 վերջով խորութեամբ: Համեմատական
առաւելութիւնը ակնհայտ է և ապացուցանում է, որ քիչ ուժով ևս կարելի
է շատ գործ կատարել, եթէ միջոցները կատարեալագործւին, որը և ամե-
նագլխաւոր պայմանն է հողագործութիւնից օգուտ ստանալու:

Լեռնալին տեղերում գութան բանացնելու համար, ամենից առաջ,
քարերը արտերից պէտք է հեռացնել, որով թէպէտ զիւղացին երկու երեք
տարի աւելորդ աշխատութիւն և ուժ պէտք է գործադրի, սակայն դրանից
լիտու լաւատեան հեշտացրած կը լինի հերկի գործը: Արտերի մէջ, հողի
տակ, երբեմն աւնպիսի մեծ քարեր են լինում, որ ձեռքի ուժով չարժեք
կամ հեռացնել անկարելի է, ուստի ալիպիսի դէպքերում աւելորդ չի լի-
նի 8-10 վերջակ ներքից քարը վառօղով մանրել, դուրս դնել և գութանի
արգելքը մի անգամից հեռացնել:

(Շարունակելի)

ՀԵՆՐԻՔ ԻԲՍԵՆ

ՆԻ ԻՐ ԺԱՆԳԱՅՐԻԷԼ ԲՈՌԻՔՄԱՆԸ

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆԻ

Պարիզ, 11 նոյեմբեր. 97

Նրէկ գիշեր, Էօվուի թատրոնին մէջ, ներկայացւեցաւ Իբսէնի վերջին խաղը, Ժան-Գաբրիէլ Բորքման:

Ֆրանսական գրականութեան մեծ հիւրերէն մէկն է այս վայրկեանիս Իբսէնը: Վոլտէրի երկրին լուսաւոր մոլորով, չափասէր և տրամաբան ճշակով ժողովուրդին համար, այդ հիւսիսայգի, սառնամանիքի և մառախուղի մարդուն մուտքը դուար եղաւ: Հիւսիսային Սերուպպի մէջ արդէն շատոնց հանրածանօթ դարձած այդ հեղինակը, դեռ տասը տարի առաջ Ֆրանսայի մէջ անծանօթ էր: Քանի մը յանդուգն գրողներ նախ ուսումնասիրութիւններով զայն ներկայացուցին Ֆրանսական հասարակութեան. հետաքրքրութիւն մը կաղմեցաւ. հիացումներ շինեցան. և մտաւորական անձուկ շրջանակի մը մէջ, սկանդինաւեան վարպետին անունը կանգնեցաւ մթազոյն անուններուն քով: Բայց այդ դործը տարբեր ոգի մը ունէր. անոր շինածքը և անոր շեշտը ուրիշ աշխարհէ մը գալու ձև ունէին, ուրիշ մարդկութեան մը կը վերաբերէին կարծես: Հզօր և մերկ ճշմարտութիւններ էին, աղայական երևալու չափ ոյարդ ձևի մը մէջ, կեանքին ամենէն խորունկ աղիքներէն փրցած, և որոնք կ'իջնային՝ ուրախան կարծելու չափ մեծ ու տարօրինակ էականութեամբ շարժւածքէն՝ արդի ընկերութեան թուլցած փտութեան վրայ: Եւ այս խռովիչ ու արտակարգ գրականութիւնը

կուգար այն գիտի ատեն մը ուր, վերջին պատերազմին բերած բուրոյական անկումովը, Թրանսիայի մէջ զւարճալի գրականութիւն մը կը տիրէր, երգեցիկ-սրճարանի լղրճուկ երգերով, պոռնկագրական վէպերով և ցածոգի վոդվիլներով. բնապաշտ վէպը, (որուն, սկիզբէն իսկ, Տուրգենև՝ իր Հիւսիսի մարդու խորին զգայնութեամբը՝ մեղադրած էր հոգեկան ու մտաւորական ձգտումի պակասը, անհոգ ընդօրինակութեան, անամէջ ձեւամոլութեան ուղղութիւնը), հետզհետէ հեռացած էր Բալզաքի և Ֆլոբէրի մեծ ճամբէն, և—հազազիւտ բացառութիւններով—բոլորովին ինկած էր կարճատեւ դիտողութեան, կեանքի մանրամասնութեանց աննըշանակ ու դիւրին հաւաքման ու նկարագրական կատաղութեան սխալ ըմբռնումին մէջ, որուն մեծ զոհը եղաւ, հակառակ իր հանճարին, նոյն ինքն Զոլա՛ն, Քանի մը աղնիւ մտքեր,—Էռնէստ Ռընան, Վիլիէ դը Լիլ, Ադան, Բառթէ դ'Օուլլիլի, Լէոն Դիէրքս, Լըկոնտ դը Լիլ, Անատոլ Ֆռանս, Ռոնի, և խումբ մը երիտասարդներ,—գաղափարի գրականութիւնը կը շարունակէին խորհրդապահ մեկուսացման մը մէջ. ճշմարիտ բանաստեղծ մը, Պոլ Վէռլէն, յանգամոյններու ժխորէն ու միմոսներու ցատքրոտութեն հեռու, ցաւի երգ մը կը բարձրացնէր, ամենէն անգին ձայներէն մէկը, որ մարդկութենէն բղիւծ ըլլան, քիչերէն լսած, թարձրախորժակ գուհիկ մեծամասնութիւնէն արհամարած։ Մտաւորական այսպիսի վայրկեան մըն էր, որ Իբսէնի գործը կուգար Թրանսայի դուռը զարնել։ Բնական էր, որ պիտի խրտչէին այդ այլանդակ ու մուլթ ալցեւուէն. սառուցի պէս կարծր ու մաքուր զգացումներով, անդունդի վրայ ցցւած ժայռի պէս խորխոր ու բարձր մտածումով այդ գործը ապշութիւն և անհանգստութիւն պատճառեց. տեսակ մը խուճապ թւեցաւ ան որ յանկարծ կը կանգնէր պինովութեան սրահի մը դուռը. աչուընին անդին դարձուցին, կամ խնդացին։ Անկախ մտքերու խմբակը յամառեցաւ իր հիացմանը մէջ զէպի նորեկ գեղեցկութիւնը. Իբսէնի խաղերէն մէկ քանիին Ֆրանսերէն թարգմանութիւնները հրատարակեցան, և թատերական ազատ ընկերութիւններ զանոնք ներկայացուցին մասնաւոր հասարակութեան մը առջև։ Քննադատութիւնը մեծ մասամբ հակակիր ընդունելութիւն մը ըրաւ, կամ վարանոտ ու ցուրտ

գլխիդ մը բռնեց. զանգառներ իսկ ելան այդ առեղծւածացին զբա-
կանութեան դէմ որ կուգար «սարսկանել զալլիական պաշտառ ողին»:
Սակացն մուտքը կատարւած էր. նոր տարր մը կ'աւելնար ֆրան-
սական մտքին մէջ: Երիտասարդութիւնը զայն խանդով ընդունե-
ցաւ, և այդ թարմ և անկեղծ խանդը նպաստեց, որ այդ տարրը
ընտելանար նոր միջավայրին, անոր մէջ տարածւէր և հուսկ ասոր
տիրէր հոն: Այդ երիտասարդութիւնը, պատերազմէն քիչ առաջ
կամ անկից ետքը ծնած, տարբեր էր պատերազմին ժամանակակից
եղող հին սերունդէն. այս վերջինը,—բացի նախկին հզօր ֆրան-
սացին մէկ քանի ռոմանտիկ հանճարներէն, որոնք հետզհետէ կ'ան-
հետանային,—սլարութենէն սմբած, տկարացած, փոքրոգի դրա-
կանութեան մը մէջ ինկած էր և արեւտէն ուրիշ բան չէր պա-
հանջեր, բայց եթէ իր կրքերուն յագուրդ մը և զբօսանք մը իր
ձանձրոյթին. նոր սերունդը, տխուր, ցնցւած, ինքնամփոփ, զղւած
այդ հաճոյամոլ և անձկամիտ նիւթապաշտութենէն, որ յաջորդեր
էր ռոմանտիկներուն վեհանձն զաղափարապաշտութեանը, և տո-
գորւած՝ հիւսիսային ցեղերու ծանրախորհուրդ մտածումովը, որ
գերմանական ազդեցութեան տիրապետման հետ եկած մտած էր,
կը ձգտէր դէպի մեծ ու խորին արեւստ մը մաքուր մտածման, զուտ
ներշնչման և իմաստասիրաբար ըմբռնած կեանքի սլատկեացման.
հարստացած ռամիկներու ազեղ ընկերութենէ մը և զանի հայե-
լացնող տափակ դրականութենէ մը ծնած այդ զղանքը յառաջ
կը բերէր զարթում մը, սլացք մը դէպի նոր բարձունքներ, և կը
թարգմանէր կամ արտում դարձով մը դէպի միստիքական երա-
զանքը և խոհական թափառումով մը հոգիին խորհրդաւոր անտա-
ռին մէջ, կամ արի բողոքով մը դրամի և անիրաւութեան վրայ
հաստատուած տձև ընկերութեան մը դէմ ու հակումով մը դէպի
յաղթանակը անհատականութեանց զարգացման: Այս հոգեկան և
մտաւորական բնաշրջումին մէջ կարեւոր դեր ունեցած էին քանի մը
հիւսիսային հանճարներ. էն առաջ, Տուրգենևին, Պոստպետ Մէլի-
մէին և ուրիշներու միջոցով, ռուս գրականութիւնը՝ մարդկային
ցաւերուն, ընկերական մթութիւններուն վրայ տառապազգին դժու-
թեան զգացում մը բերած էր, ուր արդէն բողոք մը կը կայծկըլ
տար. Տոլստոյ մանաւանդ, բարոյական խնդիրներուն ահաւոր կա-

րևորութիւնը ցուցնող իր գործովը, մտածկոտ ծալք մը տա-
 էր Փրանսական նոր հոգիին: Գերման իմաստասէրները, որոնք հի-
 մա խորին թափանցողութեամբ մը կ'ուսումնասիրէին, բնագիտ-
 ական մթնշաղին տարփանքը արժնցուցին հոն: Մեծ ներգործու-
 թիւն մը բերաւ Վագներ. անոր վիթխարի ստեղծագործութիւնը
 երևան հանեց նոր հերոսներ, մարմնոջն ու հոգիին միջև մաքսող
 կա՛մ տատասկներուն մէջէն, վիհերուն վրայէն դէպի Աստածու-
 թիւնը դիմող, կամ մեծ փրկութեան նպատակին համար զերագոյն
 անձնագործութեանց յանձնառու, կամ հիւանդազին զալարումով կար-
 կառած զէպի անողոք, բացարձակ և զարհուրելի Սէրը. և անոր
 երաժշտութիւնը, ովկիան մը ամբողջ՝ ցաւերով փոթորկած, իր
 մոլեգնումներովն ու մարմրունքներովը, իր մոռուններովն ու երկայն
 ողբերովը՝ կ'արտայայտէր այդ հսկայ պայքարը մարդկային կամքին,
 որ, ձակառարի շուքին տակ ճգմաւ, ինքըզինքը կը բզբտէ
 երկնալու համար մինչև զեղեցիկութիւնը: Երբ Իբսէն երևցաւ,
 Փրանսական երիտասարդութիւնը հասուն էր զանի ըմբռնելու և
 սիւսելու համար: Իրօք ալ, ընդհանուր արհամարհանքին և սշրու-
 նեղութեան մէջ, նոր սերունդը, իրեն առաջնորդ ունենալով քանի
 մը անհիւ անդրանիկները որոնք զաղափարին պաշտամունքը կան-
 զուն պահած էին Փրանսական դպրութեանց մէջ, ծափերով ըն-
 դունեցաւ նորեկ հսկան, կուսեցաւ հասարակութեան և աւանդամոլ
 քննադատութեան հեզնումին դէմ, և իր հիացումովը՝ յաջողեցաւ
 վերջապէս Փրանսական Պանթէոնին մէջ զեռնդել պատւանդանը ուր
 կանգնեցաւ սքանդինաւեան հերոսին անդրին: Հասարակութիւնը, որ
 միշտ չամառ դժարութիւն մը դրած է հիւսիսի մարդիկը ընդու-
 նելու, որ արդէն Վագների գործն ալ հասկնալու և իւրացնելու
 համար, բացի հայրենամոլական պատճառներէն, այնքան երկայն ու
 ցաւազին ճիգեր ունեցած էր, ստիպւեցաւ խոնարհիլ այս նոր հրա-
 պոյրին առջև, որ զարմանք և ապշութիւն պատճառելէ յետոյ,
 վերջապէս կը յաղթէր իր անդիմադրելի, իր մագնիսական դորու-
 թեամբը: Ամենէն ըմբոստները այսօր կը հաւանին, վերապահում-
 ներով հանդերձ, խոստովանելու հանճարը այն մարդուն, որ Ռոսս-
 մերումովը և Ուրալականները զրեց: Դեռ կը զանաւորն անշուշտ կարգ
 մը փակ մտքեր որոնք կը դրօսնուն խժբժելով անոր գործին մթու-

Թիւնը, առերեւոյթ անկախակցութիւնը, կարծեցեալ տղայականութիւնը, բայց Իբսէն անուըն ընդունւած է, դասաւորւած է Շէքսպիրին, Գէօթէին, Վազնէրին քով: Դեռ Պարիզեան մեծ Թատրոնները չեն ուզած, — բացի միակ բացառութենէ մը, — Իբսէն ներկայացնել, արդէն Ֆրանսական մեծ Թատրոնները սովորութիւն չունին օտար հանճարներու գործեր տալ: Գէօթէ, Վալլէրոն, Շիլլէր գրեթէ երբէք չեն անցած Ֆրանսական խաղացանկին մէջ. և նոյն իսկ հաղադէպ բան մըն է Շէքսպիրի գործի մը ներկայացումը: Բայց եթէ մեծ տեսարաններուն վրայ ելած չէ, Իբսէնի գործը կը դռնուի, գրքի ձևով, բոլոր դրասէրներուն մատենադարանը. մասնաւոր Թատրոնները, — որոնք սաղմն են Ֆրանսական ապագայ մեծ Թատրոնին — գրեթէ բոլոր խաղերը ներկայացուցած են հետզհետէ. և, նոյն իսկ Պարիզեան քննադատներու խոստովանութեամբ, Ֆրանսական նորագոյն Թատրոնները, ամենէն նշանաւորներն անգամ, յայտնի ազդեցութիւնը կրած են նորվեգիացի մտածողէն:

Ժան-Գաբրիէլ Բոռլմանին ներկայացումը յաղթանակ մը եղաւ, Պարիզեան ճշմարիտ մտաւորականութեան համար:

*
* *

Իբսէն ծայրագոյն Հիւսիսի մարդ մըն է: Եթէ բարեխառն կլիմաները չարմարագոյն հողը եղան մարդկային քաղաքակրթութեան տեւական ընթացքին համար, ծայրահեղ կլիմաներն են որ ծնունդ տւին հսկայական երազներու և վիթխարի գործերու: Եթէ Յունաստանը, իր ներդաշնակ կլիմայով, երկրագունտին աջ կէտը եղաւ ուր մարդկային կորովը՝ ամէն երևոյթներուն մէջ՝ կրցաւ իր ամենէն կատարեալ ձևը զգենուլ, ծայրագոյն Արևելքին և ծայրագոյն Հիւսիսին մէջ է որ մարդուն ստեղծագործ զօրութիւնը տիտանեան համեմատութեանց հասաւ: Բնութիւնը իր ուժի, մեծութեան և գեղեցկութեան չափազանցութիւնը մարդուն փոխանցեց: Հնդկական վսեմ իմաստասիրութիւնը, եգիպտական մեծախորհուրդ և վեհազօր քաղաքակրթութիւնը, ասորական հրէշաւոր ստեղծագործութիւնը, իրանեան արի և ազնիւ բանաստեղծութիւնը Արևմտաւոր Թաղաւորութեանը մէջ կազմեցան և հիւսիսը իր լեռնաբերձ սառույցներովը, իր մրրկային մառախուղներովը, իր մահու

և լուծեան պատկերներովը, ծնունդ տաւ սկանդինաւ, գերման, սլաւ և անգլո-սաքսոն ցեղերուն ահաւոր և մթին երեւակացութիւններուն: Ասով Արեւելքը և Հիւսիսը եղբայր են, և այդպէս կը մեկնէին հանգիստութիւնները արեւելքի ազգերուն և հիւսիսի ցեղերուն զիցաբանութեանց ու Փոլկլոռին, ինչպէս և այն միենոյն խորին ձգտումը բնագանցութեան զոր ունեցած են առաջիններն ու երկրորդները: Մահաքարթայէն Սագաները, պարսիկ բանաստեղծութենէն անգլիական քերթութիւնը և բուդդայական իմաստասիրութենէն գերման իմաստասիրութիւնը՝ անցքը բնական է և շարունակութեան տպաւորութիւնը կուտայ: Տարբերութիւնը գոյնին մէջ է. ինչ որ Արեւելքին լուսեղէն գինովութեանը մէջ՝ թմրած միսաիքականութիւն, ճառագայթարձակ աստուածապաշտութիւն, կարմիր փայլականացացո հերոսութիւն կամ արբշիւ երազկոտ հեշտանք կ'ըլլայ և կը թաքգմանել արեւի բաւերով, կրակէ պատկերներով, աստղազարդ բացատրութիւններով, Հիւսիսին մէջ՝ կը դառնայ արհաւիրքի բանաստեղծութիւնը, ուրականային և լուսնային զօրութեանց զիցաբանութիւնը, մեկամաղձութեամբ ու ներքին երազանքով շինած սէրը, արութեամբ ու դառնութեամբ տոգորւած իմաստասիրութիւնը, և կ'արտայայտուի մշուշէ վերադիրներով, ձիւնեղէն բաւերով, սարսափի և գիշերի պատկերներով: Բայց միշտ մտածումը կը մնայ խորհրդանշական, Արեւելքին ինչպէս Հիւսիսին մէջ, կեանքին մակերեսէն մինչև խորքերը թափանցող, և տեսանելի գոյութեան ետև միշտ ձգտող փնտռելու գերմարդկայինն ու անդրաշխարհեանը, երկրագունդիս եռուջեռումէն միշտ երկնցող դէպի անհուն թաւալումն ու հոսումը տիեզերական կեանքին: Յունաստանը Արեւելքի մեծ քաղաքակրթութեանց անմիջական ազդեցութեամբը ձևակերպւած, ցեղապէս լսել կազմւած՝ Արեւելքէն նոր հասած դաղթումներով, արտադրեց զորժը որ խորունկ հոգին ունէր Արեւելքին, բայց որ իր ձևին մէջ, շնորհիւ կլիմային քաղցրութեան և ցեղին հանգարտ, հզօր ու առողջ զարգացման, դուռ կառարկութիւն մը, ներդաշնակութիւն մը, գեղեցկութիւն մը, զոր Արեւելքը չէր ունեցած, զոր Հիւսիսը պիտի չկրնար ունենալ, բայց զոր Միջին Եւրոպան ալ չկրցաւ վերագտնել անկից յետոյ: Լատինները, յստակ և զործնա-

կան մտքով ժողովուրդ, տիրապետութեան ու կառավարութեան յատկութիւններով օժտւած, նոր իդէալ մը բերին մարդկային զոր-
ծունէութեան, ամէն բնազանցութենէ, ամէն երազանքէ հեռու,
միմիայն մարդկային իրական կեանքովը զբաղող, զայն հզօր ու կա-
նոնաւոր ընելու ձգտող. և այդ մեծ տիրողներն ու վարիչները,
որոնք ոչ բանաստեղծ էին ոչ փիլիսոփայ ¹⁾, չհասկցան Արեւելքը
և սխալ հասկցան Յունաստանը. իրենք ստեղծեցին բանականու-
թեան դրականութիւնը, որուն մէջ երեակայութիւնն անգամ իր
սահմանները, պատճառաբանութիւնը և օրէնքները ունէր. ախե-
զերքին մէջ միմիայն մարդը տեսան, անոր երկրաւոր կեանքը, և
պաշտմանները. օրէնքներ ստեղծեցին, զերազանցապէս օրէնագէտ ժո-
ղովուրդը եղան, և իրենց ազդեցութեամբ կազմեցաւ Յւրոպան.
Թէև բանաստեղծութեան մէջ նմանողներ եղան Յունաստանին,
իրենց յատկ և հզօր միտքը խեղաթիւրեց հելլեն ոգին, զայն պար-
զեց, մերկացուց, և այն խորին ու բնազանցական արեւտը կեր-
պարանափոխեց և իր չափասէր կանոնամոյ ոգիին պատշաճեցուց.
Իրեն հետեւեցաւ Յւրոպան, մանաւանդ այն մասը, որ լատին ցեղե-
րով կազմւած էր: Ատով կը մեկնէի այն անհասկացողութիւնը զոր
ցուցուց Փրանսական և իտալական քննադատութիւնը՝ յունական
արեւտը մեկնելու մէջ. կը բաւէ, քննել այն ողորմելի ըմբռնումը,
որով Ժ. և Ժ. Գարու Փրանսացի մեծ հեղինակները կարծեցին
հասկնալ յունական դիւցազներգութիւնն ու ողբերգութիւնը. նմա-
նապէս, արեւելեան քաղաքակրթութեանց հոգին փակ մնաց նոր-
լատին ցեղերուն մտքին ու ճաշակին: Եւ ճիշտ այդ է պատճառը,
որ մինչև այսօր Շէքսպիր, Գէօթէ, Վազնէր, Խբսէն զժւարութեամբ
կը թափանցեն Հարաւի հասարակութեանց, մանաւանդ Փրանսա-
կանին մէջ՝ որ լատին աւանդութիւնը ամենէն աւելի կենդանի պա-

¹⁾ Յալանի է որ կ'ակնարկեմ միմիայն ըստ հռոմէական դրականու-
թեան, առանց երբէք ալս բացաարութիւնները տարածելու՝ միջնադա-
րեան լատին մատենադրութեան վրայ, որ արդիւնքն է բարբարոսներուն,
ալսինքն հիւսիսային ցեղերու, բերած խորունկ վերանորոգման կնճռո-
տած և ընդարձակւած լատինութեան մը հոգիին, և որ հեթանոսական ան-
կումին նրբարեւտ մտածումն ու քրիստոնէական միստիքականութեան
վսեմ բանաստեղծութիւնն ունեցաւ:

հաճ է: Հիւսիսի ցեղերը, որոնք նազ կրած են լատին ազդեցութիւնը, որոնք հսկայական ու ինքնուրոյն կլիմայի մը ներգործութեամբը, աւելի մօտիկ մնացած են բնութեան, և որոնք անեղծ պահած են իրենց երեակայութեան ու խոկման հինաւուրց ճշգրտութիւնը, աւելի ատակ դոնւեցան Արեւելքն ու Յունաստանը հասկնալու: Անգլիացի և գերմանացի գիտնականները, բանաստեղծները, իմաստասէրներն ու քննադատներն են, որ ճշմարտապէս բացատրեցին հնդիկ կամ պարսիկ երազանքը և հելլեն արւեստը: Այսպէս, Փրանսացիները յաւակնոտ սխալ մը դործած են զիրենք յոյներուն ուղղակի յաջորդները նկատելով՝ նոր Աւրոպային մէջ. անոնց ձեռն կատարելութեան բնազդն ու կարողութիւնը միայն ունեցան, բայց լատին «զդեցութիւնը իրենց մէջ չորցուցած էր հոգեկան մեծ միամտութիւնները, բնութեան խորին հասկացողութիւնը, տիեզերքին հետ լայն հաղորդակցութիւնը. և որպէս զի Փրանսական գրականութիւնը իր մէջ ներմուծէր այդ ամենակարեւոր տարրը, — ինչ որ ըրաւ այս դարուն մէջ, և շքեղ յաջողութեամբ, — պէտք եղաւ որ հիւսիսի գրականութիւնները ազդէին Փրանսական մտքին վրայ:

*
* *

Արեւելքի մէջ, մինչդեռ Ասորեստան ու Նզիպոսս հաւաքական կորովներուն պանծացումը կանգնեցին, մինչդեռ Հնդկաստան հոգիին տիեզերքը խուզարկելով և անոր մթութիւններն ու աստղերը երգելով զինովցաւ, Պարսկաստանն է, որ ազնիւ ու խրոխտ ձայնը բարձրացուց, տիեզերական բարութեան յաղթանակը տարփողեց, քաջութեան և աշխատութեան դրօտիքը հիւսեց, և արդէն ուրուագծեց անհատական ուժին գեղեցկութեան գերազանցօրէն մարդկային դրւագը: Հիւսիսը այդ դործը անհունապէս զարգացուց և ընդարձակեց: Հիւսիսը մեծ բոցն է անհատականութեան զաղափարին, հոն ծնան ամենէն հզօր մարդկային տիպարները: Արտաքին բնութեան խստութիւնը մարդը սեղմեց ու ստիպեց ինք իր մէջ ամփոփելի, իր ուժը բիւրապատել, ամբողջ զէնք ու զրահ դառնալ ինքզինքը պահպանելու, ապրելու, յաղթելու համար: Աւ նոյն ատեն, ինչ որ այդ բնութիւնը ունի գերմարդկային, ուրականային ու եղերական, այն մահու, երազի և խորհուրդի ահաւոր գեղեցկութեամբ:

Թիւնը որով կ'արտայայտուի ան, այդ բազմապատկաճ կորովով տիպարներուն տւաւ հոգի մը ամենէն արտակարգ բաղձանքներով և ամենէն հսկայ մեղամաղձութեամբ բնակած: Նիքելունգներն ու Սազաաներ, և ամբողջ հիւսիսային ֆուլկլոռը, սաղմին մէջ կը ցուցնեն այդ ծայրայեղ արութեան, արտասովոր անըջանքի և վայրենի տրտմութեան էակնեղը: Տեգներ՝ իր Փրիտիոֆին մէջ՝ հոյակապ շունչով մը քարձրացուց ամբողջ հերարձակ փոթորիկը այդ մարդկային ծովին, իր մութ յորձանքներովը, իր մէգերովը, իր խարակներովը, և իր ալիքներուն մէջ ծածանող երկայն օձապտոյտ ծաղիկներովը: Շէքսպիր ստեղծեց մարդեր որոնց լւրաքանչիւրը մարդկութիւն մըն է սեղմուած մէկ տիպարի մէջ, և աւելի անհուն քան իրական մարդկութիւնն ամբողջ: Վարլայլ երկեց մարդկային հերոսները, անոնք որ երկրագունտին ուժը իր բարձրագոյն սաստկութեանը մէջ արտայայտեցին և տիեզերական կեանքէն առածնին տիեզերքին դարձուցին՝ գեղեցկացած: Գերման ստեղծագործները աւելի խորին եղան, նաւը կորովի, աւելի մութ, աւելի տխուր, աւելի տիեզերական մահին մէջ խորասող, աւելի հնդկիկ, աւելի միստիքական: Իբսէն վերջին ու թերեւս մեծագոյն բանաստեղծը եղաւ անհատականութեան:

Իբսէնի գործին մէջ, դարուն բոլոր տենդերը, բոլոր բնազանցական և ընկերական խնդիրները կը ցոլանան: Այդ ստեղծագործը մաքառող մըն է միանգամայն. իր ծովահէն ու պատերազմիկ նախահայրերուն արիւնէն ունի. արդի կեանքը, արդի ընկերութիւնը տեսած է իր ստույթեամբը, իր կեղծիքներովն, իր տգեղութեամբը, և իր զգանքն անոր երեսին պռուցած է: Ատկից ոմանք սխալ դատումով մը Իբսէնը ընկերական զրազէտ մը կարծած են: Ընկերական զրազէտը, ինչպէս կը հասկցւի Ֆրանսայի մէջ մանաւանդ, կեանքը իր զուտ իրական, մակերևութային գծերուն մէջ ուսումնասիրող միտք մըն է, որ կը քննադատէ անոր կարգուսարքը և լաւագոյն յօրինւածի մը ուրաքիծը կը ներկայացնէ: Իբսէն հրապարակագիր մը կամ ընկերաբան մը չէ: Բանաստեղծ մըն է: Թիւրիմացութիւնները մեծ մասամբ այս սխալէն յառաջ եկած են: Այդ բանաստեղծը անկենդան երևակայութեան, դատարկ քմայքի անձնատուր միտք մը չէ. իր աչքը իրականութեան, բարախուն կեանքին, շօշափելի մարդկային զանգւածին վրայ

սեւեռւած է. տեսակ մը իրապաշտ է. չիմ միակ նպատակս, գրած է նամակի մը մէջ, իւրաքանչիւր գործովս իրականութեան կտոր մը ներկայացնել է հասարակութեան: Բայց փոխանակ, սովորական իրապաշտներուն պէս, կեանքը նոյնութեամբ իր արտաքին գծերովն ու գոյնովն ընդօրինակելու, ինքը անոր մէջ ամենէն յատկանշական տարրերը կը տեսնէ, և զանոնք միայն կ'ընդլայնէ և կը լուսաւորէ. իրեն համար այդ կարեւոր տարրերը կեանքին առանցքը կազմող բարոյական խնդիրներն են. իր խաղերը կը ցուցնեն մարդկային հոգիին կերպարանափոխումները՝ բարոյական մթնոլորտին ազդեցութեան տակ. անոնք այն զաղափարական թատերաբեմն են ուր անհատին և միջավայրին պայքարը տեղի կ'ունենայ. այդ աննիւթական պատերազմին զիւցազներգութիւնը զրելու համար, մանրաքննին ճշտութեամբ ուսումնասիրած ըլլալով հանգերձ ընկերական ճշմարիտ միջավայրներ և մարդկային ճշմարիտ տիպարներ, Իբսէն անակնկալ ու յանդուգն ընդհարումներ կը ստեղծէ այդ տիպարներուն և այդ միջնավայրներուն միջև, կ'երեւակոյտէ խկատիպ, հզօր, արտասովոր և սակայն միշտ կարելի կացութիւններ, ուր, ներքին և արտաքին մղումներուն տակ՝ անհատին աշխփոխումը քայլ առ քայլ կը պատկերացնէ, յաճախ զանի հասցնելով իր տրամաբանութեանը մինչև վերջնական ծայրը, մինչև անիմաստը, մինչև այլանդակը, մինչև յիմարականը: Հոտ, այդ հեռաւոր ու արաւոր սահմանին մէջ, Իբսէն մեղի զգայութիւնը կուտայ կեանքին խորքը կազմող անձանօթին վաշրկեան մը տպած ըլլալու: Կը կարծենք ընդնշմարել, մարդկային ցնցոտիներուն ետև, նոյն իսկ բնութեան տիեզերական, անհասկանալի վերքերը: Տեսարանները, որոնց հիմերն իրականութեան մէջ շատ խորունկ կերպով հաստատուած են, իրենց արագ, տենդոտ զարգացմանը մէջ, երբեմն կը թւին երկնաւ մինչև խորը միջոցին, հասնել մինչև գերմարդկայինը, տիեզերքին հոգիին մօտենալ. տիպարները, որոնք մտով ու ոսկրով մարդեր ըլլալով կը սկսին, երբեմն կ'ընդլայնւին, կ'անօտարման, Հազարումէկ զիշերններու ողիին պէս՝ որ մարդկային ձևը թողլով՝ մուսի կը փոխէր, կ'անհունանար ու կը ցնդէր, և կը տարածւին, կը հասնին մինչև ոլորտ մը արհաւիրքի և զաղանիքի: Բնական է որ կարճատեսներուն, անձկամիտներուն համար, տեսարանները անհաս-

կանալի և տիպարները անիրական երևան այն ատեն: Պէտք է Իբսէնը ըմբռնել իբր մոգը որուն բառերը իրենց պարզ նշանակութենէն աւելին կը պարունակեն, որուն պատկերները՝ նոյն իսկ երբ պարզ կը թւին՝ ծակեր են անդունդին վրայ բացւած:

Գիտութեան, բանաստեղծութեան և կրօնքի ձուլումը, որ հին Արեւելքին մէջ երեցաւ և որ Յունաստանի մեծ օրերուն մէջ պահւեցաւ, գեղեցկագէտի, բարոյախօսի և խուզարկողի այն հոյակապ խառնուրդը զոր կը ներկայացնէր քուրմ-բանաստեղծը և որ Էսքիլի, Սոփոկլի կրօնական-բանաստեղծական գործին մէջ շարունակեցաւ, մնացած է Հիւսիսի ազգերուն մէջ: Աշխատութեան բաժանման սկզբունքը, զոր լատին ոգին չղացաւ և որ հարաւային եւրոպային մէջ տիրեց ու մտաւորական կեանքն ալ սահմանաւորեց, նազ զօրաւոր ազդեցութիւն ունեցած է Հիւսիսի մէջ: Մինչդեռ Հարաւը կրօնքը, բանաստեղծութիւնն ու գիտութիւնը, զանոնք իրարու թշնամի դարձնելու չափ բիրտ բաժանումով մը, զատած է իրարմէ, Հիւսիսը դեռ պահած է հոգիին, մտքին և երեւակայութեան ուժերուն ներդաշնակութիւնը. մարդը հոն աւելի կրօնական մնացած է, կրօնական զգացումը հեազհետէ հասցնելով ազատ ու գեղեցիկ ընդարձակութեան մը. ատով, մինչդեռ Հարաւի մէջ կրօնքը՝ իր բաժանմանն ու մեկուսացմանը մէջ պաղելով, ծերացած, անկենդանացած, ընկերութեան փնասակար տարր մը դարձած է, Հիւսիսի մէջ, կրօնքը՝ բարենորոգում ընդունելով, արդի ժամանակներուն ազատ ոգին իւրացնելով, ընկերութեան բարոյական զգացումը զօրացնելու և բարձրացնելու ծառայած է. ատոր համար, մինչդեռ Հարաւի ընկերաբանները բացարձակ անկրօններ, կործանարար մաքառողներ եղած են, Հիւսիսի մէջ՝ կրօնքը, գիտութիւնն ու բանաստեղծութիւնը համաձայն զոնւած են՝ անձնիւրն իր ճամբով՝ կեանքի լաւագոյն պայմաններ երազելու:

Լութեր ոչ միայն կրօնքի վերանորոգիչ մըն է, այլ միանգամայն մտաւորական ու բարոյական ընդհանուր կեանքին կերպարանափոխիչ մը: Ընկերական խնդիրներու բուն գիտակից հասկացողութիւնը և անոնց տեսական, գիտական ուսումնասիրութիւնը կը բղխի, ոչ թէ Հարաւի աղաղակներէն, հայհոյանքներէն և արարքներէն, որոնց խանդի գեղեցիկ վատնումով մը ճամբան բացած են,

այլ Հիւսիսի մանր, երկիւղած ու խորաթափանց քննութենէն: Հիւսիսի բանաստեղծները գիտնականի բնազդներ, իմաստասէրի խորքեր և քուրմի ծանրութիւն ունին. Հիւսիսի գիտնականներն ու իմաստասէրները իրենց խուզարկութեանց խորը բանաստեղծի հոգի մը պահած են: Այդ Հիւսիսէն միայն կրնար ելլել այն ամբողջական, այն կատարեալ մարդը, այն տիեզերք—մարդը, այն մեծ գիտնական, մեծ գրագէտ և մեծ տեսանողը, Գէօթէն: Այդ Հիւսիսէն է Իբսէնն ալ:

Իբսէնի Հիւսիսը աւելի խորունկ Հիւսիս մըն է քան անգլո—սաքսոն և գերման Հիւսիսը. այդ Հիւսիսը կէս զիշերան արւն ունի, և Հիւսիսացիին անընդէն պայծառութիւնը կը ճանչնայ. հոն ամառներ կան, անգիշեր օրերով, յաւիտենական լոյսի զգայութիւնը տւող, ծայրացեղ զարթութիւններուն, մոլեգին կեանքի յորդումներուն առաջնորդող, ամառները՝ կապոյտ Ֆիօրներուն մէջ ուր սերովբէական դոյներ կը ծիծաղին. և ձմեռները հոն մշտագիշեր են, չորս ժամու արեւի դժգոյն ընդհատումով, ձմեռներ անհուն ձիւնի, մեծ մրրիկներու, երկացն աղջամուղջներու և խորին տրամութեան. հոն կը սկսին սառուցներու ովկիանին ճերմակ արհաւիրքներ, որոնց մէջէն ահեղ ուղեորները կը դիմեն դէպի Բեռլին մահաժպիտ կուսութիւնը: Իբսէնի գործը կը խտացնէ այդ հակացական թախծութեան ու միանգամայն վայրենի ու թարմ ուրախութեան բնութիւնը, և այն խելացեղ քաջութիւնը, այն սաստիկ ցուրտի մէջ կազմւած կարծր ու պաղ եռանդը, այն ազատ, զօրաւոր ու երիտասարդ զգայնութիւնը, և մեծ խռոված մեկամաղձութիւնն ալ՝ զոր ունին մարդերը այդ կլիմային տակ:

Եւ ինքն իսկ Իբսէն կը թւի տեսակ մը զարհուրելի ուղեոր որ իր մտածմանը վիհերուն ու ցցւածքներուն մէջէն տաժանագին կը դիմէ դէպի անմատոյց Բեռլը կեանքին: Մոլեգին մարառումի ոգին որ այդ գործը կը լեցնէ, պաշարւած է կրօնական վահաշուք ծանրութեամբ մը. այդ մաքառումը, շնական ու հեզնոտ յարձակում մը ըլլալէ հեռու, խանդով, հաւատքով, յուզմունքով շինւած է. Իբսէն կատաղի միստիքականի մը ձեն ունի, մտաւորական անսպասէ մը ելած տեսակ մը նոր ճգնաւորի, որ սովորական կեանքին տղեղութեանը դէմ կ'որոտայ և իր երազատեսի մատովը

լուսեղէն հեռաւոր ճամբաներ կը յուցընէ: Իբսէնի նպատակը չէ կեանքին ուշիմ ու հաւատարիմ պատկերացումով մը ընկերութեան մէկ վերքին որոշ և գործնական քննադատութիւնը ներկայացնել՝ ինչպէս ըրաւ Ալեքսանդր Ռիւմա որդի, ոչ ալ զեղարեւստական անհող և քմածին ստեղծագործութիւն մը արտադրել՝ միմիայն զաղափարային ներդաշնակութեան մը և մտաւորական ժպիտի մը հաճոյքը տալու համար: Այդ բոլորը կան Իբսէնին մէջ, և ուրիշ բան ալ: Իբսէն՝ աշխարհ մըն է. և աշխարհի մը պէս, արտաքուստ պարզ, միակողմուր և դաշնակաւոր, ներքուստ բազմատարր ու կնճռատ:

Իբսէն իր աչքին առջև ունի ոչ միայն մարդկային ընկերութիւնը, որ արեւստական արտադրութիւն մըն է, այլ նաև ու մանաւանդ, բուն իսկ կեանքը, որ աւելի ընդարձակ է, որ խորին է ու անհաս, և տիեզերքինն է, Աստուծոյ է: Ատով, այդ անողոք մարտնչողին մէջ ամենէն կատաղի յուսահատը կը գտնենք: Մահը տեսած է ամէն ճամբու ծայրը, պատրանքը ամեն յոյսի ծայրը, ստույթիւնը ամեն զգացման ծայրը, և գիտէ որ ամէն բան ունայն է: Բայց գեղեցկութեան ըմբռնում մը և հաւատք մը ունի. կը զգայ, հակառակ մարդկային անկատարութեանը համոզւած ըլլալուն, թէ իրերուն խորը թաքուն ներդաշնակութիւն մը, մեծ գեղեցկութիւն մը կ'այ և թէ ամէն մարդ պարտք ունի, ազատ ճիգերով, անկախ՝ ամէն օտար ճնշումէ, իր հողիին համեմատ՝ զանի զանելու: Եւ տեսնելով այն կաշկանդումները զոր կեղծիքի և անիրաւութեան վրայ հաստատւած ընկերութիւնը անհատներուն առջև կը դնէ, իր զայրոյթը կը բորբոքի և կ'անիծէ ընկերութիւնը: Կեանքը ցաւ մըն է, կեանքը մշտական որսն է յաւիտենական Մահին, որ զայն կը հասունցնէ, կը գեղեցկացնէ, կը զգեստաւորէ, որպէս զի լափէ զայն յետոյ: Մարդը, իր մէկ բոպէի գոյութեան մէջ, իր դէմ ունի ոչ միայն Մահին սարսափը միշտ կախւած, այլ բոլոր տարրերը, որոնք զինքը ճգմել կ'ուզեն, ամբողջ տիեզերքը, որ զինքը ջնջել, իր մէջը կլկել կը ձգտի: Այդ բոպէին մէջ, մարդը պէտք է ինքզինքը ճանչնայ, իր ճամբան գտնէ, իր ուժերուն համեմատ՝ իր գործը կատարէ, իր հոգիին համեմատ աշխարհ մը ստեղծէ. պէտք է որ իր ազատ և ամբողջ շրջանը բոլորէ. յետոյ կրնայ ջնջւիլ՝ ինչպէս միջոցին մէջ կը ջնջւին աշխարհները երբ իրենց կեանքին

բոլորակն աւարտեն: Ամէն անհատ պէտք է իր ուրոյն կեանքն ունենայ, և անհատները պէտք է իրարու կապին՝ ընդհանուր կապով մը, որ կեանքին թաւալումը դաշնակաւորէ, ինչպէս տիեզերական զօրութիւնը կը կապէ աշխարհները և առանց զանոնք իրարմով ջախջախելու՝ իրարու վրայ և իրարու հետ անհուն ծոցին մէջ կը պտուտքեցընէ: Երբէք Իբսէն, իր ոչ մէկ գործին մէջ, այս ամբողջը չէ բացատրած. բայց իր էջերուն խորքէն այս փիլիսոփայութիւնը կ'արտաշնչէ. ատիկա կերպով մը յատակի հիւսւածքն է որուն վրայ իր երեակայութիւնը բանած է դէպքերուն և տիպարներուն նշանակաւոր գծագրութիւնը:

*
* *

Մեծ սխալներէն մէկը, որոնց դէմ յարձակած է Իբսէն, սիրոյ ըմբռնումին խաթարումն է: Պառնութեամբ հաստատած է, որ մարդիկ խեղաթիւրած ու կապկպած են ամենէն բնական, ամենէն բնազդական, ամենէն հզօր, ամենէն ազատ զգացումը: Սէրը կառուկերգութիւն մ'ը և առուտուր մը դարձած է: Ամուսնութեան ձևին մէջ, անիկա կորսնցուցած է իր գեղեցկութիւնը, իր ուժը, իր մաքրութիւնը, և փոխադարձ կեղծաւորութեան կամ թմրած ստրկական համակերպութեան զաւեշտ մը եղած է: Սէրը, մեծ ցնցումը, էութիւնը իր լրութեան հասցնող կրակը, մարդուն սիրտը Տիեզերքին սրտին հետ միահաղոյն բաբախեցնող սարսուռը, Սէրը՝ շղթայ մը և սոռութիւն մը դարձած է: Իբսէն ստեղծած է մարդիկ ու կիներ, որոնք սխալը կը տեսնեն, նողկանքով ու ցասումով կը կործանեն զայն, ու կը հեռանան թուլցած ամբոխէն, կը թողուն կապանքը, կ'երթան՝ մինակ՝ իրենց կեանքը գտնելու. «յսպէս՝ Բէրէքի տոնին նո՛րան, որ ամուսինը, զաւակներն ու տունը կը ձգէ կ'երթայ, երբ կը նշմարէ այն աղտոտ խաբեւայութիւնը, որ կը պահւըտի ամուսնութեան պատկառելի քողին տակ»:

Կիներ շատ հզօր է Իբսէնի գործին մէջ: Հիւսիսի կիներն է ան, երկաթէ կամքով, իր անհատականութեանը զիտակից, իր ուժին վստահ: Այդ կիներ իրեն նախամայր ունի կարմիր մագերով գերմանուհիները զոր Տակիտոս նկարագրած է՝ իրենց արիւնթաթաւ ամուսիններուն հետ սալը հեծած, անոնց զինակից ու բաղբակից:

սարկեններուն ու կրակներուն մէջէն անցնելով անվախ. այդ կիներ իր գլխուն վերեւ կը զգայ միշտ անմահ տեսիլքը Վալքիւրիներուն, սպառազէն ասուածուհիներուն, որոնք ողբերգական երկինքներուն կարմրութեանցը մէջ՝ իրենց օդային կառքերուն վրայ՝ կը մարտնչէին: Կիներ մեծ տեղ ունի Իբսէնի զործին մէջ, թերեւս մեծագոյնը: Ոչ միայն ինքնին անհատ մըն է ան, մարդուն պէս և անոր չափ կարող իր կեանքը շինելու, այլ միանգամայն իր մազնիսական հրապոյրովը՝ ներշնչող մը մարդուն համար: Եւ Իբսէն կը ցուցնէ զայն կործանարար ու դիւային, երբ բնութեանն դրած մէկ թուանաւոր տարրովը ասպիանւած է, կամ մանաւանդ ընկերութեան տւած մէկ վտանգաւոր պատաստովը, անյայտ հետտա Գարլէրը, որ կնոջ փոքնող ներգործութեան մարմնաւորումն է, աւելին իսկ՝ յաւիտենական իզութեան, թշնամի ու չար իզութեան խորհրդանշանը: Բայց աւելի յաճախ Իբսէն կը ներկայացնէ կիներ, գեղեցիկ ու գեղեցկացնող, մեծ ու կազդուրող, երբ ինքն իսկ կինն է, ծաղկի պէս բուսած, անկախ, պարզ, անկեղծ, իր բնազդին հետեւող, հողին կրակով լեցւած, աչւններէն իզէալ ցայտելով, սիրտը անձնւորութեամբ մխտցող. անյայտ՝ Հիլտէն որ վախկոտներու և թերահաւատներու ջոկատին մէջ, միակը կ'ըլլայ Սոլնէսին երկնամարտ աշտարակին հաւտալու, և որ կը մղէ զայն իրագործել իր երազը, և կ'երթայ՝ անոր հետ մինչև ոռքը աշտարակին ուր կը բարձրանայ ասեղծագործը: Երբեմն կիներ, ծայրայեղ զգացումներու արարած, մարդը իր ետեւէն մինչև անդունդը կը քաշէ. Իբսէն ասիկա կը ցուցնէ խանդավառ շարժումով մը. մարդ պէտք է իր իգէալին մինչև ծայրը երթայ, կորուստին, վտանգին վրայէն, մինչև մահը՝ եթէ պէտք է. և օրհնեալ ըլլայ կիներ՝ եթէ ան է որ կուտայ մարդուն՝ քաջութիւնը որ զինքը մինչև ասուածութիւնը կը բարձրացնէ. անյայտ՝ նոյն Հիլտէն, որուն հաւատքն ու հիացումը կը մղեն Սոլնէսը, ոչ միայն իր աշտարակը կանգնելու, այլ այդ կորովի ահագին սպառնալէն յետոյ՝ անոր սիրա կուտան մին մենակ մինչև կատարը ելլելու աշտարակին, ուրկից, դռօշը ցցած ատենը, կը դլտորի ու կը ջախջախուի:

Ուրիշ սխալներ որոնց դէմ կուած է Իբսէն, ընկերական սխալն ու կրօնական սխալն են: Ընկերութիւնը իր ճակատագիրը

ձգած է առանձնաշնորհալիներու սակաւաթիւ վաշտի մը, որոնք իրենց կրքերուն ու շահերուն գործիք ու զոհ կ'ընեն անհուն ամբօխը: Դոքտոր Շոթքմանը կը նշմարէ օր մը որ իր քաղաքին ջուրերը թունաւորւած են. կուզէ հրապարակաւ յայտնել իր զիւարէ քաղաքին բնակիչները տարափոխիկ հիւանդութիւններէն ազատելու համար. բայց իր եղբայրը, որ քաղաքապետն է, շահ ունի ոչ իրերու վիճակը նայել մնայ. ան է զօրաւորը, անոր համամիտ են քաղաքին մեծերն ու բոլոր զօրաւորները. ան կը բռնադատէ իր եղբայրը որ ձայն չհանէ: Շոթքման իր շահն ու զիրքը կը փառնէ և կը խօսի, ժողովրդին հանդիսաւորապէս կը յայտնէ իր սպասնացող փառնքը. ժողովուրդը, ջոջերուն վրայ իր կոյր վստահութեանը մէջ յամառելով, յիմար մը կը նկատէ իր շահերը պաշտպանողը, իր ճշմարիտ բարեկամը, և զայն քարկոծելով կը վռնտէ: Նոթքմանեյանն կ'առնէր, հաւատարիմ իր համոզմանը, մենակ ապրիլ, աղքատ ապրիլ, և հեռու կենալ ամբօխին ապշութենէն ու պետերուն խաբէութենէն. կը հասկնայ հաւաքական ուժերուն կուրութիւնը, մեծամասնութեանց անիրաւութիւնն ու տխմարութիւնը, և կը հասնի այն տխուր ու հպարտ եղբակացութեան թէ՛ «Նչն մարդն է զօրաւոր՝ որ մինակ է»:

Կրօնական սխալը այն ոճրագործ ըմբռնումն է որով բնկերութեան հզօրները իրենց տիրապետութեանը գործիք կը զարձնեն մարդուն ու տիեզերքին հաղորդակցութեան կայն եղող վսեմ զգացումը: Բրանդ երէցը դայթակղած է տեսնելով մարդոց կուրութիւնը ճշմարիտ կրօնքը հասկնալու, զգաւ է այն ստութեան և տղեղութեան զաւեշտէն զոր կրօնքի ներկայացուցիչները կը խաղան ժողովուրդներուն առջև. կ'ըմբռնէ, որ անոնք պատն են՝ Աստուծոյ մարդերէն ծածկող, և ձայն կը բառնայ մարդերուն, որ պատր կործանեն. կը թողու մըլած քաղաքը՝ իր աղտերով և իր թոյնովը, և իր հաւատքին բոցէն տառջնորդւած, կը քալէ դէպի լեռները, դէպի ամաչութիւնը, դէպի մաքուր, անկոխ բարձունքները, Աստուծոյ գոնելու. իր հետ կը քաշէ իր կինը, իր զուակը, և քանի մը հետեւողներ. հետեւողները շուտով կը յոգնեն ու կը դառնան. զուակը կը մեռնի ցուրտէն. կինը կ'իջնայ խոնջանքէն սպառած. ինքը, մինակ, կ'երթայ, անվիանդ, ճերմակ ճամբուն մէջէն, դէպի բար-

ձունքը, դէպի երկինքը, դէպի Ասուած: Ասոնք մարդկային կորովին ամենէն զօրեղ կերպարանումներն են: Մարդկութեան կատարներ են: Անոնց զլուխը ամպերուն մէջ կը կորսուի:

Այս խելացեղ խանդավառութիւնը մշտաբարբոք մնացած չէ. Իբսէնի մէջ, երբեմն լքում մը զինքը կը պատէ: Արեւի՛ն է որ մարդկային ազգը ինքզինքը փրկէ: Իր գործին բոլոր էջերուն մէջ Իբսէն կրցած չէ Բրանդին զիւցազնական հաւատքը պահել: Տժգոյն վհատութիւն մը մերթ կը գրկէ իր հոգին, և իր զարթուած ազազակը անկարողութեան եղերերգ մը կը դառնայ:

Այսպէս՝ Ռոսմէշըմովմը: Ռոսմեր երէցը ամենէն ազնիւ, ամենէն զեղեցիկ հոգին ունի. չարութիւնը, ցածութիւնը, ագեղութիւնը չեն կրնար անոր մօտենալ. անոր սիրտը ազնական ու փափուկ բուրաստան մըն է: Բայց կորովը կը պակսի իրեն. գործելու կարողութիւնը չունի. իր շուրջը, ընկերական ոճիրները աներկիւղ կը տարածւին. Ռոսմեր ինքզինքը անջատ կը զղայ շրջակայ վատութենէն, բայց չունի կրակը որ չարիքին դէմ մարտ մղէ, դիմակները վար առնէ և իր հաւատքը փոխանցէ ամենուն: Հանգարաբարութիւն մըն է. ինք իր մէջ ցոլացած զեղեցկութիւն մըն է. իր տանը մէջ կիրքը երբէք չէ մտած. հոն ծիծաղը անգամ անծանօթ է. Ռոսմեր ժպտիլ զիսէ միայն: Նւ ահա, ծայրագոյն Հիւսիսի աղջիկ մը, Ռեբեքա, Ռոսմերի տունը կուգայ կը մտնէ: Ելեք. տրական կամքով, խորհրդաւոր հրապոյրով էակ մըն է: Կը տիրէ Ռոսմերին, անոր հոգին իրեն կը քաշէ, անոր իր բոցը կը ներշնչէ, զանի կը մղէ ելլել իր վեհ անշարժութենէն, իր ազնւութիւնը դուրս ցոլացնել, իր էութիւնը թրթռուն, տարածուն, բեղմնաւոր դարձընել: Ռոսմեր կը թռթռի, բայց իր քաղցր ապիկարութիւնը անբուժելի է: Խաղաղութիւնը կը խռովի իր հոգիին և իր տանը մէջ՝ նորեկ շունչէն ալեկոծւած: Անուշ տկար արարած մը, Ռոսմերին կինը, Ֆէլիսիան, կը թռչնի անկից ու կը ջնջուի: Տառապագին ելքով մը, անդիտակցաբար՝ կեանքի մը վրայէն կոխելով, Ռոսմեր կը բարձրանայ դէպի Ռեբեքային վայրագ առնականութիւնը: Նւ երբ իրար հասկնալու կը մօտենան, երկուքն ալ ուժասուրբ են արդէն. Ռեբեքա, այդ ժպտուն թուլութեան մէջ՝ իր ջիղերը կորուսած, ինք ալ անկարող դարձած, լիկած է. Ռոսմեր՝ իր մէջ մտած

տենդէն հիւանդ, իր հոգեկան հաւասարակշռութիւնը, իր էութեան ներդաշնակութիւնը կորսնցուցած է. ցաւի, խռովքի վայրկեանի մը մէջ, երկուքը իրար կը թափանցեն. այն ատեն, զգալով որ այդ գերագոյն ճիգի վայրկեանը չի կրնար տևել և թէ անկումը պիտի չաջորդէ աւոր, կը խորհին անհետանալ այդ գեղեցկութեան սարսուռին մէջ, և իրար քաշելով, ձեռք ձեռքի, ժպտուն, դէպի մահը կ'երթան:

Ուրիշ անգամ, լքումը, Իբսէնի մէջ, կը թարգմանուի լեզի հեղնութեամբ մը, Վայրի ըսողը Իբսէնի ամենէն տխուր էջն է, այն ուր հեղինակը նոյն խի իր գործը կը հեղնէ: Այդ խաղին մէջ, որ եղերական երգիծանք մըն է, Իբսէն կը ներկայացնէ սովորական կեանքը. իր գոհակութեամբ, իր ծիծաղելի տխմարութեամբ, իր անգիտակից ու լիրբ խաբէութեամբ: Բոլոր տիպարները տկարներ կամ թշառականներ են: Հիւսմար, ողորմելի ապիկարը, որ ինքզինքը արւեստագէտ մը, ստեղծող մը կը կարծէ, և որ ապուշ խաբած մը, ինքզինքը փրկելու անկարող մըն է. իր կինը, Գինա, ստորուկ մըն է զգւելի, զիսւածին և ուժին անձնատուր. Տերունի էքտալը ինկած մըն է, խելադար, անտառէն ահաբեկ, մարդատեսց. Վէռլէ անզղ մըն է, յափշտակող, տկաշները իր ակորժակներուն զոհաբերող, շնական. և այս ամենուն մէջ տխրած, ողորմ. էակ մը կայ, պզտիկ Հէդւիգը, ապօրէն զաւակը Վէռլէին և Գինային դադունի տարվանքին, և որ իր հօրը ակոտովը խմորւած, դատապարտւած է կուրնալու: Այս ողբալի մարդկութեան առջև, երկու հանդիսատեսներ են Գռէգուար և Բէլլինգ բժիշկը. Գռէգուար մաքառողն է, կը ջանայ նորոգել մարդկութիւնը, կը փորձէ կապանքները կոտորել, փրկութեան հաւատք ունի. Բէլլինգ սկեպտիկ մըն է, փրկումին անկարելիութեանը համոզւած, և կը խորհի թէ կեանքը տանելի ընելու համար պէտք է մարդերը սնուցանել պատրանքով, չկենսական ստութեամբ, ինչպէս ինքը կ'ըսէ: Երկու անձերը, որոնք իրարու հետ հակադրութիւն կը կազմեն, Իբսէնի հոգիին երկու երեսներն են, երկուքը մէկանց նոյն տեսարանին վրայ դէմ առ դէմ եկած. պայքարը տաժանելի է. և վայրի ըսողը այն միակ խաղն է ուր Իբսէն, վհատ, թողած է որ սկեպտիկը, պատրանքներ քաշողը իրաւունք ունենայ:

Անգամ մըն ալ, բացարձակ յուսահատութիւնն է որ Իբսէնի

մէջ կը բարձրանայ ու բոլոր լոյսերը կը մարէ։ Մարդկային կեանքին վերեւ, հակառակ մարդուն ամենէն դիւցազնական ճիգերուն, կը կանգնի անդիմադրելի և անողոր թշնամին, ճակատագիրը. մեծ կոյր զօրութիւնը, որ մութին մէջ միշտ ներկայ է, մեր վերեւ, մեր շուրջ, մեր մէջ միշտ դարանակալ, Զօրութիւնը, որ կը հրամայէ մեր կեանքին ամեն մէկ նետրդին և որ յաւիտենական օրէնքներուն համեմատ նախագծած է մեր կեանքն ու վախճանը. երբեմն անխնայ կարծ երևան կ'ելլէ մութէն, և անոր սուերին անցքը կը բաւէ որ մեր էութիւնը քայքայուի։ Տիկին Ալլինգ, որուն ամուսինը մոլութիւններով փտտած և իր ախտերէն գերեզման իջած մարդ մըն էր, ամեն ջանք ըրած է, որ իր մէկ հատիկ զաւակը՝ Օսւալդը մաքուր մնայ հօրը պղծութենէն. զանի կանուխէն հեռացուցած է հօրենական տունէն, կրթել տւած է հեռուն, մենութեան մէջ, ազնիւ սկզբունքներու մէջ, ճգնած է զայն առողջ, զօրաւոր, գեղեցիկ ընել. բայց հազիւ թէ Օսւալդը կ'աճի, ու կեանքի մէջ կը մոնէ, իրեն տրւած դաստիարակութեան կեղևը խփոյն կ'իջնայ, և Կրեան կ'ելլէ իր խմորը, զօր հօրմէն ժառանգած է արիւնին հետ, իր բարոյական ու նիւթական խմորը, փտտած, մահւան պատրաստ։ Օսւալդ, հակառակ իր մօրը, որ անոր ճամբուն վրայ իր դուրգուրանքն ու իր արցունքները դրած է, աչքը հօրը սուերին շառած, արիւնը հօրը թոյնին կապած, կը վազէ դէսի մոլութիւնը, և, արդէն ծնելէ առաջ հիւանդ, կ'իջնայ շանթահարւած ահաւոր ախտէն։ Ուրազաններն են, ուրազաններն են, կը պոռայ խեղճ կիներ։ Հօրը ուրականն է, որ տղուն մէջ կ'երևայ, վերահինդանացած։ Ուրազանները. Իբսէնի բառը հոմանիշ մըն է հին ծակատագիր բառին։ Աղնիւ կնոջ մը ամբողջ անձաւորութիւնը չբաւեց ազատելու իր զաւակը, որ դատապարտւած էր անդարձ կորուստին։ Ուրազանները, — անէծքի ճիւղ մը բնութեան դէմ, — Իբսէնի այն գործն է որ զինքը ամենէն աւելի կը կապէ հին հելլեն ողբերգակներուն և ամբողջ Արևելքին։ Ինչ որ Արևելքին մէջ էր մութ Աստուածութիւնը զոր մեր նախնիքը Հրամանք կոչեցին և որ Աստուածաշունչին մէջ Եհովային զայրոյթը եղաւ հայրերուն մեղքը սերունդէ սերունդ քաւել տուող, ինչ որ Եսայիի Ովրեստիականին մէջ Ադրիդեան ընտանիքին վրայ կը կախւի իբրեւ Աստ-

ւածններուն անէծքը և նախնական յանցանքի մը համար ամբողջ գերդաստանը կը պատուհասէ, ինչ որ Սոփոկլի մէջ կ'երևայ իբրև ճակատագիրը և Եդիպոսը կը դատապարտէ ամենէն ահաւոր ոճիրներուն և ամենէն խորին խեղճութեան, նոյն կոյր ու անիրաւ ու անխուսափելի զօրութիւնն է, որ կ'երևայ Իբսէնի գործին մէջ՝ ժառանգականութեան նոր ձևովը, և կը ճգմէ զժբազդ փափուկէակի մը կեանքն ու մօր մը քաջութեամբ ու ցաւով շինւած երազը: Եւ եթէ Ուրաղանները այն խաղն է ուր մեծագոյն գերը միակ զերը ճակատագիրը կը խաղայ, Իբսէնի բոլոր գործերը, որ չափ ալ տարբեր ըլլան ներշնչումով ու նիւթով, միշտ պաշարւած են ճակատագրին սուերովը: Իբսէնեան աշխարհին մթնոլորտը կը կազմէ ան: Կը զգանք որ բոլոր այդ ախպարները, որոնք կը գալարւին, նպատակի մը կը ձգտին, զէպի երազ մը կը տառապին, ամէնքն ալ կը շարժին գերմարդկային հոսանքուտի մը մէջ որ ճակատագրին շուքն է, անոր մէջ կը լողան, կը տապալկոյն, անոր խաղալիքն են, անոր մէջ իրենց ճիգը կը թոթւեն, մինչև որ խեղդւին:

*
* *

Ժան-Գարրիէլ Բոռքման Իբսէնի վերջին գործը, իր ամենէն ամբողջական գործն ալ է թերեւս, այն ուր բովանդակ Իբսէնը կը խտանայ:

Բոռքման անհուն կամքի և անծայրածիր երազներու մարդն է. իր նպատակն է հարստութիւններ զիգել, հանել հաւաքել երկրին ընդերքնուն բոլոր ոսկին, զօրաւոր ըլլալ, ամենէն զօրաւորը ըլլալ, մարդերուն կատարը կանգնիլ, և կառավարել. զօրաւոր ըլլալ՝ մարդերը վարելու համար, և վարել զանոնք՝ մարդկային մակարդակը բարձրացնելու համար: Փաղափարական մըն է: Իր նպատակին հասնելու համար, ամեն հնարամտութիւն, ամեն ջանդգնութիւն ի գործ կը դնէ. ահագին չաջողութեան մը ծայրն է արդէն, բայց չաջողութիւնները զինքը չեն յագեցըներ. ճամբան միշտ բաց է, երկայն, անվերջ. դեռ զանձեր կան անկոխ, երկրիս վրայ պոլլոտող ոսկիէն զատ հողին ծոցը, ծովին տակը թաղւած ոսկին կայ. պէտք է ամբողջը ունենալ. յանդգնութիւնները կը բազմապատկէ, բիւրաթեք ցանցով մը իր միջոցները կը սփռէ երկրին վրայ՝ ամէն ճամբու

մէջ, որպէս զի յաջողութիւնները ամէն կողմէ զան իրեն. կը համարձակի նոյն իսկ իր ծրագիրներուն իրականացմանը գործածել գումարները այն հանրային գրամատան որուն տնօրէն կարգաւ է. իր խղճին առջև հանդարտ է. ապահով է յաջողութեանը. և լինչ յիշելով՝ եթէ նոյն իսկ չյաջողի. իր իդէալը այնչափ մեծ է որ ամէն բան պէտք է զոհել անոր, նոյն իսկ սովորական բարոյականին սկզբունքները: Խոշորագոյնը չուշանար. աղջիկ մը, Ելլա, զինքը կը սիրէ. Բոռքման անոր մէջ կամքի, քաջութեան և ազնուութեան հոգի մը կը գտնէ և ինք ալ կը հակի անոր. քաղաքին մէկ ուրիշ մեծ գրամատէրը, Հինք, որ Ելլան կը սիրէ, զայն կ'ուզէ կնութեան առնել:

Բոռքման նոյն իսկ իր սէրը կը զոհէ, որպէս զի մրցակցին ռսը արգելք մը չըլլայ իր նպատակին իրագործմանը. իրեն կնութեան կ'առնէ Ելլային քոյրը, Գունհիլդը. և անկից զաւակ մը կ'ունենայ: Ելլա, դառնացած, արհամարհանքով կը մերժէ Հինքին առաջարկը: Հինք, կատաղութենէն, կը լրտեսէ Բոռքմանը, կը հասկնայ անոր զաղտնիքը, ու երևան կը հանէ գրամատան գումարներուն ձեռք դպցուցած ըլլալը: Բոռքման կը կործանի. իր ամբողջ գոյքերը կը ծախին և ինքը բանտ կը դրւի: Այս քայքայման մէջ, իր հոգին ամուր կը մնայ, բանտին մէջ՝ իր երազովը կը լուսաւորուի: Ինքզինքը կարող կը զգայ վերսկսելու, արձակւած օրն իսկ, հակառակ ամբողջ ընկերութեան արգելքին, մենաւորիկ: Բանտէն ելլելուն պէս, տունը կը քաշուի, ու կը խորհի վերսկսելու միջոցներ գտնել: Բայց իր տունն իսկ իրեն թշնամի դարձած կը տեսնէ: Գունհիլտ կ'ատէ զինքը: Անի նեղ մտքով, պզտիկ հողիով, ընկերութեան ընթացիկ կաղապարին մէջ ձուլւած էակ մըն է: Անոր համար իր ամուսինը ալ վերջնապէս մեռած է, քանի որ հասարակաց կարծիքին առջև անպատեցաւ: Եւ ջանացած է Բոռքմանին բանտարկութեանը միջոցին, իրենց տղան, Էռհարդը կրթել ընկերական բարոյականին կուսօրէնքներուն համեմատ, զանի կազմել իր ուղածին պէս, կանոնաւոր, օրինապահ, խելօք, որպէս զի անի իր հօրմէն տարբեր մարդ մը ըլլայ, և իր կեանքովը հօրը յանցանքը քաւէ: Ելլա, որ աւելի ներողամիտ է ինկածին, աւելի կը հասկնայ անոր խորոտ ու արտասովոր հոգին, կը սիրէ Էռհարդը աւելի բարձր գորովով մը:

զանի կը նկատէ իբր մտեղէն զաւակը Գունհիլիին, և կը համարե՞ զայն բուն իսկ ծնունդը իր և Բողքմանին հոգեկան միութեան. կ'ուզէ, ինք ալ, Եռհարդը կազմել՝ իր ազատ հոգիին համեմատ, իր արի կուսութեան ամբողջ կորովը անոր փոխանցել: Բողքման, ամենէն լքւած, իր կնոջմէն արհամարհւած, իր զաւակէն չհասկցւած, Ելլայէն անջատուած, կը քաշուի տանը վերի սենեակը, կամ մանաւանդ՝ կ'առանձնանայ ինք իր մէջը, և կ'ապրի մենաւոր՝ իր երազին հետ: Աւթը տարի, հոն, իր առանձնոցին մէջ, կը գալարուի Վարէն, կինն ու տղան կը լսեն միշտ անոր տենդոտ, յարտեւ, յաւիտենական ոտնաձայնը. վանդակւած գազանի պէս, կը դեգերի, ինք իրեն հետ կը մաքառի, ու կը փնտռէ, կը սպասէ, կը յուսայ. կամ թէ, քանի որ ամէնքը զինքը մեռած կը համարեն, կարծես իրօք ուրւականն է Բողքմանին որ իր խուցին մէջ կը ջածի, ծանր ոտնաձայնով մը որ ամբողջ տանը վրայ կը ճնշէ: Երբեմն պզտիկ Ֆրիդան, դաշնակահար աղջիկ մը, առանձնոցը կ'ելլէ, մահւան եղանակներ զարնելու՝ մինակ մնացած մարդուն: Երբեմն ալ, Ֆրիդային հայրը, Ֆոլլալը, Բողքմանին նախկին ծերուկ գրագիրը, կուգայ հոն, ամբողջ երկրին մէջ միակ մարդը որ դեռ հաւատարիմ մնացած է Բողքմանին: Խեղճ երագող մը՝ ան ալ, ինքզինքը բանաստեղծ կը կարծէ. ատենով թատրերգութիւն մը գրած է, զոր մէկը չէ ուղեր դնահատել, զոր ամենքը արհամարհեր են. չհասկցւած ըլլալու ցաւէն կ'քած, խեղճ ծերուկը յոյսը Բողքմանին վրայ դրած է, կարծելով որ ան զինքը պիտի գնահատէ: Թր մը իր ցաւը կը բանայ Բողքմանին. ինկած մարդը կ'ըմբռնէ որ անոր բարեկամութեան տեղումը անձնական գոհունակութեան մը յոյսին վրայ հաստատուած է, կը զզւի անկից տեսնելով որ ան իր անհատին արժէքին գնահատումը ուրիշէն կը սպասէ, և կը վռնտէ զայն. «Արեւմտ դուն ինծի հաւատալ կը կեղծես որպէս զի ես ալ քեզի հաւատամ. դնա՛. քանի որ դուն քեզի չես հաւատար, չես կրնար զիս հասկնալ. դուն ըսնաստեղծ չես:»

Բողքման հիմա միակ յոյս մը ունի, իր զաւակը: Եռհարդ եկած հասած է. ան իրն է, իր շարունակութիւնն է. իրաւունք ունի անոր վրայ յուսալու: Կըսենք զայն, կը խօսի անոր, կ'առաջարկէ անոր իրեն հետ լծել իր երազին: Ախ, ան ալ չի հաս-

կընար զինքը: Ան ուրիշ մարդ մըն է. ան ուրիշ երազներ, ուրիշ հոգի ունի: Մինակ, մինակ է ինքը:

Եւ իրօք, Էռհարդ, իր վրայ ծանրացող երբեակ ազդեցութեանէն ճողոպրած, գտած է իր ճամբան, իր կեանքը: Երիտասարդ կը զգայ զինքը, և կ'ուզէ ապրիլ: Դէմը կին մը ելած է, կեանքը արդէն ճանչցած, իրմէ տարեց, անկախ ու աննենգ հոգիով կին մը, տիկին Վիլյամը. անի զինքը կը սիրէ, և անկեղծ, համարձակ, բացարձակ կերպով կ'ըսէ իրեն թէ կրնան երջանիկ ըլլալ իրար վայելելով, մինչև աչն օրը ուր ակ բան մը չունենան իրարու ըսելիք: Էռհարդ անոր կը նետուի իր թարմ հոգիին բոլոր խանդովը. և երբ իր մայրը զինքը կը հրաւիրէ աշխատիլ, պարկեշտ ու պատւաւոր մարդ մը ըլլալ, «չեմ ուզեր աշխատել, կը պոռայ Էռհարդ, չեմ ուզեր ուրիշներուն համար գոյութիւն ունենալ. ես երիտասարդ եմ, կ'ուզեմ ապրիլ»: Նոյնը կ'ըսէ Էլլա մօրաքրոջը, նոյնը՝ իր հօրը, կը ներկայացնէ անոնց իր սիրականը՝ որուն հետ արդէն որոշած էին փախչիլ, իրենց հետ տանելով պղտիկ Ֆրիդան ալ, որ զգած է վարձքով ուրիշներուն դաշնակ զարնելէն, և կ'ուզէ ազատ կեանքին պատրաստիլ՝ երկու սիրահարներուն խնամքովը: Ու տունէն դուրս կը նետուին. կ'երթան դէպի Հարաւ:

Գունհիլտ, յուսահատութեանը մէջ կը կործանի կիչնայ, Էլլա, հակառակ խորունկ ցաւին զոր կը զգայ, կը հասկնայ Էռհարդը, և երջանիկ ըլլալ կը մաղձէ անոր: Բողբման, ցնցւած, իր խցիկը կ'նլլէ. զաւկին օրինակը իր սխալը իրեն ցուցուցած է. Էռհարդ իրմէ ազիկ ըմբռնել է կեանքը, ան ինքն իրենը որոշել և իրագործել է իր երազը. Բողբման իր զաւկին պիտի հետնի:

Բայց սահնակը որով երկու սիրահարներն ու Ֆրիդան կը թըռչին ձիւներուն վրայէն, անցքին մէջ կը զարնւի և կը վիրաւորէ Ֆոլտալը՝ որ Բողբմանին կուգար: Ազատ երջանկութիւնը կտրած կաշկանդւած մարդուն վրայէն անցած է: Բանաստեղծը, կաղալով, Բողբմանին սենեակը կը մտնէ: Հոն կ'իմանայ Ֆրիդային մեկնումը, և թէ ան էր որ զինքը կոխեց անցաւ: Տեսարանը դժխեմ է: Երկուքն ալ մինակ են հիմա: Ֆոլտալ ակ իր աղջիկն ալ չունի որ իրեն հաւատայ, որ գոնէ զինքը սիրէ: Բողբման ակ իր զաւակն ալ չունի որուն վրայ վերջին յոյս մը դրած էր: Սևեռեալ դադափարը

կը միտի, կը խորնայ, կը փոսանայ: Բանաստեղծը, տկար, կը ճգմէի իր ցաւին տակ, ու կուլայ: Բողբման, զինքը հալածող մտածումն աճող բռնութեանը ներքեւ, կը բորբոքի, կը ցատքէ, կը ցցի: Յիմարութեան շունչ մը կ'անցնի խցիկէն: Բողբման պիտի քալէ, իր զաւկին պէս, լեռներուն վրայէն, ձիւներուն մէջէն պիտի քալէ, միմիայն իր ուժին կըթնած, մինչեւ որ իր զանձը գտնէ: Կը հրէ Ֆօլլիալը, ու կը նետի տունէն դուրս: Զիւնով ու լռութեամբ փաթթած անտառներուն մէջէն, կը չառաջանայ: Յօւրտը զինքը կը թափանցէ. բնութիւնը իր ամբողջ ծանրութեամբը վրան կը բռննայ: Բողբման, համոզւած որ միս մինակ պիտի հասնի իր նպատակին, կը քալէ: Իր էութիւնը, այս ծայրայեղ ձգտումին մէջ վերջին անգամ կանգնած, ասնն մը գեւ. կը քաշկռտի, մինչեւ որ ուժասպառ, ընկճւած, ձուներուն մէջը կ'իջնայ կը մեռնի: Գունհիլդ և Էլլա որ զինքը կը փնտռեն, անոր զիսկը կը գտնեն: Հողիով իրարու օտար երկու քոյրերը, մահւան վերեւ իրարու ձեռք կուտան:

Ասիկա մեծ ու ախուր է՝ հինաւուրց ազեպի մը պէս: Խաղը իր առաջին խաւը ունի հո՞ծ իրականութեան: Հոն կը կանգնի մեր ժամանակին ամենէն տիրական տիպարը, մարդը որ կ'ուզէ առկի շարքան: Ըլլալ, ու ոսկիին ամենագորութեանը վրայ բարձրացած, մարդերը վարել: Բողբման հերոսն է Ոսկի Հորթին դարուն. Մամոնային պատերազմին է: Բայց որովհետեւ իր երազը շատ մեծ էր, և որովհետեւ դիպածը զինքը ջախջախեց, իր ճիգին տակ տապալեցաւ, քինչպէս Նապոլէօն մը, — իր բացատրութեանը համեմատ, — որուն սրունգը, առաջին պատերազմին մէջ իսկ, գնդակէ մը հաշմուէր: Բողբմանին շուրջը կ'ուրազծւի ամբողջ արդի ընկերութիւնը՝ իր հսկան գծերով, իր կապկպող պայմանագրութիւններով, իր ընտանիքի բռնաւորական կազմակերպութեամբ, և իր տկար, կեղծաւոր, դժգոհ և նոյն իսկ արդէն ըմբոստ տիպարներով: Այս իրական խաւին ետեւ, կը բացւի մութը մարդկային առեղծւածին: Գործողութիւնը կ'ընդլայնւի, անձերը կը մեծնան, հարցը կը խորնայ, ու կը տեսնենք ահաւոր քերթւածը մարդուն, որ, մեծ ըլլալու բացարձակ երազին մէջ, կը կաշկանդւի ընկերութեան միջակութեանէն, կը շնչահեղձի միջավայրին նեխումէն, և կը ճգմէի Կեանքին ճակատագրական ճնշումին տակ:

ՎՐԱՅ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸ

(Մի համառոտ տեսութիւն)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՅԻ

Ամեն մի տասնեակի ընթացքում վրաց գրականութիւնը ունեցել է նոր գրողներ նոր ուղղութեամբ ¹⁾։ Այդ գրողներից կան այնպիսիները, որոնք իրանց թարմութիւնը ոչ թէ մի տասնեակ տարի են պահպանել, այլ և շարունակում են մինչև այժմ, և ղեկավար պիտի մնան վրացոց համար որպէս ամենասիրելի գրողներ. այսպէս, օրինակ, վիպասան-հրապարակախօս Իլիա Ճաւժաւաձէն (այժմեան Վերին օրաթերթի խմբագիրը և յայտնի հասարակական գործիչ), որի գլուխ գործոցը՝ «Կացիա-Աղափանի» թարգմանեց Մուրճում, ²⁾ և բանաստեղծ Ակակի ծերեթեւիկ, սրանք թէև 60 թւականներից են սկսել իրենց գործունէութիւնը, բայց այժմ էլ առաջնակարգ տեղ են բռնում։

Նշանաւոր է Ակակի Ծերեթեւիկի «Փոքրիկ Կախի» պոէման, ուր զուրս են բերւած կախեցու քաջագործութիւնները հայրենասիրութիւնից զրդւած։

¹⁾ Համեմատել Մոսկէ, 1896, № 1.

²⁾ Այդ և այլ վէպերի թարգմանութիւններով, այլ և պատմական տեսութիւններով Մուրճում հիմնաւոր հիմք է դրել հայերիս ծանօթութեանը վրաց գրականութեան և անցեալի հետ։ Մինչև այդ՝ վրաց գրականութիւնը կատարելապէս թէ անծանօթ և թէ արհամարած էր հայերի մէջ։ Մուրճի զրդումը կետագալում երևաց նաև ուրիշ տեղերում (Հայոց Հրատարակչ. ընկերութիւնը, Տարազ, Մշակ)։

Ծան. խմբ.

70-ական թվականներից ասպարէզ մտան Գէօրգիյ Ժերեթե-
լի՛ն (այժմեան «Կալի» շաբաթաթերթի խմբագիրը և «Ջէջիլի»
մանկական ամսագրի գլխավոր աշխատակիցը), հրապարակախօս Նիկ.
Նիկողլաճէ՛ն (շատ յայտնի նաև ռուս հրապարակախօսութեան մէջ),
վիպասան Փուրցելաճէ՛ն և Սիր. Մեսխի: Վերջինս նշանաւոր է
յատկապէս նրանով, որ հրատարակելով «Դրոէբա» (այժմ գոյութիւն
չունեցող շաբաթաթերթը ու ապա ամենօրեայ լրագիրը), ասպա-
րէզ դուրս բերաւ 70-ական թվականների յիշեալ գրողներին: Գ.
Ծերեթելի՛ի նշանաւոր երկերից յիշենք «Մեր կեանքի ծաղիկը»
վէպը, ուր նկարագրում է օտար դպրոցի աղղեցութիւնը վրացի
մանկան վրայ: Յիշենք նաև նորա «Արանկա» և «Մարդ-առիւծ»
պոէմաները, որոնցից վերջինը լոյս տեսաւ հայերէն թարգմանու-
թեամբ ևս ¹⁾):

Պակաս նշանաւոր չէին և ութսունական թվականները, ուր
փայլում է հանգուցեալ Ալ. Ղազըէզը ²⁾: Ղազըէզի գլուխ գոր-
ծոցն է «Հայրասպան» վէպը. նշանաւոր է նաև «Ելզուջա»
վէպը ³⁾:

Ղազըէզն էր առաջինը, որ նկարագրեց կեանքը իր իսկական
գոյներով և այնքան վառ հայրենասիրական տենդնցիայով, որ բո-
լոր վրացոց սիրտը միանգամից գրաւեց: Ալ. Ղազըէզը, հայրենա-
սիրական-ռէալական ուղղութիւնը առաջ բերելով, ունեցաւ հետե-
ւողներ:

Ղազըէզը այնքան ճշգրիտ կերպով էր նկարագրում կեանքն
ու հայրենասիրութիւնը, որ Նոյն իսկ 50-ական թվականների բա-
նաստեղծ Ռաֆայէլ Էրիստովը (որի յիսնամեայ յոբելեանը կա-

¹⁾ 1892 թվին Գ. Ծերեթելին գրեց «Կալի»-ում բաւականին երկար
մի համակրական լօղաժ «Վրաց և հալոց լարաբերութիւնը» վերտառու-
թեամբ:

²⁾ Ղազըէզի, կամ որ Նոյնն է Մոչխուբարիճէ՛ի ամենանշանաւոր վե-
պերից «Ձորի նահապետ Գոչա» և «Ելիսո» թարգմանեցին Մուրճ՝ ում:
Ապա նորա մի քանի վէպիկները, որպէս «Նինո Յիցկա» տպուեցին «Տա-
րաղ»-ում:

³⁾ Դորա մի թարգմանութիւնը հրատարակեց Հալոց Հրատարակչ-
ընկերութիւնը:

տարեկ 1895 թ.) հրապուրեց այդ ուղղութիւնով և գրեց նշանաւոր «Խեղճութիւնի հայրենիքը» վէպը:

80-ական թւականները նշանաւոր են նաեւ նրանով, որ առաջ բերին վրաց մէջ հայրենասիրութիւն, որին քիչ չէր նպաստում Ղազբէզի գրիչը, միգրիչ, որ գիտէր ժամանակի ոգին մարմնացնել իւր գրածքներում:

Հայրենասիրութիւնը բնական կերպով առաջ է բերում և հայրենիքի պատմութեան ուսումնասիրութիւնը թէ ներկայի և թէ մանաւանդ անցեալի: Ահա այստեղից առաջացաւ երկու տեսակ ուղղութիւն. մինը կասկածանքով էր նայում անցեալի վրայ, և ոչինչ միսթարական չէր գտնում այնտեղ և բոլորովին մերժում էր անցեալի ուսումնասիրութիւնը, քարոզելով, որ ինկատի պիտի ունենալ ներկան և ապագան. երկրորդը, ընդհակառակը, պնդում էր, որ հարկաւոր է ուսումնասիրել անցեալը, որպէս զի իմանանք թէ ինչ էինք և այժմ ինչ ենք, որոնք էին մեր պակասաւոր կողմերը, որոնցից մենք պիտի խոյս տանք և որոնք են լաւերը ու հետեւելու արժանին: Այսպիսով վերջին ուղղութեան պատկանողները աւելի շատ մօտեցան 50-ական թւականներին:

Ութսունական թւականների սկզբներին երեւեցան երիտասարդ գրողներ՝ Վաթա-փշաւելի'ն և Բաշանա'ն, որոնք իրանց հայրենասիրական տենդենցիա ունեցող գրածքներով մասամբ մօտեցան Ալ. Ղազբէզին:

Սոքա դուրս բերին թուշերի, խեղճութիւնների և փշաւների (վրաց լեռնականներ) մինչև այդ ժամանակ անյայտ մնացած կեանքը իրանց իսկական գոյներով, նոցա զղացմունքներով, զաղափարներով, բաց և աւելի ազնւացներով և եւրոպականացներով տւին հասարակութեան:

Վաթա-փշաւելի'ն և Բաշանա'ն առաջ բերին 90-ական թւականների համար նոր հոսանք, նոր ուղղութիւն, նոր կեանք և նոր նշանաւոր գրողներ, ինչպէս են վաղամեռ՝ Էզ. Մինո-շիլի'ն և Արաքիսալիբելի'ն. միայն այն զանազանութեամբ, որ վերջիններս խոյս տւին հայրենասիրական տենդենցիայից և ձեռնամուխ եղան նկարագրելու կեանքը այնպէս, ինչպէս կայ: Նոքա դուրս բերին իրանց գրածքներում իսկութեամբ արդի գիւղական ժողովրդի,

իշխան-ազնականների, հոգևորականների, զիւղական վաճառականների, գրագիրների և այլոց տիպերը, ամենքին իրանց արատաւոր կողմերով, նախապաշարմունքներով, պապենական աւանդական գաղափարներով: Չմոռացան նաև նկարագրելու վրաց մէջ նոր մոլտք դործող եւրոպական լուսաւորութիւնը, կրթութիւնը և այլն:

Նինօշւիլիի գրչին է պատկանում «Գրագիր Մովսէս» վէպը, որտեղ նկարագրում է զիւղական կեղեքիչ գրագրի տիպը: Այս երկը նման է Պ. Պաշեանի «Յեցեր»-ին: Միով բանիւ վերջին երկու գրողները ցոյց տւին վրացոց չարն ու բարին, առաւելապէս զիւղական կեանքը, որովհետև վրաց հասարակութեան մեծ մասը զիւղերումն է ապրում:

Ուրեմն 90-ական թւականներում շնորհիւ Նինօշւիլիի և Արագւիսպիրեիլի տիրեց ռէալական ուղղութիւն, որը շարունակում է մինչ օրս: 90-ական թւականներին երևեցան և կին գրողներ, որոնք հետևեցին իրանց վրացի նշանաւոր հեղինակներին. Ժամանակի ընթացքում դրանցից մի քանիսը նշանակութիւն ստացան, ինչպէս տիկ. Նկատերինէ Գաբաշւիլի, որի «Օրէնա (երկելոյ)» և Քուչէ» վէպիկը նոյնպէս թարգմանեց Մուրմուր:

Մի քանի խօսք էլ վրացերէն գրքերի հրատարակութեան մասին:

Չնայած, որ վրացիք ունին Հրատարակչական ընկերութիւն, բայց նա հրատարակելով սարէնը 5—10 գիրք տւելի նշանաւոր հեղինակների գրածքներից, թանգ գին է գնում, այնպէս որ գրքերը բնականաբար մատչելի չեն լինում ժողովրդին. իսկ վրաց ժողովուրդը, որքան մենք նկատեւնք թէ հայաբնակ և թէ վրացաբնակ տեղերում, կարիք է զգում էթանագին հրատարակութիւնների:

Ահա այդ հանգամանքի շնորհիւն է, որ առաջ են եկել վրաց մէջ ժողովրդական հրատարակիչներ:

Դոցա մէջ առաջին և պատուաւոր տեղը բռնում է Զ. Ծիծի-նաձէն, որը ահա արդէն 22 տարի է, ինչ որ շարունակ այդ գործով է զբաղւած և հրատարակել է մօտ 300 անուն գիրք. և իրօք, որ վրացերէն գիրք վերցնէք ձեռքներդ, մի քիչ էթանագին և

Ժողովրդին մատչելի բովանդակութեամբ, որ զորա հրատարակածը չը լինի:

Որքան գիտենք Ձ. Ճիճինաձէն մի ինքնուս անձնաւորութիւն է. նա հրատարակութեամբ չի բաւականանում. ման է գալիս գաւառներ, աւելի խոր և յետ ընկած գիւղեր, յաճախ Աջարայում (Բաթումի շրջակայքում) և լեռնականների մէջ, հաւաքում է հում նիւթեր, հրատարակում, և միևնոյն ժամանակ շրջող գրավաճառի դեր կատարում: Աշխատակցում է երբեմն և մամուլին. միով բանիւ նա մարմնացեալ եռանդ է ներկայացնում: Ներկայումս երկրորդ տեղն է բռնում հրատարակիչների մէջ պ. մէջ Թաւարթըրլաճէ'ն:

Վերջերքս իւր վրայ ուշադրութիւն է դարձնել տալիս նաև մի յարգւած մանկավարժ Ի. Ռոստոմիշլիլին¹⁾: Վերջինիս հրատարակութիւնների բնաւորութիւնը կարելի է տեսնել ստորև գրած ցուցակից, ուր թւում ենք 1896 թ. հրատարակութիւնները:

I. Ժողովրդական—գիտական.

1. Աշխատանք, հարստութիւն և դրամ. Ադամ Սմիթի. հեղինակի պատկերով և կենսագրութիւնով. 15 կոպ.

2. Բանջարեղէնների ցանկն ու մշակելը. Ա. Գարեջանիչլիլի. 20 կոպ.

3. Ժամանակ է ուշադրութիւն, դարձնել գինու և արաղի գործածութեան դէմ. Ն. Բարնաբաչլիլի. 15 կոպ.

4. Ընտանի կենդանիների մանդարար խոտերի մշակութիւնը. Ի. Ռոստոմիշլիլի, 11 պատկերով, 25 կոպ.

II. Վիպական.

1. Հերոս Ռոլանդ. աւանդութիւն Չափարիձէ'ի. 3 պատկերով, 15 կ.

2. Լինհարդ և Գերտրուդ. Պեստալոցի'ի. հեղինակի պատկերով և կենսագր. 20 կ.

3. Գիւղական գործիչներ. Ձ. Չխաձէ'ի. 15 կ.

III. Մանկական—մանկավարժական.

1. Վրացիւէն ալբէնաբան, 18 պատ., 20 կ.

2. Գնանք ալգին տեսնենք. երգ. 9 պատկ., 12 կ.

3. Լու և մրջիւն. հեքիաթ, 11 պատ., 20 կ.

¹⁾ Սա աչն Ռոստոմիշլիլին է, որ 94. թ. դասախօսութիւն կարդաց Թիֆլիսի ալքոնական թատրոնում դպրոցական ուէֆորմների մասին ուսերէն լեզուով:

4. Ձկնորսի որդին, հեքիաթ. 13 պատ. 20 կ.

(Վերջին 4-ը Ռոստոմիշիլի'ի կազմած են և շատ խոշոր տառերով են տպւած):

Զը կարողանալով դիմանալ այդ ծանր գործին նիւթականի սղութեան պատճառով, Ռոստոմիշիլի'ն կազմեց «նոր ընթերցող» ընկերութիւն, որի նպատակն է հրատարակել միմիայն գիտական հանրամատչելի գրքեր:

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

հետեւողութեամբ ՀԱՆՐԻՍ ՀԵՐԿՆԵՐԻՆ

(Շարունակութիւն ¹)

Դիմենք ուրեմն այն վիճակագրութեանը, որ ցոյց է տալիս, թէ զործարանապէս բարձր զարգացած երկիրներէց մինում—Սաքսոնիայում ²) որքան հոգի որքան տարեկան եկամուտ էին ստանում երկու իրարից հեռու տարիներում—1879-ին, երբ այդ երկրում եկամտային հարկատուութիւն մուծւեց, և 1894 թւականին: Եկամտը հաշւած է այդ երկրի դրամով՝ մարկով. (ուսաց փողով 100 մարկը հաւասար է շուրջ 40 ռուբլուն. 100 մարկ=125 Ֆրանկի):

¹) Տես Մուրճ № 10:

²) Սաքսոնիան մինչ է Գերմանիայի կայսրութեան պատկանող դաշնակցական պետութիւններից և ունէր 3.182.003 բնակիչ 1889 թւականին:

Այս թւերը պիտի կարդալ այսպէս.
 Տող առաջին. 300 մարկից (մօտ 120 ուսուցչուց) պակաս եկա-
 մուտ ունեցող կային 77.060 հոգի, որ կազմում էր բոլոր գնահատա-
 ւած անձերի 7,11%-ը, քանի որ այդ տարում եկամտային հարկի
 ենթարկւածների թիւն էր 1.084.751 անձ, իսկ 300 մարկից պա-
 կաս եկամուտ ունեցողներ կային 1894 թ-ին 83.609 անձ, որ

Եկամտի չափը	1879 թ.	Բոլոր վիճակազր- ւածների	1894	Բոլոր վիճակազր- ւածների
300-ից պակաս	77.060 հոգի	7,11%	83.609	5,61
300 — 800	751.626	» 69,23	889.648	59,69
800 — 950	57.164	» 5,27	133.502	8,96
950 — 1.100	39.662	» 3,66	86.980	5,83
1.100 — 1.250	28.142	» 2,59	59.915	4,02
1.250 — 1.400	17.787	» 1,64	37.192	2,50
1.400 — 1.600	22.507	» 2,08	40.385	2,71
1.600 — 1.900	20.149	» 1,86	34.200	2,29
1.900 — 2.200	14.362	» 1,32	25.655	1,72
2.200 — 2.500	10.481	» 0,97	18.294	1,23
2.500 — 2.800	7.104	» 0,65	12.060	0,81
2.800 — 3.300	9.714	» 0,90	15.927	1,07
3.300 — 4.800	13.215	» 1,22	22.828	1,52
4.800 — 9.600	10.857	» 1,00	19.062	1,27
9.600 — 26.000	4.091	» 1,38	8.754	0,59
26.000 — 54.000	592	» 0,05	1.764	0,12
54.000 — 100.000	170	0,022	629	0,06
100.000 — 200.000	50		196	
200.000 — 300.000	12		39	
300.000 — 500.000	4		16	
500.000 — 1.000.000	2		5	
1.000.000 մարկ	ոչ ոք		1	
	1.084.751		1.490.558	

կազմում էր ընդհանուրի 5.61% -ը, քանի որ այդ տարում եկամտային հարկ վճարում էին 1.490.558 անձ:

Տող երկրորդ. 300-ից մինչև 800 մարկ տարեկան եկամուտ ունեցող կային 1879 թ-ին 751.626 անձ, որ կազմում էին ընդհանուրի 69.28% -ը, քանի որ եկամտային հարկի համար վիճակագրւած էին 1.084.751 անձ. իսկ նոյնքան եկամուտ ունեցող կային 1894 թ-ին 889.648 անձ, որ կազմում էին ընդհանուրի 59.69% -ը, քանի որ եկամտային հարկի համար վիճակագրւած էին 1.490.558 անձ:

Եւ այլն:

Հարկաւ, առաջին տողի թւերը՝ ամենաքիչ եկամուտ ունեցողներին (աղքատներին) են վերաբերում. երկրորդ տողի թւերը վերաբերում են աւելի եկամուտ ունեցողներին, բայց և այնպէս նոյնպէս աղքատներին. երրորդ տողը՝ մի փոքր աւելի ունեցողներին և այլն. 11-րդ և 12-րդ տողերը (2500 մարկից մինչև 2800 մարկ և 2800 մարկից մինչև 3.300 մարկ ունեցողներ) կարելի է հաշւել միջին դասակարգի ստորին խաւերը. իսկ 13-րդ և 14-րդ տողերը (3.300—4.800 և 4.800—9.600 մարկ եկամուտ ունեցողներ) ներկայացնում են միջին դասակարգի աւելի բարձր խաւերը: Դոցանից յետոյ դալիս են արդէն հարուստները, իսկ վերջը (54000-ից մինչև մի միլիոն եկամուտ ունեցողներ) դալիս են ամենահարուստները, միլիոնատէրերը:

Երկրիս ամենազարգացած երկիրներէից միայն շատ քչերը ունին եկամտային հարկ, այնպէս որ եկամուտների այդպիսի վիճակագրութիւնն չունին միւս երկիրներից շատ շատերը: Բայց այն վիճակագրութիւնը որ ունի փոքրիկ Սաքսոնիան կարող է այնուամենայնիւ մի զաղափար տալ անհատների հարստութիւնների մասին ընդհանրապէս, որովհետեւ Սաքսոնիայի տնտեսական կեանքը բացառիկ պայմանների մէջ չի դրւած. նա մի տիպարական երկիր է տնտեսապէս և մանաւանդ գործարաններով բարձր զարգացած Եւրոպական երկիրների թւում, այնպէս որ եթէ վերցնելու լինինք այլ հարուստ երկիրներ, որպէս Անգլիա, Ռուսիա, Ֆրանսիա, ի հարկէ, համեմատութեամբ նոցա բնակիչների թւին, կը դտնենք եկամուտները շատ թէ քիչ այնպէս բաժանւած, որպէս Սաքսոնիայում:

Քննելով վերը առաջ բերած թւերը աչքի է ընկնում այս

երևոյթը, որ 1879-ից մինչև 1894 թ., ուրեմն 15 տարւայ ընթացքում, համեմատած ընդհանուր թւի հետ, ամենաքիչ եկամուտ ունեցողների թիւը ոչ թէ աւելացել է, այլ նւազել է. որովհետև մենք տեսնում ենք որ մինչև 800 մարկ եկամուտ ունեցողները 1879 թւին կազմում էին վիճակագրածների 7.11⁰/₀ և 69.28⁰/₀-ը, իսկ 1894 թւին նոքա կազմում էին՝ ամենաաղքատները 5.61⁰/₀, 300-800 եկամուտ ունեցողները 59.69⁰/₀: Այդ ցոյց է տալիս, որ 15 տարում աղքատ դասակարգը համեմատապէս աւելի ունեւոր է դառել և ահա թէ ինչու այդ կարգի անձերից շատերը մի աստիճան բարձրացել են, քանի որ 800-ից մինչև 1250 մարկ սնեցողների թիւը շատ զգալի տոկոսներով աւելացել էր:

¹⁾ Մեր ընթերցողներին գաղափար տալու համար տնտեսապէս բարձր զարգացած եւրոպական մի երկրի մասին, առաջ ենք բերում հետեւեալ տեղեկութիւնը Սաքսոնիայի մասին, քաղելով Բրոկհաուզի կրճատած բառարանից (տպագրութիւն 1888 թ.: Սաքսոնիան ունի 14.993 քառակուսի կիլոմէտր և 3.182.003 բնակիչ. (մինչդեռ Անգլիոյկասը ունի 222.625 քառակուսի կիլոմէտր և միայն 4.230.092 բնակիչ). երկրի միջով անցնում է Էլբա մեծ գետը. երկիրը հարուստ է արտերով և անտառներով, ամենտեղ լաւ մշակած, տալիս է ցորեն, ալգեպտոլներ, նաև գինի (Էլբայի հովտում). ունի շատ զարգացած հանքադոժութիւն՝ քարէածուխ, պղինձ, արծիճ, երկաթ, ցինկ և արծաթ. ապա մարմար, շինութեան քարեր, պորցելանի կաւ. հանքային ջրեր 30-ից աւելի: Գործարանականութիւնը, որը վերին աստիճանի զարգացրած է, զբաղեցնում է բնակիչների 23⁰/₀-ը. կտաւը Լաուզիցում, իսկ Քեմնից, Մէէրանէ, Կրիմմիչաու, Գլաուխաու քաղաքները աւելի են բրդի և բամբակի կտորներ, Պլաուէն՝ կենդրոն է մուսելինի և ճերմակեղէնի. Լապցիգում զարգացել է գրքերի, նոտաների և գեղարւեստական ապագրութիւնը. ամբողջ երկրում ցրած են գործարաններ քիմիական արդիւնքների, թղթի, մոմեղէնի, կարպետների, մուգիկային գործիների, ֆարֆորի, փաշտի խաղալիկների, չարդի գործւածների և այլն: Նշանաւոր է նաև առևտուրը, որի կենդրոնն է Լապցիգ: Երկաթուղիներ 2.309 կիլոմէտր, հեռագրաթելեր 2106 կիլոմէտր, Բաղմաթիւ դպրոցներ. համալսարան Լապցիգում. պոլիտեխնիկում Դրեզդէնում. 16 գիմնազ, 11 ուէալական գիմնազ, 20 ուէալական դպրոց. 18 ուսուցչական սեմինարներ. շատ մասնագիտական դպրոցներ, հանքային ակադեմիա Ֆրալբերգում, անտառային ակադեմիա Թարանդտում, գեղարւեստների ակադեմիա և երաժշտական կոնսերւատորիա Լապցիգում և Դրեզդէնում և այլն:

Բայց եթէ ամենաքիչ եկամուտ ունեցողների և միջին դասակարգի դրութեան մէջ նկատելի է յառաջդիմութիւն, դորանից շատ աւելի զերազանց է ամենահարուստներինը. որովհետեւ 54000-ից մինչև 100.000 մարկ եկամուտ ունեցողների թիւը, որ 1879-ին միայն 170 էր, 1894-ին 629-էր դառել. դորանից աւելի ևս մեծ հարուստների թիւը 50-ից բարձրացել էր 196-ի, և այլն:

Այսպիսով, ուրեմն, եթէ ստորին եկամուտ ունեցող դասակարգերը յառաջադիմել են, բայց անհամեմատ աւելի առաջացել են ամենահարուստները՝ իրենց համեմատական թւով:

Այս մի կողմից թէև ցոյց է տալիս, թէ սխալ է երբ պնդում են թէ աղքատ դասակարգը գնալով աւելի ու աւելի աղքատանում է և թէ նոցա թիւը աճում է (համեմատութեամբ ամբողջ ազգաբնակչութեան հետ). բայց զլխաւորը, ինչ վերը առաջ բերած ցուցակում ամենից առաջ աչքի է ընկնում, դա եկամուտների բաշխման ծայրահեղ անհասարակութիւնն է. չէ որ վիճակագրածների 65,3⁰/₀-ը ունի եկամուտ տարեկան 800 մարկից (շուրջ 300 ռուբլուց) պակաս: Երկրորդ, այդ ցուցակից երևում է, որ ստորին խաւերում աւելի դժւար են մի աստիճանով բարձրանում քան հասարակութեան վերին խաւերում: Յրինակ, 15 տարում այն անձերի թիւը, որոնց տարեկան եկամուտը 26 հազարից մինչև 54 հազար մարկ էր, գրեթէ եռապատկեւ է (592 անձ էր այդպիսիների թիւը 1879-ին, և 1764 անձ էր՝ 1894 թւականին). նոյնպէս 54 հազարից մինչև 100 հազար մարկ եկամուտ ունեցողները 15 տարում թւով երեք ու կէս անգամ բազմացել էին (170 հոգուց դառել էին 629 հոգի). մի աստիճանով աւելի ևս հարուստների թիւը գրեթէ քառապատկեւ էր (50-ից դառել էին 196 հոգի): Այդքան մեծ յառաջդիմութիւն ստորին խաւերում չի նկատուում:

Ընթերցողների առջև դնենք այժմ մի այլ վիճակագրութիւն՝ անհամեմատ աւելի մեծ երկրի վերաբերեալ, ինչպիսին է Պոլսի և Դա էլ կարողութիւնների վիճակագրութիւն է, որի մէջ, սակայն, դուրս է չգցւած շարժական կարողութիւնը (փող, ապրանք և այլն), այլ հաշւի է առնւած միայն հարկատու անշարժ կայքը,

ուր զնահատուած են միայն 6000 մարկից (2.500 ուսլուց) աւելի արժեցող անշարժ կաշքերը 1895 թվականի:

Կարողութիւնը չհաշւած չարժական կաշքը	Ցենզաւորների թիւը		Ամբողջ կարողութիւնը	
	Ամբողջ	Տոկոսը	Միլիոն մարկ	Տոկոսը
6.000— 20.000	563.370	48. ⁸⁹	2.978	9. ⁵
20.000— 32.000	203.834	17. ⁶⁹	2.214	7. ¹³
32.000— 52.000	162.262	14. ⁰⁸	3.286	10. ⁵⁹
52.000— 100.000	122.683	10. ⁶⁵	4.279	13. ⁷⁸
100.000— 200.000	57.179	4. ⁹⁸	3.993	12. ⁸⁶
200.000— 500.000	29.373	2. ⁵⁵	4.500	14. ⁵⁰
500.000— 1.000.000	8.375	0. ⁷³	2.279	9. ⁶⁰
1.000.000— 2.000.000	3.429	0. ³⁰	2.453	7. ⁹⁰
2.000.000-ից անց	1.827	0. ¹⁶	4.360	14. ⁰⁵

(Այս թւերը պէտք է կարդալ այսպէս. 6000-ից մինչև 20.000 մարկ անշարժ կարողութիւն ունեցողներ Պրուսիայում 563. 370 հոգի էին, որոնք կազմում են բոլոր ցենզաւորների 48.⁸⁹%-ը. այդքան հոգու անշարժ կարողութիւնը ներկայացնում էր 2 միլիարդ 978 միլիոն մարկ, որ կազմում է բոլոր ցենզաւորների անշարժ կարողութեան 9.⁵ տոկոսը: Եւ այլն):

Ինչ են վկայում այդ թւերը? այն որ միլիոն մարկից աւելի անշարժ կաշք ունեցողները (ցուցակի երկու վերջին տողերը) ներկայացնում են ընդամենը 5.256 անձ միայն, բայց նոցա կաշքերի արժէքը, միասին առած, դեռ 1 միլիարդ 621 միլիոն մարկով գերազանց է քան երկու ստորին աստիճանների 767.204 հոգու անշարժ կարողութիւնը (առաջին երկու տողերի գումարը): Եւ դեռ այդ ցուցակում մոեկ են միայն ցենզաւորները, այսինքն 6000 մարկից աւելի կաշք ունեցողները. ինչ կ'լինէր եթէ համեմատութեան զնէինք ամենահարուստներին՝ ոչ մի կաշք չունեցողների, կամ այնպիսի կաշքեր ունեցողների հետ, որոնց արժէքը 6000 մարկից պակաս լինելով՝ ցենզաւորներ չեն հաշւում:

Կարողութիւնների և եկամուտների այսպիսի դասաւորութիւնը

մտածել է տալիս ոչ միայն սոցիալական արդարութեան տեսակէտից, այլ և նոյն իսկ անտեսական չառաջդիմութեան տեսակէտից:

Եկամուտների այդպիսի աննպաստ բաշխումը այն հետևանքն է առաջ բերում, որ մասսային (ամբոխի) սպառումը մեծ ծաւալ չի ստանում. քիչ եկամուտ ունեցողը ինչ կարող է շատ բան գնել. բայց սպառման քուլթիւնը իւր հերթով փնասում է արդիւնաբերութեան: Ձեռնարկողը (օրինակ, գործարանատէրը) աշխատում է կարելիին չափ խնայել բանւորի վարձից, որովհետև վարձը նորա համար արդիւնաբերութեան ծախքերի մասն է կազմում: Միւս կողմից ձեռնարկողների մի մեծ մասը ստիպւած է իւր ապրանքները ծախել բանւորների շրջաններում: Որքան, սակայն, նա խնայում է բանւորների վարձի մէջ, այնքան աւելի թոյլ է բանւորների գնելու և սպառելու ոյժը:

Եւ ահա ձեռնարկողները իրենց ստիպւած են տեսնում մասսայի համար նշանակւած արդիւնաբերութիւնից աւելի ու աւելի հեռանալ և դիմել շռայլութեան և մոգային ապրանքների արդիւնաբերութեան, չնայած որ սա մի ասպարէզ է ներկայացնում, ուր սալթաքելը շատ դիւրին է: Նոքա պէտք է միշտ նորանոր արդիւնքներ հնարեն, որ հրապուրեն թէև աւելի փոքրաթիւ, բայց կարողութիւնով ուժեղ հասարակութիւնը և սորան զրդեն նորանոր ծախքեր անելու:

Այդպիսով ազատ մրցման հիմունքի վրայ դրւած անտեսական իրերալիզմը խրախուսում է շռայլ կենցաղը մինչ վերջին ծայր: Եթէ կենցաղի այդ նրբանալը դրդէր դէպի ոգեկան գործունէութիւն նոցա, որոնք այդ վայելքների տէրն են, այն ժամանակ զոնէ մի կուլտուրական վաստակ կը բղխէր դորանից. բայց տարաբախտաբար չի կարելի չխոստովանել, որ, սովորաբար, ժամանակակից փարթամութիւնը, մանուսալ ուրոշ շրջանների տրդ ու զարդի և ճաշասեղանի շռայլութիւնը, բնաւ այդ պայմանին չի համապատասխանում: Ընդհակառակը նա փտանգում է բարի վարքը, ճաշակը և, ամենից առաջ, ոգու կրթութիւնը:

Սակայն, որքան էլ մեծ լինի փարթամութիւնը, սովորաբար նա, հարուստների համար, եկամուտի միայն փոքրիկ մասն է կազմում: Հոգսը ընտանիքի կամ նորա ապագայի մասին, «կամքը իշխանու-

Թիւն ձեռք բերելու զրդում են նոցա՝ կարողութիւնը մեծացնել նոյն իսկ այն դէպքերում, ուր ստացւող եկամուտը արդէն վաղուց գերազանցում է սովորական պիտոյքներին: Այսպիսով կապիտալները ղիգւում են կապիտալների վրայ: Հաշւում են, որ Գերմանական կաշարութեան մէջ տարեկան ստացւող եկամուտները գերազանցում են կատարող ծախքերին 2 միլիոն մարկով, Մեծ-Բրիտանիայում 4 միլիոն մարկով (ծախքերի մէջ հաշւելով Թէ կենցաղավարութեան ծախքերը և Թէ երկրի բոլոր տնտեսութիւնների համար կատարող ծախքերը):

Առարկում են Թէ այդ աւելացած կապիտալներով նոր գործեր են հիմնւում, որով պահանջ է լինում նոր բանւորների, հետեւապէս բանւորի վարձը բարձրանում է, և որ միւս կողմից, աւելացած արդիւնաբերութեան շնորհիւ, ապրանքների գները ցածանում են և դառնում աւելի մատչելի ժողովրդին: Բայց այդ այդպէս չէ. կապիտալիստները՝ եկամուտների մի մասը խնայելով, բնաւ չեն մտածում ոչ բանւորի վարձը աւելցնելու և ոչ ապրանքի գինը ցածացնելու մասին. նոքա միմիայն ձգտում են համապատասխան չափով եկամուտ աւելցնելու: Երբ հայրենիքում յոյս չկայ այլ ևս շահագործելու ունեցած կապիտալը՝ դիմում են արտահանութեան, որոնում են դրսում նոր շուկաներ, որով և հայրենիքում ապրանքի գների ցածանալուն դէմն են առնում: Իսկ եթէ բանւորի վարձն է բարձրանում, — դորա դէմը առնում են նոր մեքենաներով և կամ որոնում են աւելի էժան աշխատաւոր ոյժեր (կանայք և երեխաներ՝ փոխանակ հասակաւ որ տղամարդկանց): Եթէ այդ էլ այլ ևս չի օգնում — ձգտում են ետ գցած կապիտալը մասամբ արտասահմանում շահագործել, ուր աւելի քիչ կապիտալ կայ, իսկ շահը մեծ է: Անգլիացիք, որպէս հաշւում են, տարեկան 400 միլիոն ռուբլի դուրս են բերում իրենց հայրենիքից և այլ երկիրներում են շահագործում: Նաև Գերմանիան երկրագնդիս գրեթէ բոլոր երկիրներին կապիտալ է փոխ տւել և ամեն տարի հարկւրաւոր միլիոն մարկ է ստանում արտասահմանից իբր տոկոս: Աւելի ևս Ֆրանսիան, որը Իտալիային, Եգիպտոսին, Թիւրքիային, Ռուսիային և այլն շատ միլիարդներ է փոխ տւել: Որքան մեծ են հայրենիքից դուրս շահագործւող կապիտալները, այդ կարելի է տես

նել նաև սրանից, 1894 թին Գերմանիան մի միլիարդ մարկով աւելի ապրանք է ստացել այլ երկիրներից (ներմուծութիւն), քան ինքը աւրանք է ուղարկել դուրսը (արտահանութիւն): Ուրեմն պէտք է որ զորա համապատասխան մի միլիարդ մարկով (400 միլիոն ուրլով) պակասած լինէր երկրի մէջ եղած փողը: Մինչդեռ, ընդհակառակը, այդ երկրում եղած ոսկի և արծաթ փողը նոյն այդ տարին 257 միլիոն մարկով աւելացաւ: Եւ հրտեղից: Այն տոկոսներից, որ գերմանացիք ստացան օտարներին պարտք տւած դումարների համար, և այն դիւլդենդներից, որ նոքա ստացան այլ երկիրներում ունեցած ձեռնարկութիւններից:—Մենք այժմ ականատես ենք, թէ որքան մեծ կապիտալներ են ուղղւում դէպի Կովկաս և րուպական երկիրներից, մանաւանդ մի տասնեակ տարուց դէս, դնւելով շահաւէտ գործերի մէջ (օրինակ, Թիֆլիսի ձիաքարշ երկաթուղին՝ բելգիական ընկերութեան ձեռքով, Գետաբէկի պղնձէ հանքում՝ գերմանացի Սիմենս եղբայրների ձեռքով, Բաքույն նաւթային գործում՝ Նոբել եղբայրների, Ռոտշիլդ, և այլն):

Եւրոպայի զինուորական պետութիւնները, մեծամեծ զօրքերի և նաւատորմների պիտոյքների համար ստիպւած են միշտ նորաւոր պարտքեր անելու, որով քաղաքացիների եկամուտներից ետ զցած մասերը յարմար տեղ են գտնում զետեղւելու, այն է՝ պետական արժեթղթերի մէջ: Այդպիսով այն, ինչ չի գնում անձնական պիտոյքներին, գնում է հասարակաց պիտոյքներին բաւարարութիւն տալու համար: Բայց զօրքը չի արդիւնաբերում, այլ միայն սպառում է: Պետութեան միշտ աճող պարտքերը ոչ արդիւնաբերական գործերի համար, ինչպէս զօրքերի պահպանութիւնն է, բարձրացնում է փողի տոկոսը և կամ գոնէ թոյլ չի տալիս որ տոկոսը շատ ընկնի. իսկ պետական պարտքերի տոկոսները վճարելու համար յաճախ դիմում են նոր անուղղակի հարկերի, որոնց վճարողները մեծ մասամբ ոչ-ուսուկա դասակարգերն են, որոնք այդպիսով ստիպւած են իրենց անձնական պիտոյքների համար միակը (անձնական սպառումը) նոյն չափով նւազեցնել:

Բայց չնայած շուայլութեան ապրանքների արդիւնաբերութեան, չնայած ապրանքների և կապիտալների արտահանութեան, չնայած ժամանակիս պետութիւնների վիթխարի վարկի պիտոյքներին, պա-

տոհում է որ շահախնդիր կապիտալիստը չի ստանում իւր որոնած տոկոսները և ստիպւած է ապրանքը վաճառել սովորական օգուտով և նոյն իսկ այնպիսի պէտքով, որոնցով ծախքը չի ծածկուում: Բայց մի անգամ որ լիբերալ տնտեսական սիստեմի մշիչ ոյժը—շահը—նւազեց, թուլանում է նաև ամբողջ երկրի տնտեսութեան ընթացքը: Առաջ է գալիս տագնապը, կրիզիս: Մեծամեծ կապիտալներ մնում են անգործ, ապրանքները, որ չի լինում ձեռնտու գներով ծախել, զիջւում են պահեստներում, խանութներում: Գործարանները դադարեցնում են իրենց արդիւնաբերական գործը մասամբ կամ ամբողջովին: Բանւորները արձակւում են և ընկնում խեղճութեան մէջ: Ինչու? Որովհետև շատ է արդիւնաբերւել: Տնտեսական շրջանառութիւնը խանգարւում է, որով և տնտեսական յառաջդիմութեան էներգիան կտրուում է: Եւ ինչու? Որովհետև եկամուտները շատ անհաւասար են բաշխւում, և ժողովրդի մի ահադին մասը գնելու, սպառելու ոյժ չունի: Մենք, ասում է Ռոդբերտուս, չենք կարող և ոչ իսկ ազգային արդիւնաբերական միջոցները ամենալին ոյժով բանեցնել, որովհետև, ազգային եկամուտների պակասաւոր բաշխման շնորհիւ, նոցա գործի ղենլու համար մեզ պակասում է ներքին շուկան, իսկ արտաքինը (արտահանութիւնը) միայն չնչին օժանդակութիւն է: Եւ մի այլ տեղ նա ասում է. «Այդ մեզ շատ թանկ է նստում, որ աշխատանքը էժան է»:

Զիչտք է նաև կարծել, թէ ազատ մրցումը անպայման դէպի տեխնիկայի կատարելութիւնն է տանում: Ստորին աստիճանի տեխնիկայի դրութիւնից, երբ բանւորի վարձը ցածր է և գործը քիչ կապիտալ է պահանջում, երբեմն աւելի շահ է ստացւում քան կատարելագործւած տեխնիկայով, ուր որ օրավարձը բարձր է: Ահա թէ ինչու այն երկիրներում, ուր թէև ազատ մրցումն կա, բայց օրավարձը ստոր է, ամեն տեսակ մեքենաներ և տեխնիկական կատարելութիւններ գործի չեն դնում: Նոյն իսկ Գերմանիայում, Հերման Լոշի շատ զգոյշ հաշիւների համաձայն, եթէ ամենուրեք գործը տեխնիկայի բարձրութեան վրայ դրւած լինէր, առանց բանւորների թիւը և աշխատութեան չափը աւելցնելու, առնւազն 29 տոկոս աւելի ապրանք կ'արդիւնաբերւէր:

Թէև ներկայիս տնտեսական կարգը հիմնած է ազատ մրցման վրայ, բայց անհատների տնտեսական շահը կարող է վերացնել մրցումը, ստեղծելով դաշնակցութիւն, կոալիցիա: Միատեսակ ապրանքների տէրերը համաձայնութիւն են կայացնում որոշ գնից պակաս ապրանք չծախել: Այդ լինում է այն դէպքերում մանաւանդ, երբ արտադրած ապրանքը չի կարելի ամբարած պահել և պէտք է վաճառել նոյն իսկ արտադրութեան ծախքից պակաս գնով: Եւ այն ժամանակ մրցումից յառաջանում է կարտէլլ, մոնոպոլի, և դորա համապատասխան էլ գներն են փոխւում ի նպաստ ապրանքատէրերի:

Եւ ոչ էլ մրցութիւնը անհրաժեշտօրէն տանում է դէպի էթանացումը: Մանր խանութպանների չափազանց մեծ թիւը, օրինակ, բնաւ պատճառ չէ որ գները ընկնեն. նոցա բազմաճանաչում են տեղանքը միայն այն է, որ ապրանքների վաճառքից վաստակ ստանում են աւելի բազմաթիւ անձեր. դոցա մէջ լռելեայն համաձայնութիւն կայ՝ օգտւել եղած բարձր գներից, որքան միայն հնարաւոր է. այլապէս նոցանից շատերի գոյութիւնը անկարելի կ'լինէր:

Ազատ մրցումը, որից առաջացաւ ներկայիս տնտեսական լիբերալիզմը, ունեցաւ, ուրեմն, իւր հրաշալի արդիւնքները տնտեսական յառաջդիմութեան համար, բայց և ստեղծեց մեծ անհաւասարութիւններ ժողովրդի ահագին մեծամասնութեան և նորա փոքրամասնութեան միջև, և ոչ էլ ազատ մրցման մէջ արդիւնաբերութիւնը կարողացաւ այդ ահագին մեծամասնութեան տնտեսական կարիքներին բաւարարութիւն տալ. հանգամանքների ոյժը մղել է արդիւնաբերողներին գործել աւելի ունեւորների կարիքների համար և այսպիսով սահմանափակել իւր գործունէութեան ասպարէզը:

Այս հանգամանքները ստեղծել են մի դրութիւն, որը չէր կարող դիմանալ առանց քաղաքակրթութեան հարւած տալու: Ազատ մրցումը և ազատ դաշնը զօրաւորի և անզօրի միջև պէտք է իւր հակակշիռը առաջ բերէր. անհատ-բանւորը անհատ-կապիտալիստի դէմ անզօր էր. բանւոր դասակարգը ուրեմն պէտք է կազմակերպւէր: Այդ կազմակերպութիւնը ամենից առաջ սկսւեց Անգլիայում, ուր գործարանական կեանքը աւելի շատ և աւելի շուտ քան ուր և

իցէ զարգացաւ և ուր ազատ մրցման և ազատ դաշնի աւերումները ամենից ազազակողն էին: Բայց և պետական օրգանները զարուս միջերբում արդէն վկայեցին որ կապիտալիստական արդիւնաբերութեան ձեւը լիբերալիզմի հիմունքներով՝ ազգի մարմնի վրայ բացել է մի վերք, որը սպառնում է նոյն իսկ ազգերը ոչ միայն բթացնել, այլ և ֆիզիկապէս փճաւնել, այլասեռելով մարդկային սերունդը, և որ այդ արհաւիրքը արդէն իսկ իւր զործը մասամբ կատարել է—թերևս անվերադառնալի կերպով:

(Շարունակելի)

ԼԵԼԶԼԿՈՒԹԻՒՆՔ ԸՆԳՐԿՈՎԿԵՍՈՒՄ

ՖՐԷՆԿԵԼ՝Ի

(Շարունակութիւն ¹)

Այն յարգանքը, որ տաճում է ժողովուրդը դէպի դատարանը, և որ զխաւորն է՝ դէպի դատաւորներն ու քննիչները, ցոյց է տալիս, որ ժողովուրդը արդէն համակւած է զիտակցութիւնով, թէ դատարանը և նորա օրգանները զործում են խիստ-օրինական կերպով:

Այդ չէ միթէ դատարանի և դատաւորների բարոյական-կրթական նշանակութիւնը ժողովրդի համար: Այդ պատճառով աչն ամենը, որ խախտում է դատարանի ազդեցութիւնը ժողովրդի վրայ, պէտք է խնամքով հեռացնել: Ժողովրդի մէջ մտցրէք օրինականութեան զազաւարներ—և աւազակութիւնների կէսը մեզնում ալ ևս չեն լինիլ:

Ինչ վերաբերում է աւազակութիւնների դէմն առնելու վարչական միջոցներին՝ թէ օրէնքը (հատոր XIV Օրէնսգրքի) և թէ արտակարգ կարգադրութիւնները երկար ժամանակ դրել էին Կովկասը առանձին կառավարութեան ներքոյ: Անդրկովկասի մի քանի մասերը (Դաղստան, Զաքաթալի շրջանի և մի քանի ալ տեղեր) նոյն իսկ այժմ բաժանւած են ընդհանուր քաղաքացիական իշխանութեանց վարչութիւնից և ստորադրւած են առանձին զինուորական-ժողովրդական վարչութեան (военно-народное управление):

¹) ՏԵՍ Մուրճ № 10:

Նրկրի աչդ մասերում կարգը պահպանուում է զինւորական միջոցներով, այնպէս որ դժւար է նոցա համար ասել, թէ այնտեղ աւազակութիւնները պահասում են թէ՛ աւելանում: Պաշտօնական թւերի համաձայն, պէտք է որ այնտեղ յանցանքների կոպիտ ձևերը պահասում լինեն:

Դիմենք այժմ այն տեղերին, որոնք կառավարւում են ընդհանուր կանոնով: Այդտեղ (նահանգներում) անձնաւորութեան և սեփականութեան դէմ յանցանքները նւազեցնելու հոգսը դրւած է տեղական ոստիկանութեան վրայ, որին յանձնւած է ըստ կարելոյն նախամտածել յանցագործութեան դէմ, այլ և աւազակութիւնների և կողոպուտների դէմն առնել:

Օրէնքները, որոնցով ղեկավարւում է վարչութիւնը (ադմինիստրացիա) աչդ դէպքերում, մեծ իշխանութիւն են տալիս աւազակութիւնների դէմ կռւելու համար: Պէտք է միայն որ օրէնքի տւած իրաւունքները և պարտականութիւնները խելացի գործադրեն: Սակայն, Կովկասում ծայրայեղ կերպով աւազակութիւնների զարդանալու պատճառով, իշխանութիւնները անհրաժեշտ դատեցին խնդրել կառավարութիւնից նաև առանձին իրաւունքներ, և Կովկասեան երկրի կառավարութեան կանոնադրութեան 26 և 27-րդ յօդւածների համաձայն, Կառավարչապետին տրւած է իրաւունք, բացառիկ և արտակարգ դէպքերում առանձին միջոցներ ձեռք առնել՝ երկրի մէջ հանգստութիւն պահպանելու համար: Պէտք է սակայն նկատել, որ եթէ ոստիկանութեան բարոյական և կրթական ցենզը բարձրացնելի, սպա ժողովրդական վատ բարքերից շատը կը պակասի, և դորա մէջ յանցանքների այնպիսի կոպիտ ձևերը, որպիսիք են աւազակութիւնները, կողոպուտները, սպանութիւնները:

Ոստիկանութեան օրդանների համար ծառայողների լաւ ընտրութիւնը մեծ ոյժ է մի պետութեան մէջ:

Արտակարգ միջոցների շարքում աւազակութիւնների դէմ չիշւելու է վարչական աքսորը (административная высылка): Այդ միջոցին դիմում էին այն դէպքերում, երբ կասկածւածի դէմ բաւականաչափ ապացոյցներ չկային և հետեւապէս չէր կարելի դատաստանական կարգով հալածել:

Վարչական աքսորի խնդիրը իւր պատմութիւնն ունի: Աքսորի

համար կանոնադրութիւն չկայ: Իշխան Բարեառնիսկու (նախկին փոխարքայ 185-ական թւականներին) մի փորձ արւեց այդ ուղղութեամբ՝ դեներալ Կոլուբեակինի և այլոց զեկուցման առթիւ: Յաճախ աքսորւում էին աւազակ-լեռնցիք զէպի Եւրոպական Ռուսիայի ներքին նահանգները՝ Երմոլովի, Կոմս Պասկևիչի, Իշխ. Վորոնցովի և Դոնցովով-Կորսակովի ժամանակ ¹⁾։ Յետոյ խնդիրը քանիցս անգամ վճռւեց օրէնսդրական կարգով և, վերջ ի վերջոյ, համաձայն Կովկասեան կառավարութեան կանոնադրութեան 26-րդ յօդածի, Կառավարչապետին իրաւունք է տրւած՝ բնիկներից նոցա, որոնք կասկածւում են սպանութիւնների, կողոպտումների, անասնազոհութեան, ապաստանատուութեան մէջ, հեռացնել զէպի նոցա համար որոշւած տեղը Կովկասի սահմաններում, արգելելով նոցա հեռանալ աքսորատեղից մինչև հինգ տարի. այլ և աքսորել երկրից դուրս, նոյն ժամանակամիջոցով, ներքին գործոց մինիստրի ընտրած տեղերէ: Երկու զէպքերում էլ աքսորի խնդիրը քննւում է նախ Կառավարչապետի խորհրդի մէջ: Վերջին ժամանակներս վարչական եղանակով աքսորելու իրաւունքները աւելի ևս ընդարձակւեցին ²⁾։

Վարչական աքսորների կատեգորիային պէտք է դասել այն միջոցները, որոնք ձեռք էին առնւում քաղաքների մէջ դատարկաշրջիկ նրիտասարդների հոսանքի դէմ, որոնք տալիս են զողերի և կողոպտողների մի յայտնի մասը. այն է՝ արգելքը բնակւելու քաղաքներում գիւղական գասակարգի այն անձերին, որոնք կասկածւում են կողոպտածը թաղցնելու, վաճառելու համար և այլն: Ահամարելով գիւղական աշխատանքը, գիւղական երիտասարդութեան մի մասը ձգտում է զէպի քաղաքները իբր խոհարարներ և հասասներ, և գողանում ու խաբւում է տէրերին, ոչ սակաւ կողոպտողներին ճանապարհ ցոյց տալով զէպի բնակարանները, ուր իրենք բնակւում են, և գողութեան մէջ անձնասպէս մասնակցելով: Իսկ նոքա, որոնք մոնում են գործակատար խանութներում և դուխաններում—յաճախ այդ դուխանները (գինեաներ) զարձնում են դո-

¹⁾ Կառավարչապետներ Կովկասի, առաջին երկուսը 1810-ական թւականներից մինչև չուրջ 1830 թ., Վորոնցովը 1844-ից մինչև 1854 թ., վերջինը 1882-ից մինչև 1891 թ.:

²⁾ Տես Մուրճ 1897, № 2—3:

ղերի և կողոպտողների բուն և կողոպտածի թագստատեղ ու վաճառատեղ: Այդ տեսակ արատաւորներին իրենց հայրենի գիւղը վերադարձնելը ամենաարդար և շատ անհրաժեշտ միջոց է, որովհետև զորանով նոքա վերադառնում են իրենց մօտիկների շրջանը, ուր ցոյց է տրւում աշխատանքի ճամբան և ուր նա չի ենթարկւած քաղաքի կեանքի փորձութիւններին:

Երկրորդ արտակարգ միջոցը այն է, որով քաղաքացիներին յանձնում են զինւորական-նահանգական դատարանին՝ պատերազմական ժամանակի օրէնքներով դատելու համար: Մի ժամանակ, երբ մեր դատարանները չէին բարեփոխւած և վերին աստիճանի դանդաղ էին գործում, Կովկասեան իշխանութիւնները քաղաքացիներին յաճախ յանձնում էին զինւորական դատարաններին, աւագակութիւնների և կողոպտուների համար: Սովորապէս այդպիսի դատարան հաստատուում էր կամ Թիֆլիսի կոմենդանտի վարչութեան կից, կամ որ և է զնդի կից: Քրքրելով արխիւները, մենք տեսնում ենք բազմաթիւ դէպքեր, ուր զինւորական ատեանը արդարացնող վճիռ է կայացրել՝ յանցանքների համար ապացոյցներ չգտնելով: Իսկ այն աւագակները, որոնք մեղաւոր էին ճանաչւում, սովորաբար դատապարտուում էին պատիժների «СКВОЗЬ СТРОЙ» (այսինքն մեղապարտը պիտի անցնէր կանդնած զօրքի շարքերի միջով), ուր ստանում էին 6.000-ից մինչև 12.000 շալկցռուտէն (մոբակ), և եթէ չէին մեռնում, զրկւում էին Սիբիր տաժանակիր աշխատանքների, ունենալով մարմնի վրայ մեղապարտածի դրօշմ: Սկսած 1836 թւականից շատ երկար տարիներ զինւորական դատարանին էին յանձնւում Բորչալուի (այժմ Թիֆլիսի նահանգի մասը) և Կազախի (այժմ Գանձակի նահանգի մասը) պրիստաւութիւնների և Շամշաղիլի բաժնի բոլոր բնակիչներին, որոնք մեղադրւում էին աւազակութիւնների, կողոպտումների և սպանութիւնների համար: Յետոյ զինւորական դատարանին յանձնելը կատարւում էր միայն շատ բացառիկ և սակաւ դէպքերում: Բայց այդ միջոցը սովորութեան մէջ մտաւ 1882 թւականից, երբ Կովկասի Կառավարչապետ նշանակւեց իշխան Դոնդուկով-Կորսակով: Բարձրագոյն անւան տւած նորա խնդիրքի համաձայն, որ ապա կրկնեց նորա յաջորդը գեներալ-ադիւտանտ Շերեմետեւ, Կովկասեան կառավարչապետին Բարձրագոյն

հրամանով առ 13 սեպտ. 1893 թ. տրւեց իրաւունք իւր սեփական իշխանութեամբ բնիկներին մի քանի որոշ յանցանքների համար յանձնել զինւորական դատարանին ¹⁾։

Կան միջոցներ, որոնք շոշափում են աւազակութիւնների հետ յաճախ կապ չունեցող անձերին. մենք կանգ կ'առնենք այն պատժի վրայ, որով կալանաւորում են փախստական յանցաւորներին ընտանիքները և թէ այն գիւղի պատւաւոր ընակիչները, ուր աւազակներ են երեւցել բայց չեն գտնւել կամ չեն մատնւել բնակիչների կողմից։ Այդ միջոցները նպատակին չեն հասնում. թէև եղել են զէպքեր, երբ աւազակները, կարեկցութիւնից զէպի իրենց ընտանիքը, որը անմեղ տուժում է բանտում, իրենք ներկայացել են վարչութեան. բայց այդ զէպքերը շատ հազադէպ են։

Իսկ ինչ վերաբերում է գիւղի պատւաւոր ընակիչներին կալանաւորելուն, կարելի է աւելցնել, որ աւազակը, իրեն օտար անձերի կալանաւորման պատճառով, երբեք չի մոռճիլ որ ներկայանայ. իսկ եթէ նորա գիւղի պատւաւորները իրենց ազատման համար միջոցների անգամ ձեռնարկեն աւազակներին բռնելու և յանձնելու համար, այդ զէպքում, մինչև որ նոքա կը կտրողանան գործը զլուխ բերել, աւազակների հետքն անգամ կը կորչի։ Ուրեմն այստեղ պէտք է ազդել բնակիչների բարոյականը բարձրացնելու համար, որին կարելի է հասնել բարոյապէս ազդելով և նոցա մտաւորականի վրայ հոգս տանելով ²⁾։

¹⁾ Այդ բարձրագոյն հրամանը նոյն ժամանակ տպւեց Մուրճ'ում։

²⁾ Ընկերութեան նիստում, ուր կարդացւեց պ. Ֆրէնկէլի այս աշխատութիւնը, դատարանական պալատալի անդամ պ. Սմիտէն, համաձայնելով պ. Ֆրէնկէլի այդ հաշիւացքի հետ, ասաց հետեւեալը. ամբողջ գիւղի երաշխաւորութիւնը իւր մի անդամի չանցաւորութեան համար միտք ունէր այն ժամանակ, երբ գիւղը ներկայացնում էր ցեղապետութիւն, ալիքն ուր մի գիւղի բոլոր բնակիչները ազգակցական և շահի կապերով կապւած էին միմեանց հետ, ենթարկւելով ցեղապետին, որի իշխանութիւնը ժառանգական էր։ Այդպէս է այժմ դեռ ևս Պարսկաստանում։ Բայց այժմ մեզնում գիւղը ներկայացնում է իրարից անկախ բնակիչների խումբ և գիւղապետը ոչ թէ ցեղապետ է, ալ ժողովրդից ընտրւած և իշխանութիւնից մի քանի տարով հաստատուած անձն (սահնուտէր)։

Աւագակներին թաղցնելու դէմ ձեռք առնող միջոցների շարքում իշխանութիւնը գործ է դնում այսպէս կոչւած «էկզեկուցիա»-ն. դա կայանում է նրանում, որ տանուտէրին կառավարութեան կողմից նշանակելով՝ մեծ թւով զինւորներ են կանգնեցնում կասկածւած զիւղում, որը պէտք է կերակրի նոցա և նոցա ձիերին, մինչև որ աւագակները յանձնւած կը լինեն: Օրէնքի պահանջամբ (հատոր II, մասն I, յօդւած 542), այդ միջոցին կարելի է դիմել ամբոխային անկարգութիւնների դէպքում: Իսկ «աւագակային խմբի երևալու դէպքում» և հէնց որ լուր կը ստացւի թէ զոդերը ի մի են ժողովւել, եթէ տեղական ոստիկանութեան ոյժերը չեն բաւիլ, նահանգապետները իսկոյն աւելի զօրեղ միջոցների են դիմում՝ այդպիսի խմբեր և խմբումներ հալածելու համար, այդ նպատակով առանձին աստիճանաւորներ ուղարկելով և պահանջելով, եթէ պէտք կայ, օգնութիւն տեղական բատալիօններից և կոսանդներից, (յօդւած 543 նոյն հատորի): Նոյն նպատակով կազմւում են ռազմիկներ և պիքէտներ, այլ և տրւում են ճամբորդներին և տրանսպորտներին ռազմիկներ:

(Վերջը չաջորդ անգամ)

ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՍՏՐՈՒԿ ¹⁾

(Կոմս Լ. Տոլստոյ).

ՎԱՍՍԻԼ ՎԱՐԴԱՆԵԱՆՅԻ

I

Եւգ. Սոլովեովը Լ. Տոլստոյի կենսագրութեան մէջ լռութեան է տալիս Տոլստոյի հակասութիւնների պատճառների խնդիրը, համարելով այդ բոլորովին աւելորդ. „Русское богатство“ ամսագիրը շատ հիմնաւոր կերպով երկու անգամ ցոյց տուաւ այդ պակասը: Իսկն տասն, առանց այդ խնդիրը լուծելու անհասկանալի սֆինքս Լ. Տոլստոյը առաջաջ պէս հանելուկ է մնում, որովհետեւ պարզ չէ մինչեւ այժմ՝ թէ ինչպէս է Լ. Տոլստոյը կարողացել իր ամբողջ կեանքում ոչ միայն հաւատարիմ մնալ երիտասարդական ցնորքներին ու համակրանքներին, այլ եւ, տարիների ընթացքում, աւելի խիստ ու որոշ պատճառաքանել նրանց. եւ միեւնոյն ժամանակ ամեն քայլափոխում հակասել իրան: Պարզ չեն Տոլստոյի խելքի եւ բնաւորութեան առանձնաշատկութիւնները. պարզ չեն այն հասարակական եւ պատմական միջավայրի առանձնաշատկութիւնները, որոնք առաջ են բերել եւ պահպանում են հանճարեղ դրողի ամբողջ կեանքն ու գրական գործունէութիւնն ընդգրկող այդ պարադոքսը: Կոմսի միաժամանակ հետեւողական եւ անհետեւողական լինելու իրողութիւնը նկատել են համարեա նրա բոլոր քննադատները. եւ միայն նրանցից երկուսը, ճիշտ է ամենաաւելի ընկնողները, կարողացել են

¹⁾ Այս լռւածը 1893—1894 թ. տպւել է „Новое Обозрѣніе“ թերթի 3340, 3351, 3377, 3632, 3657 եւ 3669 համարներում: Յօդածն ալժմ լոյս է տեսնում կարեւոր փոփոխութիւններով: Ծան. Հեղ.

մեզ հետաքրքրող հարցի լուծման բաւականին մօտենալ: Միևնոյն ժամանակ Տոլստոյի հակասութիւնները նրանցից մէկին անսովոր չափով հիացնում են, իսկ միւսին նոյն չափով զայրացնում: «Կոմս Լ. Տոլստոյի վերջին երկերը» վերնագրով փայլուն էտիւդի մէջ, Գրոմեկան Կոմսի տաղանդն ու խելքը այսպէս է բնորոշում: «Կոմս Լ. Տոլստոյի բանաստեղծութիւնը, նրա գաղափարներն ու սրտաբուլի համակրանքները դուրս են եկել անմիջական զգացմունքի բնագաւառից: Բնաւորութեան կողմից Տոլստոյին նա համարում է այն մարդկանցից, որոնց նմուշն է «Աննա Կարենինա» վէպի հերոս Լևինը: «Լևինը, ասում է նա, այն հակասական բնոյթների նմուշն է, որոնց զգացմունքի և ոգեկան նրբազգացութեան բնագաւառը համեմատած նրանց տեսական մտածողութեան հետ՝ չափազանց գերակշռող է և սրանք, այդ պատճառով, ապրում են ոչ այնքան զատողութեամբ, որքան անմիջական զգացմունքով: Այդ անմիջական զգացմունքի ամբողջականութիւնը խորտակել է ռեֆլէկսիան, որը մշակել է ժամանակակից դատողական կրթութիւնը, մի կրթութիւն, որ անհամեմատ նեղ ու կոպիտ է, քան այդ մարդկանց լայն ու նուրբ ոգեկան-գեղարւեստական բնազդը: Այդ պատճառով էլ նրանք ջղաճին են, անտաշ, նուրբ ինքնասիրութեան տէր, որովհետև շարունակ զբաղւած են իրանց ներքին ոգու երկպառակութիւնով: Իրանց թուլութիւնն իմանալով՝ շարունակ վախենում են վիրաւորելուց, շարունակ աշխատում են դուրս գալ այն հակառակութիւնից, որ կայ իրանց անմիջական զգացմունքի հարստութեան և վերացական գիտակցութեան աղքատութեան միջև. և նրանք կը հանգըտանան միայն այն ժամանակ, երբ երկար կասկածներից, չարչարանքից և հիւանդութիւններից յետոյ, վերջապէս, կ'ազատեն իրանց այդպէս խիստ ճնշող մտածողութիւնից, աւելի ևս լայն ու խոր կը զարգացնեն իրանց անմիջական զգացմունքի բնագաւառը, կը տան նրան ըստ սկզբունքի առաջին տեղը և վերջապէս հաշտեցնելով նրան տեսական գիտակցութեան հետ, արգասաւորապէս կ'ողջեն յէպի արտաքին գործունէութիւն: Ուստի նրանց կեանքի պատմութիւնը այն օրհասական կուլի պատմութիւնն է, որ մղւում է ոգու ներդաշնակութիւն ձեռք բերելու համար, ներդաշնակութիւն, որ ձեռք է բերւում զարգացնելով և հաշտեցնելով այդ մարդկանց բնա-

տրութեան այն սկզբունքները, որոնք առաջ չէին հաշուում:

Այս բնորոշումը իսկ-որ Տոլստոյի ամենալաւ բնորոշումն է, որի հետ կատարելապէս համաձայն ենք: Ինչպէս Գրոմեկան, այնպէս էլ մենք ընդունում ենք, որ Լեւինին, իրան Տոլստոյին, Ագաֆիա Միխայլովնային, անասնապան Նիկոլային և քեռի Ֆոկոմիչին կարելի է նոյն փիլիսոփայական դպրոցի հետեոյ համարել այն հիման վրայ, որ բոլորն էլ, բանաստեղծ Ֆետի ասած՝ մոռածում են սրտի դատողութեամբ և իրանց հաւատին հասնում են եռ թէ տրամաբանօրէն մակածական եղանակով՝ այլ անմիջական զգացմունքի, ներքին անձնական փորձի միջոցով: Բայց հէնց այդ պատճառով մենք համաձայն չենք Գրոմեկայի ասածների հետ, երբ ուզում է հաւատացնել, թէ Տոլստոյի բանաստեղծական և փիլիսոփայական երկերը ոգու պատմութեան նոր վայրկեան են արտայայտում, որ նրա քարոզը կեանքի վրայ անմիջական հայեացք ունենալու մասին արտայայտութիւն է այն կիսմայ և դեռ ևս թաքնւած զժգոհութեան, որ ինքը ժամանակաշրջանը ունի իր դատողական աշխարհայեացքից. և որ եթէ Կոմս Տոլստոյի ամբողջական ուղղութիւնը կարելի է բնորոշել յետաշարժական անուն տալով նրան (սէսկցիա), այդ կարելի է ասել ոչ այն մտքով, թէ նա ետ է գնում, այլ՝ որ նա ձգտում է ազդել թէև հին, բայց իրաւացի և ճշմարիտ, սկզբունքներով:

Մեր ժամանակը այնպիսի ժամանակ է, երբ իսկապէս տաժանելի կերպով կրօն են փնտռում և սարսափելի կերպով ծարաւի են նրան: Բայց այդ կրօնին խորթ չափտի լինի գիտութիւնն ու մտքի քննադատութիւնը: Ընդհակառակն, նա պարտաւոր է առաջնորդել գիտական քննադատական մտքի բոլոր եզրափակութիւններով և, մեր գիտակցութեան մէջ միացնելով գործնական մոռածութիւնը տեսականի հետ, ուղղել մեր գործառնութիւնները յայտնի, խիստ որոշւած հոսանքով. իսկ այդ այն ժամանակ կարող է լինել, երբ այդ կրօնը զղացւած է: Այս պահանջը լաւ է գիտակցել Լիւչիսը, որը իր «Վեանքի և ոգու» մասին գրքում ասում է. «Ընդհանրապէս կրօնը կը շարունակի առաջնորդել մարդկութեան զարգացումը և նա պիտի իր ժամանակակից ընթացիկ մտքի արտայայտութիւնը լինի, որքան այդ միտքը ընդմիշտ բարդեղ փորձի հետ կը լացնա-

նայ» (հ. I): Հէնց այն պատճառով, որ Տոլստոյը օրգանապէս օտար է դիտական քննադատական մտքին, նրա կրօնը անկասկածելի յառաջադիմական տենդենցիաների հետ վերակենդանացնում է նաև իր ժամանակի ու անցած դարերի յետամնաց տենդենցիաները: Տոլստոյի ուսմունքի այս երկուական բնաւորութիւնը գերազանց կերպով մշակել է նրա երկրորդ խոշոր քննադատը՝ Ն. Միխայլովսկին¹⁾:

«Տոլստոյի աջն ու ձախը» վերնագրով յօդաձևներում Ն. Միխայլովսկին աջ» անւանում է Կոմսի յառաջադիմական տենդենցիաները, իսկ ձախ»՝ յետաշարժականները. միևնոյն ժամանակ Տոլստոյի աջը» չգիտէ թէ ինչ է անում նրա ձախը», և ընդհակառակը: Տոլստոյի գործունէութեան այս երկու կողմերի իրար դէմ մղած կռիւն Միխայլովսկին հետևել է նրա բոլոր խոշոր երկերի մէջ: Այդ երեւոյթի բացատրութեան համար նա առաջարկում է հետևեալ ենթադրութիւնը. «դիտողութիւնները, զուտ անսական կշռադատումները և խղճի ու պատասխանատուութեան զգացմունքը նրան հասցրին այն եզրակացութեան, որ քաղաքակրթւած մարդը պարտաւոր է գործել, այն էլ՝ յայտնի ուղղութեամբ: Այս եզրակացութիւնից է բղխում Տոլստոյի ամբողջ աջը»՝ նրա մտքի համարձակութիւնը, ձգտումների ազնւութիւնը, գործունէութեան եռանդը: Բայց այդ թելը ամեն րոպէ սպառնում է կտրուել քաղաքակրթ մարդու անպէտքութեան մասին մտածելիս. այժմ է հէնց ինքը՝ Կոմս Տոլստոյը ձգտում է դէպի տիկիւնների բուրժուարների աշխարհը: Միտքը զանգիտում է, եռանդը թուլանում, և բոլոր յոյսը դրւում է ինչ որ անորոշ նպատակադրմար սկզբունքի վրայ, որը առանց մեզ և հակառակ մեզ ամեն բան իր զիտցածի նման կարգի կը բերի»: Ինչ կ'ուզի թող ասի Տոլստոյը, ինչ տեսակ բլուզ ասես թող հագնի, բայց նա չի Քրիստոս մոլորութիւն անող» կալւածատէր է:

Տոլստոյի հոգեկան դրամայի պատճառները նոյնն են, ինչ որ այն տիպարի մարդկանց, որոնց Միխայլովսկին անւանում է «ապաշ-

1) Յայտնի հրապարակախօս-ընկերաբան-քննադատ, որ ուսուլատագոյն մտքի ներկայացուցիչներից խոշորն է ներկայումս:

2) «Խոստովանող ազնւականներ» Միխայլովսկին անւանում է այն ազնւականներին, որոնք զգում էին թէ իրանց դրութեամբ՝ մտալին, բա-

խարող ազնականներ» ²⁾ (кающиеся дворяне): «Տոլստոյի աջն ու ձախը» յօդաձևերը տպւել են 1875—85 թւականների ընթացքում: 1892 թ., երբ Տոլստոյի կենսագրութեան համար շատ նոր նիւթ էր հաւաքւել, Միխայլովսկին յայտնեց, որ «ապաշխարող ազնականի» դրաման չի կարողանում բացատրել Կոմսի բոլոր ինքնաբացասումները (самоотрицанія) և որ Տոլստոյի մէջ այդ դրաման արդէն վերջացել է: Այժմ արդէն նա յայտնում է, որ լատինական խօսքը՝ *թէ sic volo, sic jubeo, sit pro ratione voluntas* կարելի է համարել Կոմս Տոլստոյի կեանքի և գործունէութեան նշանաբանը (Русск. Мысль, 1892, I, II, III): Համաձայնելով Միխայլովսկու եղբայրակումների հետ, ես միայն չեմ ընդունում գիտակցականութեան տարրը, որ ենթադրել է սալիս այդ նշանաբանը. ես ասում եմ, որ Տոլստոյը ուղղակի տրամադրութեան ստորուկ է, լինի այդ տրամադրութիւնը անձնական թէ հասարակական. այդ էլ զլխաւորապէս այն պատճառով, որ նա միշտ մտածում է ւարտի դատողութեամբ: Այդ մտքի ապացուցելուն է նւիրւած մեր ամբողջ յօդաձը. իսկ առ այժմ ես աւելորդ չեմ համարում կանգ առնել այն անալոգիայի վրայ, որ Միխայլովսկին զնում է Գոգոլի, ¹⁾ Դոստոևսկու ²⁾ և Տոլստոյի միջև:

«Յաճախ, ասում է նա, կարելի է լսել այն միտքը, թէ՛ տեսէք, ինչպէս միեւնոյն վախճանն են ունենում ուռւս մեծ գրողները՝ Գոգոլը, Դոստոևսկին, Տոլստոյը: Այդ ասում են երբեմն ցաւակցաբար, երբեմն ինչ-որ տարօրինակ հանդիսաւոր եղանակով, իսկ երբեմն էլ օբեկտիւ կերպով՝ այսինքն կարծես թէ մատնացոյց են լինում մի անկասկածելի իրողութեան վրայ: Մինչդեռ այն ընդհա-

րուական, նիւթական՝ պարտական են այն ժողովուրդին, որի աշխատանքն են կերել, և գիտակցելով այդ՝ տպաշխարում էին իրանց հաւերի մեղքերը ժողովուրդի առաջ և ուղում էին հատուցանել «մոլեխիկին» դաւաւոր պարտքը, աշխատելով նրա օգտին:

¹⁾ Գոգոլը այն գրողն է, որ ուռւս վէպը վերջնականապէս դրաւիրական ճանապարհի վրայ:

²⁾ Դոստոևսկի-նշանաւոր վիպասան-հոգեբան, որի գործող անձերը մեծագոյն մասը կէս հիւանդ մարդիկ են: Նրա տաղանդը Միխայլովսկին կնքում է «խիստ» անուշով:

նուրը, որ կայ այդ երեք գրողների մէջ, իսկապէս արժանի է ուշադրութեան: Թէ Գոգոլը, թէ Դոստոևսկին և թէ Տոլստոյը, հասնելով իրանց գեղարւեստական փառքի դազաթնակէտին, վարդապետելու կարիք զգացին: Սակայն նրանց ուսմունքների բովանդակութիւնը նոյնն է՝ միայն ամենաընդհանուր մտքով: Բոլորն էլ քարոզում են սէր դէպի ընկերը — բայց ձի չի քարոզում այդ նոյնը: Երեքն էլ հիմնուած են քրիստոնէութեան վրայ, բայց նրանցից իւրաքանչիւրը որքան կամայական ձևով և անչափ իրարից տարբեր է մեկնում այդ ուսմունքը: (Այստեղ Միխայլովսկին ապացուցում է այդ միտքը): Յետոյ շարունակում է. «ես կարծում եմ, որ ծունր խոնարհելը (նշանաւոր մարդկանց առաջ) մեծ նշանակութիւն ունի այն տխուր վախճանի նկատմամբ, որին հասան Գոգոլը, Դոստոևսկին և Տոլստոյը. իսկ այդ վախճանը, ինչ ասել կ'ուզի, շատ տխուր է»:

Անալոգիաների վերջում Միխայլովսկին հասնում է հետեւեալ եզրափակումներին. «Տոլստոյը մօտ է Գոգոլին և Դոստոևսկուն ոչ թէ իբրև յայտնի դժբաղդների ներկայացուցիչ, այլ որպէս հոգեբանական տիպար, մի տիպար, որ հիւսւած է հեզութեան և հպարտութեան, մեծ երազների և չնչին իրականութեան, ամբողջ մարդկութեան առաջ բացւած տեսական ընդգրկումների և սեփական ինքնաբաւականութեան գործնական դատարկախօսութեան հակասութիւններից: Յետոյ՝ ընդհանուր է Գոգոլի, Դոստոևսկու և Տոլստոյի համար նրանց մեծ անունը, որը նրանց համար լսողներ և հեռուողներ է հաւաքում՝ անկախ նրանց քարոզների բնաւորութիւնից և բովանդակութիւնից»:

Եւ դիտմամբ այսքան երկար կանգ առայ այս երեք գրողների միջև եղած անալոգիայի վրայ, որովհետեւ ես այդտեղ նմանութեան շատ աւելի գծեր եմ տեսնում: Ամենից առաջ երեք գրողի համար էլ ընդհանուր է մտածելու ձևը. նրանց մտածութեան և կեանքի մէջ զգացմունքը ղեկավար դեր է կատարում, ուրիշ խօսքով՝ նրանք միշտ ապրել են «արտի դատողութեամբ»: Իսկ յայտնի է, որ աֆֆեկտով մտածելը իր զարգացման վերին աստիճանում միշտ վերջանում է կրօն ստեղծելով: (Տես. Знание, 1872 թ. Очерки систематических знаний. գլուխ «Не критическая мысль»):

Ուստի պահպանելով իրանց գործունէութեան առաջին կիսի մտածելու ձևը, երեք գրողներն ևս այն վախճանը պիտի ունենային, ինչ որ ունեցան: Հակառակը անհասկանալի կը լինէր: Ես ընդունում եմ նոյնպէս երեք գրողների կրօնի միջև եղած ահագին զանազանութիւնը: Նա նոյնքան մեծ է, որքան մեծ է այդ գրողների բարոյական պատկերի և մտային զարգացման զանազանութիւնը: Եւ այնու ամենայնիւ այդ գրողների զոկտրինների միջև ես մեծ նմանութիւն եմ տեսնում: Երեքն էլ անձնական ինքնակատարելագործութեան քարոզիչներ են, որոնք հանրակեցութեան ձևերին ոչ մի նշանակութիւն չեն տալիս: Այդ յատկութիւնը այս երեք գրողների Աքիլլէսեան գարշապարն է, որով նրանք ամբողջովին պարտական են Նիկողայոս կայսրի ժամանակաշրջանին, երբ յաղթանակում էր յետաշարժութիւնն ու ճորտատիրութիւնը: Այդ տեսակ ժամանակաշրջանները ընդունակ են ոչնչացնելու անձնական և հասարակական կեանքի մէջ եղած կապի գիտակցութիւնը և փարթամ հող են պատրաստում ամեն տեսակ անձնական բարոյախօսութեան սիստեմների ծաղկելու համար, — բարոյախօսութեան, որը, որպէս թէ, կապ չունի հանրակեցութեան որ և է ձևի հետ: Խրականում այդ տեսակ սիստեմները մեռնող հասարակական ձևերի վերակենդանացման միաստեմներ ունեն: Եւ ճիշտ որ, ինչպէս Գոգոլը, այնպէս էլ Դոստոևսկին ու Տոլստոյը, աւելի անգիտակցաբար քան թէ գիտակցաբար, երևում են որպէս ճորտատիրութեան գովաբաններ: Երեք գրողների բարոյականի վրայ էլ անսովոր խստութեան կնիք կաշ դրած. սիրոյ, անձնազոհութեան անուռով մէկը երգում է ծեծի, մտրակի և ճիւղտի հրապոյրները ¹⁾։ միւսը օրհներգ է երգում աննպատակ, խիստ տանջանքին. իսկ երրորդը գովաբանական երգեր է նւիրում ձրի մշակութեան և ստրկութեան հրապոյրներին:

Քանի մեր խօսքը Գոգոլի և Դոստոևսկու կրօնի ու բարոյականի մասին է՝ հազիւ թէ հակաճառողներ ունենանք: Բայց բանն ուրիշ կերպարանք է ստանում, երբ խօսքը հասնում է Տոլստոյին, որին իրաւացի կերպով համարում են զէմոկրատական, լեռնոլորդասիրական գրող:

¹⁾ Соч. Гоголя, „Переписка съ друзьями“:

Արդէն լսում եմ ընթերցողների զայրացած զոչերը՝ «ինչպէս, «*ռուս գրականութեան փառքն ու պարծանքը*», «*ռուս երկրի մեծ գրողը*», և յանկարծ... ճորտութեան գովաբան»?!... Հաւատացնում եմ ընթերցողին, որ ես նրանից պակաս չեմ սիրում ու յարգում Տոլստոյին և այնուամենայնիւ, կատարելապէս հիմնովին, ինչպէս յոյս ունեմ կը համոզւի ընթերցողը, նրան անւանում եմ ճորտութեան գովաբան: Ասեմք ես չեմ առաջինը որ այդ բանի վրայ մատնացոյց եմ լինում: 1884 թ. Ն. Միխայլովսկին քննելով Տոլստոյի մանր պատմածքները («Ильясь», «Вражье лѣпо, а божье крѣпо» և այլն) զարմացմամբ հարց է տալիս. ինչպէս կարող էր պատահել, որ Տոլստոյը, որին աւհասարակ համարում են դեմոկրատական, «*ժողովրդասիրական*» գրող, կարծես ժողովրդին քարոզում է ձրի մշակութեան (батрачество) և ստրկութեան հրապուրանքները: Անկասկած այդ նա ղիտմամբ չի քարոզում: Նա ուղղակի արհամարհում է կեանքն իր բոլոր բարդ ձևերով: Ռեալիստաբար հեղինակաւոր գրողը անպատասխան էլ թողեց այդ հարցը, չնայած որ, ըստ իս, Կոմսի գրական բնաւորութեան այդ գիծը Տոլստոյի գործունէութեան այն կողմի ծագման կէտն է, որին Միխայլովսկին այնպէս չաջող կերպով «*ձախ*» է անւանում: Տոլստոյ-ռամկավարի երկւորեակը ոչ միայն անուղղելի կալածատէր է, այլ և ճորտատէր:

«Անորոշ նպատակայարմար սկզբունքը, որը առանց մեզ և հակառակ մեզ ամեն ինչ ըստ իր հայեցողութեան կարգի կը դնի», ոչ այլ ոք է, քան ճորտատիրական անիրաւութեան Մոլոխը, որ իր տենդենցիաներով սնուցել է Տոլստոյ-բարինին ²⁾:

Ուստի և ուսուցչի առաջ ծունր ղնողները հիմք ունէին կատարելու այդ գործողութիւնը (գլուխ խոնարհելը) սկզբում Պոգոլի, յետոյ Դոստոևսկու և ապա՝ Տոլստոյի առաջ: Կայ և մի ուրիշ պատճառ, որ բացատրում է այդ պարոնների համակրանքների չաճախակի փոփոխութիւնը: Այդ այն անսովոր արագութիւնն է, որով *ռուս միջին մարդը* ինչով ասես լցւում է, կարծես նրա համար, որ միւս օրը զատարկի և լցւի մի նոր բանով: Ինչ թւում է, որ այս յատկութիւնն էլ ճորտատիրութիւնն է պատւաստել *ռուս հասարակու-*

²⁾ Բարին=баринъ=կալածատէր պարոն:

թեան վրայ. և, պէտք է խոստովանել, անձնական կամ հասարակական տրամադրութեան ենթարկելու կողմից, Տոլստոյը ոչոքից չեալի մնում: Այս դժւար չէ հաստատել. հարկաւոր է դէմ առ դէմ դնել այն ժամանակաշրջանները, որոնցով անցել է Տոլստոյը և այն փոփոխութիւնները, որ կրել են նրա հայեացքները: Սկսենք Նիկողայոս կայսրի ժամանակաշրջանից, որը ինչպէս Տոլստոյի, այնպէս էլ ռուս հասարակութեան վրայ սարսափելի հետքեր է թողել...

Ճնշւած ճորտերի ահագին ու անբարբառ մասսայի վրայ բարձրանում էր պետական մեխանիզմի հսկայական շէնքը, որ կազմւած էր բիւրոկրատիական երարքիայից և սոհմական աղնակահնութիւնից: Առաջիններին բաժին էր ընկել անլոյս խաւար, տէրերի համար անվերջ աշխատանք, և, որպէս վարձ այդ՝ աշխատանքի՝ մորակ ու ճիպոտ: Իսկ միւսներին բաժին էր ընկած ուրախ, ցովի և անգործ կեանք: Հասարակական աշխատանքի այդ տեսակ խիստ արտայայտւած բաժանման վրայ բարձրանում էր ճորտատիրութիւնը, որ կեանքի ընթացքի վրայ դրել էր իր կնիքը: Նա ոչ միայն անբարոյականացնում էր կառավարող դասակարգերն ու ժողովրդին, այլ և ստեղծեց մի պաշտամունք, որին երկուսն էլ երկրպագում էին: Այդ ազդեցութիւնը ուժեղացրեց Նիկողայոս կայսրի երկաթէ բազուկը, որը խիստ ճնշում էր թէ ազատ մտքի և թէ հասարակական գործունէութեան ամեն մի արտայայտութիւն: Նրա ժամանակ ամեն աստիճանաւոր պետական մեխանիզմի հլու զամն էր, որի համար շատ մեծ յանցանք էր համարւում մտքի քննադատութիւնը, համոզմունքը, խիղճն ու պատիւը: Ուղած ժամանակ միտքն ու սիրտը ինչով ասես լցնելը համարւում էր ամենամեծ արժանաւորութիւն: Դպրոցներում և կեանքի մէջ տիրող զինւորական կարգերը ստեղծեցին այդ տիպարին պատկանող բազմաթիւ մարդիկ: Տարօրինակ ռեզլամենտացիան ընդգրկել էր կեանքի բոլոր անկիւններն ու ամենեւին արգելք չէր հանդիսանում, որ միաժամանակ գոյութիւն ունենայ և՛ ամենամեծ անիշխանութիւն, որովհետև և ոստիկանական օրէնսդրական-դասատանական իշխանութիւնները իրապէս կենդրոնացած էին իշխանութեան ամեն մի ներկայացուցչի ձեռքում, մի հանգամանք, որ նրանցից իւրաքանչիւրի կամայականութիւնը օրէնք էր դարձնում: Բայց ինչքան էլ մեծ էր ճնշումը, ինչքան էլ պակասաւոր

էին աւանդում համալսարաններում և դպրոցներում գիտութիւնը, ինչքան էլ զօրեղ էին ուղեւորները, որոնք արգելում էին արեւմտեան-եւրոպայի ազդեցութեան մուտք գործելուն, ոչինչ չէր կարող այն ժամանակեայ լաւագոյն մարդկանց դէպի լոյսն ունեցած ձգտումը մեղցնել: Արեւմուտքի գաղափարները ստեղծեցին Բէլինսկու¹⁾ նշանաւոր շրջանը, ուր կենդրոնացաւ այն ամենը, ինչ մարդկային էր այդ մռայլ ժամանակաշրջանում: Գլխաւորապէս այստեղից էր հասարակութեան մէջ մտնում ճորտատիրութեան անարդար և ամարդի լինելու գիտակցութիւնը: Եթէ մի կողմից ժողովրդի շրջանում ճորտատիրութիւնը ստեղծեց, Միխայլովսկու խօսքով ասած՝ ПОДВИЖНИКЪ-ներ, որոնք ճորտատիրութեան անիրաւութիւնը դարձրին մի կուռք, միւս կողմից նա ստեղծեց «ազատականներ» (ВОЛНИЦА), որոնց թիւը տարեցտարի մեծանում էր, «ազատականներ», որոնք կալաճատէրերին կողոպտելով և սպանելով՝ աղմկալի կերպով բողոքում էին յանուն մարդու անպատուած արժանաւորութեան: Ճորտատիրութեան աննորմալ լինելու գիտակցութիւնը մտել էր և կառավարչական շրջանները. և Նիկոլայուս I կայսրը մեռնելիս կտակեց որդուն, որ նա գիւղացիներին ճորտութիւնից ազատի:

Ահա այսպիսի ժամանակ է ծնւել ու ոգեպէս ամրագնդւել Տոլստոյը հարուստ կալաճատիրական միջավայրում, շրջապատւած ճորտ աղետահաններով և «մամկաններով»: «Մանկութիւնը», «Պատանեկութիւնը», «Ջահիլութիւնը», «Կալաճատիրոջ առաւօտը», «Վազակներ»-ն ու պատերազմական գրեթէները տալիս են Տոլստոյի այդ ժամանակեայ ոգեկան զարգացման հիանալի պատկերը: Եւգ. Սոլովեովը Տոլստոյի կենսագրութեան մէջ առաջ է բերում այդ զարգացումը մանրամասնաբար: Ես կանգ կ'առնեմ միայն այդ ժամանակներն ստացած այն տպաւորութիւնների վրայ, որոնք խորին հետք են թողել նրա հոգու մէջ:

Նստալիա Սաւիչնա՛ն և երանելի Գրիշա՛ն նրա մանկութեան ամենափալլուն, լուսաւոր և անջնջելի տպաւորութիւններն են կազ-

¹⁾ Բէլինսկի, ուսն նշանաւոր քննադատ, որ ահագին դեր է խաղացել ուսու գրականութեան մէջ:

մում: Ժողովրդի միջից դուրս եկած այդ «սովորած» ինքները, որոնք անհետացրել են իրանց մէջ մարդու ամենատարրական պահանջները, մինչև այսօր Տոլստոյին թուում են անհասանելի իդէալներ, որոնք մարմնացնում են իրանց մէջ սէր-անձնագոհութիւնը: Մինչև այսօր Տոլստոյը նրանց համարում է «ճշմարիտ», «մեծ» քրիստոնէաներ, որոնց պիտի նմանի ամբողջ մարդկութիւնը, որ դաջ աշխարհիս վրայ խաղաղութիւն և ի մարդիկ յաճութիւն: Իր պատանկութեան տարիները Տոլստոյն անց է կացրել կազանում: Նրա այդ ժամանակաւ տպագրութիւնները համալսարանի և բարձր շրջանի կեանքից են, որին պատկանում էր նրա հարուստ տառը՝ Իւշկովան:

Ազմկոտ, ուրախ ու ազատ էր անցնում կոմսի շրջանի կեանքը: Ջահիլութեան ամբողջ թափով նա ընկաւ իր շրջանի ուրախութիւնների և թեթեամիտ արկածների յետևից, որոնք նրան դարձրին բուն «свѣтскій хлыщ»: Նա մարդկանց բաժանում էր comme il faut և ոչ comme il faut-ների, նայած նրանց հազուադէպ կարին, Ֆրանսերէն խօսքեր արտասանելուն, եղունգների մաքրութեան և այլն: Բայց այդ կեանքի դատարկութիւնը, որ ակնյայտնի էր և ինքն ըստ ինքեան, աւելի ևս յայտնի էր դառնում այն ժամանակաւ գրականութեան և համալսարանական կեանքի ազդեցութեան տակ: Եթէ մի կողմից կազանի այն ժամանակաւ ուսուցչապետների մեծ մասի անգոյն, յաճախ անմիտ, իսկ երբեմն էլ մասխարայ դասախօսութիւնները Տոլստոյի մէջ նրա ամբողջ կեանքում շարունակող անհաշտ վերաբերմունքը առաջ բերին դէպի դիտութիւնը, միւս կողմից, այնպիսի ուսուցչապետի դասախօսութիւնները, ինչպիսին էր ուսուցչ. Մէյերը և մթնոլորտը բռնող այն ժամանակաւ ազատական գաղափարները զարթեցրին կոմսի խիղճը և իր դրութեան համար պատասխանատու լինելու գիտակցութիւնը: Այստեղից առաջ եկան «ապաշխարող ազնւականի» դրամայի պատճառները, այն դրամայի, որ Տոլստոյը կրեց այնպէս երկար ժամանակ ու շարշարանքով: Այդ դրամայի ազդեցութեան տակ՝ Տոլստոյը համալսարանը թողնում է կիսատ, և հաստատում է հողի վրայ, որ, անձամբ կառավարելով կալածքը, բարձրացնի իր զիւղացիների բարեկեցութիւնն ու բարոյականութիւնը: Բայց այս գրաւումը երկար չի տևում: Հիասթափուած իր զործունէութիւնից, կոմսը զինուորական ծառայու-

Թեան է գնում և շուտով, տարած զինւորական, հայրենասիրական հօր զգացմունքով, ներգործական մասնակցութիւն է ունենում Ղրիմի պատերազմում, որից յետոյ նա մեզ երևում է որպէս Սևաստոպոլի հերոս, բազմաթիւ բարձր զեղարեւեստական զրաճների նշանաւոր ստեղծող, անձնական կատարելագործութեան և զուտ զեղարեւեստի պաշտամունքի քարոզիչ, ճորտատիրութեան գովաբան (Թէև դեռ սաղմում), նաև բնուրոյն «ապաշխարող ազնւական»:

Փոխւում է ժամանակը:

Սևաստոպոլի թնդանութների զորդոցի հետ ընկնում է ճորտատիրական անիրաւութեան Մոլոխը, որ Բոդնի միլիօնաւոր ճնշած ճորտերին ազատ շունչ քաշել: Ընդհանուր է դառնում զայրոյթը ճորտատիրութեան դէմ և հաւատը դէպի ժողովուրդի հօր ուժերն ու դէպի մոքի քննադատութեան և գիտութեան բուժիչ դերը: Զարթնում է ռուս հասարակութեան դարերով քնած խիղճը և ամեն մէկը ձգտում է իր լուծան գցել ճորտերի ազատութեան մեծ գործի գանձանակում:

Ռամկավարութեան կատաղի ալիքը, որ վերից վար բռնել էր ռուս հասարակութիւնը, գլխաւորապէս վաթսուական, բայց նաև եօթնասնական թւականներին, Տոլստոյին էլ գրաւեց: Նա գրում է «Պոլիկուշկա՛ն» և «Խոլստոմէր»-ը, որ այն ժամանակաջ համար մի ուժեղ բողոք էր «խաւար թագաւորութեան»¹⁾ սամոդոլների և ձրիակերների դէմ: Դառնում է հաշտարար միջնորդ, բաց է անում ուսումնարաններ, ուր ինքն է դաս տալիս գիւղացի մանուկներին, քարոզում է, որ առջի համար փնասակար ու անօգուտ գիտութիւն չկայ (Հեղինակ. հատ IV, 155), գրում է նշանաւոր հրապարակօսական յօդաւածներ, ուր ժողովրդի շահերի տեսակէտից խիստ քննութեան է ենթարկում եւրոպական քաղաքակրթութիւնը: Մի խօսքով մենք նրան տեսնում ենք որպէս տիպական, գիտակցական ռամկավար: Եօթնասնական թւականներին ռուս հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների հետ նրա մէջ էլ ուժեղանում է «ապաշխարող ազնւականի» դրաման:

¹⁾ Ռուս քննադատ Դորրոլիւբովի խօսքն է, որով նա կնքում է նշանաւոր Թատերադիր Օտտովսկու երկերում ներկայացրած կեանքը:

Վրայ են հասնում ուրիշ օրեր:

Կարծես մոգական գաւազանի նշանով ռամկավարական հոսանքը չետ նահանջեց: Վեր բարձրացաւ անցած տասնամեակների փրփրոտ ալիքներից մնացած տիղմը, տականքը: Մթնոլորտը վարակեց ճորտատիրական անիրաւութեան գարշահոտ մնացորդներով: Նկարի ընդհանուր, մռայլ ֆոնը կազմում էր մտրակի և ճիւղտի պաշտպանների ահագին ու ներդաշնակ խումբը, որ ճորտերի ազատութիւնը պայքարի թիւերի մացութիւն» էր անւանում: Առաջնաբեմի վրայ դուրս սողացին բաւականին հասկաւոր «որդիները»¹⁾ և սկսեցին թոթովել հին, բայց նրանց կարծիքով՝ ընոր խօսքեր» իրականութեան վերականգնման, անմիտում գեղարեւոյի և հայրերից» հրաժարելու մասին, բայց որ գլխաւորն է, դէպի իրականութիւնը զործնական վերաբերմունք ունենալու մասին, մի վերաբերմունք, որ պիտի ձնշաւ չլինի վերին կարգի գաղափարներով: Յաւաջ եկաւ յայտնի դարաւոր պառակտումը «գաղափարականների» և «զործնականների» միջև, «գաղափարականների», որոնք չեն կարողանում չեն և ցանկանում յարմարել նոր հանգամանքներին և «զործնականների», որոնց համար ինչտեղ ասես՝ շատ լաւ է:

Ի՞նչ դիրք էր ընտրել այդ ժամանակ Տոլստոյն իր համար: Բանն այն է, որ Կոմսի բնուրոյն անհատականութիւնը ինչի մօտենում էր՝ վրան իւրաքանչեւ կնիք էր դնում: Այսպէս, օրինակ, վաթսուներեակն և եօթանասնական թւականների արմատականներն ու ժողովրդասէրները չէին կարող ընդունել այն բոլորը ինչ քարոզում էր Տոլստոյը: Թէև զրաւած ռամկավարական հոսանքով՝ բայց այնուամենայնիւ նա բոլորովին միացնակ էր: Այդպիսի դրութեան մէջ էր նաև ութսուներեակն թւականներին, երբ նրա հուշակը, որպէս մտածողի՝ հասել էր իր գաղաթնակէտին:

Կոմսի փայլուն և զօրեղ անհատականութիւնը, նրա ռամկավարական միտումները, բոլորովին իրաւացի կերպով ձեռք բերած մեծ արեւստագէտի անունը, անգոյն ութսուներեակն թւականներին

¹⁾ «Հայրեր» և «որդիներ» խօսքերը ռուս գրականութեան մէջ դուրսածական են դարձել Ի. Տուրգենևի չալանի «Հայրեր և որդիներ» վէպից չեսույ, ուր դուրս է բերած հին ու նոր սերունդի ընդհարումը:

չէին կարող դեռ Հաստատուած, ճշմարտութիւն փնտռող ուռա մտքի ուշադրութիւնը չբեւեռել իրանց վրայ:

Նրա շուրջն սկսում են խմբւել հետեւողներ, որոնք իրանք իրանց անւանում են առլստոյական: Եթէ առաջ կեանքն էր տա- նում նրան, այժմ, ընդհակառակը, ինքն է տոն տալիս կեանքին: Սա- կայն չնայած դրան, չնայած Տոլստոյի ուսմունքի բնութրոյնութեան, բայց և այնպէս այդ ուսմունքը խոշոր չափով, և մինչև անգամ ամ- բողջովին նոր հովերի արգասիք է. «ութսունականների» («ВОСЬМИ- ДЕСЯТНИКИ») նման նա հանդիսապէս այրում էր իր ետեւը թողած նաւերը և սկսում իր առաջւայ խօսքերն ասել, լիովին հաւատա- ցած՝ որ մի նոր բան է ասում: Բացի դրանից, անձնական բարոյա- խօսութեան սխտեմը և ճորտատիրութեան զաղափարացումը (դեռ սաղմում), որ առաջին անգամ նա արտայայտել էր յիսունական թւականներին, այժմ աւելի փարթամ են ծաղկում: Նա ստեղծում է կրօն ու բարոյախօսութիւն, որոնք, լաւ վերլուծելիս, չնայած դրսի սիրուն կեղևին, ոչ այլ ինչ են երևում, քան ճորտատիրութեան ապր- թէրգ: Տոլստոյի ուսմունքը առաւելապէս գործնական բնաւորութիւն ունի. նրա բարոյախօսութիւնը նրա ուսմունքի ծուծն է: Իսկ ամեն ուսմունքի գործադրական մասը բարոյախօսութիւնն է: Բացի այդ, նա ամեն գիտութիւն չի բացասում. խրախուսելով գործադրական գիտելիքների տարածելը, առանձնապէս այն ճիւղերի՝ որոնց ժո- ղովրդին տւած անմիջական օգուտը նա շատ պարզ է գիտակցում, Տոլստոյը բացասում է «գիտական գիտութիւնը», որի հաշւում նա դնում է ողջ զուտ գիտութիւնը և այն գործադրական գիտելիք- ները, որոնցից մեր օրերում օգուտ կարող է ստանալ միայն կա- պիտալիստը, որ, իսկապէս ասած, նշանակում է, թէ Տոլստոյը բա- ցասում է գիտութիւնը, այդ խօսքի ընդունւած մոքով: Գիտական գիտութեան կամ «սուտ» գիտութեան սեղ, նա առաջարկում է Կոնֆու- ցիոսի, Բուդդայի, Լաո-ցիի և արեւելեան ուրիշ իմաստունների ճշմա- րիտ գիտութիւնը: Այդպիսի ճշմարիտ գիտութեան հիմունքները նրա կարծիքով ոչ թէ խելքով են ճանաչւում, այլ զգացմունքով: Յետոյ՝ նա հաստատուում է հողի վրայ, որ գործնականում իրացնի բնական ձեւքով կոչող ուսմունքը: Փոշի դարձնելով զուտ գեղարեստի պաշ- տամունքը, որպէս դատարկամիտ մարդկանց դատարկ զբաղմունք և

տալով ճշմարիտ գեղարւեստի նշանակութեան գերազանց բնորոշումը, Տոլստոյն այնուամենայնիւ չափազանց անձուկ դարձրեց օգտակար գեղարւեստի բնագաւառը, օգտակար համարելով միայն գեղարւեստի այն երկերը, որոնք հասկանալի և մատչելի են ժողովրդին: Իր բոլոր քարոզներով Տոլստոյն երևում է որպէս իր տեսակի միակ «ժողովրդասէրը», որ կոչում է անում դէպի բնական տնտեսութեան և նրա հետ միաժամանակ գոյութիւն ունեցող ստրկութեան հրապոյրները: Ի հարկէ նա այդ գիտակցաբար չի անում, քայց որ անում է, կը տեսնենք շուտով:

Քիտուութեան բացասումը, բնական տնտեսութեան և ստրկութեան գաղափարացումը, դէպի Կոմֆուցիոսի և Բուդդայի ճշմարիտ գիտութեանը դառնալու կոչերը, Տոլստոյին՝ որպէս «ժողովրդասիրի»՝ դարձնում են զգեստաւորւած չինացի: Մի նմանութիւն էլ կայ Տոլստոյի և «ութսունականների» միջև—այդ մտածելու եղանակների նմանութիւնն է:

Երբ «ութսունականները» քարոզում էին իրականութեան վերակենդանացումն և զործնականութիւն, նրանք սկզբունք էին դարձնում իրանց օպոյորտունիզմը (սլաոնհականութիւն), իրանց բնաւորութեան գծերը: Նոյն բանն անում է և Տոլստոյը ստեղծելով իր կրօնը, իր բարոյախօսութիւնը: Նրա ուսմունքը նոյնքան նման է Քրիստոսի ուսմունքին, որքան Քրիստոսի լուսաւոր և իդէալական մաքրութիւն ունեցող հոգին նման է Տոլստոյի հասարակական շերտաւորումներով մթադնած հոգուն, որովհետեւ Քրիստոսի կրօնը հալածւածների և նւաստների պաշտպանն է: Իսկ Տոլստոյի կրօնը ոչ ոքի այնքան յարմար ու շահաւէտ չէ, որքան հարուստ, նրա շրջանի մարդկանց համար:

Քայց նման կողմեր ցոյց տալով ես ի հարկէ չեմ նոյնացնում ութսունական թւականների բազմասեռ հասարակական տարրերը. մինչդեռ Տոլստոյն ու «տոլստոյականները» իրանց իդէալներին կրօնականապէս անձնատուր եղած մարդիկ են, «ութսունականները», ընդհակառակն, քարոզում են ազատութիւն ամեն տեսակ իդէալներից, որոնք, նրանց ասելով, խանդարում են զործառնութիւնների անգատութեան:

Վրայ հասաւ 1891—92 թթ. սովը, որ յօդս ցնդեց ամեն

պատրանք «աշխուժացնող տպաւորութիւններին» մասին: Այդ ժամանակից սկսած կարծես հասարակական տրամադրութեան մէջ նկատուում է մի բեկումն: Սովը ահագին տպաւորութիւն է անում հասարակութեան վրայ: Նկատուում է հասարակական ոգու արթնացում: «Մոռացւած խօսքերը» կարծես նորից ասպարէզ են գալիս: Խնտելիզմի տասնեակներով օգնութեան է գնում քաղցած ու ցաւատանջ ժողովրդին:

Երբ հասակ սովի առաջին լուրերը, Տոլստօյն սկսեց տեսարանել այն նիւթի մասին, թէ ժողովրդին պիտի ոչ թէ փողով, այլ սիրով օգնել: Բայց հասարակական տրամադրութիւնը նրան գրաւեց և նա եռանդով սկսեց դրամ հաւաքել ու սովածների համար ճաշարաններ բանալ: Սովի տարիներում բարդւած անձնական և համակրական փորձը նրան հարկադրեց մի փիլիսոփայական – հրապարակախօսական երկ գրել, որը, արտասահմանեան մամուլի ընդհանուր կարծիքով, ամենախիստը, ամենաուժեղն ու ամենաաչքի ընկնողն է նրա այն երկերից, որոնք քննադատում են մեր ժամանակակից կեանքի հիմունքները:

Այսպիսով տեսնում ենք, որ տրամադրութեան ենթարկւելու ընդունակութիւնը Կոմսի առանձնաշատկութիւնն է: Բայց այս գործում արդեօք միայն Տոլստօյն է մեղաւոր: Դժբախտաբար այստեղ մեղաւոր է ուս հասարակութեան մեծ մասը: Միայն այս կայ՝ որ ուսս պրականութեան հսկայի անձնաւորութեան մէջ ընդհանուր իրողութիւնն աւելի պարզ է արտայայտուել: Շատ արդարացի է այն, որ ուս հասարակութեան զարգացումը տասնամեակներով են չափում, տասնամեակներ, որոնք բնորոշում են հասարակական տրամադրութեան բարձրանալն ու ցածրանալը, և դրա հետ այն կուռքերի փոփոխւելը, որոնց երկրպագում են: Այդ երեւոյթն այն աստիճան սովորական է դարձել, որ ահամաջ հարց ես տալիս, չլինի թէ սա մի օրէնք է, մի օրէնք, չէ, թէկուզ հէնց այն պատճառով որ նոյն հասարակութիւնը միշտ տւել է մի փոքրիկ խումբ հոգով արի մարդիկ, որոնց մէնք ուրիշ անուն չենք կարող տալ, քան «գաղափարականներ»: Առանց նայելու ամեն տեսակ խոչնդոտների, անփոփոխ հաստատամտութեամբ, մինչև դերեղման տարել են նրանք այն դրո-

շակը, որով կեանք են մտել: Նրանց համոզմունքները ոչ թէ անձ-
նական կամ հասարակական տրամադրութիւնն է փոխել, այլ ներ-
գործող քննադատական մտքի յետագայ զարգացումը: Ինչի՞ մէջն է
այս մարդկանց ոյժը: Նրանց ոյժը մի կրօնի մէջ է, որին յառա-
ջել է մտքի քննադատութիւնը: Միայն այդ տեսակ կրօնի շնոր-
հիւ է, որ նրանք արամադրութեան ստրուկներ չեն եղել... Այլ
ճանապարհով էր տանում Տոլստոյը իր կրօնի ստեղծելը: Թէ ի՞նչ
ճանապարհով — կը տեսնենք:

(Շարունակելի)

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՇԱՀՍՁԻՉ: ԵՐ.—Մ'իքայէլ Ղազարեան Նալբանդեանց, կենսագրութիւն (Արտատպած Վերականական ու պատմական հանդիսից):
Մոսկւա. 1897. 161 էջ:

Պր. Շահաղիզ պատմում է մեզ թէ որտեղ է ծնւել Նալբանդեանց, ինչ կրթութիւն է ստացել, ինչպիսի հասարակական կամ գրականական գործունէութիւն է ունեցել, ինչպիսի տարաբաղդ դէպքերի է հանդիպել իւր կեանքում, ինչպիսի թըշառութեան մէջ է մնուել և վերջապէս թէ ինչ սկզբունքներ է դաւանելու եղել: Իւր աշխատութիւնը կազմելուց ձեռքի տակ է ունեցել մի շարք գրականական աղբիւրներ, և միւս կողմից օգտուել է մասնաւոր մարդկանց բերանացի հաղորդած տեղեկութիւններին: Իւրաքանչիւր էջից երևում է, որ պ. Շահաղիզ աշխատանք չէ խնայել, ինչոր ինքը կարող էր ասել, իրօք էլ ասել է: Մէջ բերած տեղեկութիւնները ճիշտ են կամ գոնեա արժանահաւատ: Նալբանդեանցի աշխարհայեցողութիւնը, նորա, պաւանած սկզբունքները բաւականաչափ ուղիղ է բմբռնում կենսագրողը: Տեղ-տեղ նոյն իսկ պաշտպան է հանդիսանում նորան զանա-

զան չարախօսների և չարամիտների դէմ: Որպէս կենսագրող, պարոն Շահաղիզը հասկանում է աչն սկզբունքը, թէ անհատի կեանքը կախած է շրջապատող հասարակութեան կեանքից, թէ առաջինի էութիւնը, քաղերը, նոյն իսկ սկզբունքները շատ թէ քիչ պայմանաւորում են վերջինի մէջ տեղի ունեցող հոսանքներով: Աւստի նա աչքաթող չէ անում Նալբանդեանի շրջապատի նկարագրութիւնը օրինակ Նոր-Նախիջևանում և Մոսկւայում: Այդ բոլորը պատմած է աչնպիսի մի լեզուով և ոճով, որը թէև չէ փալում իւր ներբութեամբ, իւր ձկունութեամբ, չէ հնչեցնում շարքերի միջից լարերի ձալնը, բայց որը աչնուամենայնիւ հասկանալի է: Աչնպէս որ հալ ընթերցողը ազատ կերպով կը կարդալ պ. Շահաղիզի աշխատութիւնը, բազմաթիւ օգտակար տպաւորութիւններ կը ստանալ, և իւր վճարած մի քանի աբասին կորած չի համարիլ:

Սակաչն պ. Շահաղիզի գրածքը

դեռ շատ հեռու է Միքայէլ Նալբանդեանցի «կենսագրութիւնը» լինելուց, դեռ պէտք է չուսալ, որ վերջապէս կը գտնուին մարդիկ, որոնք կը գրեն շնաշխարհիկ գործիչի արժանաւոր կենսագրութիւնը, որովհետեւ պիտի Շահաղիի աշխատութիւնը նիւթերի ժողովածու է, լրագրական մի խօսքով է, ուրիշ ոչինչ: Սորա մէջ մենք չենք տեսնում «օրօրացում կապկապած» «անբաւական մանուկին» իւր «անզօր լինելը պարզելուց»: Մենք չենք տեսնում թէ ինչպէս «աստղը թռաւ, յետքից պալածառ գիծ թողեց, աստղիկն ընկաւ երկնքիցը, միւս անգամ ալ չերեց»։ Իսկ եթէ աչք բոլորը չենք տեսնում, կը նշանակէ մեր առջև դրած չէ Կոմս-Էմանուէլի կենսագրութիւնը:

«Գլխաղդաբար այն ժամանակաշահ հասարակութիւնը — ասում է կենսագրողը— շատ քիչ զարգացած լինելու և բոլոր հասարակաց խնդիրներին մանր, կուսակցական ոգի կրելու պատճառով Նալբանդեանցի մէջ (??) զարգանում է դժբախտ մի տեսակ անհանգիստ բնաւորութիւն (տաղանդը կարող է հանգիստ լինել), մի տեսակ խռովասէր (?), անձնական (?) նշանակութիւն ունեցող ուղղութիւն, որ առանց օգուտ բերելու մասնաւորին, ընդհակառակը շատ է փնտրում (!!) ընդհանրութեան, չենք ասում, որ ապագայում շատ է արգելք լինում նորա օղորտւէտ գործունէութեան»։ Մի ուրիշ տեղ կենսագրողը ասում է. «Նա իւր բնաւորութեան չափով առանձնաշատկութեամբ, որի վերայ մենք առիթ ունեցանք չեշտելու, գործը

միշտ ծայրալեզութեան էր հասնում և շատ անգամ գործին անձնական կրքի բնաւորութիւն էր տալիս» (աւելի լաւ չէ ասել, թէ աչքապէս էր թուում նորա հակառակորդներին): «Նա քալ առ քալ հետևում էր իւր հակառակորդներին, նկատում էր նոցա բնաւորութեան թուլ կողմերը, նոցա անձնական պակասութիւնները և իսկոյն աչք բոլորը ծաղրի նիւթ և առարկա էր անում և չաճախակի մինչև անգամ մամուլի մէջ էր մըտցնում կամ նամակաձև թղթերով տարածում ժողովրդի մէջ»։ Դարձեալ մի ուրիշ տեղ. «Տեսնական կեանքում անհաշիւ էր նա (հաշուսիրտութիւն ենք ցանկանում պիտի Շահաղիին), իսկ մասնաւոր կեանքում (իրաւ թէ տեսնականը մասնաւոր չէ) նա իւր անհանգիստ (եթէ նա հանգիստ չիւնէր, մինչև աչքը չէր ապրիլ հաշկական սրտի ամենախոր անկիւններում) և ծաղրող, մանրակրկիտ, կրքոտ և բժախնդիր (!) բնաւորութեամբ Նաղարեանցի կատարեալ հակապատկերն էր կազմում»։ Դարձեալ մի տեղ. «Որ Նալբանդեանցը արտասանում կարող էր... շատ հաւանական է աչք նորա տաք, անզգոյշ, անհեռատես (?) և շուտ չափըշտակող (էլի ուզում է ասել՝ անհանգիստ) բնաւորութեան շատ վարմար է»:

Պ. Շահաղիզ վերոյիշեալ դատողութիւնների մէջ կրկնակի սխալ է գործում:

1) Նա մեղադրում է Նալբանդեանցին աչքախի չափով չափկութիւնների մէջ (անհանգիստ, անհաշիւ, չափըշտակող, մանրակրկիտ), որոնք ուղ-

զակի Նալբանդեանի, ինչպէս և իւրաքանչիւր տաղանդաւոր անձնաւորութեան էական չատկանիչներն ևն ¹⁾։ Ի՞նչպէս կարող էք դուք անհանգիստ չլինել, երբ Աստուծոյ պատկեր ունեցող արարածները անգիտակցաբար խորտակում են միմեանց անգին կեանքը, ուրձեր եղբայրները խաչում, տապալկում են, որպէս շերամի որդիները եռացող կաթսայ մէջ, և վերջապէս, ուր մարդիկ, ալդ ողորմելիները իրանք էլ չգիտեն թէ ինչ են անում։ Ով ալդպիսի դուրսեման մէջ հանգիստ, հաշտող և «խոհեմ» բնաւորութիւն ունի, նա ինքը խաւարի զաւակն է։ Ինքը խղճահարութիւն չարուցանող մի առարկայ է։ Իսկ ով թափանցւած է ներքին լուսով, ով լուսափայլ կեանքի ճաշակ ունի, ով իւր նեարդերի մէջ ոչ ոք է զգում անթափանցիկ մթութիւնը ցրւելու, նա չէ կարող հանգիստ լինել, որպէս չէ կարող կանգ առնել մինչև կոկորդը շոքով լիքը շոքեմեքեման, ալ կը վաղէ ունենալի վերալով մինչև որ նպատակին կը հասնէ, կամ եթէ ունենալը անարժան են, թող են, դուրսէլը թռչէ նոցանից և կտոր-կտոր կը դաւնար։ Ալդպիսի մէկն էլ Կոմս-Լմանուէլն էր։

2. Իսկ բծախնդրութիւնը, կըրքոտութիւնը, ծաղրասիրութիւնը, որոնց մասին խօսք է բաց անում պ. Շահազիզը, իսկապէս որ ստոր չատկութիւններ են, որոնք սազ չեն գալ ոչ սիւսն Նալբանդեանցին, ալ

¹⁾ Դոքա՝ մարտնչողի և ոչ անպատճառ տաղանդաւորի չատկանիչներն են։

և փոքր ի շատէ արժանապատուութիւն և կրթութիւն ունեցող անձնաւորութեան։ Սակայն մենք համոզւած ենք, որ նմանօրինակ ստոր չատկութիւններ չէ ունեցել Կոմս-Լմանուէլը ու չեն կարող ունենալ նորան նմանող էակները։ Մի մարդ, որ մոռացութեան է տալիս իւր օրական հացը, որ անվախ եռանդով աշխատում է միշտ և ամենուրեք, որ մինչև արտասալի խելացնորութեան է հասնում իւր անմեղ, խեղճ ծնողներին.... մի մարդ, որ աշխարհաբար լեզու ստեղծելով է զբաղւում ան ժամանակ, երբ Կոմսի բացիլները մեծ եռանդով ուտում են նորա թոքերը, կարծես միևնոյն չէ, թէ ապագայում իւր ազգակիցները աշխարհաբար թէ գրաբար կը բամբասեն նորան..... ալդպիսի մի մարդ չէ կարող բծախնդիր լինել, չէ կարող անմիտ և անտեղի ծաղրաբանութեամբ կոտրել, վիրաւորել իւր նմանների սիրտը... Կամ թէ ալ, կը ծաղրէ, կը վիրաւորէ նա. միայն թէ ալ ծաղրի տակ թաքնւած է նորա զառն արտասուքը.... միայն թէ նորա վիրաւորանքը մարդասէր վիրաբույժի պատճառած ցաւի բովանդակութիւն ունի, որը պիտի հասկանալ պ. Շահազիզը։

Հէնց ալդպէս էլ հասկացել ու մտածել է պ. Նալբանդեանը։ Խօսելով Մեղու Հալաստանի չարձակումների մասին, (Հիւսիսափայլ, 1858, էջ 334) Նալբանդեանց ասում է, թէ Մեղուն Վկամի տկարամիտ մարդերի սիրտը պղտորել և վատ կարծիքներ տարածել Հիւսիսափայլ օրագրի մասին, որ մի սուրբ և բարեմիտ (թէպէտ շատերին անհասկանալի) հալ-

քեհնասիրութեամբ կամի ոչ թէ վիրաւորել, ազգ անարդեւ իւր մարգարէական ազգու և ուժգին խօսքերովը, ալ միայն զարթուցանել քնից մեր թմրած ժողովուրդը»... «Սորան և նորան հախճելը և անիծելը ոչ թէ միայն քահանայավաւել գործ չէ, ալ և ընդդէմ քրիստոնէութեան»... «սրպէս թէ կրիտիկալի զիտաւորութիւնը ոչ ալ ինչ էր, եթէ ոչ պարսաւել և պախարակել»։ Բայց հէնց մեր կենսագրողի մատնացոյց արած չօղւածից մենք աչնպիսի կտոր կը բերենք, որ պ. Շահաղիզը եթէ առաջուց կարգացած լինէր, բոլորովին ալ կերպ կը նալէր խնդրի վերաւ։ «Աս, ոչ թէ մի սեահողի մարդու պէս, աչն խորհրդով եմ մերկացնում ալ պակասութիւնքը, որ ծիծաղեմ զոցա վերալ, կամ պախարակելով անցանեմ հարևանցի ճոցա մօտով, ոչ, ալ պակասութիւնքը ծակում են իմ սիրտը, և շատ արտասուքին պատճառ են դառնում։ Աս զիտաւորութիւն չունիմ մի մտրդ կամ մի աղգ անարդեւու. քաւ լիցի, բայց ինչ որ խօսում եմ, խօսում եմ որպէս պաշտօնեայ ճշմարտութեան. ճշմարտութիւնը աւելի մեծ չարգանք ունի իմ աչքումը, քան թէ աշխարհի բոլոր թանկագին գումարները և հարստութիւնքը»։ Սոքա բծախնդիր մարդու արտապայտութիւններ են։

Իսկ ինչ վերաբերում է պ. Շահաղիզի բերած վկայութիւններին, որոնք իբր թէ պիտի ապացուցանէին Նալբանդեանցի մանրակրկիտ, կրքոտ և բծախնդիր լինելը, ապա զոքա էլ կատարելապէս թող են և սխալ ըմբռնած կենսագրողի կող-

մից։ Օրինակ,

1) Պարոն Շահաղիզը մատնացոյց է անում մի անեկղոտանման պատմւածքի վերալ, (Հիւսիսափայլ, 1858 էջ 44), որը գետեղել է Կոմս. Էմանուէլը իւր չիշատակարանի մէջ։ Ալգ անեկղոտը ոչ թէ անկախ մի գրււածք է, ալ կազմում է չիշեալ չիշատակարանի մի մասնիկը։ Աւտի նորա էութիւնը, ոգին ըմբռնելու համար պէտք է ի նկատի առնել ամբողջ չիշատակարանը։ Վերջինիս մէջ Նալբանդեանը ֆելիէտօնական ոճով գուրս է բերում մի ինչ որ հարուստ հալ վաճառական Խ. ի պատկերը... Նա թէ և հարուստ է, բայց կեղծ ազգասէր է, խարդախ է, տգէտ է, իւր դիրքին հակառակ մի բիրտ, խոզանման էակ է։ Վերոյկնարկեալ անեկղոտով Նալբանդեանցը հաւանականօրէն կամեցել է աւելացնել, թէ ուրեմն իւր Խ. նոն իսկ ամենատարրական քաղաքավարութիւնը չէ հասկանում։ Ալգպիսով Նալբանդեանց ստեղծել է սպէտ, խարդախ, բռի վտճառականի մի տիպար։ Կարող է լինել որ հէնց ալգպիւի անձնաւորութիւնների հետ Նալբանդեանցը չփոմներ ունեցել է, գուցէ պատմած անեկղոտի նման մի բան իսկապէս էլ պատահել է, բայց ալգ բոլորը ոչինչ չէ ապացուցանում, որովհետեւ Նալբանդեանցի չիշատակարանը գրւած չէ որ և է մի Խ. հետ հաշիւ տեսնելու համար, ինչպէս անում են «սեահողի» մարդիկ, ալ «ալգ պակասութիւնքը ծակում են»։ Նալբանդեանցի «սիրտը ու շատ արտասուքի պատճառ են դառնում», ինչպէս ասում է ինքը Նալբանդեան-

ցը միևնույն լիշատակարանի մէջ:

2) Ներկորդ վկայութիւնը զուրկ է ամենաւն տրամաբանութիւնից: «Մենք ասացինք, որ Նալբանդեանցը իւր հակառակորդների դէմ սովորութիւն ունէր և նամակաձև թղթեր տարածել ժողովրդի մէջ»: Ապա պ. Շահազիզը սրգէս օրինակ իւր ասածին բերում է ալն թուղթը, որ գրել է Նալբանդեանց իւր բարեկամներին Ալվազեան վարդապետի դէմ՝ նոցա աչքերը բանալու համար: «Թէեւ նա (Ալվազեան) հիմնում է իբր՝ կալսեցական օրէնքի վերաջ, — գրում է Նալբանդեանց լիշեալ թղթի մէջ — բայց ոչ մի կալսեցական օրէնք թոյլ չի տալի մի որ և իցէ արեղալի եկեղեցու բնմիջը գրգռել ժողովուրդը իւր հոգեւոր գլխի դէմ, կամ աւելի պարզ ասել՝ իւր եկեղեցու անկախութեան դէմ: Հաւեր, եթէ տակաւին չէք ամաչում պարծենալ ձեր կրօնի անկախութիւնով, եթէ»... Որ Նալբանդեանցը աղալիսի նամակներ է գրել, թղթեր է տարածել, ալդ չէ նշանակում, որ նա մանրակրկիտ էր, բժախնդիր էր, որ նա իւր հակառակորդների դէմ գործելիս միջոցների մէջ խտրութիւն չէր դնում... ոչ, ալ ալդ նշանակում է, որ Նալբանդեանցը ոչ միալն հրապարակական գրող էր, ոչ միալն բանաստեղծ էր, ոչ միալն լոկ բարի ցանկութիւններով օժտւած մարդ էր, ալ մի «անհանգիստ» գործիչ էր, որը գործում է բուն նշանակով, որը երազի մէջ էլ չէ մոռանում իւր բարձր նպատակներին նպաստելը... Մենք համոզւած ենք, որ եթէ Գուտտեմբերգի գիւտը (տպագրութիւնը) չլի-

նէր, Նալբանդեան կը ցրէր իւր մտքերը կտուրներից և շուկաների սրահներից, ինչպէս և արեւ են նորա նմանները Գուտտեմբերգից առաջ:

Շահազիզի գրածքը ունի դարձեալ մի շարք երկրորդական թերութիւններ, որոնց միալն զլխաւորները կը լիշենք, ալն էլ կարճ կերպով, որովհետեւ, ինչպէս ցույց տւինք, մենք ալդ գրածքը չենք համարում մի իսկական կենսագրութիւն, ուստի և աւելորդ ենք համարում շատ մանրամասն զբաղւել նորանով:

1. Հեղինակը շատ տեղ պատմում է մեզ Նալբանդեանցի սկզբունքները և ոչ թէ իսկական փաստեր է բերում, ոչ թէ նորա սեփական խօսքերն է մէջ բերում: Ուստի շատ անդամ ընթերցողը չէ կարող համակալել, թէ որքան պարզ է ըմբռնելիս եղել Նալբանդեանցը ալն ու ալն սկզբունքներն ինչ խնդիր նորա համար մութ է եղել, ինչ է նա գիտակցել իւր բոլոր համոզմամբ և ալն Նոյն խօսքերինն ընթերցողը կարող է կառկածել պարոն Շահազիզի արած եղբակացութիւնների մէջ: Օրինակ պ. Շահազեանում է, թէ «Նալբանդեանցի դաւանութիւնը հաշ աղգի ամբողջութեան մասին ալն է, որ հաշոց աղգը պիտի իւր գոլութիւնը պահպանէ իւր եկեղեցու միջնորդութեամբ»: Որ Նալբանդեանցը համոզւում էր աղգալին եկեղեցու որոշ նշանակութիւնը, ալդ շատ բնական է: Բայց որ «Մեր հայրենիքի» հեղինակը մի ալնալիսի «աբսուլուտ» վճիռ է կաշայնում, ալդ մեզ հակասութիւն է երևում, մանաւանդ երբ նույն Շահազիզ մեզ հաւատացնում է, թէ

Նալբանդեանցը քարոզում էր «աղ-
գալին լուսաւորութիւնը չ'շփոթել կը-
նի կամ կրօնաւորների հետ, զըպ-
րոցի կառավարութիւնը չ'անձնել ու-
սումնական աշխարհական անձերի, մեր-
ժել հոգևոր վիճակից մարդերի իրա-
ւասութիւնը ուր և իցէ աղգալին աշ-
խարհական դպրոցների վերալից»....

2. Հեղինակը չէ ցոյց տալիս Նալ-
բանդեանցի ունեցած քանի մի սխալ
հայեացքները, որոնք նորա դարե-
շրջանին չատուկ էին, ուստի և որոն-
ցից նա չէր կարող աղատ լինել: Օրի-
նակ Նալբանդեանցը չափից դուրս
նշանակութիւն է տւել հողագործու-
թեանը, սորա հակառակ վաճառա-
կանութեան վերաբերեալ մասամբ
թիւր գաղափարներ է ունեցել: «Հալի
վաճառականութիւնը մանրավաճա-
ռութիւն, փերեզակութիւն է, ասպար-
ղիւն միջնորդութիւն արդիւնաբե-
րողների մէջ», աղ կարծիքը ունե-
ցել է Նալբանդեանցը, որպէս հա-
ւատացնում է պ. Շահազիզը, որը
սակաճն չի կարողացել հասկանալ, թէ
լիշեալ սկզբունքը սխալ է: ¹ Քանի

որ անհատական սեփականութիւնը
գոյութիւն ունի (որի դէմ Նալբան-
դեանցը ոչինչ չէ արում), անհրա-
ժեշտ գոյութիւն պիտի ունենալ և
վաճառականութիւնը (թէ մեծ և թէ
փոքր ձևով): Կարծել թէ մեծ վա-
ճառականութիւնը, կամ արդիւնա-
բերութիւնը արդիւնաւոր է, իսկ
մանրավաճառութիւնը, փերեզակու-
թիւնը ապարդիւն, միեւնոյն է պնդել,
թէ մեծ գետերը (Քուրը, Արաք-
սը) օգտակար են, իսկ լեռներից
վազվզող վտակները, փոքրիկ գե-
տակները, անօգուտ: Չէ որ միալն
փոքրիկներն են, որ կհանք են տա-
լիս խոշորներին: Այդպիսի սխալ
սկզբունքները դաւանում էր քաղա-
քատնտեսութեան մէջ Փիզիօկրատա-
կան դպրոցը, որը ներկայումս կա-
տարելապէս գլուխ է խոնարհել պատ-
մական ուղղութեան առաջ, իսկ ալդ
մասին պ. Շահազիզը գաղափար
չունի:

3. Ցանկալի կ'լինէր, որ պ. Շա-
հազիզը երկրորդական առիթներով
չը հեռանար բուն խնդիրներից, իսկ

¹) Մենք չենք կարծում թէ Նալ-
բանդեանց վաճառականութեան խըն-
դրի մէջ հակադրած լինէր մանրա-
վաճառութիւնը՝ մեծ վաճառակա-
նութեան, համարելով վերջինս ար-
դիւնաւէտ գործունէութիւն, իսկ ա-
ռաջինը՝ ոչ արդիւնաւէտ կամ աւե-
լորդ մի երկրի համար: Ինչպէս 30-
40 տարի առաջ, Նալբանդեանի ժա-
մանակ, ալսուր էլ, բաւց աին ժամա-
նակ, դեռ աւելի, հալը կարողութիւն
ձեռք բերելու համար անձնատուր էր
լինում միմիայն վաճառականութեան,
անչափ բաղմունքներով հալ վաճառա-
կանների թիւը. իսկ ալդ վաճառական-
ների մէջ շատ շատերը լոկ պարսզիտի դեր

են կատարում, լինելով աւելորդ միջ-
նորդներ և ալդ պատճառով հակաւած
դէպի խարդախութիւն, որով միալն ալդ
աւելորդները կարողանում են իրենց
պահպանել: Հայրենիքում ալդքան
գործ չգտնելով նոքա մտնում են
ալ երկիրներ, ալ աղգների մէջ, կար-
ծես կոչւած են միմիայն վաճառա-
կանութիւն անելու, ուր և լինի:
Այդպէս վարւելով՝ հալի մէջ զարգա-
ցել էր ալ սխալ և վնասակար միո-
քը թէ արդիւնաբերութիւնը ռամկի
և կամ օտար դրամատէրերի գործ է,
իսկ առուստուրը՝ հալի գործ է:

Ծան. Խմբ.

եթէ պատահամբ հեռանում է, զգուշ լինէր մութն ու մի տեսակ հնասիրական «անուշահոտութիւնից» ինչպէս օրինակ հետեւել տողերի մէջ.

«Որովհետեւ հայերը դեռ անպատրաստ լինելով, չեն կարողանում ջուր հեղ լաւը վատից, փնտրակարը օգտակարից, և ամեն բան, ինչ որ միայն Ներսիսիցն է գտլիս, լաւի տեղ են ընդունում (էհէ), լուսաւորութեան արդասիք և արդիւնք են համարում Անցնում է ժամանակ և ալդ կեղծ լուսաւորութիւնը տարածելով ժողովրդի մէջ, սկսում է տալ իւր պտուղները (օրինակ) Այլ աշունհետեւ մեր մէջ ամեն բան փոխւում է, ամեն բան տակն ու վերայ է լինում: Պարզ կեանքի տեղը բռնում է զեղխութիւնը, մաքուր բարք

ու վարքին փոխանակում է ապականութիւնը, անմեղ, պարզ տգիտութեան տեղը երեսն է գալիս խաբուսիկ գիտութիւնը (էհէ), արտաքին ցուրքը, չքեղութիւնը (սա վատ բան է) և ներքին դատարկութիւնը. միով բանիւ խեղճ հալը, որ կամենում էր լուսաւորութիւն ձեռք բերելով երջանիկ լինել, աւելի ևս անբաղդ է լինում, որովհետեւ նա եւրոպական լուսաւորութեան, քաղաքակրթութեան բուն խորհուրդը չհասկանալով, ընդունել էր միայն նորա արտաքինը, կեղեքը»... Ալդ խօսքերը մութն են, անորոշ են... Սակայն բոլորովին պարզ է և որոշ, որ նոքա ընդօրինակւած են Նոր Դարի երկայնաձիգ առաջնորդողներից:

Ս. Թառայեանց

ԴԻԿԿԵՆՍ, Զ.—Դաւիթ Կոպալերֆիլդ. պատանեկան հասակի համար, թարգմ. Պ. Պ. Թիֆլիս, 1897 թ. տպար. Մնաց. Մարտիրոսեանի. Հրատարակութիւն Թ. Հ. Հրատ. ընկ. 370 էջ. գինը 1 ռուբլի:

Մենք խոստացել էինք փոքր ինչ երկար խօսել Զարլա Դիկկենսի մասին, երբ լույս տեսնի նրա «Դաւիթ Կոպալերֆիլդ» մեծ վէպի հայերէն թարգմանութիւնը: Վէպն արդէն լույս է տեսել, և մենք ուզում ենք մեր խոստումը կատարել:

Համաշխարհային ընթերցող դասի ուշադրութիւնը գրաւած մեծ բանաստեղծների շարքում Դիկկենսը լաւագոյն տեղերից մէկն ունի գրաւած: Նրա երկերը բաղմամբ ընթերցողներ ունին թէ իր հայրենի

Անգլիայում և թէ Ամերիկայում ու միւս քաղաքակրթ երկրներում: Ռուս հասարակութիւնը նույնպէս սիրով է կարդում նրա գրաւածները. նոր էր որ լույս տեսաւ նրա գրաւածների թարգմանութիւնը տասը մեծադիր հատորով:

Ի՞նչն է պատճառը, որ նա ալդպէս հանրաժանօթ գրող է. ինչո՞ւ հազարաւոր մարդիկ օրապէս աշխատանքներից չեւոյժ հանգստանում են նրա վէպերը կարդալով: Բնէն է պատճառը, որ նրա երկերը ամեն տեղ

ախրելի են, քնչ կալ ալ մարդու մէջ որ հազարաւոր սրտեր մագնիսի պէս իրան է քաշում: Անտովոր տաղանդը, կ'ասեն մեզ, Ալէ դեռ բաւական չէ. կ'ասենք մենք: Բանը միայն տաղանդը չէ. և հիսկ տաղանդի մեծութիւնը: Միթէ քիչ գրողներ կան, որոնք մեծ տաղանդ ունեն, բայց ալիպէս սիրելի չեն: Խնդիրը տաղանդի յատկութիւնն է. դրանով կարելի է բացատրել այնպիսի երեւոյթներ, ինչպէս նոյն չափի տաղանդ ունեցող, բայց ոչ նոյն չափ ազդեցութեան տէր գրողների վիճակը ընթերցողներ ունենալու և նրանց վրայ ազդելու կողմից:

Դիկկինսը ամենից առաջ խիստ զգայուն զրոյ է. նրա գրածները կարդալիս ձեր ջղերը չեն կարող հանգիստ մնալ. ձեր հոգին փոխում է իր դրութիւնը նրա երկի էջերը թերթելու հետ. նա տաղանդաւոր ֆուտբալիստ է, որ նազում է ձեր ջղերի վրայ իր ցանկացած եղանակները:

Հազիւ թէ լինի մի մարդ, որ կարողանայ առանց լացի ու ծիծաղի, ժպտի ու արցունքի նրա գրածները կարդալ. Կախարդի նման առաջին երեսից իսկ նա ձեզ իր ձեռն է առնում, և դուք ապրում էք նրա հերոսների հետ, հետաքրքրւում նրանց վիճակով՝ կարծես ձեր բարեկամները լինեն, ցաւում էք նրանց վրայ, բարկանում, լուրում: «Նրա յաջողութեան կէսը—ասում է Տէն—կարելի է նրա զգայուն լինելու հետեանքը համարել»:

Բայց զգալուն լինելն էլ ինքն ըստ ինքեան արժանիք չունի, եթէ

առանձին առնենք. այստեղ ևս զնահատելի է ալի զգայնութեան ուր ուղղած լինելը: Բնորոշել նրա զգացմունքների ուղղութիւնը նշանակում է բնորոշել նրա ամբողջ գործունէութեան ուղղութիւնը: Վերոյի չեալ վէպում Դաւիթ Կոպպերֆիլդինց աղախին Պեգոտտին ասում է իր պարոնին նրա հանգուցեալ հօր խօսքերը, որ լսել է Կոպպերֆիլդի մօրից մահւան մահճում «... սիրող սիրտը աւելի գնահատելի է և ուժ ու զօրութիւն ունի՝ քան խելքը և ուսումը»: Այս խօսքերը շատ բնորոշ են Դիկկինսի համար. նա նոյնպէս գնահատում է սիրող սիրտը աւելի քան ուսումնի ու խելքը: Այս վէպում գործող անձերի մեծագոյն մասը, այն մասը, որի կողմն է հեղինակի համակրութիւնը և որոնց ձեզ համակրել է տալիս, բոլորն էլ աւելի սիրող սրտի տէր են, քան խելքի և ուսման: Դորան, Ադնեստան, Կոպպերֆիլդի տառը, ինքը Կոպպերֆիլդը և ալն, բոլորն էլ ալի տեսակ մարդիկ են: Նրա միւս վէպերն էլ թերթելիս դուք կը նկատէք նոյնը. առաջին գծի վրայ միշտ սիրող սրտի տէր մարդիկ են. հեղինակը նրանց է սիրում և համակրում: Բայց հակառակ տիպի մարդկանց, ալիպէս ասած ուղեղալին մարդկանց, նա ատելով ատում է. և ալիպիսի մարդիկ նրա գրածներում միշտ վատ են, անսիրտ, չոր, պակասութիւնների և խառնների տէր: Դուք պարզ նկատում էք հեղինակի զղանքը, բարկութիւնը, կծու ծաղրը դէպի ալի անձերը:

Յալտնի է որ ժողովուրդը աւելի

անմիջական զգացմունքով է ապրում քան խելքով. աչս է պատճառը, որ Դիկկենսի համակրանքները ուղղաձ հն դէպի ժողովուրդի զաւակները: Նա սիրով և համակրանքով է նախում ժողովուրդի վրայ, դուրս է հանում նրա միջից առաքինի և պատական մարդիկ, նրանց շրջանում ցոյց է տալիս հազագիւտ ջերմ սէր, կատարեալ անձնագոհութիւն, բուռն զգացմունքներ, ներդաժնութիւն, անմիջական գործնական խելք և չափնի տեսակէտով ճախապաշարած դատողութիւն: Նրանց դնում է չարաբերութեան մէջ բարձր դասի, լէդիների և «պարոնների» հետ և ապտակում վերջինների նեղամտութիւնը, անձուկ զգացմունքները, ծիծաղելի հպարտութիւնը, չոր ինքնասիրութիւնը, ճախապաշարած դատողութիւնները և ալէն: Կարդացէք ԻԱ գլուխը՝ պ. Պեգոտտու և տիկ. Ստիրֆորսի խօսակցութիւնը. տեսէք թէ ինչպէս ծաղրի է հանում ալդ մեծամիտ կնոջ, նրա մեծամտութիւնը՝ թէ ինքը ռամիկ չէ: Դիկկենսի վէպերում հազիւ պատահէք վերին շրջանից առած մի անձնաւորութիւն, որ ընդունակ լինէր Պեգոտտու չափ անձնագոհ լինելու. կարծէք հեղինակն ուզում է ասել. «խօսք չունիմ, դուք գիտուն էք, գուցէ զարգացած, բայց հազիւ թէ պ. Պեգոտտու չափ անձնագոհ լինէք և սիրող սիրտ ունենաք»: Նրկորդ գիծը, որ համակրողների և նոյն իսկ երկրպագուների մի մեծ շրջան է ստեղծում Դիկկենսի համար, ալդ հասարակ ժողովուրդին սիրելն ու համակրելն է:

Բոլոր թշուառները, կեանքի խորքորդիները, աղքատներն ու դժբախտները, հալածւածներն ու անօգնականները, դրանց հետ էլ մանուկները, որպէս անպաշտպան արարածներ, Դիկկենսի սիրելիներն են. սիրով է կանգ առնում նրանց վիճակը նկարագրելու, նրանց թշուառութիւններն ու ճեղքութիւնները ցոյց տալու. համակրանք և սէր է դարձնում ձեր մէջ դէպի ալդ խեղճերը: Աչս կողմից Դիկկենսին կարելի է անւանել թշուառների բարեկամ. իր գրածներն մէջ նա շատ անգամ է վէպի ընթացքը թողել և ջերմ էջեր նւիրել իր թշուառ սիրելիներին:

Ազնեւօտան՝ Կոպպերֆիլդի նշանածը՝ ասում է նրան. «լիչեցէք, որ իմ լուսս անկեղծ սիրտ և ճմարտութեան վրա՝ անդրդւելի և հաստատուն է» (էջ 305): Աչս խօսքերը նոյնպէս շատ բնորոշ են Դիկկենսի համար. նորա լուսն էլ «անկեղծ սիրտ և ճմարտութեան վրա՝ անդրդւելի է». նրա բոլոր վէպերը սողողւած են ալդ հաւատով, նրան ճաշած՝ կեանքում երբէք կեղծ սէրն ու սուտը չեն չաղթում, նա չի տեսնում ալդ, ընդհակառակը բոլոր չարերը պատժւում են, բարիները երջանկանում. բարի մարդիկ, ճմարտասէր և անկեղծ սիրտ ընդունակ մարդիկ նրա վէպերում, նոյն իսկ աղքատութեան ճանկերում, երջանիկ են, լաւ են, հողեկան հանգստութիւն ունեն. մինչդեռ հակառակ տիպարի մարդիկ դաժան են, անհանգիստ խիղճ ունեն, դժբախտ են: Աչս վէպում կեղծաւոր, չոր ու խաբեբալ Կիպը վերջը պատժւում է. իսկ Ազնեւօտան

անկեղծ սէրն ու ճշմարտութիւնը լաղթում են ամեն արգելք:

Մի ալ աչքի ընկնող չատկութիւնն էլ աչն է, որ նա սիրահար է փոխադարձ սիրով վրաչ հիմնած ընտանեկան կեանքի: Ի՞նչ հիացմունքով է նկարագրում նա իր բոլոր վէպերում ալդ կեանքը, ի՞նչ բանաստեղծական կահաւորութիւն, ի՞նչ լոյս ու ջերմութիւն, մանաւանդ երբ ջահիլ ամուսինների կեանքն է պատկերացնում: Ընտանեկան կեանքի ալդ պաշտամունքը, որ յատուկ է Գիկկենսին, Տէնը բացատրում է աչն հանգամանքով, որ Գիկկենսը մի տեսակ հաշիլի է, որ ցոլացնում է Անգլիական հասարակաց կարծիքը առանց քննադատելու նրան¹⁾, իսկ անգլիացիները մոլեռանդութեամբ պաշտում են ընտանիքի գաղափարը և խիստ հալածանքի մատնում աչն անձանց, որոնք լանդգնում են ձեռք բարձրացնել ալդ հիմնարկութեան վրայ:

Գիկկենսը մասնագէտ է քաղաքի կեանքի. բարձր չըջաններից սկսած՝ դրամատիրական դասով անցած մինչև չետին բանւորն ու աղքատը. առաջինի մարդուց սկսած մինչև զոգն ու արքեցոյդ: Արտասահմանում նա հազիւ էր կարողանում ապրել, նրան հարկաւոր էր լոնդոնն իր փողոցներով և քնակիչներով: Նա ամենաչին մանրամասերն անգամ, որ վերաբերում է քաղաքի կեանքին, գիտէ, ուսումնասիրել է, դիտել է և կարողանում է զարմանալի հաւատարմու-

թեամբ տալ ընթերցողներին: Այստեղ մեծ դեր է խաղում Գիկկենսի երևակայութիւնը. ալդ երևակայութիւնը անսովոր ուժ ունի և թարմութիւն. դրում է՝ և չէք զգում թէ գրում է. կարծէք նկարում է. կարգում էք՝ կարծէք նկար էք զիտում:

Ոչ մի բան բնութեան մէջ նրա համար մեռած չէ. ամեն բան կեանք ունի և զգալ գիտէ: Շրջապատը միշտ փոխւում է նախ ճերմոսի տրամադրութեան: Ուրախ է նա, ուրախ է և նրա շուներ, պատահող մարդը, փողոցի կեանքը, ծառերը, երկինքը, օրը. տխուր է՝ տխուր են և նրանք: Ի՞նչոր նկարագրութիւնները ներշնչած են զգացմունքով, որ անմիջապէս ձեռք է անցնում. առանց զգացմունքով մկրտած լինելու, նա ոչ մի նկարագրութիւն չունի, ի՞նչ հասարակ նիւթ էլ լինի նկարագրութեան բովանդակութիւնը. նա սիրում է նկարագրած իրը, երեւթը. և ոչ լոկ հետաքրքրում. զգացմունքով է կապւած նրանց հետ և ոչ խելքով: Կարդացէք «Առապերֆիլդում» փոթորկի նկարագրութիւնը. տարերքի կոյր խաղը, կատաղի լորձանքները, մեռալ երկինքը և անհանգիստ ու վերվերած ջրերը. և ալդ չփոթի մէջ խորտակող նաւը դիտեցէք, կալմին ապաւինած չորս մարդկանց, որոնք անհաւասար կուլի են մտած. նաչեցէք երեքի խորտակելուն, մէկի չուսահատ ջանքերին, ավին խռնւած անըփին, նրա սպառողական դրութեան ու անգորութեան, օգնութիւն հասնողի վճռականութեան, ճիգերին. և նկատէք, որ հակառակորդը իր հակառակորդին գնում է փրկելու

¹⁾ Тэнъ, Ист. новѣйшей Англіи. Лит. 19 27.

վերահաս մահից, ու երկուսին էլ կլանում է ագահ տարերքը. խնչ խորհրդաւոր բոպէ, խնչ վեհ զրու-
թիւն!

Գիկկենսը հանգիստ մնալ չի սի-
րում. աչնքան հարուստ են նրա
զգացմունքները, որ պահել չի կարո-
ղանում. Նրա համար իր հերոսները
ոչ աչնքան զխոնարհու նիւթ են, որ-
քան հարւածի և սրտակցութեան.
Նրա հերոսները նրա բարեկամներն
են կամ թշնամիները. ոմանց սիրում
է, ոմանց ատում, ոմանց ծաղրում
ու կշտամբում, ոմանց զովաբանում.

Նրա մասնաւոր նամակներից երե-
ւում է, որ ստեղծագործելու խաղաղ
դիշերները իր առանձնաբանում անց
էր կացնում ծիծաղով կամ լացով իր
հերոսների վրա, աչնպէս է խօսում իր
հերոսների մասին կարծես իր մօտ բա-
րեկամները լինեն, կարծես կենդանի
մարդիկ են և ոչ ստեղծագործութիւն-
ներ. Եւ ալ զգացական վերաբեր-
մունքը նրա ամեն վէպում երևում
է. կարդացէք և կզգաք նրա խան
զաղատանքը դէպի Վորան, չար-
գանքն ու սէրը դէպի Ագնեսսան, որ
դիական հնազանդութիւնը դէպի տա-
ռը և ալլն և ալլն:

Գիկկենսի տաղանդի լատկութիւն-
ները երկու են. ծաղր և լաց, ծի-
ծաղ և հումոր. նրա հումորը շատ
շուրթ է, թափանցիկ և անմիջապէս
ազդող. կարելի է ալ ճկատել
հեղինակի վերաբերմունքից դէպի
Տրադէլսը. լացը սիրտ չուզող և խուլ
հեկեկանք լինցնող. կարդացէք Գո-
րալի մահը. Նրա ծաղրը կծու է,
տեղ տեղ դաժան. թերթեցէք աչն
գլուխը որտեղ խօսում են Ստիրֆոր-

սի մալրն ու պ. Պեդոտտին: Տա-
ղանդի ալս երկու լատկութիւնները
իրանց հպատակութեան տակ ունին
զանազան կոչումի ու դիրքի, սեռի
ու հասակի մի մեծ բազմութիւն. ալ զ
լատկութիւններն են, որ սիրել կամ
ատել են տալիս Գիկկենսի հերոս-
ներին:

Դեղարւեստական տեսակէտից Գիկ-
կենսի գրածների ամենախոշոր պա-
կասութիւնը գործողութեան և հո-
գեբանական վերլուծութեան բացա-
կալութիւնն է. «Կոպերֆիլդում» օրի-
նակ, ինչպէս ընթերցողը կը տեսնի,
գործողութիւն չկալ, որովհետեւ չկալ
կրքի զարգացում. Խակապէս կրքի
զարգացումը վէպի ամենազլխաւոր
արժանիքն է. չկալ նա, վէպը կորց-
նում է իր ամբողջութիւնը և դառ-
նում է դէմքերի մի հաւաքածու,
առանց հողերանական կապակցու-
թեան:

Մենք չենք տեսնում Գիկկենսի
վէպերում հերոսի հոգին անդամահա-
տած, վերլուծած. վարմունքներ կան,
բալց պատճառաբանութիւն, հոգե-
բանական պատճառաբանութիւններ
չկան: Հերոսը կոխում է վէպի չէմքը
և դուք մինչև աչնտեղից դուրս դա-
լը նրան ճողնն էք տեսնում. կեանքի
պայմանները կարծէք նշանակութիւն
չունեն հերոսի համար. բարի մարդը
մինչև վերջն էլ բարի է մնում, չարը՝
չար. Կոպերֆիլդը, օրինակ, միշտ
բարի է, զգայուն, հնաղանդ, սիրող
որտի տէր, քնքուշ. Գորան միշտ բա-
րի, թրթուռ, կենսալի, մի քիչ թե-
թե, աղնիւ որտի տէր. Ագնեսսան
միշտ չափաւոր, հանդարտ, հանգիստ,
ծանր. և ալլն: (Մենք ! օրինակ-

ներ գիտմամբ «Արապերֆիրդ»-ից ենք բերում, աւելի մատչելի լինելու համար): Այդ մեծ պակասութիւնը, մեր կարծիքով, հետեանք է աջ հանգամանքի, որ Դիկկենսը բարոյախօս՝ մորալիստ է. իսկ մորալիստները չեն ուզում հասկանալ, նրանք պահանջում են, նրանք ասում են թէ ինչ պիտի անես, առանց նախելու թէ՛ կարող ես անել: Մենք կանգ չենք առնում Դիկկենսի պակասութիւնների վրայ, մենք կամենում էինք նրան բնորոշել միայն: Մի քանի նկատողութիւն էլ վէպի մասին:

Վէպը կենսագրական է. ալդանդ Դիկկենսը ինքնակենսագրութիւն է գրում: Նա էլ աղքատ է եղել, ու է դպրոց դնացել, իր բարեկամ մի վաքս շինողի աշակերտել է, հարուստ երեակալութիւն է ունեցել և պատմելու շնորք. գրական գործունէութիւն է սկսել, աղագիր է եղել. կամաց կամաց գործերը լաջող են դնացել: Սրիտասարդ ժամանակ նա սիրահարում է մի աղջկա, բայց ալդ սէրը Դիկկենսի համար անաջող վաղձան է ունենում՝ աղջիկը մի ուրիշի է առնում. ալդ աղջկան է նա իր վէպում դրել Դորա անունով: Դիկկենսի հալըր անհաշիւ ապրող մարդ է եղել, պարտքերի համար բանտ է նստել—ինչպէս միտոր Միկոբերը. ալդ անձնաւորութիւնը նրա հալըն է. Բալց ի հարկէ ամեն բան աջնպէս չի եղել, ինչպէս վէպի մէջ է պատմած. չալտնի ներդաշնակութիւն է պահպանւած իրականութեան և ստեղծագործութեան միջև: Այս վէպը ըստ ամենայնի համարում է Դիկկենսի ամենաաջող գործը: Անցնենք թարգ-

մանութեան:

Վէպն ընդհանրապէս լաւ է կըրձատած: Մեր պալմանները աւելին թուլ չեն տալիս անել. նշանաւոր վիպասանների կրճատ երկերն ունենալն էլ կարող է մեզ բաւականացնել, մի պալմանով՝ որ կրճատումը լաւ լինի արած: Այս վէպի մէջ բովանդակութեան էական մասը և գործող անձերի բնաւորութեան խոշոր գծերը պահպանւած են: Մի երկու տեղ երևում է կարկատած լինելը, ինչպէս 276 էջում, ուր պատմութիւնն ընդհատում է և փոխում: Բալց և աջնպէս վէպն աջնքան արժանիքներ ունի նոյն իսկ իր աջժման դրութեամբ, որ մենք առանց վարանելու խորհուրդ ենք տալիս մեր ընթերցող դասին անպատճառ ձեռք բերել ալդ գիրքը:

Գալով թարգմանութեան՝ կ'աւանդ. եթէ մեր բոլոր թարգմանիչները ալնպէս թարգմանէին իրանց լանձնած վէպերը, մենք աւելին աւալժմ չէինք պահանջիլ: Վէպի լիզուն կարող մարդու ձեռքում է եղել. կարողալիս զգում էք, որ հալերէն էք կարդում: Լեզուից չիտոյ երկրորդ գլխաւոր արժանիքը հեղինակի ոգին պահպանելն է. գոնէ ալդ ոգու մի կողմը շատ լաւ է արտապալտած, ալնպէս որ զանազանութիւն չկալ ուուներէն թարգմանութեան և հալերէնի արած տպաւորութեան միջև: Թարգմանիչը լաւ է արտապալտել Դիկկենսի լացի ջիղը. թուլ է արտապալտած միայն նրա հումորն ու ծաղրը. դրա պատճառը մենք ալն ենք համարում, որ թարգմանիչի ոգին ալդ տարրը ալնպիտի ուժեղ չալիող

չունի: Նմանը միայն կարող է նմանին հասկանալ. ամենքին չալտնի է աչն ասւածքը թէ՛ Շէքսպիրին թարգմանողը պիտի Շէքսպիր լինի. աչդ միտքը շատ ճիշտ է և ամէն դէպքում էլ պահպանում է իր ուժը: Թարգմանել չի նշանակում մի լեզւի խօսքերը միւս լեզւի խօսքերին վերածել, ալ թափանցել հեղինակի հոգու մէջ և արտալստել նրա զգացածը. իսկ ալսպէս կարող է անել միայն նա, ում հոգին նոյն տարրերն ունի ինչ որ թարգմանւելիք գրքի հեղինակի հոգին: Եթէ ալք տարրերը կան, ապա թարգմանութիւնը չի կարելի ջոկել բնագրից. ալք դէպքում փոքրիկ զանազանութիւնը նոյն իսկ իր կնիքը դնում է թարգմանութեան վրայ: Լուրջ մարդը, որ չունի ծաղրի ու սրամտութեան երակ, անկարող է Մոլիէրի կատակերգութիւնը հարկ եղած չափով լաւ թարգմանել, ինչպէս ծանծաղ հոգու տէր բանաստեղծը երբէք չի կարող թարգմանելիս արտալստել Բալթոնի հակապական ուժն ու թափը: Ուժեղ ծաղրի ընդունակ չլինելն է, որ արգելք է եղել թարգմանչին, Դիկկենսի հոգու երկրորդ կողմն էլ լաւ արտալստել: Եթէ դուք ծանօթ էք որ և է երկի բնագրի հետ, աչն ժամանակ թարգմանութեան նախելով կարելի է ճանաչել թարգմանչի ոգին, նրա չափութիւններն ու նրանց ուժը: Խորհուրդ ենք տալիս Հրատարակչական ընկերութեան առաջնորդել վերը դրած սկզբունքով. դրանից կը չահւէր թէ՛ ընթերցողը, թէ՛ թարգմանութիւնը և թէ՛ ընկերութիւնը:

Լեզուն ընդհանուր առմամբ շատ

լաւ է. կան մի քանի հին ձևի բառեր և վատ կազմած նախադասութիւններ: Զանազան ձևեր՝ մի տեղ, օրինակ, գործ է ածւած մարդիկներին, մի ալ տեղ՝ մարդկանցը (էջ 187, 189): Շատ տեղեր կան ալսպիսի ձևեր՝ մի շարժեր, որ թարգմանչի լեզւին չատուկ չէ. նա կ'ասէր՝ մի շարժի (1) (էջ 104, 241, 251, 84). մի քանի տեղ ալսպիսի ձև՝ արարքին համար, որ թարգմանչի լեզւին չատուկ չէ, եկամուտ է (էջ 239). գործք՝ փոխանակ գործ (283) նոյն եւ մի՝ փոխանակ միեւնոյն (45), բնակութիւն՝ բնակարանի մտքով (54): Պատահում են ալսպիսի արտալստութիւններ՝ խիստ սաստիկ վախեցալ (59). արտասուածքը վազեցին (56). ինձ համար վախենալ (29). ալք բանի մասին զարմացալ: Բարդ խօսքեր կան « չաղկալով, որոնք զիրահնչիւն չեն. ամենատեսակ (114), նմանալիսի (118) զրուցաընկեր (25). դասել—ասում են՝ դարսել (221): էջ 210 չիթլած են Տրադդէլս և Ստիրֆորս աճունները, ալսպէս վատ, որ ընթերցողը չարում մնում է: Ալսպիսի արտալստութիւններ կան՝ Խնչ բանի ես, ո՞վ դու իմ սրտի ուրախութիւնը... (29) (անորոշ պիտի դնել՝ ուրախութիւն) — Հոգեակս, նա ամենապատական մարդ է: Ալսպիսի դէպքերում մեր լեզուն, շատ իրաւացի կերպով, գերադրական աստիճանի հետ անորոշ չի գործ ածում գոյականը, ալ՝ որոշ. պիտի լինէր՝ ամենապատական մարդն է. և իսկապէս ամենապատական միայն մէկը կարող է լինել, կամ կարելի էր ասել՝ շատ պատական մարդ է:

Սակալն ալուպիսի պակասութիւն-
ներ, որոնք ահագին գիրք թարգ-
մանելիս միշտ կարող են պատահել,
երբէք չեն կարող գցել ալուպիսի
թարգմանութեան արժանիքը, որը

կալ և կը մնալ մեր գրականութեան
մէջ իբր մի լաւ հաւերէն թարգ-
մանութիւն:

Ն. Աղալեանց

ՔԱԼԱՍԵԱՆՅ, Գ. — Ռոստոմ և Սալման, գերբնական ոյժ ունեցող
հսկաներ: (Տաճկահայոց ժողովրդական աւանդութիւն): 1896 թ.
Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի, 52 էջ, գինն է 25 կոպէկ:

Այս գրքուկը մի քանի ամիս
առաջ ստացալ «Մուրճի» խմբագրու-
թիւնից գրախօսութեան համար: Ռոս-
տոմ և Սալման խորագիրը, տաճ-
կահայոց ժողովրդական աւանդու-
թիւն կոչելը, չառաջադնն ու բո-
վանդակութիւնը ըստ նիւթի և ձևի
առանձին հետաքրքրութիւն չարժե-
ցին իմ մէջ: Թէ Արդեօք Սասունի
Վէպի և Շահ-Նամէների առնչու-
թեան խնդրով հետաքրքրողներն
իւր ժամանակին արտաշայտել են
կարծիքներ այս գրքուկի մասին, ես
զոնէ չեմ վիշտւմ: Հարկադրած եմ
առանց ալը լուսաբանութեանց նկա-
տածս կարեոր կէտերը հրատա-
րակել:

Ամենից առաջ ընթերցողի ուշա-
դրութիւնը գրաւում են հերոսների
անունները. մինը Շահ Նամէների
գլխաւոր հերոսինը, միւսը Սալմա-
նինը: Բանն այն է, որ Ռոստոմն ու
Ջալը հալ քրիստոնեայ են ներկայա-
շուտ, իսկ Սալմանը պարսիկ ու հա-
կառակորդ սրանց: Հարկ եմ զգում

չառաջաբանից հետեւալ հատւած-
ները մէջ բերելու, որպէս զի խնդրի
հետաքրքրական կէտերը ընթերցո-
ղին անմիջապէս ներկայացնեմ: «Այս
հետաքրքիր լեգենդան... ես ինքնա-
բերաբար հալացրել եմ՝ վերածելով
փոխանակ պարսից՝ Տաճկա-Հայոց
ժողովրդական աւանդութեան՝ նիւթն
աւելի մատչելի և հետաքրքրական
դարձնելու նպատակով: Բուն նիւթից
չեղեւի՞մ ես աւելացրել եմ իմ կող-
մից «Ծովինարը», որ, թէ և կանացի,
բայց մի գեղեցիկ օրինակելի տիպ
է վեհութեան և քաջադնութեան...
Ի դէպ՝ պէտք է ի նկատի առնել և
այն, որ Հալաստանի շատ դաւառ-
ներում, մանաւանդ ծերերի մէջ, ար-
մատացած է տալիսին այն աւան-
դական և առասպելական խորին հա-
մոզմունքը, որ՝ իբր թէ Ծովինարը,
Ռոստոմի քոյրը՝ համաձայն իր հօր-
Ջալ փահլեւանի պալմանական ուխ-
տադրութեան՝ կոյս մնաց մինչև վեր-
ջը և պարսից Սալմանի ձեռքը չընկ-
նելու համար հրեշտակից վերև բարձ-

րացրած՝ ապրում է դեռ մինչև այսօր էլ երկնքի խորքում: Պատմում են, որ երբեմն մութ ականակիտ գիշերներին նա լանկարծակի հանում է զլուսը ամպերի տակից և նախում դէպի ցած, պատերազմական դաշտը, դիտելու Ռոստոմի և Սալմանի կռիվախճանին... Այժմ էլ սովորութիւն կալ գիւղացիների մէջ, որ ալդպիսի ժամանակներին ասում են, երկընքում ծովինարը խաղանք»...

Այս խօսքերի հիման վերաջ պէտք է, կարծում ենք, ենթադրել, որ պ. Բալասանյան ալս լեզենդալի նիւթն իբրև աւանդութիւն՝ լսել է հաջ ժողովրդի բերանից և աչն էլ տաճկահայերից, քանի որ տաճկահայկական է նրան անւանում: Այս կէտը շատ ուշագրաւ է, որովհետև պ. Խալաթեանը գիտում է «Братская помощь»-ի 206 էջում, որ Ռոստոմի անունը, որ ալսքան տարածւած է կովկասեան ժողովուրդների մէջ, հալկական աւանդութիւններում չէ պատահում: Եթէ ալս հսկալի անունը քաջ չալունի է եղել արևմտեան Հայաստանին, պարզ է, որ նա անպատճառ պէտք է մուտ գործած լինէր նաև սահմանակից Հայաստանում,

Այս խնդրի երկրորդ հետաքրքրական կէտն աչն է, թէ պ. Բ. Բնչպէս է «հալացրել» ալս լեզենդան: Աւանդութեան մէջ Ծովինարի անունը կապւած է օտարազգի Զալի ու Ռոստոմի հետ, ուրեմն զուտ հայկական տարր էլ կալ նրա մէջ, եթէ ալս ալսպէս է, հետևաբար հալ օրիորդի ծնողներն էլ պէտք է մեր ժողովրդական աւանդութեան մէջ հալ կամ

հալ քրիստոնեալ ճանաչւած լինէին: Ու ալդպէս էլ է: Այս իրողութիւնները մեզ թուլ են տալիս ենթադրել, որ ինքը հալ ժողովուրդը պէտք է հալացրած լինէր ալս լեզենդան: Ալսալիսով մեզ մուծը մնաց, թէ ալս հալկական աւանդութեան որ մասերն են պ. Բ.-ի կողմից կրկնապատկ հալացման ենթարկւել:

Արդեօք ալս աւանդութիւնները նոր փաստեր չեն ներկայացնում, որ Շահ Նամէների և Սասմալ ծռերի մէջ առնչութիւններ են գոյութիւն ունեցել: Սասունի կտրիճ փահլէւանների (պահլէւանների) քաջագործութիւններին վերաբերեալ բանահիւսութեանց նորանոր վարիանտներով գիւտի առթիւ բանասէրները արդէն ցոյց են տուել բազմակողմանի նմանութիւններ Շահ Նամէների հետ: Կարծիք չալտնող էլ եղել է, որ ոչ Դաւթի ու Ռոստոմի և ոչ էլ Մհերի ու ալս վերջինիս մէջ առնչութիւններ կան և որ ալդ երկու վէպերը կապչուն են միմեանց հետ: Բացի սրանից մինչդեռ մի կողմից Մհերի անունը Միհրի հետ է կապւում, (Պ. Կոստանեանց, «Արարատ» փետրւար), միւս կողմից պ. Խալաթեան Սասմալ ծռերի ծագումը վերագրում է XI—XII դարերին (Братская помощь, էջ 205): Յալունի է, որ Շահ Նամէները իբրև բանահիւսութիւն՝ պարիակում են 2000 տարալ վիպախառն պատմութիւն: Նրանք վերջանում են VII դարու սկզբներում, երբ սասանական պետութեան վախճան է: Շակը ալդ վէպերի հնութեան իբրև փաստ բերում է Խորենացու ականարկութիւնները: Հետևաբար մերաչնոց անծա-

նօթ չպէտք է լինէր Շահ Նամէների բովանդակութիւնը նոյն իսկ հնագոյն ժամանակներից հետէ: Եւ թնչպէս կարող էր աչդ, քանի որ աչդ արեւելեան հրաշալի բանահիւսութեան ոգին ոչ միայն ուռնական, այլ և մինչև հին գերմանների բանահիւսութեանց մէջ էր թափանցել: Շատ կարելի է, որ երբ X դարում անգղագական Ֆիրդուսին բանահաւաք եղաւ ու վերաստեղծեց աչդ աւանդութիւնները, նրանք նոր և աւելի ուժեղ հոսանքով ողողեցին հարեան երկիրները և Սասունի լեռներին հասնելով՝ ալնտեղ լաւագոյն հող գտան մի այլ ժողովրդի ինքնատիպ բանահիւսութեան նորաբողբոջ ծիւեր արձակելու կամ հնի վրա նորը պատաստելու:

Նթէ Միհրի ու Մհերի մէջ, վերաւի, կապեր են գոյութիւն ունեցել, ապա պէտք է ենթադրել, որ վերջինիս վերաբերեալ աւանդութիւնները հիմնական փոփոխութիւնների են ենթարկւել: Մինչդեռ Մհի-Միթրա ըստ Զէնդաէստաւի միջնորդ է հանդիսանում լոյսի և խաւարի մէջ, հաւատարմութեան պաշտպանի, ու խտազրթութեան պատուհասի դեր է կատարում նա և Մհերը Մոկաց բարբառով գրի առնւած մի վարիանտում բաւականին մօտենում է այս տիպարին, միւսում նա դրա հակապատկերն է կազմում: Մշու բարբառով վարիանտի մէջ էլ ոչ թէ աչս պըզտիկ Մհերն է համակրելի, այլ Աւիւ-ժաձնը ¹⁾:

Աչս վէպի Մոկաց բարբառով պէքեղեանին պատմողը հաղորդել էր, որ նա քառասուն ճիւղից բաղկացած է եղել և որ ինքը միայն մի լաւ գիտեցող է տեսել գիւղում իւր երիտասարդութեան ժամանակ: Ուրքան մեծ ու անդառնալի կորուստ, եթէ հալկական բանահիւսութիւնը զրկւի աչս վերջին կենդանի աղբւրներից: Արդեօք թնչ միջոցներով կարելի էր հետամուտ լինել աչս անգին գանձերին, արդեօք հնար չկար մի հաստատութեան կամ անձի կողմից դրամական վարձատրութիւն նշանակել աչդ գիւղերը գնացողին ու աչք խորհրդաւոր ու մեծ բանահիւսութիւնը մահի ճանկերից ազատողին:

Արդեօք կ'աջողւի թէ ոչ սասունցի պահլաւանների ցեղագրութիւնը մի օր որոշ չափով լրացնել ու հարստացնել, աչդ տպագալի խնդիր է, բայց և աչնպէս աչս օրերում կարծես աւելի քան երբ և իցէ սպասւում են Սասմա ծռերի լուշիկները, որ իրանց ու Շահ Նամէների ոգով ներշնչւած ու տագորւած մի հագ բանաստեղծ գրիչ ձեռք առնէր բոլոր վարիանտները մի համեմատաբար ամբողջական բանահիւսութեան վերածելու: Եւ անհ հրապարակ է դուրս գալիս մի տասնութհինգ տարեկան հաշ պատանու «Ռոստոմ ու Սալմանը» իբր մստահի գրաւական գեղեցիկ լուսերի, իսկ հիմաւ արդէն երիտասարդ Բալասեանին ի միջի ալոց հետեւալն է գրում մեզ զբաղեցնող երկասիրութեան մասին: «Ես կա-

¹⁾ Շահ Նամէների մէջ էլ Միհր հերոս կապ, նա կոչւում է Միհր Մուշ,

որդի Իսֆէնդիարի, Ռոստոմին հակառակորդ:

րող էի սրան գեղեցիկ կերպով կո-
կել և հնթարկել հիմնական փոփո-
խութեան, սակայն ես այդ չարեցի՝
ինձ համար թանգ արժեքնալով աշա-
կերտական ժամանակից արտաշա-
տած զաղափարներն ու զգացմունք-
ները խսկութեամբ տպագրեած...

«...Եւ թող լինի իբրև մի խոս-
տում անկեղծ և նշան չուսալի՝ թէ
ներկայումս և թէ ապագայումս ապա
զալում՝ իմ մտաւոր կարողութեան
չափ—չափահաս ժամանակի աւելի
սրտեռանդն աշխուժով աշխատելու».
Թէև աւելի հետաքրքրական կը լի-
նէր մեզ համար պ. Բալասեանի ա-
ւելի հասուն մտքի, զգացմունքների
ու երևակայութեան արտադրութիւնը
տեսնել, սակայն պակաս ուրախալի
չէ հաս աչն իջսը, որ մեզ ներշնչում
է նոյն իսկ պատանեկական հասակի
արդարութիւնը: Մենք չկարողացանք
իմանալ, թէ արդեօք հեղինակը
շարունակել է նոյն ուղղութեամբ
ընթանալ, ուսումնասիրել այդ գրա-
կանութիւնը, այդ տեսակ նիւթեր
արտադրել: Վը ցանկալինք միայն
ալտեղ մի քանի հատածներ գնել
«Ռոստոմ ու Սալմանից»՝ ցոյց տա-
լու համար, թէ ինչպիսի խրախու-
սանաց արժանի է եղել պատանի
բանաստեղծ Բալասեանը:

Շատ դարեր առաջ մի թագաւոր
կար,

Վեհանձն հոգով, ազնիւ ու արդար,
Մի անտառաշուրջ սարաւանդ երկ-
րում

Ին ժամանակներ եղել է ապրում,
Անունով կոչուում էր Չալ-Փահլեան,
Վերջքը լալն, դրսով վահանի նման,
Տեսքը վիթխարի, հասակն վաղելուչ:

Քիթն արծաւին, դէմքը աչալուրջ,
Ձախը աղղարար, նաւածքն ահռելի,
Ուժէ ունեցել շատ զարմանալի...

Աչքերն ու լոնքեր սևորակ, խոշոր,
Ձեռքերն ու ոտքեր և մարմին բոլոր՝
Իբրև լեռնալին ահագին գոտի,
Նմանում էին մէկ-մէկ մարդակի...

Կամ թէ վեր առնենք օրինակ
Ծովինարի գեղեցկութեան նկարա-
գրութիւնը, որ պատկերացման կեր-
պով շատ նման է Սալի գեղանի
նշանածի, Ռուդարէի, հմալի տեսքի
նկարագրութեանը, որ անում է Թիւր-
դուսին:

Նրա լուսեղէն պալատ հալեացքը
Որպէս պարզ, անամպ, չքնաղ եր-
կինքը,

Նրա գուրեկան և անուշ պատկեր,
Շաղանակադոն գրաւիչ աչեր,

Եւ քաղցր լեզուն, և՛ թովիչ, մեղմ
ձայն,

Ուսին ծածանող մաղեր թուխ, եր-
կալն,

Երկնալին դէմքը, տեսիլն գերբնա-
կան.

Եւ գեղեցկութիւն հրեշտականման,
Սև սաթի նման փալլուն լոնքեր

Խիտ,—

Բոլորը, բոլոր թռցնում մարդու
միտք.

Եթէ դու տեսնես նրան, ով Սալման,
Իսկոյն սրտիդ մէջ, կալծակի նման,

Խոր կը թափանցեն կրքերի շան-
թեր...

...

Աչնպէս նաղելի «հատակ» մեծաշուք.

Առատահանճար բնութեան բովելից
Դեռ ոչ ոք աչնպէս «պատկեր» չէ
ուսել.

Գեռ երկնալին նուրբ, փափկամորթ
ձեռքեր

Աչնպէս մետաքսեալ «մազեր» չեն
հիւսել.

Գեռ գարնան օրում ցօղը վաղոր-
դեան

Չէ թրջել աչնպէս մի «վարդ» ան-
նման...

Հերոսների կեանքի արտաշա-
տութիւններն էլ պատանի բանա-
ստեղծի գրչի տակից Շահ Նամէնե-
րի ոգով տողորւած են դուրս գա-
լիս: Որպէս զի մեր նմուշները շատ
աւելի ծաւալ չստանան, մէջէ մէջ
դնենք աչտեղ նաեւ մի երկու տուն
մենամարտութեան նկարագրութիւ-
նից:

Յանկարծ դուրս թռան աչդ բա-
նակներից
Երկու առիւծներ— Ռոստոմ և Սալ-
ման.

Հեծած նժուղներ, իբրեւ պիտեան,
ձկան կազնեցին իրար լանդիման...

Մի քանի անգամ լաչն ասպարէ-
զում

Նրանք համարձակ պտուտ արեցին.

Որպէս հողմալին անդ փոթորիկ
Կաթակի նման իրար վազեցին...

Որպէս ապառաժ— դարաւոր վկա—
Ահեղատեսիլ կանգնած լանդիման,
Կռւում են, կռւում, կռւում անխնայ.
Բալց անկաղթ մարտից նրանք
ձանձրացած՝

Իջնում են ձիուց հանգստանալու...

Այսքանովս ցանկալով գաղափար
տալ մեր պատանի բանաստեղծի
չուտալի կարողութեան մասին, աւե-
լորդ ենք համարում ներկալ արտա-
դրութեան ձևական ու նիւթական
գնահատութիւնն անել: Եթէ երի-
տասարդ Բալասեանը նորից ձեռ-
նարկելու լինէր մի աչդպիսի երկա-
սիրութեան՝ իհարկէ նա կը զտէր աչս
նիւթերը հին ու նոր գաղափարների
աչնպիսի խառնուրդներից, որոնք
աններդաշնակութիւն են ձգում պատ-
կերների մէջ. նա աւելի կիրթ ճա-
շակով կը մշակէր աչս չափական բա-
նաստեղծութիւնը, աւելի նուրբ գոյ-
ներով կը նկարէր աչս պատկերները:

Յ. Տ.-Մ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Պոլիտեխնիկումի խնդրի առիթով

Բացի աւագակութիւնը արմատախիլ անելու խնդրից, որ տեղիք տւաւ բաւական խոշոր փոփոխութիւնների մեր երկրի վարչական կազմի մէջ, — այս տարին կարող է շնորհաւորել իրեն երեք խնդիրների համար, որոնք տարւայ ընթացքում տեսան աւելի գործնական հողի վրայ դրւած — և հանգամանքները յոյս են տալիս, որ նոցա լուծումը մօտաւոր ասպագային է վերապահւած — դրբա են՝ նահանգական-գաւառական ինքնավարութեան խնդիր յարուցանելը Թիֆլիսի և Քութայիսի նահանգների համար, Կովկասում երդւեալ դատաւորների հաստատութեան խնդրի քննութիւնը բարձր կառավարչական ատեաններում, և — Կովկասում քաղմարտական ղալրոց (պոլիտեխնիկում) հիմնելու խնդիրը:

Ռուսաց տեղական մամուլը բուռն կերպով միջամտեց այդ խնդիրների քննութեանը. բայց այդ միջամտութիւնը կրեց միակողմանի պոլեմիկայի կերպարանք, շնորհիւ «Կաւկազ» լրագրի այժմեան խմբագիր պ. Վելիչկո՛ի տենդենցիական վերաբերմունքին դէպի բոլոր Կովկասեան կարեւոր խնդիրները, որի համար առաջին հարցը մի խնդիր քննելիս այն է թէ արդեօք այս ու այն գործի մէջ հայերը որքան մեծ մասնակցութիւն, հետեւապէս նոքա դորանից որքան մեծ շահ են ունենալու, համեմատաբար ուրիշ Կովկասեան ազգերի հետ: Եւ պ. Վելիչկո՛ի աչքում՝ նոյն իսկ եթէ հայերը աննշան թւով մասնակցեն գործին՝ — մեծ շահը արդէն նոցանն է: Այսպէս, օրինակ, երբ խնդիր եղաւ Թիֆլիսի նահանգում ղեմստւային ինքնավարութիւն մտցնելու, այն նահանգում, ուր հայերը փոքրամասնութիւն են կազմում (միայն մի քառորդը նահանգի ազգաբնակու-

(Թեան!), պ. Վելիչկո՞ն էլի խնդրի մէջ մոցրուց իւր սիրած կեղծ նոտան. իբր թէ, թէ և հայերը այդ նահանգում փոքրամասնութիւն են կազմում և չնայած որ զեմնուօջի գործերում տեղական ազնականութեանը առաջնորդող դեր է յատկացրած, — ազնականութիւն, որի մէջ հայերը շատ աննշան տոկոս են կազմում, — այնուամենայնիւ իբր թէ այդ փոքր տոկոսով հայերը պիտի գերիշխանութիւն ձեռք բերեն զեմնուային հաստատութիւնների մէջ, ի փնաս... վրացիների. այսպիսով Թիֆլիսի նահանգում հաստատուած նահանգական և զաւառական ինքնավարութիւնը իբր թէ օգտուէտ է լինելու միայն հայերին: Եզրակացութիւն — զեմնուօն հարկաւոր չէ Թիֆլիսի նահանգի համար...

Մէկը, որ այսպիսի դիրք է բռնում նահանգական ինքնավարութեան խնդրի մէջ Թիֆլիսի նահանգի համար, չպիտի գայ զարմացնելու, երբ մի այլ անգամ, պոլիտեխնիկումի խնդրի մէջ, նոյն դատողութիւնով առաջնորդէ: Մրցում են երկու քաղաք, որոնցից մինը, կամենում է համոզել կառավարութեանը որ պոլիտեխնիկումը (հանքաբանական և գիւղատնտեսական բաժանմունքներով) հաստատուի Վլադիկաւկազում, իսկ միւսը՝ թէ աւելի լաւ է այդ բարձրագոյն դպրոցը հիմնել Թիֆլիսում: Եւ ահա, մինչդեռ երկու քաղաքների վարչութիւնները ճգնում են ապացուցել իւրաքանչիւրը իւր քաղաքի առաւելութիւնները յիշեալ նպատակի համար, պ. Վելիչկոն Վաւկազում քննում է նոյն խնդիրը իւր տեսակէտից, և գտնում, որ մի պոլիտեխնիկում Թիֆլիսում ծառայելու է հայերի օգտին ի փնաս կովկասեան միւս ազգութիւնների. այդ դպրոցը լքցւելու է առաւելապէս հայերով, և դորա հետեանքը լինելու է այն, որ հայերը այժմանից էլ աւելի իշխելու են այն ամեն տեղերում, ուր պահանջում է մասնագիտական տեխնիկական ուսում. որ ասել է թէ նոքա, հայերը, դառնալու են նիւթապէս աւելի զօրեղ, քանի որ տեխնիկական ուսումը ծառայում է երկրի արդիւնաբերական գործերին: Բացի այդ, — եթէ միայն լաւ ենք հասկացել պ. Վելիչկո՞ի միտքը, — մի պոլիտեխնիկում Թիֆլիսում, լքցւելով գլխաւորապէս հայերով, կրելու է հայկական ուսանողութեան կնիք և ազդելու է քաղաքի գլխաւոր տարրից, որ հայկական է: Աւելցնենք, — միշտ ըստ Վաւկազի — որ չքաւոր հայ ուսա-

նողներն համար հարուստ հայերը ստիպենդիաներ են ստեղծելու— մասնաւոր բարեգործութիւնով, կամ կտակներով, մինչդեռ, օրինակ, վրացիք, այդ չեն կարողանալու, իրենց համեմատական ազքատութեան պատճառով: Իսկ ուսները? Ռուսները հիւսիսային Վոլկասից, ուր նոքա մեծաքանակ ազգաբնակութիւն են կազմում, չեն գալ Թիֆլիսի պոլիտեխնիկումը, այլ կը գերազասեն ներքին Ռուսաստանի բարձրագոյն դպրոցները. իսկ անդրկովկասում ուսները համեմատապէս փոքր թիւ են կազմում:

Այդ է ահա պ. Վելիչկովի կարծիքների ծուծը Թիֆլիսում պոլիտեխնիկում հիմնելու մասին. այդ պատճառներով նա գերադասում է որ պոլիտեխնիկումը հիմնուի հայերի ազդեցութիւնից հեռու Վլադիկաւկազում, և նոյն իսկ Փութայիսում:

Ոչ ոք չի տարակուսում, որ պ. Վելիչկովի առաջ բերած այլ առաւելութիւնները յօգուտ Վլադիկաւկազի շատ թէ քիչ հնարովի են. դոքա բոլորը ոչ այլ ինչ են, եթէ ոչ ձգտումն՝ սնտեսական և կրթական հիմքեր ստեղծել ի վնաս Թիֆլիսի, որպէս զի հակահայկանութիւնը միակ հիմք չերևայ այն մարդկանց աչքում, որոնք խնդրի վրայ կը կամենան ազգային տեսակէտից չը նայել: Պր. Վելիչկովի աչքում ազգայնական հանգամանքը այնքան կարևոր է, որ նա աշխատում է միայն հակադրել Թիֆլիսի համար յայտնաժառակելութիւններին՝ ուրիշ առաւելութիւններ (իսկական թէ ոչ իսկական) որ կարող էր ունենալ Վլադիկաւկազը:

Չպէտք է կարծել թէ պ. Վելիչկովն այդ և նման խնդիրներում «Վաւկազ» լրագրի մէջ ղեկավարւում է միայն իւր անհատական կարծիքներով ու տրամադրութիւններով: Ինչ վերաբերում է յատկապէս պոլիտեխնիկումին, Վլադիկաւկազում այդ բարձրագոյն դըպրոցը հիմնելու խնդիրը արծարծւած էր դեռ աւելի առաջ, քան նոյն իսկ Վլադիկաւկազի քաղաքային վարչութիւնը ինքը այդ մասին մտածեց. այդ միտքը յղացւեց Ս. Պետերբուրգի յայտնի հայակեր և օտարակեր «Նովոե Վրեմիա» լրագրում դեռ ևս մի թէ երկու տարի առաջ, երբ Վոլկասում ոչ մի քաղաք չէր մտահոյւմ այդ դպրոցը ունենալու պատիւը իրարից խլել: Եւ, որքան յիշում ենք, «Նովոե Վրեմիա»-ում այդ խնդիրը շօշափողը եղաւ այն պ. Վենիկովը, որը ներկայումս «Վաւկազի» «ասիական քաղաքականութեան»

մարտնչող աշխատակիցն է: Եւ հէնց այն ժամանակ Վլադիկաւկազը նախընտրելի էր ցոյց տրւում որպէս «ռուսական» քաղաք, հակադրութեամբ Թիֆլիսի:

Պր. Վելիչկօն իւր վերաբերմունքով դէպի Կովկասեան խնդիրները բնաւ առանձին չի կանգնած. ընդհակառակը, նա ներկայացուցիչ է Ռուսիայի մայրաքաղաքային մամուլի մի մասի մէջ տարիներից ի վեր արծարծող և շատ զօրեղ ձեռքերով առաջ տանող մի ուղղութեան: Երկար խօսել այդ ուղղութեան ամբողջութեան մասին այժմ տեղը չէ. բայց միայն հարկ ենք համարում ուշադիր անել մեր ընթերցողներին, որ այդ ուղղութիւնը այնքան արդէն ընդհանրացած է Ռուսիայում, որ երբ նա արտայայտւում է մեղմ կերպով—արդէն այդ մեղմութիւնը ծափահարողներ է զանում նոյն իսկ մեզնում: Ամենամեծ զիջումը որ անում է այդ ուղղութիւնը ռուսահայտակ օտար ազգերին, այն է, որ պէտք է «համընդատար» լինել դէպի այդ ազգերի լեզուն, կրօնը, իբր, այսպէս ասած, մանկավարժական մեթոդ՝ որ այդ օտար ազգերը չխրտնեն: Դա քարոզ չէ յարգանքի դէպի օսարների լեզուն, կրօնը և այլ առանձնայատկութիւնները, այլ շատ-շատ՝ քարոզ է «չարիքը» մի առժամանակ տանելու, համբերելու... Եւ որովհետեւ դա այնուամենայնիւ միայն մի «չարիք» է, ուստի պէտք է միաժամանակ աշխատել այդ «այլ և այլ ինքնուրոյնութիւնները» մոռացնել տալ թէև կամաց-կամաց, բայց և այնպէս կտրուկ միջոցներով:

Այդ ուղղութեան բազմաթիւ արտայայտութիւններից մէկն է միայն այն վերաբերմունքը դէպի հայերը, որ ամենայն իրաւամբ կարող է կնքել «օտարատեցութիւն» անունով. դորա զօրութիւնն է, որ, ի միջի այլոց, թելադրում է պ. Վենիւկովին, Վելիչկօն և այլն՝ բարձրագոյն դպրոցը Կովկասում հիմնել Վլադիկաւկազում, նոյն իսկ Գութայիսում, բայց ոչ Թիֆլիսում, ուր հայը զօրեղ տարր է կադմում:

Բայց բնաւ չպէտք է կարծել, թէ մեր ակնարկած ուղղութիւնը, մեզնում արտայայտելով իբր հայատեցութիւն, կարող լինի որքեւ օտար ազգի սիրող լինել. օրինակ, «լրացասէր» լինել անկեղծօրէն. այդպիսի բան չի կարող տեղի ունենալ, դա կը լինէր հակասութիւն: Բայց այն, ինչ չի կարող թոյլ տրւել ուղղութեան

տեսակէտից, այդ նոյնը շատ լաւ կարելի է թոյլ տալ... մանկավարժական տեսակէտից, որ ասել է թէ՛ տակտիկայի պահանջումների համեմատ: Քանի որ այսօր այդ ուղղութիւնը կռիւ է մղում հայի ազդեցութեան դէմ, նա, այդ ուղղութիւնը, ըստ արտաքինի՝ «վրացասէր» է. բայց մի պայմանով. և այդ պայմանն այս է՝—որ, թոյլ տալով վրացիներին կարծելու, թէ այդ օտարակեր ուղղութիւնը վրացասէր է, չլինի թէ վրացիք դորանից իրական օգուտներ ստանան, և վաղը նոքա դառնան այն «ոյժը», ինչ որ, նոցա կարծիքով, այսօր հայերն են ներկայացնում:—Հարց.—Հարկաւոր է արդեօք ինքնավարութիւն Թիֆլիսի նահանգին, ուր ահագին մեծամասնութիւնը վրացիք են: Պատասխան.—Ոչ, որովհետեւ այդտեղ այնուամենայնիւ հայեր կան:—Այդպէս կ'ասի պ. Վելիչկովի «Վաւկազը»: Հարց.—Բայց հարկաւոր է արդեօք ինքնավարութիւն ներմուծել Քութայիսի նահանգում, ուր գրեթէ բնաւ հայեր չկան և ամենքը վրացի են: Պատասխան.—Ոչ, որովհետեւ ժողովուրդը այնտեղ դեռ հասունացած չէ ինքնավարութեան համար, — այդպէս կ'պատասխանի Վլադիկաւկազի ռուսաց թերթը, իսկ Թիֆլիսի «Վաւկազը» կը լռի... Նոյնը կը պատահի նաեւ պոլիտեխնիկումի դէպքում, որ և գիտեն մեր ընթերցողները, այս զանազանութեամբ, որ բան է եթէ արդէն կատարելապէս անկարելի լինի Վլադիկաւկազում հիմնել այդ բարձր դպրոցը, թող զոնէ ասուած լինի թէ «մենք Քութայիսի, վրացական կենդրոնի, անունն էլ տւինք, բայց... լսող չեղաւ»!

Ահա, այսպէս կարող է «վրացասէր լինել մի «հայատեաց» ուղղութիւն, որը այնքան հային չէ ատում, որքան «օտարին»—երբ վերջինս այդ ուղղութեան ներկայացուցիչների աչքում որքան և իցէ ոյժ է ներկայացնում, ինչ բանում էլ որ արտայայտում լինի այդ ոյժը. թող դա արտայայտւի թէկուզ մի քաղաքի ներքին կառավարութեան գործում. թող նա արտայայտւի անտեսական որ և է գերազանցութեան մէջ. թող դա արտայայտւի նոյն իսկ բարձրագոյն ուսում ստացողների համեմատական թւի մէջ...

Այդ ուղղութիւնը, Կովկասեան հողի վրայ փոխադրելով՝ մոռացաւ նոյն իսկ թէ կայ մի երկիր, որ Կովկաս է կոչւում. հային աւելի պինդ դիպչելու համար՝ նա «Կովկասը» պատկացրեց և ամեն

ինչ ամիսինց Թիֆլիս քաղաքի մէջ. Թիֆլիսը—դառաւ ամբողջ Առկիսա: Հայութիւնը այս է ու այն է—այդ նշանակում է հայը թիֆլիսումն այս է ու այն է: Ի՞նչ է շինում հայը Թիֆլիսում—հարցրեց նա. չէ՞ որ Թիֆլիսը վրացոց մայրաքաղաք է—հարցնում էր նա, երբ հարկաւոր էր վրացիների օգնութեամբ հայերին Թիֆլիսում ջարդել: Եւ նա, որը շարունակ պետական դադափարի անունից է խօսում, չգիտենալու էր զնում, որ Թիֆլիսը ոչ թէ վրաց մայրաքաղաք է, այլ Կովկասի, և որ հետեւապէս այդ քաղաքի մէջ այլ և այլ ազգութիւնների ներկայութիւնը միայն շատ թույլ կապ ունի Թիֆլիսի նահանգի պայմանների հետ և կամ այն իրողութեան հետ, որ Թիֆլիսը մօտ մի դար առաջ Վրաստանի մայրաքաղաք էր: Եւ դեռ այս պարզ բանը մինչ օրս էլ ղեռ յեւրելւում է վրաց «Իւերիա» և ռուս-վրացական մէջ, ի մեծ նախատինք մարդկային պարզ բանականութեան ¹⁾:

¹⁾ Օգտուում ենք դէպքից վիշտակելու համար մի կարեոր սխալ, կամ առ նւազն չափազանցութիւն, որից զերծ չեն մնում նոյն իսկ այն վրացի ինտելիգէնտները, որոնք «Նովոե Աբազրենիե»-ի կողմնակից են: Այդ լարդելի թերթի մշտական աշխատակից պ. Լալի, թերթի №-ում առ 10 դեկտեմբերի, ըստ արժանւոյն գնահատութիւն տալով պ. Վելիչկո'ի «համակրութիւններին» դէպի վրացի ազգը, աշուտամենայնիւ համաձայնում է պ. Վելիչկո'ի աչա խօսքերին, թէ «մի քանի տասնեակ տարիներից ի վեր տեղական կեանքի կազմը սուր կերպով փոխեց՝ վրացի և հայ ազգութիւնների միջև հաւասարակշռութիւնը խանգարեց, և այդ դէպքում առաջինը, որը հողի հետ է կապւած, տ' տեսապէս տանուլ տեց, իսկ երկրորդը—առևտրականը (торгово-промышленная) —տնտեսապէս տարաւ»: Համաձայնելով դորան, պ. Լալին աչապէս է «ուղղում» պ. Վելիչկո'ի խօսքերը. «Այստեղ (ասում է պ. Լալի), մենք գտնում ենք ճիշտ վիպութիւն իրողութեան, քաջ միայն աչա սրբագրութիւնով, որ հայոց ազգ անունով աչա դէպքում պիտի հասկանալ միայն աչա հայերը, որոնք բնակում են Թիֆլիսի նահանգում, ուր նոքա մեծ մասամբ կազմում են քաղաքային ազգաբնակչութիւն. մինչդեռ Գանձակի, Երևանի և մասամբ ալ նահանգներում մենք տեսնում ենք հայ հողագործ ժողովուրդ»:

Պարզ չէ՞ միթէ որ պ. Լալի'ն, «Նովոե Աբազրենիե»-ում պնդում է թէ Թիֆլիսի նահանգում հայերի մեծամասնութիւնը քաղաքներում է, և ամենավերջին թէ և ոչ որոշ խօսքերով հակադէմ չի տալիս արդեօք թէ իբր հայ հողագործ ժողովուրդ տեսնելու համար պիտի դնալ Գանձակի,

Ահա այդպէս է որ այժմ՝ հայոց ազգը՝ որոշ թերթերում նոյնացել է Թիֆլիսի նահանգի և նոյն իսկ Թիֆլիս քաղաքի հայութեան հետ. և որովհետև հայութիւնը հարածի նշանակէտ է ընտրած, ուստի այդ ուղղութեան թերթերի համար Թիֆլիսը և շատ-շատ Թիֆլիսի նահանգը և նոցա շահերը բռնել են Կովկասի և Կովկասեան ընդհանուր շահերի տեղը: Կովկասեան լուրերը նոցա համար ծառայում են միայն իբր օժանդակ նիւթեր իրենց այդ նպատակի համար: Հայկական կեանքում ամեն լուսաւոր երևոյթ մեծ խնամքով թաղցնւում է, և որ աւելի վրդովեցուցիչ է—նոյն իսկ լուսաւոր արտայայտութիւնները առաջ են բերւում «ի հաստատութիւն» այն գունաւորման, որ նոքա տալիս են հայկական

երեանի և մասամբ ալ նահանգները?

Ղշմարտութիւնը սակայն այս է, որ նոյն իսկ Թիֆլիսի նահանգում հազիրը մեծամասնաբար գիւղերում են և փոքրամասնութեամբ միայն քաղաքներում, հաշւած դորա մէջ նոյն իսկ Թիֆլիսը, որը ոչ թէ լոկ Թիֆլիսի նահանգի կենտրոնն է, ալ Կովկասի մալրաքաղաքը, որի մէջ գոյութիւն ունեցող բազմաթիւ և ամեն կարգի հաստատութիւններ կան, (դոցա մէջ նաև անտեսական հաստատութիւններ!) որոնք ոչ թէ Թիֆլիսի նահանգի ալ Կովկասի մատակարարութեանն են ծառայում:

Արդ, առաջիմ, մինչև որ ներկայ տարւալ միօրեալ մարդահամարի արդիւնքները կը հրատարակեն, մեր տեղեկութիւնները պիտի քաղենք 1886-ի մարդահամարից (Сводъ статистич. данныхъ о насел. Закавказья), որից երևում է հետեւեալը.

Հայերի թիւը Թիֆլիսի նահանգում էր. 193.610 հոգի.

Որից նահանգի 7 քաղաքներում 71.008 »

Ալը նահանգում, մեր հաշուով, հայեր բնակւում են 440 գիւղերում, որոնցից 340 գիւղերում նոքա 6-6 տնից պակաս չեն, իսկ շատերում նաև մեծամասնութիւն են կազմում. բոլոր գիւղերում նոցա թիւն էր 122.602 »

Որ նշանակում է թէ պ. 1 ալին շատ սխալւում է:

Իսկ եթէ Թիֆլիս քաղաքը ջոկենք նահանգից, ապա կը ստանանք, որ՝

Թիֆլիսի նահանգում, ի բաց առած Թիֆլիսը, հայերի թիւն էր. 156.100 հոգի.

որից նահանգի 6 քաղաքն. (ուրեմն բաց առած Թիֆլիսը). 33.508 »

Իսկ գիւղերում. 122.602 »

կեանքին, Թիֆլիսում Կաւկազ լրագիրը քանիցս կրկնել է և շարունակում է անամօթաբար կրկնել թէ հայոց փակած դպրոցները «տննդենցիական դպրոցներ էին»։ այդ թերթը պ. Վելիչկո՛ի ձեռքում նորերս մի յօդած տպեց «Մութ խնդիր» («Туманный вопрос») խորագրով, և բանից դուրս եկաւ որ այդ «մութ խնդիրը» Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան եկամուտների գործադրութիւնն է։

Խրախուսած Կաւկազ -ից, իշխան Իլիա ճաւճաւաճէ՛ իւր «Իւերիա» թերթերում զիւ նորերս (15 դեկտ.) հրապարակ եկաւ հայ տարրի օգտակարութեան ու վնասակարութեան մասին խօսելու։ Այդ այն իշխ. ճաւճաւաճէն է, որը քաղաքային ընտրութիւնների ժամանակ հայերին կոչեց «կողոպտողներ» և վրացոց հողի վրայ «խիզաններ»։ Այժմ նա խօսում է հայ «բուրժուազիայի» (փողատէր դասակարգի) մասին, բայց ամենքի համար պարզ է, որ հայ բուրժուազիայից դէն՝ իշխ. ճաւճաւաճէն հայութիւն չի ճանաչում։ Եւ միայն շատ բնական է որ պ. Վելիչկո՛ն սրտի անհուն բերկրութեամբ թարգմանաբար առաջ բերաւ այդ յօդածը, որից անհրաժեշտ ենք համարում այս քաղաճները առաջ բերել։

«Տեղական հայ բուրժուազիան նման չէ արեւմտեան Եւրոպայի բուրժուազիային, հայ բուրժուազիան որպէս դաշտամուկ ցանքսի մէջ, որպէս որդը փաշտի մէջ, որպէս բաքտերիա օրգանիզմի մէջ,—ուտում է և քանդում ինչ նորան շրջապատում է, ոչինչ չստեղծելով, ոչինչ չհնարելով. նա միայն իւր գրպանն է քաշում փողերը և հարքստութիւնները ուրիշների գրպաններից և պինդ նստում սակով լեցրած սնդուկների վրայ։ Այստեղի բուրժուազիան ներկայացնում է ամենավատը բուրժուազիայի բոլոր տեսակներից և ամենից քիչ տանելին է. դա ինչ-որ մանր, դուխանալին, մարկիտանտալին, բռնցքային բուրժուազիա է։ Ստեղծել և հնարել որ և իցէ բան նորան բնաւ վիճակած չէ։ Աստուծո՛, որպէս երևում է, նորան պացել է «պղ ընդունակութիւնները»։

Ապա իշխ. ճաւճաւաճէն քարոզում է.

«ապրեցէք, բայց թող տէք որ մենք (վրացիներս) էլ ապրենք»։

Իսկ նոցա, որոնք (հայերից) ասում են թէ՛ մենք և վրացիք եղբայրներ ենք, ճաւճաւաճէն պատասխանում է.

«Լսիր, եթէ դու իմ եղբայրն ես և ուզում ես միութիւն, ինչու հապա դու դուրս քշեցիր ինձ իմ քաղաքի խորհրդարանից (դումալից)»։

ինչո՞ւ ինձնից խլում ես քաղաքս և սեփականացնում միայն քեզ... Ումն ես ուղում խաբել աչդսիսի ֆոխուսներով, որոնք արժանի են «կոմպրաչիկոսներին» և ֆիզլեարներին, որոնք աչքակապութիւն են անում»:

Մեր ընթերցողներին նկատել ենք տալիս կրկին և կրկին, որ նաև «Եւերիայի» յօդաժողով Կովկասի հայը այնքանով է հետաքրքրում իշխ. ճաւճաւաճէին, որքանով միայն Հայեր կան Վրաստանում ընդհանրապէս և մանաւանդ Թիֆլիսում: Այդ հանգամանքը շատ նշանաւոր է ըմբռնելու համար թէ ակնարկեա՞ծ ուղղութեան թերթերի համար որքան և որքան սահմանափակել է հասկացողութիւնը Կովկասեան կեանքի շահերի համար:

Այդ է յատկանիշը վատ ուղղութիւնների. նոքա զալիս են սահմանափակելու և ոչ ընդարձակելու ընթերցողների ոգեկան և մտաւոր հորիզոնը:

Իշխ. ճաւճաւաճէն բնորոշումն է ուղում անել հայ բուրժուազիայի, որպէս զի դորանով որոշէ տեղը, որ պէտք է ըռնէր հայութիւնը և կամ որ պէտք է յատկացէր նրան գէթ այն ամեն հասարակական գործերում, ուր հայը ևւ վրացին իրար հետ շըփում են:

Այդ միտքն է թաղցրած այդ յօդաժողով, դորան է հետևում նաև պ. Վելիչկո՞ն, որի տենդենցիան սակայն կարող է այլ լինել, ճաւճաւաճէինը՝ այլ. և այդ արտայայտութիւններն են որ գալիս են զովացնելու այն ամենքի սրտերը, որոնք տենչում են զեկավարող ոյժ կազմելու ամեն կարգի խնդիրներում մեր երկրի մէջ: Թէ ճաւճաւաճէն, և թէ Վելիչկո՞ն աշխատում են հայութիւնը անւանարկ անել՝ նորա տեղը այլ տարրերի տալու համար: Բայց ո՞ւմ? Այդ ևս մեծ գաղտնիք է. ամեն անգամ երբ մի վրացի հայութեան դէմ մարտնչելով հայ բուրժուազիան է սեւացնում, նա աչքի առաջ ունի վրացի ազնւականութիւնը: Վրացիք, որպէս յայտնի է, չափազանց թույլ բուրժուազիա ունին, այնքան թույլ, որ վրացոց մէջ գրեթէ բանի տեղ չի դնում: Նոքա ունին հողագործ դասակարգ, որից առաջանում է և ծառայ դասակարգը, և ազնւական դասակարգ, որը առաջացնում է նաև պետական ծառայողներ: Հողագործ-

ները և ծառաները եղել են ճորտեր, որոնց ազատումը սկսել է 60-ական թվականներից, և մինչ օրս էլ դեռ այդ գործը կատարելապես չի վերջացել: Այդ դասակարգը ստորադրեալ, կիսաստրուկ դասակարգ էր և հասարակական գործունէութիւն չի ունեցել: Հասարակական գործերի վարիչ եղել է միմիայն ազնական դասակարգը. և որովհետեւ ճորտութեան վերացումից դէս չի կարողացել կազմել մի ծանրակշիռ երրորդ դասակարգ, ազնականութիւնը մինչև այսօր էլ մնացել է զլխաւոր, գրեթէ բացառիկ վարիչ ոյժը վրացոց մէջ: Սոցանում գրեթէ ոչ մի հասարակական գործ չի կարող զլուս գալ, առանց ազնականութեան նախաձեռնութեան կամ պաշտպանութեան, կամ միջամտութեան: Այնտեղ, ուր հորիաւոր է դիրք, հարստութիւն, գիտութիւն որ և է գործ առաջացնելու համար,— այնտեղ նոցանում պէտք է գործի զլուս կանգնի ազնականութիւնը: Եւ ոչ միայն զուտ հասարակական գործերի համար այդպէս է, այլ և ազնականութեան ոյժերին են ապաւինում վրացիք՝ իրենց երկրի տնտեսական ոյժերը բարձրացնելու, երկրի մէջ ամեն կարգի տնտեսական գործեր ձեռնարկելու և վարելու համար:

Ահա այդ ազնական դասակարգն է, որը իբր թէ պիտի գայ ու փոխարինի հայ բուրժուազիան՝ քաղաքի և երկրի հանրահասարակական գործերում, դէի՛ տ ամեն տեղ, ուր հայը շփուում է վրացու հետ:

Այսպիսով դէմ հանդիման են կանգնած հայկական բուրժուազիան—և՛ վրաց ազնականութիւնը: Իսկ մի երրորդ խաւ, որ պատրաստուում է՝ հասարակական ծանրակշիռ դեր խաղալու համար,— դա՛ զուտ ռուսականն է, որի էլեմէնտները կազմում է առայժմ միայն ռուս շինոմիլիութիւնը: Եւ որովհետեւ այս տարրը դէթ առայժմ թույլ է դասակարգի տեղ բռնելու համար, ռուսի այդ խաւը որոնում է նեցուկ, և այն գտնել է կարծում վրացի ազնականութեան մէջ: Այսպէս է որ պ. Վելիչկովն ու իշխան Ճաւաւաձէն իրար հանդիպում են և իրար ձեռք տալիս, ընդհանուր ոյժերով հայ տարրի դէմ կռւելու համար:

Մի բան, որպէս զի երկուստեք համակրութիւն գտնի, պէտք է.

հանրագումար լինի մի ոյժ, որը կամենում է փոխարինել մի այլ ոյժ—պէտք է գէթ վերջինիս հաւասար լինի, կամ, աւելի լաւ ասած, պէտք է զօրեղ և աւելի կանոնաւոր ու յուսալի զարգացման գրաւականներ տայ: Այժմեան երրորդ դասակարգի (հայ բուրժուազիայի) տեղը կարելի է տալ միայն նման երրորդ դասակարգ զարգացնելով, թէկուզ դա լինի մի այլ ազգից, քան հայկականն է: Ազնւականութիւնը, զուտ ազնւականութիւն մնալով, այսինքն երեսը դարձրած դէպի պատմական անցեալը և անցեալի յիշողութիւնները,—երբէք չի կարող երրորդ դասակարգի տեղը տալ, չի կարող ուրեմն հայ բուրժուազիայի տեղը տալ: Այդ ազնւականութիւնը պիտի փոխէ իւր բնաւորութիւնը. նա պէտք է ձգտի երրորդ դասակարգի շարքն անցնել:

Իսկապէս այդպիսի մի շարժում էլ նկատուում է վրացի ազնւականութեան մէջ. մանր ազնւականութիւնը (այն որ ազնւաւորն է կոչուում) ճանապարհի վրայ է դէպի երրորդ դասակարգը փոխելու, և եթէ վրացոց կեանքի մէջ այս քառորդ դարում մի բան կատարւել է, զլիաւորապէս այդ մանր ազնւականութեան շնորհքն է և ոչ բարձր ազնւականութեան (ւթաւաղներին): Բայց այդ գործունէութիւնը, համեմատաբար, դեռ շատ աննշան է եղած. ոչ միայն այդ գործունէութիւնով Կովկասեան կեանքը ոչ մի բան չի զգացել, այլ և նոյն իսկ վրացի ժողովրդի կեանքում շատ քիչ բան է նկատուում: Նոյն իսկ Վրացական կեանքի համար վրացի ոյժերը հեռաւորապէս անգամ բաւարարութիւն չեն տալիս, ոչ գործարանական կեանքում, որ չունին, ոչ գիւղատնտեսութեան համար, ուր հազիւ հազ մի փոքր յառաջադիմութիւն է նկատուում, բայց ոչ ընդհանրապէս, ոչ առւտրի համար, ոչ արւեստագիտութեան մէջ և այլն:—

Դառն իրոնիայի խաղ է կարծես, որ նոյն իշխ. ճաւճաւաճէի ձեւերիայումն, կարճ միջոց նորա յարձակումից յետոյ հայ բուրժուազիայի վրայ, լոյս տեսաւ մի յօդած, որ և ընդհանուր ուշադրութեան արժանացաւ, Վրաց ազնւականութիւնը խորագրով, որ վկայուում է, որ վրաց ազնւականութիւնը ժողովրդի համար ոչինչ չի արել և ոչինչ չի անում, չնայած որ վայելել է նոյն իսկ հայսրների առատ ողորմածութիւնները: Նա չի շեցնում է որ նոյն

իսկ վրաց ազնականաց բանկի գաղափարին բարձր ազնականու-
թիւնը հակառակ էր, բայց երբ հիմնեց՝ նա եկաւ նորա թւերի
տակ պատասպարելու:

Բայց այդ չէ միայն, որ կոտորում է թւերը իշխ. ճաւճաւա-
ձէի. դորանից կարեւորագոյնը այն է, որ նա հայ բուրժուազիայի
նկարագրի մէջ մեծ անիրաւութիւններ է թոյլ տւել իրեն:

Սենք, որ երբեք քնքշութիւններ չենք բանեցրել հայ վաճա-
ռական դասակարգի համար, այնուամենայնիւ պէտք է բողոքենք
իշխ. ճաւճաւաձէի դէմ, որը մի սանձարձակութեամբ, որը իւր
նմանն է որոնում, հայոց բուրժուազիան կատարեալ հակապատկերն
է ցոյց տալ ուզում արեւմտեան Եւրոպայի բուրժուազիայի: Նա այն-
պէս է ներկայացնում հայ երրորդ դասակարգը, կարծես սա մի
սառած մարմին լինի: Զարաչար սխալում է Վերիայի պուլի-
ցիստը. ժամանակի հետ այդ բուրժուազիան փոփոխութիւնների է
ենթարկւել: Եթէ մի 30—40 տարի առաջ հայ երրորդ դասա-
կարգը վաճառականներ ու կապալառուներ էր տալիս, այսօր նա
իւր գործունէութիւնը շատ աւելի ճիւղաւորել է. Կովկասի ու-
սում առած հայերի ահագին մեծամասնութիւնը այդ դասակար-
գից է. և եթէ մի մեծ մասը այդ ուսում առածների իւր իդէալ-
ներով հայրերից հեռու չէ գնացած, բայց գէթ մի մասը վաստակ-
ւած է ընդհանուր գաղափարականի համար. իսկ շատերի մասնա-
գիտութիւններն էլ իրենց գործադրական կողմից նոր ճիւղաւորու-
թիւն են մտցրել մեր տնտեսական կեանքի մէջ, մի բան, որ իշխ.
ճաւճաւաձէն հերքել է ուզում:

Վաճառականի կողքին այսօր մենք ունինք նաև ուսուցիչ, նաև
բժիշկ, նաև գրող, նաև քիմիկոս, նաև ինժեներ, գործարանատէր,
որ երկաթ է ձեծում, գործարանատէր ոչ մետաքսի թել է մա-
նում, այլ և կաշեգործ, հանքատէր, որ պղինձ է հալում, տպա-
րանատէր և ձուլարանատէր, այլ և նոյն իսկ գլինեգործներ ու գիւ-
ղատնտեսներ, որոնք նոր ճանապարհի վրայ են, և այլն:

Ճիշտ է, այս ամենը դեռ ևս նւազ չափով: Բայց այս կերպա-
րանափոխման ֆազիսի մէջ է հայ երրորդ դասակարգը, որի դիմաց
Վելիչկոն և ճաւճաւաձէն ոչինչ չունին դէմ դնելու:

Հայոց քննադատական մամուլի պարտականութիւնն է թոյլ չտալ որ հայ ժողովուրդը Կովկասում շփոթւի այն սխտեմատիկական յարձակումներին, որոնց նպատակը հայ տարրի նշանակելն է մեր երկրում: Այս տողերը մենք գրեցինք պոլիտեխնիկումի խնդրի առիթով: Անկեղծ յայտնում ենք, որ մենք ոչ մի կանխակալ վերաբերմունք չունինք դէպի այն հարցը, թէ որտեղ աւելի լաւ է հիմնել մի այլպիսի բարձրագոյն դպրոց՝ Թիֆլիսում, թէ Վլադիկաւկասում, Քութայիսում, թէ այլ ուր: Բայց նոցա, որոնք այդ խնդրին կամենում են տալ մի ուղղութիւն, համապատասխան իրենց ձգտումներին՝ հայ տարրին նպատաւոր չլինել, մենք կը կամենանք գիտաւորել մեր հայեացքը ամենայն պարզութեամբ: Մի պոլիտեխնիկում աւելի հեռու նպատակներ չի կարող և չպիտի ունենայ, քան թէ այն, ինչ այդ դպրանոցի ծրագիրն է ասում: Ունենալով հանքաբանական և գիւղատնտեսական բաժիններ, այդ դպրոցը պատրաստելու է հանքաբաններ և գիւղատնտեսներ: Ինկատի ունենալով հայեր վրացի ազգերի դասակարգային կազմութիւնների տարբերութիւնը, պէտք է կարծել, որ զէթ մինչ մի քառորդ դար հանքաբանական ճիւղում աւելի զօրեղ են լինելու հայերը, իսկ գիւղատնտեսական ճիւղում աւելի մեծ թիւ են կազմելու վրացիք: Պատճառը պարզ է. հանքագործութիւնը մեր ժամանակում առանց մեծ կապիտալի անկարելի է. իսկ կապիտալը աւելի հաշն ունի քան վրացին. պէտք է ուրեմն կարծել, որ մեր երկրում հանքատիրութիւնը աւելի հայերի ձեռքով կարող է առաջ գնալ, քան վրացոյ ձեռքով: Եւ հէնց այս բոպէին էլ, երբ այդ ճիւղը շատ քիչ է զարգացած մեր երկրում, հայը, նոյն իսկ այժմ եղածի մէջ, անհամեմատ աւելի խոշոր մասնակցութիւն ունի, քան վրացին: Դորա հակառակը՝ գիւղատնտեսական բաժինն է: Մի պոլիտեխնիկում, որ ունի գիւղատնտեսական բաժին, աւելի պատրաստում է կալաճատիրական գիւղատնտեսներ, ուզում ենք ասել գիւղատնտեսներ, որոնց գործելու դաշար ոչ թէ զիւղացու հողի փոքրիկ բաժիններն են, այլ կալաճատէրերի ընդարձակ կալաճները: Արդ, յիշած երկու ազգերին վրացիք անհամեմատ աւելի մեծ կալաճներ ունին մեր երկրում, քան հայերը: Պոլիտեխնիկումի գիւղատնտեսական բաժինը բնական է որ շատ աւելի վրացիք ընդունի, քան հայեր: Բայց դժբա-

իրար կատարելապէս չեն հաւասարակշռելու. ոչժը կամաց-կամաց քայց դրականապէս անցնելու է հայերի կողմը. և ահա թէ ինչու. Հայերի մէջ ներկայումս իսկ շատ տւելի թւով կալւածատէրեր կան. քան վրացոց մէջ հաւասարազօր կապիտալիստներ. պոլիտեխնիկումի գիւղատնտեսական բաժինը զարկ է տալու գիւղատնտեսութեան. կապիտալիստներից շատերը դառնալու են կալւածատէրեր, որոնց կառավարելու են պոլիտեխնիկում աւարտածները: Անգործ գիւղատնտեսները որոնելու են գործադրութեան դաշտ, և այդ որոնման մէջ նոքա անխուսափելի կերպով հանդիպելու են կապիտալիստին: Միջից դուրս է գալու ֆերմէր, մի տիպար, որը մեր կովկասեան կեանքում գրեթէ գոյութիւն չունի: Հանգամանքների ոյժով մի պոլիտեխնիկում գիւղատնտեսական բաժնով՝ զարգացնելու է, առաւելապէս հայերի մէջ, ֆերմերութիւնը. ֆերմերը մինչ մի քանի տասնեակ տարի դառնալու է մի դասակարգ, որը պիտի Կովկասեան կեանքի ֆակտորներից մէկը կազմի: Նորա դերը Կովկասեան տնտեսական կեանքում որոշւելու է այս հանգամանքով, որ ֆերմէրը այն է դէպի գիւղացին, ինչ որ է գործարանատէրը դէպի մանր արդիւնաբերողը: Սա մի խնդիր է, որի մասին մեր խորհրդածութիւնները ներկայ ճեսութեան սահմաններից հեռու կ'երթան. մենք այդ վերապահում ենք յատուկ յօդւածի համար. յիշեցնում ենք միայն, որ այդ խնդիրը առաջին անգամը չէ որ մեզ զբաղեցրել է. տարիներ առաջ մենք այդ շօշափել ենք գիւղական ինտելիգենցիային վերաբերեալ մեր յօդւածներում: Մենք այժմ կամեցանք միայն պարզել այս թէ ինչ է առաջացնելու մեզնում հաստատած մի պոլիտեխնիկում, մանաւանդ դորա այն հետեանքները, որ վերաբերում են հայերին ու վրացիներին. երրորդ դասակարգին ու ազնւականութեանը: Այս հետեանքները կ'ունենան մի պոլիտեխնիկում, որը հաւասարապէս մատչելի կը լինի թէ հային և թէ վրացուն, այսինքն, երբ նա հիմնւած կը լինի Անդրկովկասի որ և է յարմար տեղում. յարմարը Թիֆլիսն է թէ մի այլ կէտ — այդ մեզ համար վճուած խնդիր չէ. մեր կարծիքը այդ մասին վերապահում ենք: Մեզ համար պարզը առայժմ սա է, որ հայերը և վրացիք կը ստանան մի պոլիտեխնիկումից ամենամեծ օգուտը, իւրաքանչիւրը իւր ոյժերի համեմատ, միմիայն այն դէպքում, երբ այդ դպրոցը հիմնւած կը լինի

Անդրկովկասում՝ Կովկասեան հայերի և վրացիների համար շատ թէ քիչ հաւասար յարմար տեղում, որի որոշման մէջ դեր չի խաղալ որ և է ազգայնական տենդենցիա:

Իսկ մի պոլիտեխնիկում վարդիկակազի մէջ՝ կը թուլացնի հայերի ու վրացիների մի այդ տեսակ դպրոցից ստանալիք օգուտները: Հետեւաբար, Անդրկովկասում թէ Հիւսիսային Կովկասում հիմնելու խնդրի մէջ պէտք է վճռողական դեր խաղայ այս, թէ կշռի նժարի մէջ ինչ ծանրութիւն պիտի ներկայացնի պետութեան համար Անդրկովկասի տնտեսական զարգացումը, որի բաղդը գլխաւորապէս հայերի և վրացիների զարգացումից պիտի կախաժ լինի գէթ մինչ մի քառորդ դար, մինչև որ տեղական մի երրորդ տարր՝ թուրքականը՝ իւր դերը կ'որոշի այս կարգի խնդիրների մէջ և մինչև որ զուտ ռուսական տարրը կը սլարդի իւր կարողութեան չափը երկրիս տնտեսական զարգացման դորժում:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

ԱԶ ՈՒ ՁԱԽ

Բ.

Ձմեռ է։—Գաղթական մուրացիկներ փողոցներուն մէջ։—Քահանային խօսքերը։—
Տիուր մտքեր։—Բարեր սրուծեան ջինը։—Փողոցային Թերթը եւ իր գուշակութիւնը։

Բազու, 15 դեկտ. 1897 թ.

Ձիւնի ցանցսու հատիկներ կը թափթփին երկնքէն, և արդէն սպիտակ նօսր խաւով մը ծածկւած է գետինը. հիւսիսային հովը կծող սառնութեամբ մը լեցուց ամբողջ մթնոլորտը։ Ձմեռ է։

Ու ձմեռան բոլոր անախորժութիւնները կը կարդացւին սա խեղճերու դէմքերուն վրայ որ կանցնին փողոցներէն, որ հին ու թեթեւ հագուստներու մէջ կծկած ու կքած, տեղտեղ կանգ կ'առնեն, իրենց դողդոջուն, կապուտցած ձեռքը երկնցնելով անցորդներուն և բանհր մը փրսփրալով, որ չեն հասկցիր. և արդէն հովը՝ ցուրտ օդին մէջ՝ կը պատռտէ, կտոր-կտոր կ'ընէ ամէն ձայն ու խօսք։ Խեղճ գաղթականներ են. դռնէ դուռ, փողոցէ փողոց քարշ կածեն ինքզինքնին, որ կարծես իրական կենդանի պատկերներ լինին թշուառութեան և դժբախտութեան։ Հաւանականաբար մեծ չափողութիւն կ'ունենար աչն նկարիչը, որ կարենար այս թշուառները նկարել լաթին վրայ, կենդանի գոյներով, իրենց տրտմութեան և անբախտութեան դիմադներովը և դուրս ցոլացնէր աչն վիշտը որու մէջ թաթթւած են ալ խեղճերը։ Եւ կը կարծես՝ ոկարը զարդերէն մէկը կը լինէր հարուստի մը սալոնին, և շատերն ալ աչն ատեն կարեկցութիւն ու գութալի զգալին դէպի ալ թշուառ արարածները, որոնց բազուկները չեն երկնար սակաչն ողորմութիւն խնդրելու...

Ձիւնը իր խենթ, անկանոն խաղերն ունի օդին մէջ. կարծես մթնոլորտը ահագին միջոց մը լինի, և իրենք ձիւնի ալդ փսորները կը պարեն, կը պարեն քմահաճօրէն և չղճած վերջապէս՝ գետին կ'իջնան. բաց հովը, աւելի չիմար ու խաղասէր, կը վերցնէ զանոնք և դէս ու դէն կը չարտէ, կը խարազանէ անցորդներուն դէմքերը։ Ալդ գաղթականները, որ դան-

դադորէն կ'անցնին անցնողներուն մէջէն, թերևս կը խորհին թէ իրենց արգահատելի վիճակն ու դժբախտութիւնը ալս խիստ եղանակին աւելի կրնան զգալի ընել տալ ու առանց չուզիչ խօսքերու և պաղատանքներու պիտի կրնան գութը չարժեկ փողոցին մէջ որոնց ձեռք կ'երկնցնեն: Բայց ցոյրտ է. կառքերը իրարու ետեւէ կը թաւալին արագավագ՝ փափկասուն տիկիներ և մեծապատիւ պարոններ թռցնելով. և շատեր ալ կ'անցնին արագ քալերով, հաստ վերարկուններու կամ մուշտակներու մէջ փաթթած և չեն լսեր աչն հատ ու կոտոր բառերը, որ փողոցներու անկիւններէն իրենց կ'ուղղւին. ու աչն դուռները որ բաղխած էին կը բացւին և ուժով մը կը փակւին իրենց երեսին:

Թերևս ալդ խեղճ մուրացիկ գաղթականները երեկոյեան սովորականէն աւելի քաղցած ու չուսհաստ վերադառնան իրենց բնակարանը, և թէ ալդպէս բան մը ունենան ի հարկէ. թերևս ալ ցուրտին պատճառով հիւանդանան օրերով, և առանց ինամքի, լքած բոլորովին, թերևս օր մըն ալ... ո՛վ գիտէ. բայց շատ հեռուները չերթանք: Ոչ մէկերնիս չենք գիտեր թէ ովքեր են անոնք որ երբեմն փողոցներու մէջ կը տեսնենք մուրացիկաներ: Սակաւն ամեն սաճկաստանցի հաշ հաստատապէս դիտէ, որ այսօր ալ ալդ արհամարհած մուրացիկներն իսկ քանի մը տարի առաջ իրենց ալս խղճալի վիճակէն անհամեմատ լաւ վիճակ մը ունեցած լինելու են, երբ իրենց բախտը չէր մուսլած, երբ զեռ իրենց հալոնիքի մէջ կը վալելէին ընտանեկան հանդստութիւն և քաղցրութիւններ, և ուրախ ու զոհ էին, որ կապրէին—ինչ որ ամենէն սիրովիչ և հպարտ բանն է չափազանց տաժանելի աշխատութիւններուն մէջ իսկ—իրենց ճակտի քրքրտինքովը: Եւ աչն ատեն, ընկան է, ձմեռան. ալս բոլոր անախորժութիւնները չէին սարսափեցներ զիրենք: Այսօր փոխած է արդէն իրենց բախտը՝ տարբեր աստղերու տակ. իրենց օճախը կամ քանդած է և կամ ուրիշի մը սեփականութիւնը դարձած և հիմա հին կեանքին միայն լիշատակները կան, մորմոքեցնող և կսկծեցուցիչ: Իրենց շուրջը ցուրտ անտարբերութիւն մը կը տեսնեն ամեն տեղ և արհամարհոտ նալածքներու տակ կըզգան որ իրենց՝ դժբախտութիւնը աւելի կը չեշտւի և վիշտը աւելի կը խորունկնալ:

*
* *

Իրենց վիշտը աւելի կը խորունկնալ երբ ևկեղեցիին մէջ սիրող Մեծ-Քարողիչին մէկ պաշտօնեան խիստ և դաժան դէմքով մը քանի անգամներ կրկներ է թէ՛ աչն դաղթականներին, որ գալիս են ձեզնից ողորմութիւն խնդրելու՝ ոչինչ մի տաք, մի տաք. ձեզ խնդրում են, մի խաբւէք. աղքատանոցում հաջ տրում է նրանց:

Ոչ մէկ կարեկցութիւն մի ունենաք բոլոր անոնց նկատմամբ, որ

խեղճ են և իբրև ձեր եղբայրները ձեզ կը դիմեն. ձեր ականջները խցեցէք անոնց ողբերը չլսելու համար. հաստ զաւազանով մը վռնտեցէք զանոնք ձեր դռներէն. սուտ կը խօսին, սուտ է իրենց թշառութիւնը. ոչինչ պարտաւորութիւն չունիք որ և է օգնութիւն ընելու. անոնց համար կտոր մը հացն իսկ չատ է, և ալդ կտոր մը հացը արդէն կը տրւի «աղքատանոցի» շրջափակին մէջ. ահա թէ ինչպէս կը ժեկնւին քահանային խօսքերը եկեղեցիի բեմին վրայէն:

Բազուի քահանաները ինչքան հոգ ու խնամք ունին եղեր հաշ հարուստներու դիզած միլիոններու մասին. ալդ «պատկառելի» հարուստներուն ամենալիւթը մասնիկն իսկ խնայել տալու համար անոնց չորդոր ու «հալրական» խրատ կուտան: Բայց չէ որ առանց ալդ քարոզներուն և չորդորներուն Բազուի հարուստները իրենց գործը չատ լաւ դիտեն և արդէն անմատչելի եղած են:

Իր տարօրինակութեանը մէջ չատ զարմանալի են տէր հօր ալդ խօսքերը: Վերջացաւ պրծաւ ամէն բան, երբ օրական կտոր մը հաց կը դրւի «աղքատանոցը» ապաստանող քանի մը տառնեակ խեղճերու. ուրիշ կարիքներ չունին ատոնք միթէ. նաև ովքեր անոնց մը որ կարեկցութիւն կը զգան դէպի թշառը և անոր դանձանակին մէջ կը փափաքին միեկուտ սև փող ձգել, պէտք կը տեսնեն քննելու ժամերով խնդրողին վիճակը, փորը, զրպանները, Տաճկաստանի ամէն քաղաք, փողոցները մուրացիկներ կը պտըտին, Թիւրք, Յուն, Հրէալ և չատ քիչ Հալ. իրենց վիզէն խոշոր տոպրակներ կախած ունին որոնց մինչև բերանը երբեմն լիցւած կը լինի հացով, միսով, միրգերով և ալլն, բայց ոչ մէկը ալդ նկատի չառնէր. երկրնցած բազուկը պարապ չի փակւիր. կուտան ու կուտան միշտ: Ծանրաբեռներով մուրացիկը, որ թերևս քանի մը օրեր ալդ ժողոված ողորմութիւններովը կշտանալ և կշտացնէ իր ընտանիքը:

Թերևս լինին լուրջ եւ հեռատես խորհողներ որ առարկին թէ չեն ուղեր մուրացկանութեան վարժեցնել իրենց տարաբախտ ազգակիցները: Բայց արդեօք ալդպէս խորհողները պզտիկ ջանք մը ըրած են մուրացիկի վիճակէն հանելու անոնք որ իրենց «եղբայր»-ներու անտարբերութեան պատճառով մուրացիկներ դարձած են, Բազուի փողոցներուն մէջ, փարթամ հարուստներու դուռներուն առջև: Ամէն տաճկահալ զաղթական ամէն բանէ առաջ գործ խնդրեց. «գործ աւէք մեղի, գործ, և ոչ ողորմութիւն». ամեն կերպ պատասխան տրւեցաւ իրենց, բայց երբէք զբական: Անգործ, անօգնական, անուշ մարդը կամ կինը ինչ պիտի չլինէ վերջապէս. կարիքը, անօթութիւնը պիտի մղեն զինքը վերջապէս ձեռքն երկնցնելու, անհամարձակ ու ամօթահար, հաց ու քանի մը գրօշ փող մուրալու: Եւ եթէ կալ մուրացկանութեան մէջ ստորութիւն մը, անպատուութիւն մը, մուրացիկին չէ աջնքան որքան մուրացնել ստիպողին:

Գաղթականներէն քիչերը մուրացին թէն, բայց ամէն գաղթական մուրացիկաններու չատուկ ընդունելութիւն գտաւ ընդհանրապէս:

Ո՞վ հետաքրքրեցաւ արդեօք ալստիդ գաղթականներու վիճակովը և կարեկցութեամբ ու եղբայրական պարտաճանաչութիւնմբ դարման տանելու փորձեր ըրաւ կամ զէթ առաջարկեց: Միայն թշուառները անոնք չեն որ «աղքատանոց»-ի սենեակներուն մէջ անցնող ժամերն ու օրերը կը համբն կամ փողոցներու մէջ ենթադրութիւններ կ'ընեն անցուղարձ ընող աչա ու աչն չքեղ հագած տիկնոջ կամ պարոնի սրտերու մասին: Փանինէր կան, որ զէս ու զէն, քալանսարալներու և հին տուններու անկիւնները անգործ ու չուսահատ, կըսպասեն որ և է գործի, որևէ չաջողութեան, որ միշտ կուշանայ ու կուշանալ: Ատոնք աչնպիսիներն են, որոնց քով շատ զօրեղ է արժանապատուութեան զգացումը և որոնք աւելի կը նախընտրեն մեռնիլ անօթի քան մուրալ անոնցմէ որ ազնւօրէն տալ չեն գիտեր, որ գութ չտնին, և որոնք ամէն բան ծաղրելու վարժած են, նոյն իսկ թշուառներուն վիշտն ու արցունքները: Ո՞վ եղաւ ան որ զնաց դուրս հանեց անախտօժ հանգամանքներու մէջ ապրող, շարած, չուսահատ պատանիները, որոնք նոյն իսկ բաւական ուսում ունին և կրնան հաշիւէնի, ֆրանսերէնի և տարրական ուսումների մասնաւոր դասեր տալ կամ գրասենեակներու մէջ պաշտօններ ունենալ: Ո՞վ զնաց փնտռեց, և զիմոռներուն նոյնպէս ո՞վ միտթարական պատասխան մը գտաւ:

Աչն տաք ու «եղբայրական» կարեկցութիւնը, աչն համակրանքը զոր ցուցուցին և կը ցուցնեն Տաճկահայ գաղթականներու վերաբերմամբ ռուսները, ռուսական գրողներէն շատերը, ինչպէս նաև բուլղարները, ֆրանսիացիները և վերջապէս ամեն անոնք որոնց քով կարեկցութիւնը զէպի թշուառ մարդկային ամենէն բնական զգացումն է, պէտք է ամօթահար ընէր ալստիդի հարուստները: Շատ բնական և շատ մարդկային չէր վարմունքը աչն թիւրքին որ հայ խղճալի գաղթականներու խումբի մը պատահած ատեն կը լուզէր և ալդ չուզումը կարտաշարէ քանի մը խօսքերով և թղթադրամ մը տալով, ինչպէս կը գրէր մէկը նորերս: Բագուի մէջ թիւրքերէն ումանք ձրի ապաստանարան գտան և տւին դուրս մնացող գաղթականներուն, մինչդեռ տեղացի հայերէն ոչ մէկը ալդ չխորհեցաւ. ո՞վ չիմարացեր է որ իր դրամներէն մի բաժինը և իր մի քանի վալրկեանները զոհել ուզէր, առանց փոխարինութեան, լոկ պարտականութեան անունով, մանաւանդ աչնպիսի ոչինչ գործերու համար, ուր ինքը չպիտի փառաբանէր, ուր իր անւան չուրջը փառքի չուսապսակը չէ որ պիտի ճաճանչագեղ չողշղա՛ չլացնելով ամենուն աչքերը:

Զիւնը կը թորաց, հովը կը պտուտքէ օդին մէջ ձիւնի հատիկները, որոնք իրենց տենդոտ պարը կըսկսին աւելի եռանդով ալն թղթիկներուն ու աղտերուն հետ, զոր հովը աւլած է փողոցներէն: Բնակարանս կը դառնալի, երբ տեսալ որ տպւած թերթ մըն ալ եկաւ միացաւ ծանր ծանր ալք պարին: Նոր թերթ մը լինելու է, թերեւս հովը չափշտակած է տեղէ մը, ով գիտէ: Յետի մի քանի դրօշմներ արդէն աղտոտած են թերթը, մեղք, թերեւս ազատէի: Վարկեան մը գետինը կը փռւի՝ չոգնած կարծես իր կրած չարչարանքներէն: Կը ծռիմ հետաքրքրութեամբ տեսնելու թէ ինչ թերթ է. և սա տողն է որ առաջին անգամ աչքիս կը պատահի.

«Մենք հայերս էլ ունենք փողոցային թերթեր»: Խեղճ թերթը արդեօք իր վիճակը առաջուց գուշակած է եղեր: Հովը որ վարկեան մը դադրած էր, կարծես փողոցը մաքրելու համար, կը բարձրացնէ թերթը. և իր չորձանուտ չառաջխաղացութեամբը կ'առնէ կը տանի խառն ի խուռն աղտերն ալ, թղթիկներն ալ և թերթն ալ:

Ու բնակարանս դարձած՝ ես ինծի կը կրկնեմ «փողոցային թերթ»:
արդեօք ինչ ըսել կ'ուզէր. փողոցի մէջ կարդացող թերթ թէ փողոցը ձգտող թերթ. հանելուկ մնաց ինծի համար:

Բաքու

Մ Ո Տ Ա

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԻ ՆՈՐ ԲՆԺԱՆՈՐԳՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒՆԵՐԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՈՒ-
թիւնը, որով Մուրճը մտնում է իւր տասնամեայ տարեշրջանը, ներկայացնում է մի առանձին կարեորութիւն ամսագրի ապագայի համար: Հրաւիրում ենք բոլոր նոցա, որոնց մէջ Մուրճի ցայժմեան գործունէութիւնը համակրութեան զգացումներ է արթնացրել, բոլոր նոցա, որոնց համար Մուրճը անվիճելի գրաւականներ է ներկայացրել յառաջդիմական անյողզողութեան և շիտակ ընթացքի, և որոնք կոմենում են մեզ հետ միանալ Մուրճի ընթացքը աւելի ու աւելի արգասաւոր դարձնելու ժամանակակից հայկական մտքի համար,—որ զոքս օգնեն մեզ Մուրճը տարածելու գործի մէջ, որ միակ հաստատուն միջոցն է ամսագիրը ամեն պատահարներից ազատ պահելու համար: Ոչ մի խոչնդոտ անցեալում գորութիւն չի ունեցել խախտելու մեր հաւատը դէպի Մուրճի ապագան, մի հաւատ, որը աւելի ու աւելի ամրացրել են մեր մէջ տարիները, չնայած մեր շարունակ կրած դեֆիցիտներին: Աւելի քան երբ և իցէ Մուրճը այժմ շրջապատւած է յուսալի աշխատակիցներով, որի կազմը կրում է Մուրճի բոլոր անցած տարիների հետքերը, սկսած առաջին տարւանից մինչև այս վերջինը:

Այս յոյսերով ու հաւատով մենք հրաժեշտ ենք տալիս լրացող տարւան և սպասում նոր տարւայ առաջին համարին:

«ՄՈՒՐՃ» ՆԻՒՐՈՂՆԵՐ. 1. Պր. Մկրտիչ Մանուչար՝ Ժընևի հալ ուսանողութեան: 2. Տիկի՛ն վարդուհի Խօջամիրեանց՝ Գանձակի արհեստատրաց դպրոցի հալ աշակերտներին (խմբագրութեան ընտրութեամբ): 3. Պր. Առաքել Մատուրեան՝ Ամարասու վանքին: 4. Նոյնը՝ Տաթևի վանքին:

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ դուրս գալով Ս. Էջմիածնից դեկտ. 24-ին ղէպի Երեան և 27-ին Երևանից, ալսօր, 30 դեկտեմբերի սպասում է Թիֆլիսում:

ՅՕԳՈՒՏ ՏԱՃԿԱ-ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ.

Թիֆլիս: Անցեալ անգամ հաղորդեցինք, որ Թիֆլիսում, Նոյեմբերից կազմեց տիկիւնների կոմիտէ, Նախագահութեամբ Նահանգապետի ամուսին Բըկովայի: Այդ կոմիտէն ստացել է՝ 1000 ռուբլի մի ոմնից (անլալտ). տիկ. Նատ. Ա. Ալիխանեանից 100 ռ., տիկ. Նոսովիչից երեխաների ճերմակեղէն, և անլալտներից՝ չատ ճերմակեղէն և հագուստեղէն. իշխ-հի Ն. Մ. Էրիսթաւից 100 ռ., ալբի Տէր-Դաւթեանից 100 ռ., բժշկ. Ս. Բ. Խալաթեանից 100 ռ., «Յդրալական օգնութեան» զրքի խմբագիր Գ. Զանչիւից 200 ռ.: Տիկ. Ն. Ձիթողեան ուղարկել է 12 հոգու համար պատրաստի զգեստներ. 20 զոյգ գուլպա. անլալտ ոմն ուղարկել է 5 կանաչի և մանկական զգեստներ: Թիֆլիսի առևտրական բանկի խորհրդից 500 ռ.

Բաքու գտնուող ալն վախստականների թիւը, որոնք ապրում են ալն շինութիւնների մէջ, որ քաղաքը շինել է վարակիչ հիւսնդութիւնների ժամանակ հիւանդներ պահելու համար, է 351 հոգի, որոնց մեծ մասը կանաչք և երեխաներ. հիւանդանոցում գտնուում էին (նոյ. 20) 18 հոգի: Յիշածների մէջ կան 75 առողջ տղամարդիկ, որոնց համար գործ գտնելը զժւարացել է անցագիր չունենալու պատճառով, բացի ալն որ, իրենց հալրենիքում երկրագործ կղած լինելով՝ ալ արհեստ չգիտեն:

Տեղական բարեգործական ընկերութիւնը չատուկ լանձնաժողով է կազմել, որի մէջ մտել են Ա. Դ. Ալվազեան, Խ. Ն. Ալսուֆիւ, Պ. Օ. Ղուկասեան, Մ. Պ. Զախարեզեան, Լ. Վ. Րիթանսկից, Ա. Ն. Տերեշտիւ, Լ. Վ. Ֆէլզլ և Ս. Ա. Յիրիւլնիկով:

Եկատերինոպոլում, ուր 50 ընտանիք վախստականներ կան, մի պարահանդէսից սոցա օգտին ստացւել է արդիւնք 1.200 ռ:

Էջմիածին: Մի լրագրի թղթակցութիւնից քաղում ենք հետեւեալը. «Էջմիածնի վանքի գումանոցը լի է հարիւրաւոր գաղթականներով... Վհափառը կարդադրել է լուրին հաց և կերակուր տալ մինչև որ Մատթէոս վարդապետ Մատթէոսեան կը չըջի մեր դառուի

բոլոր գիւղերը և կը Կորդորի հաւերին՝ նոր գաղթականներ ընդու-
նելու և հների հետ միասին կառավարելու: Սակայն Մատթէոս վար-
դապետի շրջած 40 գիւղերից և ոչ մէկը համաձայնութիւն չի տւել
նոր գաղթական ընդունելու, ալլ, ընդհակառակը, բոլորն էլ դան-
գատել են իրանց վիճակից և լաւտնել որ նոյն իսկ հին գաղթա-
կաններին չեն կարողանում կերակրել, որովհետեւ իրանք ևս նիւ-
թական անապահով վիճակի մէջ են հացի սակաւութեան պատճա-
ռով և հազիւ են կարողանում պահպանել տեղացի չքաւորներին:

ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՀԱՍՍՏԱՆՈՒՄ:

Պր. Գր. Զանչեան իւր հրատարակած «Նղբալրական Օգնու-
թիւն» ռուսերէն զրքի արդիւնքից ցալմ ուղարկել է Կ. Պոլիս
20.000 ֆրանկ:

ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ: Կարսի ճամբով մի խումբ փախըս-
տականներ, անցադրի դժւարութիւնների հանդիպելով, նորից վերա-
դարձան Թիֆլիս և ալլ տեղեր:

Տրապիզոնից հաղորդում են թէ ալլտեղից փախածները մեծ մա-
սով վերադարձել են և որ դպրոցները բաց են՝ մօտ 400 աշակերտ-
ներով երկու սեռից. տղայոցը ունի ալժմ մինչև 5-րորդ, օրիորդացը՝
մինչև 4-րդ դասատուն:

ՆԻԷՐՆԵՐ ՆԻ ԿՏԱԿՆԵՐ:

—Ալլի Սոնդուկեանց (Թիֆլիս) իւր սուղ միջոցներից կտակով թո-
ղել է 500 ռ. լօգուտ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի:

—Պր. Խաչատուր Յովակ. Գուլումեանց (հարուստ աստրախանցի)
Ղ.զլարի ս. Գէորգի ուխտատեղում իւր հաշուով կառուցել է բաղա-
նիք, քարաչէն, երկու բաժանմունքով, քախսելով մօտ 3.000 ռուբլի,
լօգուտ չիչեալ ուղտատեղի:

—Պր. Սիրական Ասուտուրեան, Օդեսայի հաւոց եկեղեցու երեց-
փոխը, 1000 ռուբլի նէր տւեց բնակարան շինելու սարկաւադի և
ռսուցչի համար:

—Մնացական Տէր-Դաւթեան (Թիֆլիսցի հարուստ վաճառական,
վախճանաւծ նույնքերի 23-ին) թողել է կտակ, որի համաձայն նա
ունի երկու տուն, որոնք բերում են տարեկան 2300 ռ., երկաթե-
ղէնի մեծ խանութ և տնային իրեր: Կտակով լատկացում են գու-
մարներ թէ մասնաւոր անձերի և թէ հաստատութիւնների, բայց
չատ բարդ ձևով. կարգադրութիւն է արւած առանձին՝ քանի իւր
կինը կենդանի կը լինի, և առանձին՝ կնոջ մահից չետոյ. չետոյ, և
ալլ է զլխաւոր բարդութիւնը, հանգուցեալը ունեցել է գաղափար՝
կտակում ցանկութիւն լաւտնելու, որ ինքը թաղւի Թիֆլիսի վանքի
մալը եկեղեցու գաւթում. եթէ ալլտեղ չլինի, ապա թաղւի իւր

ծխական Ս. կարապետ եկեղեցու գաւթում եթէ ալդտեղ էլ չընդուն-
ւի, ապա միայն Խօջիվանքի գերեզմանատանը, առաջին դէպքում
գլխաւոր շահողը լինում է Ներսիսեան դպրոցը, երկրորդ դէպքում
ալդ դպրոցին և ալ հաստատութիւններին չատկացրածի 30%-ը
ընկնում է բաժին Ս. կարապետ եկեղեցուն, իսկ երրորդ դէպքում
50%-ը տրւում է Խօջիվանքին, Հանգուցեալը թաղւոց Ս. կարապետ
եկեղեցու գաւթում, հետեապէս ստորև չիշած գումարներից, որ
չատկացրած են հաստատութիւններին, պէտք է զեղջել 30% չօգուտ
Ս. կարապետ եկեղեցու. ահապէս որ ստորև չիշածները վերարե-
րում են առաջին դէպքին: Կտակով քանի կենդանի է իւր կինը՝
տների եկամուտներից նա ստանալու է տարեկան 1.200 ռ., Ներ-
սիսեան դպրոցը տարեկան 300 (ալժամ ուրեմն 30% պակաս ուրեմն աւելի
քան 200), Կովկ. Հայ. Բարեգ. ընկ.-նը տարէնը 120 (ալժամ ուրեմն
80-85 ռ.), Հալուհեաց բարեգ. ընկ.-նը 60 (ալժամ 40—42), Ս. կա-
րապետ եկեղեցին 120 (ալժամ մօտ 85), քահանաների գանձարանը,
Ս. կարապետի միաբանները և կուսանաց եկեղեցին միասին տա-
րէնը 400 ռ. (ալժամ 30% պակաս), Եկամուտի աւելորդը գնալու է
տնահարկի և նորոգման. Կնոջ մահից յետոյ՝ տները դառնում են սե-
փականութիւն Ներս. դպրոցի, բաժին հանելով Կովկ. Հ. Բ. ընկ.-ն
տարեկան 300 ռ. (ալժամ 30% պակաս), Հալուհեաց բարեգ. ընկ.
տարէնը 120 ռ. (ալժամ 30% պակաս), Ս. կարապետ եկեղեցուն
տարէնը 300 ռ. (ալժամ ուրեմն աւելի):—Նրկաթեղէնի խանութի ապ-
րանքները պիտի ծախեն 5% զեղջով, իսկ ապառիկները պիտի
ստացան 10% զեղջով. ստացւած գումարներից պիտի տրւի միանգոյ՝
1000 ռ. Գէորգեան ձեմարանին, 1.000 ռ. Էջմիածնի տաճարի նո-
րոգութեան, 1000 ռ. Թիֆլիսի Վանքի նորոգութեան, 1.000 ռ. Ս.
կարապետ եկեղեցուն, 100 ռ. քահանայական գանձարանին (նաև
4850 ռ. խանութից ստացած գումարներից պիտի տրւի կտակում
չիշած ազգականներին և գլխաւոր գործակատարին, եթէ սա կը չա-
րունակի ու կը վերջացնի խանութի գործերը), Բացի ալդ, կտակւել
է Խօջիվանքի գերեզմանատանը ջուր տանելու համար 800 ռ. (նաև
500 ռ. ալ գործակատարների և մի մասնաւոր անձի):

Պուրս գալով մասնաւոր կամ մերձաւոր աճներին հասնելիքը,
մենք գտնում ենք, որ հանրալին գործերի համար կտակածը ներ-
կայացնում է չուրջ 35.000 ռուբլու գումար (հաշւելով երկու տները
չուրջ 30.000 ռ.):

— Բաղդաւար Յակոբեանց (Բաքու) ի չիշատակ իւր հանգուցեալ
կնոջ՝ Նւիրեց 200 ալան ռուբլի Պետերբուրգի, Մոսկուայի և Խար-
կովի հայ ուսանողութեան, ընդամենը 600 ռուբլի:

Մնացական Տէր-Յակոբեան (Թաւրիզ, վախճանւած նոյեմբ. 28) թողել է մի կտակ, որով պիտի հասնի Թաւրիզի Լիւաւա թաղի հաց երկսեռ դպրոցներին 2.000 ու., որի տոկոսներով պիտի իւր անունով պահեն տասը աշակերտող. 2000 ու. նոյն քաղաքի Բերդաթաղի հաց երկսեռ դպրոցներին, տոկոսներով տասը աշակերտող պահելու համար. 200 ու. Թաւրիզի կանանց ընկերութեան. 200 ու. Ատրպատականի կանանց ընկերութեան. 600 ու. Ղարադաղի Խանազեան գիւղին, ուր իւր անունով պիտի ուսումնարան բացւի. 400 ու. Մուժամբար գիւղի եկեղեցու վերաշինութեան: Ընդամենը 3.400 ուրբի:

—Նղիսաբէթ Խարաբէեան Կրասիլնիկեան (բաքաբնակ Շուշեցի վախճանւած Թիֆլիսում, ղեկտեմբերին) թողել է կտակով բարեգործական նպատակների համար հետեւեալ գումարները. 1000 ու. Ս. Էջմիածնին, 1.000 ու. իւր հաւրենի Չանախչի գիւղի (Շուշաւ գաւառում) եկեղեցուն. 1000 ու. Ամարասիւժնին (Շուշաւ գաւառի Աղ-օղլաթ գիւղում), 3000 ու. Շուշի քաղաքի կուսանաց վանքին, Շուշի քաղաքի Մեղրեցոց եկեղեցու ծխական դպրոցին. իսկ 24.000 ուրբի պիտի դնւի պետական բանկը, որի տոկոսների կէսը Շուշաւ քաղաքային վարչութիւնը կարող է գործածել տեղական ժողովրդի կարիքների համար, իսկ տոկոսների մնացած կէսը՝ Շուշաւ գաւառի Չանախչի, Թաղաւերտ, Սըղնիկ, Գերգէր և Արբաղուղ գիւղերի հասարակութեանց կարիքների համար, ալ և ալ հիւանդութիւնների, համաճարակների և ալ անակնկալ դէպքերում:

ՆՈՐԱՆՇԱՆ ԿՏԱԿ ՆԻ ՕԳՆՈՒԹԻՒՆՆԸ ԳԻՒՆՆԵՐԻՆ. Մեր ընթերցողների ուշքն ենք դարձնում Նղիսաբէթ Խար. Կրասիլնիկեանի թողած կտակի վրայ, (տես վերը՝ «Նւէրներ և կտակներ»), ուր հանգուցեալը ի միջի ալլոց, 24.000 ուրբի թողել է Շուշաւ քաղաքային վարչութեան, որպէս զի սա, ալդ գումարի տոկոսների կէսը (ուրեմն 12.000 ուրբու. բոլոր տոկոսները) չատկացնի լիւաւ հինգ գիւղերի հասարակութեանց կարիքներին, կտակում որոշած ղէպքերում: Մեր գիտութեամբ սա առաջին դէպքն է, որ հարուստ հալը մի կտակ է անում գիւղական համայնքների հասարակաց պէտքերի համար (չհաշւած ի հարկէ եկեղեցիներն ու դպրոցները): Ո՞ւր էր թէ ալդօրինակ կտակները, ուր բաժին է տրւում գիւղական համայնքներին, վաղուց սովորական եղած լինէին մեղնում: Մուրճի № 9 ի «Հալ քաղաքացին հալ գիւղացու առջև» լօղւածում մենք քաղաքացոց ալդ պարտականութեան վրայ էինք մատնացոյց լինում: Սկիզբը, ուրեմն, դրւած է. հրաւիրում ենք ուրիշներին հետեւելու պատուական օրինակին, Նւէրների և կտակների մէջ չմոռանալ հալ գիւղացուն՝ սորա բազմա-

տեսակ պէտքերով: Կարելի է խոշոր նւէրներ անել կամ կտակել գումարներ՝ սակաւահող գիւղերին հողեր գնելու համար, եւրոպական սխտեմի երկրագործական մեքենաներ գնելու և դորանով գիւղերում չունեւորներին ձրիապէս օգնելու, աւելի ունեւորներին համեստ վարձագէտով տալու համար, կարելի է օգնել գիւղացիներին կտակած կամ նւիրած գումարներով շրջիկ բժիշկներ և դեղատներ պահպանելով՝ որոշելով գիւղերը, կարելի է կտակած կամ նւիրած գումարներով գիւղական էփան, տնտեսական բաւց օրինակելի տներ շինել տալ, որպէս զի միւս գիւղացիք օրինակ վերցնեն: Եւ ալլն և ալլն: Բաւական է ալլ սովորութիւնը մտնի, իսկ գումարների գործադրութեան համար լաւ ծրագիրներ չեն պակսիլ:

Սկիզբը դրած է,—հետեւեցէք!

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Ղուբալում, քաղաքակն խորհրդարանում երկու ժողովների մէջ ձայների մեծամասնութիւն չգոյանալով՝ քաղաքագլուխ նշանակեց կառավարութեան կողմից Միխ. Դանիլովիչ Բայշենիօ (նախկին հաշտարար միջնորդ—мировый посредник):

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄՇԱԿՂ: Այդ թերթը կեղծ վրդովմունք ցույց տուց աչն բանի համար, որ մենք Բաքեան-Քալանթար և ընկերութեան վերաբերմունքը թիֆլիսի քաղաքագլխի ընտրութեան մէջ ի ցուց հանեցինք Մուրճ № 10-ի մէջ, մի քանի խօսքերով: Այդ վրդովմունքը շինծու էր, կեղծ էր, իբր թէ ինչպէս կարելի է որ Բաքեան-Քալանթար և ընկերութիւն, իրենց շինծու բողոքներով՝ կատարւած օրինաւոր ընտրութեան դէմ, գիտակցաբար կամ անգիտակցաբար աշխատում լինեն, որ թիֆլիսի քաղաքագլուխը ոչ թէ Սեանգուլեանը լինի, ալլ կառավարութեան նշանակածը: Թող դատեն ընթերցողները: Միայն երկու հոգի էին քւէարկում քաղաքագլխութեան համար. դոցանից մէկն էլ, ընդդիմադիր կուսակցութեան թեկնածուն, իշխ. Գ. Թումանով, հրաժարեց քւէարկել, նոյն իսկ քւէարկութեան միջոցին: Շարունակեց քւէարկութիւնը Սեանգուլեանի համար, որը և ընտրեց 38 ձայնով ընդդէմ 34-ի: Եթէ ալլ անգամ ընտրութիւնը չկատարւէր՝ օրէնքով միայն մի անգամ ևս կալելի էր քւէարկութիւն կատարել. երրորդ անգամ ընտրութիւն կատարելը օրէնքով արգելւած է, աչնպէս որ ալլ դէպքում կառավարութիւնը ինքն է քաղաքագլուխ նշանակում, ինչպէս ալլ եղաւ Նոր-Նախիջևանում և Ղուբալում: Արդ, եթէ պ. Նեանգուլեանի ընտրութիւնը կարելի լինէր անկանոն, ապօրինի համարել, ոչ ոք չի կտրող երաշխաւորել, թէ դորանից աւելի կանոնաւորը կարելի լինէր կատարել երկրորդ անգամ, որովհետեւ աչնպիսի

անհիմն բողոքներ, ինչպիսին ներկայացրել են Բաբեան և Վալան-
թար, միշտ կարելի է ներկայացնել: Այդպիսի ծուռ ոգիներ, ինչ-
պէս Վալանթար, Բաբեան, կարող են ոչնչից բան չինել. օրինակ՝
նոքա կ'ասեն, ընտրութեան միջոցին փողոցից հրդեհի ձայն լսեց.
այդ ազդեց քէտրկողների տրամադրութիւնների վրայ. ուրեմն ընտ-
րութիւնը ապօրինի է. քէտրկութեան միջոցին քէտրկող թեկնա-
ծուն շատ պինդ հագաց. դա գուցէ շարժեց ընտրողներից ոմանց
գութը, որոնք սպիտակ քէտուին. ուրեմն ընտրութիւնը ապօրինի
է. ընտրութեան միջոցին մէկը բարձր ձայնով լալտեց թէ ինքը
սև գցեց. ուրեմն ընտրութիւնը ապօրինի է, քանի որ քէտրկու-
թիւնը պիտի դադտնի կատարւի. քէտրկութեան միջոցին, իշխ.
Խումանովի հրաժարելովը, քէտրկող մնաց միայն մի թեկնածու Նւան-
գուկեան. նորան չուզողները սև տւին, իսկ մի ուրիշին սպիտակ քէտ-
լու միւթարութիւնից գութի մնացին դոքա. ուրեմն ընտրութիւնը
ապօրինի է. իշխան Խումանովը իւր հրաժարելը քէտրկութիւնից
այնքան կամաց լալտեց ժողովի նախագահին, որ նորա արկղը դեռ մի
առժամանակ մնաց, և ի հարկէ ոչ չօգուտ ալ ի վնաս Նւանգուկեանի,
քանի որ այդպիսով նա մրցման ենթարկեց, և աշխուսմանալիւ ըն-
տըրեց. ուրեմն ընտրութիւնը ապօրինի է...

Նոքա, ուրքեր ցանկանում են իմանալ թէ ինչ «կլեառուղի»
բողոքների ընդունակ են մի Վալանթար, մի Բաբեան—թող կար-
դան դոքա տւած բողոքը Վալանթարի խմբագրած «Մշակ» լրագրի
№ 121-ի մէջ: Եւ Մշակ'ը դեռ պահանջում է մեզից որ մենք այդ
բողոքը պիտի «քննադատէինք»: Ուրքան լիչում ենք, Թիֆլիսում ոչ մի
թերթ չանձն չառաւ այդ բողոքի կէտերը «քննադատելու», որով-
հետեւ խմբագիրների մէջ չգտնեց ոչ մէկը, որը «կլեառուղիկու-
թիւնը» քննադատելու չիմարութիւնն ունենար: Մենք շատ ուրախ
ենք, որ խորհրդարանի փոքրամասնութիւնը, որը 30 հոգուց է բաղ-
կացած, տհաքին մեծամասնութեամբ հրաժարեց Բաբեան-Վալանթարին
ընկերանալ այդ «կլեառուղիկութեան» մէջ, որով ընտրութեան օրի-
նաւորութեան դէմ բողոքողներ մնացին միայն 8 հոգի... Ճիշդը
խոստովանած, մենք սպասում էինք «Նովոե Աբաղրենիե»-ից որ սա
իւր ժամանակին ահանջը կը քաշէր իւր խմբագրի հակառակորդի
դէմ տւած Բաբեան-Վալանթարի բողոքագրի համար, չափարարելով
այդպիսի «կլեառուղի» բողոքագիր անպատարբոր աշխուսակցութեան,
որին գլուխ ճանաչելու նա պատիւն ունեցաւ:

ԿՐԹԻԱԾ ՏԱՆՈՒՏԵՐՆԵՐ. Մի քանի տարի առաջ, իշխան Շերաշիձէի
նախնադապետութեան ժամանակ, Թիֆլիսի նահանգում, խրախու-
սանք գտաւ այս միտքը, թէ գիւղական տանուտէրները (ստարշինա-

ները) ընտրեան ինտելիգէնտ անձերից: Եւ կատարեցին ազգային ընտրութիւններ: Մեզ չափնի չեն թէ որտեղ և ինչ անձնաւորութիւններ ընտրեցին ազգային տանուտէրներ, բայց միայն աւսքանն չափնի է, որ ալ առաջին փորձերը անաջող եղան. ընտրածները չարդարացրին ան լուսերը, որ դրեւ էին նոցա վրայ: «Նոյն Աբաղրենի» թերթը, որ սաստիկ ջատագով էր ալ մտքին, վկայեց իրութիւնը, դեռ հազիւ մի տարի առաջ: Բայց և անպէս, չիշխալ թերթը շարունակեց պաշտպան հանդիսանալ ուսեալ տանուտէրներուն հաշտ մտքին, որպէս և պէտք էր:

Այժմ, ան նոյն խնդիրը հրապարակ է դուրս բերում «Աշակ» լրագրում, միայն թէ մի ծուռ ձևով, որը միայն ամօթանք պիտի համարուի մամուլի համար: Յիշեալ թերթը, հիմնւելով ոչ ընդհանուրին չափնի դէպքերի վրայ, իւր համարում առ 4-ն զեկտեմբերի, այս ձգրակացութեանն է գալիս, թէ՛

«Աւելի լաւ է գիւղերում բողոքողին չլինեն «ուսում առած» տանուտէրներ, եթէ միայն նրանք, փոխանակ հաւատներէն չեղու ժողովրդին և ցոյց տալու նրան ուսման առաւելութիւնները, ալդ էլ մի նոր դէնք պիտի չլինեն իրանց ձեռքում ամբողջին հիասթափեցնելու համար»:

Ի հարկ է, մի գիւղական ժողովուրդ չի կարող գոչակութիւններ անել թէ կրթւած անձերից որը պիտի անպէս վարի գիւղական գործերը, որպէս զի ուսման առաւելութիւնները մի նոր դէնք չլինի իւր ձեռքում «ամբողջին հիասթափեցնելու համար»: Այդ նոյնը կարելի է ասել նաև «ուսեալ քահանայի», «ուսեալ դատաւորի», «ուսեալ ուսուցչի» մասին, և ալլն: Իսկ ժողովուրդը, կարգալով մամուլի մէջ ազգայն ձևակերպած խօսքեր, միմիայն խրախուս կը ստանալ շարունակելու սոգէտ տանուտէրներ, սոգէտ քահանաներ ընտրել, ինչպէս ցայժմ եղած է և խորհել ուսում առածներից, նոյն իսկ ան դէպքերում, երբ սոքա վատ գոչակութիւնների ոչ մի տեղիք չեն տուել, Դա կատարելապէս հակառակ է ժողովրդի շահերին, որոնց հարկաւոր են տանուտէրներ. կրթւած, ուսում առած անձերից, Շարունակելով սոգէտ տանուտէրներով կառավարել—մեր գիւղացիք էս գլխից պէտք է ձեռք վերցնեն չառաջադիմելու մտքից: Գիւղական ժողովուրդներ, ընտրեցէք ուսում առած տանուտէրներ, ոչ թէ որովհետև ամեն ուսում առածը լաւ մարդ է, ալ որովհետև ներկայումս միմիայն նոցա մէջ կը գտնւեն մտածողներ հանրային շահերի մասին, կուտղներ ձեր մէջ արմատացած հոռի դադափարներ և վատ սովորութիւնների դէմ. միմիայն նոցա մէջ կը գտնէք մարդիկ, որոնք չփումն կ'ունենան լուսաւոր մտքերի հետ:

և բնաւ չչփոխէք երբ մամուլի ալս կամ ալն օրդանը ձեզ հակառակ խորհուրդներ կը տալ:

ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ. Ճեմարանի տեսչի կարգացած հաշից երևում է հետևեալը. 189⁰/1 դպրոցական տարւալ սկզբին կալին 138 աշակերտ. նոր ընդունեցին 104, որով ամենի թիւն եղաւ 242. սոցանից 34-ը երթեակ:—Ճեմարանը ունէր երեք բաժանմունք՝ 1, մասնագիտական բաժին 3 լսարաններով—31 աշակերտ, 2, դպրոցական բաժին 4 դասարաններով (դպրանոցների 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ դասարաններ), որոնցից առաջինը ունէր մի ղուղընթաց.—զոցանում կալին 142 աշակերտ. 3, նախակրթարան՝ երկու մասից բաղկացած —69 աշակերտ.—Աւարտեցին Մասնագիտական բաժնում՝ 9 հոգի. դպրոցական բաժնում աւարտեցին 16 հոգի: Արժակեցին՝ մասնագիտականից 2 (իրենց խնդիրքով), դպրոցականից 19 (որոնցից 10-ը իրենց համապատասխան դասատուն չլինելու պատճառով, 1-ը իւր խնդիրքով).—Ծննդավայրը աշակերտների՝ 112 Երևանու թեմից, 44-ը Տաճկաստանի թեմերից, 37 Վրաստ. և Իմերեթի թեմից, 20 Արցախի, 10 Բեսարաբիայի և Ն. Նախիջևանի, 8 Շամախու 8 Պարսկաստանի թեմերից, 3 Աստրախանի թեմից:

ԱԻԱՐՏՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ Կովկասի գիմնազներում եւ ուղական դպրոցներում: Կովկասեան շրջանի հոգաբարձութեան հաշւի համեմատ, լիշեալ դպրոցներում (Անդրկովկասում և Հիւս. Կովկասում) աւարտեցին 1895 թւականին 177 ուսու, 84 հալ, 41 վրացի, 20 թուրք և լեռնցիք, 23 հոգի ևս ալ ազգութիւններից (գերմանացի, լեհացի և ալլք):

ՎՐԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ. Վրացի ուսանողները Պետերբուրգում հաւաքել են վիճակագրական տեղեկութիւններ բոլոր վրացի ուսանողների մասին Ռուսիայում, և առաջին փորձ-ցուցակը ուղարկել են վրացի կալի շարաթաթերթին. ցուցակը ունի մօտ 100 մաս և ի միջի ալլոց տալիս է հետևեալ տեղեկութիւնները 1896-7 ուսումնական տարւալ համար:

Ռուսիայի համալսարաններում և ալ կարգի բարձրագոյն դպրոցներում ուսանում էին 205 վրացի. զոցանից՝ համալսարաններում 158 (Պետերբուրգի 38, Մոսկւայի 36, Կիեւի 31, Խարկովի 24, Օդեսայի 20, Իւրեւի (Դորպատ) 4, Տոմսկի 5 կամ 8, Կազանի և Վարչաւի համալսարաններում ոչ ոք): Մնացեալները ուսանում էին ալ բարձրագոյն դպրոցներում: Ամեն կարգի բարձրագոյն դպրոցներում վրացի ուսանողներ կալին Պետերբուրգում 64, Մոսկւայում 50, Կիեւում 33, Խարկովում 28, Օդեսայում 20, Իւրեւում 7, Կազանում 3.—Ըստ մասնագիտութեան՝ ֆիլոլոգներ 8, մաթեմատիկոսներ 11, բժնագէտներ 19, բժիշկներ 66 (հաշւելով ալլ թւում նաև 3 գեղադործ:

և 4 ուսանող զինուորական-բժշկական ակադեմիայում), իրաւաբաններ 58, արեւելեան լեզուների բաժնում 2, հաղորդակցութեան ճանապարհների լինստիտուտում 4, տեխնոլոգներ 5, հանքաբաններ 2, անտառագէտ 2, տեխնիկոսներ 1, անասնաբույժ 3, գիւղատնտեսներ 2, Լազարեան ճեմարանի մասնագիտական կուրսերում 1, հոգևոր ճեմարանում 9, զեղարեւոտական ակադեմիայում 1, կոնսերւատորիայում 3 (դոցանից մէկը միաժամանակ իրաւաբան է), ատամնաբուժական կուրսերում 8 (դոցանից 1-ը կին) և 2 կին կանանց բարձրագոյն կուրսերում: Ըստ դասակարգերի՝ համալսարաններում՝ 90 սոսկ աղնւականներ են և 28 իշխաններ, 23-ը գիւղական դասակարգից: Ըստ ծննդավայրի՝ համալսարանի ուսանողներից 65-ը Փոլսի թաւրիսի գաւառից են, 38-ը Թիֆլիսի գաւառից, 22 ը Գուրաւ, 15-ը Օդեսիայից, 2-ը Գուշեթի, 1-ը Թիոնէթի, 1-ը Ախալքալաքի գաւառից:—Ըստ միջնակարգ դպրոցների՝ բոլոր ուսանողներից 98-ը Փոլսի թաւրիսի գիմնազի են աւարտել, 59-ը Թիֆլիսի գիմնազիներում, և ալլին:—Ըստ նիւթական կարողութեան բոլոր ուսանողներից 21-ը ստանում էին 10-15 ռ. ամսական. 16-ը 15-20 ռ., 19-ը 20-25 ռ., 33-ը 25-30 ռ., 24-ը 30-40 ռ., 19-ը 40-50 ռ., 2-ը 50-60 ռ., 7-ը 60 և աւելի ռուբլի. 22 հոգի ապրում են դասերով, իսկ մնացեալները ստանում են ստեպենդիաներ, որոնցից 13-ը միայն կովկասեան թոշակաւորներ են:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՊՐՈՑ: Կալսերական ուսուց երաժշտական ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքում 1896—7 դպրոցական սարում ուսանում էին 373 հոգի (274 աղջիկ, 99 տղայ), որոնցից 166 հայ, 128 ռուս, 35 հրէայ, 22 վրացի, 12 գերման, 10 լեհ:—Մեծ մասը զաչնամուրի կլասսումն էին (234 հոգի), ապա ջութակի (40), երգեցողութեան (35 հ.) և ալլին: Մուտք դպրոցը ունեցաւ 33.282 ռ. 25 կ., ծախք՝ 32.679 ռ. 10 կոպէկ:

ԾԽԱԿԱՆ ԱՆՎՔԱՏԱՑ ՀՈԳԱՔԱՐԶՈՒԹԻՒՆՆԵՐ:

Օղեստայում հաւոց եկեղեցու ծխականները, թուրուտութեամբ ներքին գործոց մինիստրութեան, հաստատել են սղքստաց հոգաբարձութիւն, որի համար ներկաչ նուեմբերի սկզբներին ընտրութիւններ եղան. ընտրեցին հոգաբարձու՝ տեղացի հարուստ տիկին Խալաշողլի՝ որի հրաժարելու պատճառով ընտրեց պ. Վասիլ Թալիրեան (խմբագիր Вѣстникъ внодѣлія ամսագրի), Մուրադեան (Թիֆլիզցի, վաճառական), Օնանեան (Ալէքսանդրապոլցի, հարուստ վաճառական), Ալըղեան (ղրիմցի, հարուստ վաճառական), Խաչիկեան (Օդեսայի թատրոնի ինժեների օգնական և հաւոց ծխական դպրոցի հոգաբարձու). հաշուետեսներ պ.պ. Իշխ. Բորիս Արղութեան-Երկալնա.

բազուկ (Թիֆլիզցի, իրաւաբան), Աբրահամեան (Շուշեցի, վաճառական), Զարեհ Հաւրապետեան (Վառնացի, Լազարեանի ճեմարանում աշակերտած):

